

ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՐ ՎԻՐԱՊ

ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆԸ,
ՋԵՌԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՍՍԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



ԱՐՄԵՆ

2017

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

ՎԱՆՈՐԷԻՑ ՏԵՍԶԻ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

АРСЕН АРУТЮНЯН

ХОР ВИРАП

**ИСТОРИЯ,
РУКОПИСНОЕ И ЭПИГРАФИЧЕСКОЕ
НАСЛЕДИЕ**

ЕРЕВАН 2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

ARSEN HARUTYUNYAN

KHOR VIRAP

**HISTORY,
MANUSCRIPT AND EPIGRAPHIC
HERITAGE**

YEREVAN 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՐ ՎԻՐԱՊ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,
ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀՏԴ 27-9:930.2
ԳՄԴ 86.37+63.2
Հ 422

*Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագիրներ՝ պատմական գիտ. դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյան
պատմական գիտ. թեկնածու Գագիկ Գ. Սարգսյան*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ
Հ 422 Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական
ժառանգությունը/ Ա. Հարությունյան; Խմբագիրներ՝ Գ. Տեր-Վարդանյան,
Գ. Սարգսյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2017.- 192 + 72 էջ ներդիր:

Աշխատությունն ամփոփում է քրիստոնեության նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը: Առաջին անգամ ի մի են բերվել ու ամբողջացվել մատենագրական սկզբնաղբյուրներում՝ վանքի պատմությանն առնչվող վկայություններն ու գրչության դպրոցից մեզ հասած ձեռագրերը: Հուշարձանախմբի որմերին, խաչքարերին ու տապանաքարերին պահպանված վիմագրերը լրացնում են աղբյուրագիտական նյութն ու պարզում վանքի գոյատևման ընթացքը ԺԷ. և հետագա դարերում:

Նախատեսված է պատմաբանների, աղբյուրագետների, Հայ եկեղեցու պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն հասարակության համար:

*Տպագրվում է մեկենասությամբ ՎԱՀԵ ԵՎ ԱՆՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆՆԵՐԻ՝
ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ 2017 Թ. ԶՐՕՐՀՆՅԱՑ ԽԱՉՔԱՎՈՐԻ,
Ի ԱՐԵՎՇԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԻԱ ԵՎ ՆԱՏԱԼԻ ԴՈՒՍՏՐԵՐԻ:*

ՀՏԴ 27-9:930.2
ԳՄԴ 86.37+63.2

ISBN 978-99941-0-807-7

© Արսեն Հարությունյան, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

11 ԱՌԱՋԱԲԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

19 ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

57 ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԸ

79 ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

87 ԱԿՈՌԻՈՒՄ (ԱՐԿՈՒՌԻ) ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

94 ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ԵՎ ԱԿՈՌԻԻ
ԳՐԶԱԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՄԵԶ ՀԱՍԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

95 ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

99 Ս. ՎԻՐԱՊԻ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

113 Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

124 ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ

134 ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ

137 ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

141 ԳԱՎԱՋԱՆԱԳԻՐՔ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ

143 ՎԵՐՋԱԲԱՆ

147 PEZİOME

152 SUMMARY

156 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

166 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

169 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

243 ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

256 ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

261 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Այստեղ ամեն ինչ հոգի է:

Այստեղ՝ համատարած անդորրություն, ներքնահայեցում:

Այստեղ կը զգամ, որ տիեզերքը կը տրոփէ իր Արարչին կշռոյթովը...:

Այստեղ հոգեւորին թագաւորութեան անգահ գահակալութիւնն է:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ամփոփ, ամենապատկերավոր և զգացմունքային նկարագրություններից մեկը, որ երբևէ հնչել է մարդկության կողմից Ս. Խոր Վիրապի վանքի վերաբերյալ:

Հայ իրականության ընկալման մեջ Ս. Խոր Վիրապի վանքը և մեր Հավատքի Հայր Ս. Գրիգոր Լուսավորիչ Կաթողիկոսը միասին յուրատեսակ կրկնօրինակությամբ անցել են այն ճանապարհը, որն անցան մեր Տեր Հիսուս Քրիստոս և Սուրբ Տեղյաց վայրերը:

«Արտաշատի գուբ» կոչվող այս վայրում էր, որ տակավին ոչինչ չասող Գրիգոր անու- նով մի քրիստոնյա մարդ՝ իր իսկ դավանած Աստծո՝ Քրիստոսի այսրաշխարհային կյան- քի ընթացքի ու նրա զարգացումների նմանողությամբ ենթարկվեց շատերի համար կյան- քի հետ անհամատեղելի չարչարանքների, իսկ այնուհետ բանտարկվեց և 14 (միգուցե ավելի) երկար ու ձիգ տարիներ աղոթքով սրբացրեց այդ գուբն ու շրջակա տարած- քը: Ահա այս սուրբ հողի վրա է, որ կառուցվեց մեր ժողովրդի Սրբության Սրբոցներից Ս. Խոր Վիրապի վանքը՝ հովանին ունենալով մեր սրբազան լեռը՝ Արարատը: Երկրպա- գելի Խաչի նմանողությամբ՝ անարգ ու մահվան գույժ ազդարարող գրից վերափոխվեց «կեանք ու աւելիով կեանք» պարգևող սուրբ ու նվիրական վայրի:

Ինչպես մեր Տերը լեռան վրայից պատվիրեց Իր աշակերտներին՝ ասելով. «Գնացեք այսուհետև, աշակերտեցեք զամենայն հեթանոսս, մկրտեցեք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19), նույն կերպ և Խոր Վիրապից ու Արտաշատի բլրից էր, որ սկիզբ առավ քրիստոնեացումը մի ողջ ժողովրդի: Հանուն Սուրբ Երրորդության մեզ մկրտելու և քարոզելու Տերունական պատգամը բերող Սուրբ առաքյալներ Թադեոսն ու Բարդուղիմեոսն իրենց Սուրբ համբույրով դրոշմեցին երկիրը մեր՝ կանգնեցնելով փրկա- բեր «Օթյաց Խաչը»:

Անշուշտ, կենաց աղբյուր լինելուց զատ, շատերին նաև գերել, հետաքրքրել և կամ ու- սումնասիրության աղբյուր է դարձել Ս. Խոր Վիրապի վանքը՝ իր հնագիտական ու պատ- մաճարտարապետական հուշարձաններով: Հրատարակվել և դեռ հրատարակվելու են ինչպես կյանքի, այնպես էլ ուսումնասիրությունների առանցք դարձած Ս. Խոր Վիրապի վանքի մասին հողվածներ ու գրքեր, քանզի Երանաշնորհ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բնորոշմամբ՝ «Խորհուրդ Խորին» Խոր Վիրապի վանքի խորհրդավորու- թյունն ամբողջապես բացահայտված չէ մարդ արարածի համար:

Ահավասիկ, մարդկային ուժի ներածին չափով ուսումնասիրելու և մեկտեղելու հաջողված և մեր կողմից գնահատանքի արժանացած մի գործ է մեր Եկեղեցու նվիրյալ հայորդու՝ Արսեն Հարությունյանի «Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիճակագրական ժառանգությունը» աշխատությունը, որում համադրվել, յուրովի և նորովի է ներկայացվել Ս. Խոր Վիրապի վանքը՝ երեկ և այսօր: Այս աշխատությանն առանձնահատկություն են փոխանցում ոչ միայն վանքի գրչության դպրոցից մեզ հասած մագաղաթ-մատյանները, այլև վանական համալիրի հուշարձանների որմերի, խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները: Ինքնատիպ է նաև «Լուսանկարներ» բաժինը, որն ընթերցողին պատկերավոր կերպով պիտի հրավիրի յուրահատուկ ուխտագնացության դեպի Ս. Խոր Վիրապի վանքը: Հուսով ենք, որ հավատքի և գիտության պատվաստումից ծնված այս գիրքը ևս մեկ առիթ պիտի լինի ընթերցողին՝ այցելելու Ս. Խոր Վիրապի վանք և հաղորդակցվելու «իր բուն, սկզբնաստեղծ և աստուածակնիք լինելութեան պատկերին...»:

Գրքի հրատարակությունը հովանավորելու և նշանակալի ձեռքբերման համար մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Տիար Վահե Դարբինյանին: Լիափույս ենք, որ գիրքը ծառայելու է ի շահ ընթերցողի՝ Ս. Խոր Վիրապ վանական համալիրը բացահայտելու ճանապարհին:

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ ետուր մեզ զպատուիրանս Բո ի լուսաւորութիւն անձանց մերոց: Ընկալ և այժմ զնորարիպ գիրս զայս ի ձեռաց մերոց ի Տաճար սուրբ Բո: (Մաշտոց)

Օրհնությամբ՝
Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ
Տեսուչ Վանորեից

*Ս. Խոր Վիրապի Վանք
Փետրվար, 2017 թ.*

Ձ Ո Ն

ՆԿԻՐՎՈՒՄ Է Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԶԱՐԶԱՐԱՆԱԾ
ՍՐՔԱՎԱՅՐ ԽՈՐ ՎԻՐԱԴԻ ՎԱՔԻ ԲԱԶՄԱՅԱԶ ԴԱՏՈՒԴՅԱՆ
ՄԵՏ ՀԻՇԱՆԱԿԱԾ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻՆ՝ ԱՌԱՏՆՈՐԴՆԵՐԻՆ,
ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻՆ ԵՎ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ, Ի ՀԻՇԱՆԱԿ ԵՎ
Ի ԱՐԵՎՇԱՌՈՒԴՅՈՒՆ ՀԱՄԱՆ ՀԱՅՈՒԴՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ
ՄՇԱԿՈՒԴԱՅԻՆ ԱՐԺԲՆԵՐԸ ԴԱՀՂԱՆՈՐՆԵՐԻ

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառում, Երասխ գետի ձախ ափին է գտնվում քրիստոնյա Հայաստանի՝ Ս. Էջմիածնից հետո երկրորդ խոշոր սրբավայրը համարվող Հայոց Մեծ դարձի նախասկիզբ Խոր Վիրապ նշանավոր վանական համալիրը (ներկայումս ՀՀ Արարատի մարզի Լուսառատ գյուղից հարավ - արևմուտք, Խոր Վիրապի տասներկու մեծ ու փոքր բլուրներից ճորդ բլրի արևելյան լանջին)՝ հայտնի նաև Արտաշատի գուբ¹, Արտաշատի մենաստան, Ս. Գրիգոր Լուսավորչի վանք, Կուեր Վիրապ, Վիրապ Արտաշատու և այլ անվանաձևերով²: Այն ծովի մակերևույ-

թից բարձր է մոտ 835 մ, աշխարհագրական կոորդինատներն են՝ N 39° 52' 42.14", E 44° 34' 34.49":

Խոր Վիրապը ճանապարհորդ-տեղագիրների համար առանցքային նշանակություն ունեւ հատկապես Հայոց երբեմնի նշանավոր մայրաքաղաքներ Արտաշատի ու Ղվինի ավերակների նկարագրման առումով³:

խաչս բարեխաւսութիւն Վիրապտուրի, յիշ[եցեք] ի Քրիստոս» (*Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան (Մեսրոպ Մագիստրոս)*, Յօդուածների ժողովածու, հրատարակութեան պատրաստեց՝ *Գէորգ Տէր-Վարդանեան*, Ս. Էջմիածին, 2010, էջ 257, ծանոթ. 1): Անձնանվան ստուգաբանությունը Հր. Աճառյանը մեկնում է «Վիրապ վանքի տվածը», «Խոր-Վիրապի ուխտական գավակ» նշանակությամբ, որն աղերսվում է Աստուածատուր, Քրիստոսատուր, Տիրատուր, Խաչատուր և համանման այլ անունների հետ (*Հր. Աճառյան*, Հայոց անձնանունների բառարան (այսուհետև՝ Անձնանունների բառարան), հ. Ե., Երևան, 1962, էջ 123):

¹ Այն, որ Խոր Վիրապը կրել է նաև այս անունը, Արարատյան դաշտի բնաշխարհն ու հնությունները նկարագրելիս՝ փաստում է տեղագիր Սարգիս Ծոցիկյանը. «Այս անունը կը կրէր առաջ Խոր Վիրապ: Արտաշատի մօտ կը գտնուի անիկա: Այդ գուբը, որուն մէջ կարիճներն ու օձերը կը վխտային, Արշակունեաց թագաւորութեան ժամանակ յատկացուած էր քաղաքական այլապէս կարգի դատապարտեալներու ու մահապարտներու» (*Ս. Մ. Ծոցիկեան*, Արարատ-Կովկաս, մասն առաջին, Արարատ, Ֆրէզնօ, Քալիֆորնիա, 1917, էջ 321):

² *Ստ. Մելիք-Բախշյան*, Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009, էջ 194: Ս. Վիրապի անունն ընդհանրացվել ու իր կիրառումն է գտել նաև անձնանուններում, ինչպես օրինակ՝ Վիրապ, Վիրապիկ, Վիրապչահ, Վիրապտուր: Վերջինս հիշատակում է նաև Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս), որը 1912 թ. Ակոռի գյուղից ոչ հեռու գտնվող գերեզմանոցից գրի է առել ԺԵ-ԺԶ. դդ. թվով ութ արձանագրություն. «Թվ. ԶԽԹ. (1500) կանգնեցաւ սուրբ

³ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Հմր 2053 «Բառգիրք հայերէնէ-թրքերէն» ձեռագրում պահպանվել է վանքի տեղը մասնավորեցնող հայատառ թուրքերէն հետևյալ բացատրագիրը. «Խոր Վիրապ, Արտաշատ շէրինտետիր խարապատըր, Ը. (8) սահեթ Էջմիածինտէն Էթթէ, Գրիգոր Լուսավորիչ 14 սենէ պէլլէտի պու ղույույու» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. եօթներորդ, կազմեց *Նորայր արքեպս. Պողարեան*, Երուսաղէմ, 1974, էջ 100): Թարգմ.՝ Խոր Վիրապ - Արտաշատ քաղաքում է, ավերակ է, Ը. (8) ժամ Էջմիածնից հեռու, Գրիգոր Լուսավորիչը 14 տարի մնաց այս մրության մեջ (Թարգմանությունը՝ Մաշտոցյան Մատենադարանի արաբատառ ձեռագրերի նկարագրության և ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշ-

1816 թ. Արևելյան Հայաստանի մի շարք բնակավայրեր կատարած իր ուղևորության ընթացքում Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի սան Մեսրոպ Թաղիադյանը (հետագայում՝ հասարակական գործիչ, մանկավարժ) եղել է նաև Դվինում ու Խոր Վիրապում: Իր այցը Դվին նա այսպես է նկարագրում. «Ընդ գետն ի վեր յարուցեալ՝ գտաք զաւերակս բերթապարիսպ հզօր քաղաքին, զորմէ հաստատէր Պօղոս վարդապետ (Ղարադաղցի, մանկավարժ - Ա. Հ.), լինիլ մնացորդ նախնւոյն Դվնայ՝ Ոստանին Հայոց, զոր շինեաց Խոսրով արքայ, և արքունիս ի նմա հաստատեալ՝ տնկեաց առ երի նորա անտառս երկուն՝ զԽոսրովակերտ և զՏաճար Մայրին, ի հիւսիսոյ Արտաշատայ կամ Խոր վիրապին»⁴: Դվինի նշյալ նկարագրության առնչությամբ հնագետ Կարո Ղաֆադարյանը նկատում է, որ Մեսրոպ Թաղիադյանը բնավ չի նույնացնում հին ու նոր Արտաշատը, քանի որ տեղյակ է, որ հին Արտաշատը գտնվել է Խոր Վիրապի մոտ⁵:

Ավելի վաղ, Արտաշատի ավերակները նկարագրելիս, Խոր Վիրապը հիշատակում է նաև ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն, որը Պարսկաստան գնալիս ճանապարհին եղել է Հայաստանի որոշ բնակավայրերում. «Այս եկեղեցու (նկատի ունի Խոր Վիրապը - Ա. Հ.) և Երևանի միջև կարելի է տեսնել հայոց թագավորանիստ հին Արտաշատի ավերակները, որոնք վկայում են նրա մեծ քաղաք լինելը և այնտեղ դեռևս կան մեծ պալատի որոշ մնացորդներ»⁶: Այս հար-

ցում ևս Կ. Ղաֆադարյանը տալիս է որոշակի պարզաբանում, ըստ որի՝ Խոր Վիրապի և Երևանի միջև Դվին քաղաքի ավերակներն են, որոնք Տավերնիեն շփոթել է Արտաշատի հետ⁷: Կարծում ենք՝ Կ. Ղաֆադարյանի մոտեցումն իրավացի է, քանի որ Արտաշատի տեղը որոշվել է միայն 1920-ական թթ., երբ քաղաքից ոչ մի հետք չէր երևում: Միայն 1967 թ. Փոքր Վեդի գյուղում ջրագիծ անցկացնելիս պատահաբար հայտնաբերվել են լատիներեն արձանագրություններ⁸, իսկ 1970 թ. ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ Բաբկեն Առաքելյան, ապա՝ Ժորես Խաչատրյան) սկսել է հնամենի այս քաղաքի գիտական ուսումնասիրությունը⁹:

Բրիտանացի ճանապարհորդ Հենրի Լինչը հստակ նշում է, որ Խոր Վիրապ հռչակավոր

⁷ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, էջ 16:

⁸ Բ. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ԼՀԳ, 1967, թիվ 4, էջ 302:

⁹ Արտաշատի պեղումները երկար տարիներ ղեկավարած հնագետ Ժորես Խաչատրյանի համոզմամբ. «1970 թ. սկսված պեղումները հարուստ ու բազմատեսակ նյութեր տվեցին՝ բացահայտելով քաղաքի բազմակողմանի զարգացած մշակույթը: Պարզվեց, որ Արտաշատի բլուրները բնակեցված են եղել դեռևս վաղ երկրագործական շրջանում: Այդ են վկայում VII և VIII բլուրներում հայտնաբերված մ.թ.ա. V-VI հազարամյակի բնակավայրի հետքերը» (ժ. Խաչատրյան, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, ՊԲՀ, 2007, թիվ 2 (175), էջ 5, հմմտ. Հայկական ճարտարապետության պատմություն, հ. առաջին, Երևան, 1996, էջ 218): Ինչ վերաբերում է բուն քաղաքին, ապա պեղումների արդյունքներով հնարավոր է դարձել արձանագրել, որ. «Արտաշատը զբաղեցրել է Խոր Վիրապի տասը բլուրները (բարձր. 20-70 մ), դրանց հարող հարթավայրի հարավային և հարավարևելյան հատվածները, որտեղ կա ևս երկու բարձր ու մեծ բլուր (XI և XII, բարձ. մոտ 50 մ)» (ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 6):

խատող, թուրքագետ Անի Ավետիսյանի):

⁴ Մ. Թաղիադյան, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 95:

⁵ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 15:

⁶ Jean-Baptiste Tavernier, Les six voyages de Turquie et de Perse, Introduction et de Stephane Yerasimos, I, Paris, 1981, p. 82.

մենաստանը գտնվում է. «... ճիշտ այն տեղը, ուր, ըստ հայկական աւանդութեան, Սուրբն Գրիգոր, քրիստոնէութեան հիմնադիրն ի Հայաստան, բանտարկուեցաւ տասներեք տարիներ խորունկ փոսի մը մէջ»¹⁰ հավելելով նաև այն, որ «Մենաստանին ետին և շուրջը տարածուող երկիրը շատ հարուստ է պատմական և հնագիտական տեսակետներով... Այս շրջանին մէջ ուղեւորը կրնայ գննել Արտաշատի և Դուինի վայրերը...»¹¹:

Իր ճանապարհորդական նոթերում Խոր Վիրապին անդրադարձել է նաև գերմանացի Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը: Նա նախ փաստագրում է քարտեզագիր Հ. Կիպերտի կողմից Խոր Վիրապի տեղադրությունը Արտաշատից 11 կմ հարավ, ապա Ագաթանգեղոսի Պատմության որոշ դրվագներ վկայակոչելով՝ նկատում է, որ գնդան-արգելարանի գոյությունը Արտաշատի ամրոցում հնարավորություն է տալիս Խոր Վիրապը հենց Արտաշատ քաղաքում տեղակայել¹²:

Պետք է արձանագրել, որ ԺԹ. դարի օտարագրի ճանապարհորդների ու հայագետների «կովկասյան» տպավորություններից Խոր Վիրապի, կամ գոնե Արտաշատ քաղաքի համառոտ նկարագրությունը երբեք չի վրիպել: Այս շարքում առանձնանշելի են հատկապես Ջեյմս Մորիերի¹³, Անտուան Ժան Սեն-Մարտենի¹⁴, Սըր Ռոբերտ Քեր Պորտերի¹⁵,

Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերյենի¹⁶, Ջոն Բուչան Տելֆերի¹⁷ և այլոց աշխատությունները, որոնցում վկայված տեղեկությունները հիմնականում կրկնում են վերը նշված տեղագրական «դրվագները», ըստ այդմ բավարարվենք միայն աղբյուրները հղելով:

Խոր Վիրապի վանքը չէր կարող վրիպել նաև հայագիտության խորագիտակ Հ. Ղևոնդ Ալիշանի ուշադրությունից, ով հեռավոր Վենետիկի ափերից ուրվագծում է վանքի ճշգրիտ տեղագրությունը. «...մերձ Երասխա նուազ քան զմղոնաչափ մի, և իբրու չորիւք մղոնօք կամ խուն աւելի բացակայ յՈվայից գեղջէ, ոչ աննշան վայրի ի բնէ: Քանզի ի հարթ հաւասար դաշտի անդ Երասխայ և մերձ ի նոյն յա-հեկէն՝ ամբառնայ քարաբլուր մի տողոմեան գորշագոյն երկաթատարր, յորոյ յարեւելեան հարաւային լանջս կառուցեալ կայ հռչակեալն այն և մի ի գերագոյն ուխտատեղեաց Հայոց՝ մենաստանն Խոր վիրապի, որ և ըստ նախնականն պայմանի յաճախ առ մատենագիրս մեր սոսկապէս Վիրապ կոչի, ստուար քաղաքորմովք պարսպեալ, բրգամբք և մեծաւ դրամբ յարեւելակողմանն...»¹⁸: Համանման է նաև Քաջբերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) նկարագրությունը, ըստ որի՝ Յուվա գյուղից. «...թեքվելով դեպի հարավ, 3-4 վերստ հեռու, ձեր աչքին կներկայանա,

Robert Ker Porter, vol. II, London, 1822, p. 619-621.

¹⁰ Հ. Ֆ. Պ. Լիսն, Հայաստան. ուղևորութիւններ և ուսումնասիրութիւններ, թարգմ.՝ Լ. Լարենց, Ա. հատոր, Կ. Պոլիս, 1913, էջ 129-130:

¹¹ Նույն տեղում, էջ 130:

¹² C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, I, Berlin, 1910, s. 174.

¹³ A second Journey through Persia, Armenia, and Asia minor, to Constantinople, between the years 1810 and 1816, By James Morier, London, 1818, p. 342-343.

¹⁴ Memoires historiques et geographiques sur l'Armenie, Par M. J. Saint-Martin, tome second, Paris, 1819, p. 419-421.

¹⁵ Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia, during the years 1817, 1818, 1819 and 1820, By Sir

¹⁶ Voyage Autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Georgia, en Armenie et en Crimee, Par Frederic Dubois de Montpereux, tome III, Paris, 1839, p. 480-483.

¹⁷ The Crimea and Transcaucasia being the narrative of a Journey in the Kouban, in Gouria, Georgia, Armenia, Ossety, Imeritia, Swannety, and Mingrelia, and in the Tauric range, By J. Buchan Telfer, vol. 1, London, 1876, p. 223.

¹⁸ Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց՝ Հ. Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, էջ 435 (այսուհետև՝ Ղ. Ալիշան):

Արաքսի ծախ ափում, մի ժայռոտ բլրակ, որի արևելյան լանջի օձապտույտ ճանապարհը տանում է դեպի ամրոցածև շինությունների քառակուսի քարե բարձր պարիսպները... Այդ մենաստանն է Խոր Վիրապը, որ արդեն հայտնի է դեռևս մեր պատմագիրներից և, որ կազմում էր հանցավորների ու մահապարտների պատժարանը»¹⁹:

Նկարագրություններից հստակ երևում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչի բանտ-վիհի²⁰ վրա կառուցված Խոր Վիրապը մեր նշանավոր մենաստաններից է, քրիստոնեության հիմնադիր-սրբավայրերից մեկը, որն իր ուրույն տեղն ունի Արտաշատ ու Դվին հնամենի մայրաքաղաքների համայնապատկերում: Վանքը հետագայում շրջափակել են պարսպով ու հաստատուն բուրգերով՝ տեղում հաստատելով վանական միաբանություն: Զարգացած միջնադարում, ի դեմս ականավոր մատենագիր Վարդան Արևելցու՝ այն հայտնի է դարձել իբրև ուսումնական ու գրչության կենտրոն, ինչը մեծապես կարևորում է նրա դերն ու նշանակությունը ժամանակի հոգևոր ու կրթամշակութային կյանքում:

¹⁹ *Քաջբերունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան)*, Ճանապարհորդական նկատողություններ, հրատ. պատրաստեցին՝ *Ա. Քալանթարյանը, Գ. Սարգսյանը, Հ. Մելքոնյանը*, Երևան, 2003, էջ 27 (այսուհետև՝ Քաջբերունի):

²⁰ Այն, որ տարածաշրջանում նման վիհեր եղել են, ապացուցվել է նաև Դվինի 1952 թ. հնագիտական պեղումներով: Կենտրոնական թաղամասում՝ Կաթողիկե եկեղեցուց հարավ, Կ. Ղաֆադարյանը պեղել է 2, 50 մ խորության, վերնամասում՝ 0, 80 մ, իսկ հատակին՝ 3, 20 մ տրամագծով հոր, որի նշանակությունը հնագետը կապում է ստորգետնյա զնդանի հետ, որտեղ գցել են ծանր հանցագործներին: Հնում գոյություն են ունեցել նման բանտեր, որոնք իրենցից ներկայացրել են ցամաք հոր, վիհ կամ վիրապ, որ կոչվել են նաև զնդան: Իբրև օրինակ հնագետը վկայակոչում է Ագաթանգեղոսի Պատմությունից հայտնի Արտաշատի վիրապը, որն այսօր կոչվում է Խոր Վիրապ՝ ի նշանավորումն համանուն վանքի (*Կ. Ղաֆադարյան*, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1982, էջ 24-25):

Խոր Վիրապի տեղում է գտնվել երբեմնի Արտաշատ մայրաքաղաքի պաշտամունքային կենտրոնը, որտեղ կառուցվել է Հայաստան աշխարհի ու Արտաշատի հովանավոր Անահիտ աստվածուհուն նվիրված տաճարը: Պատմահայր Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ Արտաշես Ա.-ն (մ.թ.ա. 189-160) «...շինե՛լ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ... կանգնե՛լ ի նմա մեհեան, և փոխե՛լ ի նա ի Բագարանե՛ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս, բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնե՛լ հուպ ի ճանապարհն»²¹: Այսինքն՝ Արտաշեսն այստեղ մեհյան է կառուցել՝ Բագարանից փոխադրելով Լուսին - Անահիտ - Արտեմիսի արձանն ու այլ կուռքեր, իսկ Արեգ - Միիր - Ապոլլոն - Հելիոսի արձանը կանգնեցրել է քաղաքից դուրս՝ ճանապարհին կից: Տրդատ Ա.-ի (66-68) օրոք այստեղ է կանգնեցվել նաև Տիրի արձանը, քանի որ այդ ժամանակաշրջանում Տիրը համադրվեց Ապոլլոն - Հերմեսի հետ²²:

Սույն ուսումնասիրության երեք գլուխներում համապատասխանաբար ներկայացված են նախ՝ վանքի վերաբերյալ առկա պատմական (սկզբնաղբյուրներ, ուսումնասիրություններ) տեղեկությունները, ապա ի մի է բերվել ու ամբողջացվել այստեղից մեզ հասած ձեռագիր ու վիմագիր ժառանգությունը:

Խոր Վիրապի պատմության վերաբերյալ առկա մատենագրական վաղագույն հիշատակությունն Ագաթանգեղոսինն է, երբ դեռևս վանական կենտրոնի նշանակություն չունե-

²¹ *Մովսես Խորենացի*, Հայոց Պատմութիւն, [քննական բնագիրը՝ *Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի*] Մատենագիրք Հայոց (այսուհետև՝ ՄՀ), հ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, Գիրք Բ., գլ. ԽԹ.:

²² *Ժ. Խաչատրյան*, Արտաշատը հայոց դարձի նախօրեին և հետո, «Էջմիածին», 2002, Ժ., էջ 54:

ցող Արտաշատի բանտ-արգելարաններից մեկում քրիստոնեության հաստատման համար իր չարչարանքներն էր կրում Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Առանձնակի կարևորություն ունեն պատմական Արտաշատում դեռևս 1970 թվականից պարբերաբար իրականացվող հնագիտական պեղումների արդյունքները, որոնց հիմամբ շարունակում են ճշտվել ու գիտականորեն հիմնավորվել մութ մնացած բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Խոր Վիրապին առնչվող: Պատմական նյութի վկայակոչմամբ՝ հնարավոր է դառնում ամբողջացնել ու տարբերակել վանքի հաստատման ու ձևավորման շրջափուլերը. եկեղեցիների, ապա վանական դպրոց - վարդապետարանի հիմնում, Վիրապավանից թեմի հաստատում, միաբանության կենցաղային նշանակության շինությունների կառուցում, պարսպապատում և այլն: Այս համատեքստում նշելի են նաև տարբեր պատմաշրջաններում՝ Խոր Վիրապի հետ առնչվող քաղաքական իրադարձությունները, որոնք հաճախ խոչընդոտ ու պատուհաս էին դառնում վանքի ու վանական կյանքի բնականոն գոյատևման համար:

Խոր Վիրապի վանքը, սկսած ԺԳ. դարից, հայտնի է դարձել իբրև գրչության կենտրոն, ուր հիմնադրվել է նաև դպրոց-վարդապետարան: Անվանի մատենագիր Վարդան Արևելցու՝ Խոր Վիրապում հիմնած դպրոցին համառոտ անդրադարձել է Վահան Եպիսկոպոս Տերյանը²³, ապա պատմաբան-աղբյուրագետ Կարեն Մաթևոսյանը (այդ թվում նաև այստեղից մեզ հասած ծեռագրերին), համաձայն որի՝ «...վանքի պատմության մշակութային առումով ամենավառ շրջանը կապված է մեծանուն Վարդան Արևելցու անվան

ու գործունեության հետ»²⁴, երբ վանքում հաստատվեց դպրոց, ուր ուսանելու էին գալիս Հայաստանի ու անգամ Կիլիկիայի տարբեր շրջաններից²⁵: Մեծանուն մատենագրի կյանքի ու գործունեության առավել ամփոփ քննությունը պատկանում է պատմաբան-ծեռագրագետ Փայլակ Անթապյանին, որն իր երկհատոր ուսումնասիրության էջերում տալիս է մատենագրի գիտական վաստակի արժանի գնահատականը²⁶:

Մեզ են հասել Խոր Վիրապում ընդօրինակված կամ գրչագրումն այստեղ սկսած, իսկ մեկ այլ վայրում ավարտած մոտ մեկ տասնյակ ծեռագիր մատյաններ, մեծ մասը՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (ՀճԻ 544, 811, 3082, 3825, 5413, 6752, 7044 և այլն): Հիշյալ ծեռագրերի (նաև Ակոռիի գրչակենտրոնից մեզ հասած ծեռագրերը) համառոտ նկարագրությունն ու հիշատակարանները հատվածաբար ներկայացված են աշխատության երկրորդ գլխի վերջում՝ իբրև հավելված, որը եզրափակում է երկու գրչակենտրոններից մեզ հասած 18 ծեռագրերի ընդհանուր ժամանակագրական աղյուսակը:

Խոր Վիրապի պատմության առավել խոր ու համապարփակ ուսումնասիրման համար անփոխարինելի սկզբնաղբյուրներ են նաև տեղի վիմագրերը, որոնք ժամանակագրորեն

²³ Վահան Եպիսկոպոս Տերյան, Խոր վիրապի վանքը և ուխտագնացություն, «Էջմիածին», 1966, Դ., էջ 33-34:

²⁴ Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, թիվ 2-3, էջ 174:

²⁵ Տեղեկություն է պահպանվել այն մասին, թե «Վարդան Արևելցու դպրոցը համարյա շարժական բնույթ է ունեցել՝ Խորվիրապ, Հաղբատ, Սաղմոսավանք, Թեղենյաց մենաստան, Աղջոց վանք և նորից Խորվիրապ» (Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, 1976, էջ 794):

²⁶ Փ. Փ. Անթապյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա., Երևան, 1987; գիրք Բ., Երևան, 1989:

թեև հին չեն, բայց մեծ արժեք ունեն վանքի՝ Ժե. դարի վերագարթոնքը (արտահայտված հիմնականում եկեղեցաշինությամբ) ի նորո ուսումնասիրելու առումով: Պահպանված վիմագրերը մինչ օրս ամբողջովին հավաքված ու պատշաճ կերպով ուսումնասիրված չէին: Սրանով պայմանավորված՝ քննության ենթակա 69 վիմագրից միայն 16-ն է հրատարակված, այսինքն՝ բազմաթիվ վիմագրեր ընդհանրապես սպորդել են ուսումնասիրողների ուշադրությունից կամ արժևորվել են միայն առանձին կարևորություն ունեցողները:

Խոր Վիրապի վանքից ընդամենը երեք վիմագիր է հիշատակում Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես Եպս. Շահխաթունյանցը²⁷. դրանք ժամանակագրորեն ներկայացված են նաև Կարապետ Կոստանյանցի «Վիմական տարեգրում»²⁸: Հրատարակված վիմագրերին ևս երեքն է ավելացրել Հ. Ղևոնդ Ալիշանը²⁹: Մատթեոս Փափազյանցի պատկերագիրք-ուսումնասիրության չորրորդ գրքում Խոր Վիրապից երկու արձանագրություն է հիշատակված, որոնցից մեկը՝ աղավաղված³⁰: Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա առնչությամբ՝ վանք կատարած ուխտագնացությունը նկարագրելուց հետո, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Վահան Եպիսկոպոս Տերյանն անդրադառնում է Խոր Վիրապի պատմությանն ու հատկապես Վազգեն հայրապետի հոգածությամբ՝

այստեղ իրականացված բարենորոգչական աշխատանքներին՝ զուգահեռ վկայակոչելով նաև Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուց երկու արձանագրություն³¹: Վիմագիր փակագրությանը նվիրված իր հոդվածում Խոր Վիրապից երեք փակագիր է քննում վիմագրագետ Սուրեն Սաղումյանը³²: Եվ, վերջապես, Ճարտարապետ Սուրադ Հասարայանը վեց վիմագիր է վկայակոչում ու դրանց մի մասը համեմատական քննության դնում նախորդ հրատարակությունների հետ՝ վանքի պատմությանը նվիրված մի հոդվածում³³: Չմոռանալով, որ Կովկասի հնագիտության նյութերի ժողովածուում (MAK) տեղ է գտել Խոր Վիրապից թվով վեց արձանագրության ռուսերեն թարգմանություն՝ հիմնականում պակասավոր³⁴: Այսպիսով, եթե կազմելու լինենք վանքի վիմագրության նախընթաց հրատարակությունների քանակական ընդհանուր աղյուսակ, ապա կունենանք հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 1):

Հարկ է նշել, որ վիմագրերի առկա հրատարակությունները զուրկ են գիտական վերծանությունների համար ներկայումս ընդունելի բաղադրիչներից՝ գրչագիր, լուսանկար, վերծանությունները համապատասխան պայմանական նշաններով և այլն, ուստի վկայակոչվող բոլոր արձանագրություններն այս մակարդակով հրատարակվում են առաջին

²⁷ *Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց*, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ *Ս. Տեր-Ստեփանյանի*, Ս. Էջմիածին, 2014, էջ 395-397:

²⁸ Վիմական տարեգիր (այսուհետև՝ ՎՏ). ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց *Կ. Կոստանեանց*, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 187-188, 200:

²⁹ *Ղ. Ալիշան*, Այրարատ, էջ 437-439:

³⁰ Հնութիւնք վանօրէից. Գողթան գաւառ, գիրք չորրորդ, կազմեց՝ լուսանկար *Մ. Փափագեանց*, Վաղարշապատ, 1891:

³¹ *Վահան Եպիսկոպոս Տերյան*, նշվ. աշխ., էջ 31-32:

³² *Ս. Սաղումյան*, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, ԼՀԳ, 1980, թիվ 3, էջ 88-90:

³³ *Մ. Հասարայան*, Հայոց դարձի նախասկզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը, «Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը», Երևան, 2001, էջ 187-188, 190:

³⁴ Материалы по археологии Кавказа. Собранные экспедициями императорского московского археологического общества, под редакцией *П. С. Уваровой*, вып. XIII, Москва, 1916, с. 76-78 (այսուհետև՝ МАК).

անգամ: Ավելորդ չհամարեցինք այս գլխի վերջում գետեղել նաև Խոր Վիրապի արձանագրություններն ամբողջացնող ժամանակագրական աղյուսակ՝ մասնավորեցնելով նրանց գտնվելու տեղն ու բնույթը:

Հայաստանի զբոսաշրջության կենտրոններից Խոր Վիրապ վանական համալիրի

պատմության համակողմանի քննությունը մեծապես կարևորվում է, նկատի առնելով համայն հայության՝ քրիստոնեության այս սրբազան օջախի հանդեպ ունեցած բացառիկ վերաբերմունքը՝ ի նշան սիրո, համերաշխության ու մեծ հավատի առ Աստված:

Աղյուսակ 1

Հմ	Հրապարակիչ	Ս. Վիրապ	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի	Ս. Աստվածածին եկեղեցի	«Օթյաց Խաչ» սրբավայր
1.	Շահխաթունյանց Հովհաննես եպս.	1	2		
2.	Ալիշան Ղևոնդ	1	3	2	1
3.	Կոստանյանց Կարապետ (ՎՏ)	1	2		
4.	Փափագյանց Մատթեոս		1	1	
5.	Տերյան Վահան եպս.	1	1		
6.	Սաղումյան Սուրեն		1	2	
7.	Հասրաթյան Մուրադ		5	1	
8.	MAK, B. XIII	1	2	3	

* * *

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում գրքի խմբագիրներ պատմ. գիտ. դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանին և պատմ. գիտ. թեկնածու Գագիկ Սարգսյանին՝ խորհրդատվության և մշտական աջակցության համար, ինչպես նաև սիրահոգար մեզ լուսանկարներ տրամադրած պատմ. գիտ. դոկտոր Կարեն Մաթևոսյանին և լուսանկարիչ Հրայր Բազէ Խաչերյանին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վանորենից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանին, որն իր օրհնությունը բերեց գրքի ստեղծման կապակցությամբ: Նրա նախաձեռնությամբ և մեծարգո պարոն Վահե Դարբինյանի մեկենասությամբ կյանքի կոչվեց սույն աշխատության հրատարակությունը:

Արսեն Հարությունյան

Վիմագրագետ, պարմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Մաշտոցյան Մատենադարան



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*Խոր Վիրապ...
«Խորհո՛ւրդ Խորին»...*

*Խորհրդագո՛ր ըծ զօրովԺին,
Երկրպագանեմք առաջի Քո,
Ձի Հրաշագործեսցես ի մեզ
Ջսորոգումն ազգիս Հայոց:*

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հայոց Մեծ դարձի¹ առանցքային կենտրոնը համարվող Խոր Վիրապ նշանավոր վանական համալիրի պատմության վերաբերյալ հարուստ նյութ է ամբարված ինչպես հայ մատենագրության մեջ, այնպես էլ տարաբնույթ ուսումնասիրություններում: Վանքի տեղագրության շուրջ վերն արգեն խոսվեց, ուստի անցնելով պատմությանը՝ պիտի փաստենք, որ այն սերտորեն առնչվում է Հայաստանում քրիստոնեության ընդունման ու տարածման իրադարձությունների հետ, ինչով էլ պայմանավորված է վանքին տրված «քրիստոնեական նախասկիզբ սրբավայր» բնութագրական ձևակերպումը:

Խոր Վիրապի պատմության վերաբերյալ վաղագույն հիշատակությունը, ինչպես վերը նշեցինք, Ագաթանգեղոսինն է՝ կապված վիրապում Ս. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների հետ, որի պատճառով վանքը հաճախ կոչում են նաև «Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց սրբավայր»: Երբ Գրիգոր Լուսավորիչը Եկեղյաց գավառի Երիզա ավանում հրաժարվում է Անահիտ դիցուհու բազինին պսակներ դնելուց, Հայոց թագավոր Տրդատ Գ. Մեծը (287-330) հրամայում

է կապել նրա ձեռքերն ու ոտքերը և տանել. «... յԱյրարատ գաւառ, եւ տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի, եւ իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեռցի»²: 13-15 տարի³ Ս. Գրիգորը վիրապում դիմակայել է

² Ագաթանգեղայ Պատմութիւն, [քննական բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի և Սյր. Կանայեանցի], ՄՀ, հ. Բ., էջ 1366 (այսուհետև՝ Ագաթանգեղոս):

Ավանդությունը պատմում է, որ Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապը նետելու համար Տրդատը պատուհասվում է Աստուծոց. «Նա խլանալով բնակություն է հաստատում Դերսիմի անտառներում: Այստեղ կա մի անմատչելի ու անթափանց պուրակ, որը կոչվում է Տրդատա մորի» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 394):

³ Ըստ Ագաթանգեղոսի՝ Գրիգորը Խոր Վիրապում անցկացրել է 13 տարի. «Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան» (Ագաթանգեղոս, էջ 1366), ըստ Զենոբ Գլակի (Նաև՝ Հովհան Մամիկոնյանի (Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ, քննական բնագիրը և յառաջաբանը՝ Ալեքսան Յակոբեանի, ՄՀ, հ. Ե., է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1005), Ուխտանեսի (Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և առաջաբանը՝ Պետրոս Յովհաննիսեանի և Գեորգ Մադոյեանի, ՄՀ, հ. ԺԵ., Ժ. դար, Երևան, 2011, էջ 498) և այլոց)՝ 15. «...նորա արկեալ զնա ի Վիրապն ներքին ամս հնգետասան» (Պատմութիւն Տարաւնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի, ի Վենետիկ, 1889, էջ 23): Կարծիքները հակասական են նաև հետագա դարերի հիշատակություններում. վկայություններ կան նաև Գրիգորի՝ Վիրապում անցկացրած 14 տարիների մասին, ինչպես օրինակ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Հ^մ 2053 վերոնշյալ ձեռագրի բացատրագրում, ՄՄ Հ^մ 3082 ձեռագրի գրչության հիշատակարանում (տե՛ս նաև Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վարդան Վարդանյանի, Երևան, 1989, էջ 152-153, ծանոթ. 30): Ն. Ադոնցը կարծում է, որ այս ամենը Լուսավորչի կյանքի ու վարքագրության զանազան պատառիկերից կազմված լինելու ու աղբյուրների տարբերության հետևանք է. «...մի տեղ Գրիգորի Խոր-Վիրապում տանջվիլը 13 տարի է հաշվում, մի ուրիշ տեղ՝ 15, որ պարզ նշան է աղբյուրների տարբերության»

¹ Ի թիվս այլ ուսումնասիրողների՝ Հայոց Մեծ դարձի պատմությանն անդրադարձել է նաև հնագետ Հ. Հակոբյանը, որը հիշյալ ժամանակաշրջանի համար սահմանազատում է երկու շրջափուլ. առաջինն ընդգրկում է մ.թ. Բ-Դ. դդ., երբ հեթանոսության տակ ընկալվում էր մշակութային բազմազան դրսևորումների դաշտն ու պետության կողմից հովանավորվող պաշտամունքը, իսկ երկրորդ փուլը, որն ընդգրկում է Ե-Է. դդ., ազգային մշակույթն իր ողջ ավանդականությամբ արդեն ներթափանցված էր քրիստոնեական գաղափարախոսությամբ և ամեն մի ունեցվածքում քրիստոնեության նկատմամբ դիտվում էր իբրև գրոհ ազգային ինքնությունության ու մշակույթի դեմ (Հ. Հակոբյան, Մեհյանների կործանման և Հայոց դարձի պատմության որոշ մանրամասներ, «Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը», էջ 155):

անասելի տառապանքներին ու ողջ մնացել. «...չորհիւ Տեառն իւրոյ: Իսկ այլ մարդիկ, որ մի անգամ իջուցեալ էր անդը՝ ամենեքեան մեռեալ էին վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղոյն, վասն կարակում տղմին, աւճախառն բնակութեան եւ խորութեանն»⁴: Հենց այստեղ էլ Ս. Գրիգորին հայտնվել է աստվածային հայտնի տեսիլքը⁵. «Զի եւ ես

(Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա., պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 170):

⁴ Ագաթանգեղոս, էջ 1368:

⁵ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքն իր տարաբնույթ առանձնահատկություններով մշտապես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Բանագետ Ս. Հարությունյանի համոզմամբ՝ Լուսավորչի տեսիլքի պլոնն իբրև աշխարհի առանցք, նյութեղեն իմաստավորում է ստանում իր իսկ տեղում Էջմիածնի Մայր տաճարի կառուցմամբ, որն իրագործվում է Գրիգորի հրամանով ու աստվածային պատգամով (Ս. Հարությունյան, Հայ առաքելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 35-36): Ազգագրագետ Լ. Աբրահամյանի կարծիքով, Լուսավորչի տեսիլքը ցուցում է ոչ միայն Ս. Էջմիածին Մայր տաճարի հիմնադրման պատմությունը, այլև ունի ծիսաառասպելաբանական հենք, որը հնարավորություններ է տալիս բացահայտել հնամենի իրողություններ ու սիմվոլային կառույցներ: Տեսիլքում հայտնված երկնային այրը ոսկե կռանով անուղղակիորեն հարվածում է դժոխքի տիրոջը (Սանդարամետին) խորհրդանշող հեթանոսական մեհյանին, ինչը ասոցացվում է առասպելաբանական ամպրոպի աստծո և նրա հակառակորդ վիշապի հետ: Ստացվում է, որ սյուժեն ամփոփում է վիշապամարտության թեման, երբ մարտի հետևանքով սպանված վիշապի մարմնից աճում է տիեզերական ծառը (Լ. Աբրահամյան, Զոհի մարմնից աճող երկնային տաճարը. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը ազգաբանական տեսանկյունից, «Հայոց սրբերը և սրբավայրերը», էջ 364-365): Այսպես էլ, փաստորեն, հեթանոսական մեհյանի կործանումից վեր է խոյանում քրիստոնեական անդրանիկ եկեղեցին, որի ճարտարապետական կերպը, որ է՝ կամարներով միմյանց կապված չորս պլոն՝ պսակված գմբեթով, ուրվագծում է Ագաթանգեղոսը (Ագաթանգեղոս, էջ 1657): Երկնային տիրոջ ձեռքի ոսկե կռանը Հ. Պետրոսյանը

ի խոր վիրապի անդ զամենայն օր տեսիլ տեսեալ աչաւք բացաւք զհրեշտակ Աստուծոյ, զի հանապազ քաջալերէր զիս...»⁶:

Պատմաբան Վրեժ Վարդանյանի կարծիքով. «Պատմական ավանդույթները ջանացել է Գրիգորին ներկայացնել առաքյալներին, հայոց լուսավորչին արժանի լուսապսակով: Նրա վարքը երկնազարդված է հրաշագործ երանգներով, որոնցից, անշուշտ, զերծ չէ նաև մահապարտների արքունի բանտում՝ խոր վիրապում Գրիգորի անցկացրած 13 տարիների, բարեպաշտ կնոջ կողմից նրան

դիտարկում է որպես «Աստված-լույս-ոսկի» խորհրդանշային եռամիասնություն, քանզի. «... միայն ոսկու օգնությամբ կարելի է ցուցել աստվածային լույսի կործանարար, բայց և արարչագործ էությունը» (Հ. Պետրոսյան, Ոսկին հայ միջնադարյան աշխարհընկալման համակարգում, «Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XIV դար)», Երևան, 2007, էջ 65): Հնագետ Հ. Հակոբյանի համոզմամբ. «Լուսավորչի լեգենդն ընդհանուր գծերով՝ նրա և Տրդատի հակադրման ու միության պատմությունն է, որ զարգանում է մեկի համար զոջումով, մաքրագործմամբ ու դարձով, իսկ մյուսի համար՝ վեհ գաղափարների համար կրած տառապանքներով, ինքնազոհողությամբ ու դրան հաջորդած արժանի հատուցմամբ, պսակվելով քրիստոնեական գաղափարների հաղթարշավով Հայոց աշխարհով և հարևան երկրներով» (Հ. Հակոբյան, Գրիգոր Լուսավորչի լեգենդի հինարևելյան և միջերկրածովյան զուգահեռները, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» հոդվածների ժողովածու, Երևան, 2000, էջ 27-28): Ինչ վերաբերում է տեսիլքին, ապա նա կարծում է, որ այն չպետք է բացատրել վաղմիջնադարյան սկզբունքներով, քանի որ հենված է հին Արևելքի դիցաբանական կառուցվածքի վրա, որտեղ լուսավոր կերպարով այրը համապատասխանում է հինարևելյան որոտի և ամպրոպի աստվածությանը՝ Թեշուբին, հին հնդեվրոպական Թոռին (Հ. Հակոբյան, Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հինարևելյան ակունքները, «Գիտելիք և խորհրդանշիչ, հավատալիք և սովորույթ», միջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 29):

⁶ Ագաթանգեղոս, էջ 1419:

կերակրելու մասին ավանդազրույցը»⁷: Ա. Ղանալանյանը «Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ» վարքաբանական ավանդազրույցում այդ մասին հիշատակում է. «Եւ զայն ամս երեքտասան, որ եղեւ Գրիգորիս ի բերդին բանտին և ի խոր վիրապին, կին ոմն այրի՝ որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յԱրհաւրաց, զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական՝ ընկենու ի ներքս ի խոր վիրապին, և այնու կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ՝ զայն ամս որ եղեւ նա անդ»⁸: Նշյալ զրույցը հիմք է դարձել Վիրապի առաստաղի արեւելյան կողմի անցքը կոչել «Պառավի ծակ», որտեղից հրեշտակի հրամանով աստվածապաշտ ծեր կինն ամեն օր գաղտնի մի կտոր հաց է նետել խոր Վիրապում բանտարկված Գրիգոր Լուսավորչին⁹: Այս ամենը բյուրեղացվել է Ագաթանգեղոսի երկում, որտեղ «Ժողովրդական ավանդությունը լրացրել է Գրիգորի հրաշապատում վարքազրույցունը»¹⁰:

Կարծիք կա, թե Արտաշատ մայրաքաղաքի միջնաբերդն ու արքայական պալատական շենքերը տեղակայված են եղել խոր Վիրապի ճեղքի վրա, իսկ վանքը հիմնադրվել է արքունի բանտ-արգելարանի տեղում, ուր իր չարչարանքներն է կրել Ս. Գրիգոր Լուսավորիչը¹¹: Հնագետ Ժորես Խաչատրյանը, բացառելով հիշյալ տեսակետը, նշում է, որ Ագաթանգեղոսի վկայությունը շատ անորոշ ու անհիմն է, քանի որ «առասպելի ստեղծման ժամանակաշրջանում միայն ճեղքի վրա էր կյանքը շարունակվում, մնացած բլուրներն ավերված էին, ուստի չէին կարող

իմանալ թագավորական պալատի գտնվելու վայրը: ճեղքի վրա պետք է լիներ նաև դեռևս քրմերի համար կառուցված բնակելի համալիրը (պալատ)»¹²: Նա հավելում է, որ անարգելով Անահիտ մայր աստվածուհուն՝ Գրիգոր Լուսավորիչը համարվում էր կրոնական հանցագործ, որին պետք է բանտարկեին Անահիտի տաճարի մոտ գտնվող բանտում, որտեղից նա պետք է դուրս գար հաղթանակած՝ խորհրդանշելով նոր կրոնի հաղթանակը հեթանոսության նկատմամբ¹³:

Ագաթանգեղոսի վկայության համաձայն՝ Գրիգոր Լուսավորիչը կուռքերին պաշտելու

¹² Ժ. Խաչատրյան, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, էջ 10:

¹³ Նույն տեղում: Տե՛ս նաև [Amina G. Kanetsian, Zores D. Khachatryan], Ai Piedi Dell' Ararat: Artaxata E L' Armenia Ellenistico-Romana a cura di Antonio Invernizzi - Studi E Materiali Di Archeologia. 10, Torino, 1998, XXIX, p. 103.

Ճարտարապետ Ստ. Մնացականյանը հավաստիացնում է, որ «Միջնաբերդը տեղավորված էր բարձր բլուրների վրա, Ժամանակակից Փոքր Վեդի գյուղից ոչ հեռու, այնտեղ, ուր այժմ բարձրանում է Խոր-Վիրապ անունը կրող նշանավոր վանական կոմպլեքսը» (Ստ. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 45-46):

Հնագետ Ժ. Խաչատրյանի և ճարտարապետ Ա. Կանեցյանի նշված աշխատության գրախոսականում հնագետ Հայկ Հակոբյանը վարկածային է համարում նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքային կենտրոնի տեղանկումը ճեղքի վրա, նշելով հետևյալը. «...հին շատ մատուռներ ու եկեղեցիներ կանգնեցված են հեթանոսական սրբավայրերի հիմքերի վրա, սակայն Խոր վիրապի եկեղեցին (բավական ուշ վերաշինված) կանգնեցված է Գրիգոր Լուսավորչի բանտարկության տեղի սրբազործման պատվին, իսկ այդ վայրը, ինչպես հավաստում է պատմական ավանդությունը՝ հին Արտաշատի միջնաբերդի բանտն էր՝ նախատեսված ծանրագույն հանցագործների համար. հակառակ դեպքում հեթանոսի հայեցակետից անհասկանալի կմնար խռովարար քրիստոնյայի բանտարկությունը հայ հեթանոսական տաճարում» (Հ. Պ. Հակոբյան, Գրախոսություն, ՊԲՀ, 1998, թիվ 3, էջ 221):

⁷ Վ. Վարդանյան, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 38:

⁸ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 368:

⁹ Նույն տեղում, էջ 383:

¹⁰ Վ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 38:

¹¹ Г. А. Тирацян, Культура древней Армении VI в. до н. э. – III в. н. э., Ереван, 1988, с. 92-93.

փոխարեն խաչեր է կանգնեցրել ավերակ-ված հեթանոսական տաճարների տեղում, այդ թվում և՛ Արտաշատում: Հենց այդ խաչանշված վայրերում Ս. Գրիգորը կառուցել է առաջին քրիստոնեական եկեղեցիները. «Սոյնպէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն. սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և յամենայն տեղիս...»¹⁴:

¹⁴ Ագաթանգեղոս, էջ 1705:

Չնայած նրան, որ քրիստոնեության տարածումն ու առաջին քրիստոնեական եկեղեցիների ու վկայարանների կառուցումը կապվում է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ, այդուհանդերձ հայագիտության մեջ հիմնավոր է այն մոտեցումը, թե մեզանում քրիստոնեական եկեղեցու հիմքերը նախանշել են դեռևս առաքյալները՝ ի դեմս Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի, Ա. դարում: Ս. Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը (Պատմութիւն Թադեոսի առաքելոյն և Սանդիստոյ կուսին, «Սոփերք Հայկականք» հ. Ը., Վենետիկ, 1853, էջ 59-75) Վենետիկի Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս Անանյանն իրավամբ համարում է Հայաստանի մեջ քրիստոնեության և եկեղեցական նվիրապետության ծագման գլխավոր աղբյուրը, որը լրացնում են նաև Ս. Բարդուղիմեոս առաքյալի (Վկայաբանութիւն Սրբոյն Բարդողոմէոսի առաքելոյ, «Սոփերք Հայկականք», հ. ԺԹ., Վենետիկ, 1854, էջ 1-30), Սուրբասյանց (նույնի, էջ 33-56) և Ոսկյանց (նույնի, էջ 59-66) վկայաբանությունները (Հ. Պողոս Անանեան, Քրիստոնեութեան հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզութենէն առաջ, «Բազմավէպ», 1978, թիվ 1-2, էջ 8):

Ըստ ավանդագրույցների՝ հիշյալ առաքյալների ու նրանց աշակերտների գործունեությունը Մեծ Հայքի հատկապես Այրարատ, Վասպուրական և Սյունյաց նահանգների մի շարք գավառներում նշանավորվել են եկեղեցիների կառուցմամբ և քրիստոնեական համայնքների ստեղծմամբ: Եկեղեցիներ են կառուցվել նաև Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների նահատակման վայրերում, առաջինը Վասպուրականի Արտազ գավառի Մակու (Ս. Թադեոսի վանք), երկրորդը՝ Աղբակ գավառի Աղամակերտ քաղաքների մոտ (Ս. Բարդուղիմեոսի վանք): Վանքեր են ձևավորվել նաև նրանց աշակերտների գերեզմանների տեղում, ինչպես Տաթևի վանքը (Եվստաթեոսի գերեզմանին), Դադիվանքը և այլն: Հնա-

Ս. Գրիգոր Լուսավորչի՝ վիրապում կրած չարչարանքների, ապա քրիստոնեություն տարածելու մասին վկայություններ են պահպանվել նաև հետագա դարերի մատենագրության մեջ: Մովսես Կաղանկատվացու երկասիրության ԺԴ. գլխում համառոտ տեղեկություն է հաղորդվում նաև Ս. Գրիգորի՝ վիրապում անցկացրած տարիների մասին. «Եւ իբրեւ ոչ ինչ կարացեալ պաճարանս գտանել՝ փոխելոյ զառաքինին յուղիղ հաւատոցն Քրիստոսի, յայնժամ ազդեալ չարին ի միտս չար արբանեկացն՝ տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապն Արտաշատ քաղաքի, յորում զերեքտասան ամ յօճախառն բնակէր վայրի...»¹⁵: «Տարոնի պատմության» էջերում Հովհան Մամիկոնյանը Գրիգորին վիրապում բանտարկելը նախ և առաջ համարում է Տրդատի վրեժխնդրության դրսևորումն իր հորը (Խոսրով Բ. Մեծ Արշակունի - 279-287) սպանող Անակ Պարթևի որդու նկատմամբ. «...իբրեւ տեղեկացաւ ի քեռոյ աներոյն Գրիգորի, եթէ՝ «Դա է որդին Անակայ, որ սպան զհայրն քո զԽոսրով», եւ նորա արկեալ զնա ի Վիրապն ներքին ամս հնգետասան»¹⁶: Այս միտքը հետագայում առաջ է քաշել նաև Քաջբերունին, ըստ որի՝ Տրդատ թագավորի հրամանով

գետ Հ. Սիմոնյանն այս շարքին ավելացնում է նաև Ծիծեռնավանքը՝ Քաջաթաղի շրջանում և Վանքասարի ժայռափոր համալիրը՝ Աղդամում: Նշված բոլոր հուշարձանները, փաստորեն, վավերացնում են նախքան Լուսավորչի գործունեությունը Հայաստանում առկա քրիստոնեական միջավայրի առկայությունը (Հ. Սիմոնյան, Հայաստանում քրիստոնեության տարածումը վավերագրող հուշարձաններ Արցախում, «Գիտություն և տեխնիկա», 1998, թիվ 7-9, էջ 10-14):

¹⁵ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 33:

¹⁶ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ, ՄՀ, հ. Ե., էջ 1005: Տես նաև Ջենոբ Ասորի, Պատմութիւն Տարօնոյ, էջ 23:

Անակի որդի Գրիգորը 13 դժնդակ տարիներ անցկացրեց Վիրապում իր հորը՝ Խոսրովին սպանելու պատճառով: Քաջբերունին նկատում է, որ «այստեղ լուսավայլում է նախկին մարդկանց կոպիտ, վրիժառու բնավորությունը, որ անմեղ որդին պարտական էր կրել մեղավոր հոր պատիժը, իսկ այդ հնադարյան կոպիտ բնավորությունը մնացել է լիովին թուրքերի մեջ»¹⁷:

Ջբաղապետը վերոնշյալը՝ պետք է շեշտենք նաև Գրիգորի՝ վիրապում հայտնվելու կրոնական դրդապատճառները, որը ոչ պակաս խթան էր հեթանոս Տրդատի գայրոյթն առավել բորբոքելու համար: Հայաստանում քրիստոնեության ընդունումն ու Գրիգորի ձեռամբ առաջին եկեղեցու ու վկայարանների կառուցումն ի վերուստ նախանշված էր: Տեսիլքը վերածվեց իրականության՝ իր սկզբնալույսն ազդարարելով հենց Խոր Վիրապից: Պատահական է, որ երախտապարտ հայ առաքելական եկեղեցին յուրաքանչյուր տարվա մարտին նշում է «Ս. Գրիգոր Լուսավորչի մոտն ի Վիրապ», իսկ մայիս-հունիսին՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն» նշանավոր տոները: Պատմաբան Ռ. Վարդանյանն իր ուսումնասիրության մեջ հատուկ անդրադառնում է հայոց մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի տոնական օրերին: Քննությունը պարզում է, որ նախապես Գրիգոր Լուսավորչին ունեցել է մեկ տոնի օր (մարտի 9-ին, իբրև անշարժ տոն), որը 480-ական թթ. սկզբներին Հովհան Մանգակունի (478-490) կաթողիկոսը սահմանեց Բուն Բարեկենդանից հաշված հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթվա կանոնի տակ. այն վերածվեց շաբաթական տոնի: Թ. դարավերջից Տոնացույցում Գրիգոր Լուսավորչին նվիրված նոր տոներ են առաջացել, որոնք ստացել են նոր անուններ ու որակումներ: Հին տոնն ստացել է «Մոտն ի Վիրապէն»

կամ «Չարչարանքն» անվանումները, որին Ժ. Դարի սկզբներից գումարվել են «Ելն ի Վիրապէն» և «Գիւտ Նշխարաց» տոները: Առաջինը դրվել է Պենտեկոստեից հաշված 14րդ օրը, երկրորդը՝ 28րդ: Հիշյալ տոները հետագայում փոփոխություններ չեն կրել և այսօր էլ տոնվում են¹⁸: Գրիգոր Լուսավորչին նվիրված տոներ հայտնի են նաև Հայսմավուրքների խմբագրություններից՝ հետևյալ խորագրերով. «Տրէ Ժ., նոյեմբեր ԺԸ. Պատմութիւն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»¹⁹ և «Քաղոց ԺԱ., դեկտեմբեր ԺԹ. Տեսիլ Սրբոյն Գրիգորի, զոր ետես ի Վաղարշապատ քաղաքի: Զիջումն Միածնի Աստուծոյ և գշինումն եկեղեցեացն»²⁰:

Այն, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տոն օրերին նաև հատուկ պատարագներ են սահմանվել, տեղեկանում ենք վիմագրերից: Իբրև օրինակ վկայակոչենք Հաղբատի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան պատի վեցտողանի արձանագրությունը, ըստ որի՝ Աբրահամ վարդապետը և իր քույր Աննան, միաբանելով Ս. Նշանին նախապես նվիրաբերել էին երկու գիրք, ապա նաև՝ Ս. Գրիգոր եկեղեցու դուռն ու այլ արդյունք, ինչի դիմաց տեր Համագասպն ու միաբանները Ս. Գրիգոր Լուսավորչի «Ելն ի Վիրապէն» տոնին Աննայի անունով մեկ պատարագ են սահմանել. «...եւ մեք ընկալաք սիրով եւ սահմանեցաք Սբ. Գրիգորի ելն ի Վիրապէն Ա. (1) պատարագ յԱննայի յանուն մատուցանել...»²¹:

¹⁸ Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 612:

¹⁹ Գիրք, որ կոչի Այսմաւուրք, որ պարունակէ յիսքեան զճառս վարուց սրբոց..., ի թիւն Հայոց ՌՃՀԹ. (1730), ի տպարանի Գրիգոր դպրի Մարսւնանեցոյ, էջ ԾԶԵ-ԾՂԲ:

²⁰ Նույն տեղում, էջ ԲԾԾԶ-ԲԾԾԸ:

²¹ Դիվան հայ վիմագրության, պրակ IX, կազմեցին՝ Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Երևան, 2012, էջ 207, արձ. 398:

¹⁷ Քաջբերունի, էջ 27:

Ս. Գրիգորի՝ վիրապում կրած չարչարանքների մասին վկայում է նաև Ուխտանեսն եպիսկոպոսը, իսկ ավելի համառոտ՝ Մխիթար Այրիվանեցին։ Ուխտանեսն իր Պատմության ԿԲ. գլուխը վերնագրել է «Յաղագս չարչարանաց սրբոյն Գրիգորի», ուր ամենայն մանրամասնությամբ շարադրում է իրադարձությունների զարգացման ընթացքը՝ հիմնականում հարազատ մնալով Ագաթանգեղոսին։ Այստեղ ևս Տրդատը Գրիգորին վիրապն է նետում իր հոր սպանության մանրամասներն իմանալուց հետո. «Իսկ իբրեւ լուաւ թագաւորն եւ տեղեկացեալ ստուգիւ, ապա հրամայեաց կապանաւք խաղացուցանել յԱյրարատեան գաւառէ, եւ տանել զնա ի Դղեակ բերդն, եւ իջուցանել ի Վիրապն, որ էր խորութեամբ անհնարին եւ խաւարին եւ գիջին, ի մէջ թիւնաւոր աւճիցն, որ շեղջա շեղջա կուտէին զմարմնովքն նորա... եւ այս լինէր զամս հնգետասան»²²։ Մխիթար Այրիվանեցին Տրդատի թագավորության 287 թ. դիմաց հաղորդում է հետեւյալը. «Թագաւորէ Տրդատ և չարչարէ զսուրբն Գրիգոր ամս երկուս եւ արկանէ ի վիրապն ամս 13. և ինքն սպանանէ զսուրբ Հռիփսիմեանս ոգիս 36 և հարեալ բարկութեամբ ի Տեառնէ՝ լինի խոզ աւուրս 75 և բժշկի հոգւով և մարմնով ի ձեռն սրբոյն Գրիգորի՝ որդւոյ Անակայ և Ոգոհեայ»²³։

Ժ. դարի մատենագիր Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի հաղորդմամբ՝ Գրիգորը վիրապում է հայտնվել Տրդատի թագավորության հենց առաջին իսկ տարում. «...վասն Քրիստոսի հաւատոցն՝ վիրապընկէց լինէր»²⁴, և միայն 15 տարի հետո. «...աստուա-

ծահրաշ յայտնութեամբ ելեալ ի վիրապէն սուրբն Գրիգոր՝ լուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ եւ բժշկութեան հարուածոցն...»²⁵։

Ինչպես տեսնում ենք, Ս. Գրիգորի վարքագրությունը մշտապես եղել է մեր մատենագիրների ուշադրության կենտրոնում, ուստի բերված վկայություններն էլ բավական են դրանում համոզվելու համար։ Նման տեղեկություններ առկա են նաև ժամանակագրություններում. ի դեպ, սրանցում ևս Ս. Գրիգորի՝ վիրապում անցկացրած տարիների քանակը միաչափ չէ։ Անանուն Սեբաստացու տարեգրության մեջ Լուսավորչի վարքը ներկայացված է համառոտ. Վիրապում նա մնացել է 13 տարի. «Եւ Գրիգորիոս անցեալ զնար առ Տրդատ թագաւորն Հայոց և բազում չարչարանս կրէ՝ Բ. (2) ամ յեկեղեաց գաւառին և յետ այնորիկ եղեալ լինի ի խոր Վիրապին ԺԳ. (13) ամ»²⁶։ Հակառակ սրան՝ Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունում կարդում ենք. «Եւ արկին զնա ի խոր Վիրապն յԱրտաշատ քաղաքի ի մէջ օձիցն թունաւորաց ամս ԵԺ.ան (15)»²⁷։ Ս. Գրիգոր Լուսավորչի լիակատար պատմություն համարվող Ագաթանգեղոսի երկը նկատի առնելով՝ համառոտ տեղեկություններ է հաղորդում նաև Բաղիշեցուն ժամանակակից Հակոբ Կարնեցին։ «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության մեջ հեղինակը ժամանակի ուշագրավ դեպքերը չի չըջանցում. «...ետ Տրդատ երկոտասան չարչարանք

առաջաբանը Գ. Մանուկեանի, ՄՀ, հ. ԺԵ., Ժ. դար, Երևան, 2011, էջ 674։

²⁵ Նույն տեղում։

²⁶ Անանուն Սեբաստացու տարեգրությունը (XIII դ.), Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 122։

²⁷ Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը (XVII դ.), Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 317։

²² Ուխտանեսն եպիսկոպոս, Պատմություն Հայոց, ՄՀ, հ. ԺԵ., էջ 498։

²³ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմություն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 45։

²⁴ Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, քննական քնագիրը և

սրբոյն Գրիգորի Բ. (2) ամ, և ետ Բ. (2) ամացն ապա ուղարկեաց ի Խոր Վիրապն, զի որպէս գրեալ կայ ի լիակատար պատմութեանն իւրում»²⁸:

Հայ մատենագրութիւնը հարուստ տեղեկութիւններ է հաղորդում նաև վիրապի տեղում վկայարան, ապա վանք հիմնելու մասին:

Սուրբ Վիրապը և Արտաշատի հեթանոսական տաճարի փոխարեն քրիստոնեական եկեղեցու կառուցումն, ինչպես տեսանք, հիշատակված են դեռևս Ե. դարից: Ծարտարապետ Ստ. Մնացականյանը, առանց որևէ աղբյուր վկայակոչելու, տեղեկութիւններ է հաղորդում Արտաշատի «Հորի» վրա դեռևս Դ. դարում կառուցված եկեղեցու մասին, որը նույն դարի կեսերին Վաղարշապատի սրբավայրերի հետ կործանել են պարսկական զորքերը: Ծարտարապետի հավաստմամբ՝ այս եկեղեցին վերականգնվել է և կրկին անգամ կործանվել արաբական արշավանքների ժամանակ²⁹: Ըստ էության՝ նա հիմք է ընդունել Հովհաննես եպս. Շահխաթունյանցի հետևյալ հիշատակութիւնը. «Այս Վիրապ մահապարտաց զկնի ելանելոյ անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի... յորոյ վերայ թերևս շինեցաւ և եկեղեցի ընդ այլ եկեղեցեացն Արտաշատու, զորս կործանեցին ընդ քաղաքին զօրքն Բ Շապուհ արքային Պարսից: Այլ անգրէն նորոգեաց զեկեղեցիսն Վահան Մամիկոնեան որդի Հմայեկայ. որպէս գրէ Վարդան. «Իսկ Վահան շինեաց զեկեղեցիսն Արտաշատու՝ զաւերեալն ի Պարսից»»³⁰: Ակներև է, որ Շահխաթունյանցի բուն աղբյուրը ոսկեդարյան մատենագրութիւնն է, ուր ի դեմս Ագաթանգեղոսի՝ բազում վկայութիւններ կան հեթանոսական մեհյանների

տեղում վկայարան-եկեղեցի կառուցելու, դրանք պարսկական զորքերի կողմից ավերելու, ապա հայ նախարարների ու մեծավորների հոգածութեամբ վերակառուցելու մասին: Եթե Ագաթանգեղոսը վկայում է Ս. Գրիգորի կողմից Հայաստանի տարբեր նահանգներում ու գավառներում (այդ թվում՝ Արտաշատ քաղաքում) մեհյանների կործանման ու նրանց տեղերում եկեղեցիների կառուցման մասին, ապա Փափսոս Բուզանդը մանրամասն նկարագրում է Հայոց քաղաքների ավերմունքն ու ժողովրդի գերեվարումը Պարսից Շապուհ Բ. արքայի կողմից. «Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա... Եւ զամենայն շինուած քաղաքին հրճիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. պարիսպն ըստ նմին աւրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին, և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին»³¹: Ղազար Փարպեցու հաղորդմամբ՝ Ե. դարավերջին Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում նախնիների կառուցած սրբավայրերը վերականգնելու սրբազան գործին, որոնցից շեշտում է հատկապես Վաղարշապատի Կաթողիկեն. «...զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ չքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց... Եւ անտի չուեալ՝ յուստանն ի Դուին մտանէին...»³²:

Հոգևոր կենտրոնի ձևավորման վերաբերյալ հետագա՝ առավել հիմնավոր վկայու-

²⁸ Հակոբ Կարնեցի, «Տեղագիր վերին Հայոց», Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 551:

²⁹ Սպ. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, էջ 48:

³⁰ Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., էջ 395:

³¹ Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, [վննետիկեան 1933 թ. հրատարակութիւն], ՄՀ, հ. Ա., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 371:

³² Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց [և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի և Սպ. Մալխասեանի], ՄՀ, հ. Բ., էջ 2350-2351:

թյունները է. դարից են: «Շինող» մականվամբ Ներսես Գ. Տայեցի (641-661) կաթողիկոսը է. դարի կեսերին վերապի վրա եկեղեցի է կառուցել: Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ հայրապետական գահն ստանձնելուց հետո Ներսես կաթողիկոսը. «...հաւաքէր զբազմութիւն զիականցն անկելոց, եւ ի նմին տեղ վերստին շինէր զհրդեհեալ զվկայարան մեծի նահատակին Սերգեայ: Զկնի ապա շինէ տաճար սրբութեան եւ ի վերայ վերապի սրբոյն Գրիգորի, ուր ի մէջ թունաւորացն թաղեալ, առաքելանուէր այրն Աստուծոյ զկամակոր վիշապին ջախջախեաց զգլուխ...»³³, իսկ Ստեփանոս Ասողիկի վկայությամբ՝ եզր կաթողիկոսին հաջորդեց Ներսես եպիսկոպոս Տայեցին, որը. «...շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ վերապին յԱրտաշատ եւ զմիւս եւս հրաշապայծառ եկեղեցին զսուրբ Գրիգոր ի Վաղարշապատու առապարին, զանազան յաւրինուածով»³⁴: Համանման է նաև Կիրակոս Գանձակեցու հաղորդումը. «Յետ եզրի առնու զկաթողիկոսութիւնն տէր Ներսէս ամս քսան... շինեաց և զՎիրապն՝ զտեղիս սրբոյն Գրիգորի...»³⁵:

Ներսես կաթողիկոսի՝ Խոր Վիրապում եկեղեցի հիմնելու մասին վկայությունը պատմականորեն առնչվում է նույն կաթողիկոսի կողմից Դվինի Ս. Սարգիս (տեղն անորոշ) և Վաղարշապատի Ս. Գրիգոր կամ Զվարթնոց վեհաշուք եկեղեցիների կառուցման հետ: Սրանով պայմանավորված՝ Խոր Վիրապը քանիցս հիշատակվում է պատ-

մագիրներին՝ հատկապես Զվարթնոցի կառուցման ժամանակի վերաբերյալ առկա վկայություններում, ինչպես նաև ուսումնասիրություններում:

Հետաքրքիրն այն է, որ օծվելով կաթողիկոս (641 թ.)՝ Ներսեսը մինչ Զվարթնոցի տաճարի հիմնումը ձեռամուխ է եղել նախ Դվինի, ապա Խոր Վիրապի եկեղեցիների կառուցմանը. «Հայրապետն Ներսէս շինէ զՍուրբ Գրիգոր, զգարմարցուցիչն տեսողաց: Բայց յառաջ շինէ զվկայարան Սրբոյն Սարգսի ի Դլին, եւ զոր ի վերա վերապի սրբոյն Գրիգորի»³⁶: Կ. Մաթևոսյանի հավաստմամբ՝ Ներսես Տայեցի կաթողիկոսի բոլոր երեք նշանավոր կառույցներն առաջին անգամ մեկ տեղում թվարկել է Սամուել Անեցին, որը նախ նշում է «գարմարցուցիչն տեսողաց» Ս. Գրիգորը (Զվարթնոց), ապա ավելի վաղ կառուցված Դվինի Ս. Սարգիսն ու Խոր Վիրապի վրա վեր խոյացած եկեղե-

³⁶ Սամուել Անեցի, Հաւաքմունք ի պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց՝ Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթևոսեանի, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2011, էջ 101: Ի տարբերություն Անեցու, Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մեջ թվականն ու դեպքերը մի փոքր այլ են. «Թվին ՂԶ. (647) նստաւ հայրապետ տէր Ներսէս, ի գաւառէ Տայոց, ի գեղջէ Իշխանայ, ամս Ի. (20), ձեռամբ Թէոդորոսի իշխանի: Սա մեծապէս նորոգեաց զԷջմիածինն և զԽոր Վիրապն և զԴվնայ սուրբ Սարգիսն» (Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 330): Եվս երկու անանուն ժամանակագրություններում Դվինի Ս. Սարգիս և Վիրապի Ս. Գրիգոր եկեղեցիների կառուցումը նշված է Հայոց ՃԲ. (653) տարեթվի դիմաց. «ՃԲ. (653) թվին հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր և զսուրբ Սարգիս ի Դվին և զՎիրապն» (Անանուն ժամանակագրություն (XIII դ.), Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 24, 148): Թվականների նման տարբերությունները թերևս տարբեր ընդօրինակությունների ու գրչական միջամտությունների արդյունք են:

³³ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և առաջաբանը՝ Գ. Տէր-Վարդանեանի, ՄՀ, հ. ԺԱ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 408:

³⁴ Ստեփանոսի Տարանեցոյ Պատմութիւն տիեզերական, ՄՀ, հ. ԺԵ., էջ 694:

³⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 60-61:

ցին³⁷: Ըստ էության, եկեղեցիների կառուցման գործը Ներսեսն ավարտին է հասցրել բավական կարճ ժամանակահատվածում, քանի որ համաձայն Սեբեոսի վկայության՝ Թեոդորոս Ռշտունու՝ Արծափի բերդում տարած հաղթանակից հետո, մոտավորապես՝ 642-643 թթ., նա արդեն սկսել է Զվարթնոցի հիմնարկությունը. «...յամին երկրորդի Կոստանդնի (642 թվականն է - Ա. Հ.) ... եղև յաղթութիւն մեծ զաւրաւարն Հայոց... Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքին... Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր զաւրացն...»³⁸: Թ. Թորամանյանը նկատում է, որ եկեղեցիների շուտափույթ կառուցումը պայմանավորված էր նաև երկրի քաղաքական իրադրությամբ, մասնավորապես՝ արաբների կործանարար արշավանքի հետևանքով երկիրը նյութապես մեծ վնասներ էր կրել, ամենուրեք հազարավոր զինվորներ էին, իսկ ժողովուրդը հայտնվել էր սգի ու մոլորության մեջ, ուստի պետք էր արագ դուրս գալ ստեղծված իրավիճակից³⁹: Պատահական չէ Վարդան Արևելցու վկայությունը, թե Ներսեսը. «...հաւաքեալ զբազմութիւն զինականցն՝ թաղէր, և ի նմին տեղոջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի: Շինէ տաճար սրբութեան և ի վերայ վիրապին և արկանէ հիմն տաճարի մեծի յանուն սրբոյն Գրիգորի...»⁴⁰: Այստե-

ղից էլ Թ. Թորամանյանը ենթադրում է, որ «...Վիրապի եկեղեցին ևս պետք է որ իբրև վկայարան շինված լինի, որովհետև արաբներու սուրը ինչպես Դվնա մեջ, այնպես ալ Դվնեն դուրս ոչ ոքի չէր խնայած, ուստի մեծ քանակութեամբ զինվորներ ալ թաղեց Վիրապի մեջ. եթե այդպիսի նպատակ չլիներ, հարկ չկար, որ Ներսես շտապեր անմիջապես շինելու ձեռնարկել Վիրապի եկեղեցին»⁴¹:

Ներսեսաշեն եկեղեցու ճարտարապետական հորինվածքի վերաբերյալ ուշագրավ է արաբ մատենագիր Ալ-Մուկադասի հիշատակությունը, ըստ որի՝ Դվինից ոչ հեռու (ընդամենը 3 փարսախ, այսինքն՝ 17,256 կմ) գտնվել է շուրջանակի սրահով և գմբեթաձև գլխարկի նմանվող՝ սպիտակ սրբատաշ քարից կառուցված մի եկեղեցի՝ պսակված ութսյուն ռոտոնդայով⁴²: Ճարտարապետ Ստ. Մնացականյանը հավանական է համարում, որ խոսքը «...վերաբերում է հենց Խոր-Վիրապի եկեղեցուն, որի հեռավորությունը Դվինից ճիշտ և ճիշտ համընկնում է արաբ մատենագրի նշած տարածությանը»⁴³: Ըստ նրա՝ «Խոր-Վիրապի Ներսեսաշեն կառուցվածքը սպիտակ կրաքարից ութ սյուների վրա բարձրացող կենտրոնագմբեթ կառուցվածք է, որի արևելյան աբսիդում եղել է Աստվածածնի որմնակարը կամ, որ և ավելի հնարավոր է՝ խճանկարը»⁴⁴: Փաստորեն, Ներսեսաշեն եկեղեցին իր ծավալատարածական մի շարք լուծումների տեսակետից նախորդել է հայ ճարտարապետության գլուխ-

³⁷ Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 372, ծանոթ. 123:

³⁸ Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 146-147:

³⁹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, [հ. առաջին], Երևան, 2013, էջ 321:

⁴⁰ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցույ Պատմություն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, 217 էջ:

⁴¹ Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. առաջին, էջ 321:

⁴² Н. А. Карацлов, Сведения арабских географов IX и X веков по Р. Хр. о Кавказе, Армении и Азербайджане, VII, Ал-Мукаддасий, "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. тридцать восьмой, Тифлис, 1908, с. 16:

⁴³ Սր. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 19:

⁴⁴ Նույն տեղում, էջ 20:

գործոց Զվարթնոցի տաճարին և ինչպես Ստ. Մնացականյանն է կարծում. «...բացառված չէ, որ այն կառուցել է նույն Զվարթնոցի ճարտարապետը»⁴⁵:

Թ. Թորամանյանը համառոտ է անդրադարձել խոր Վիրապին: Նա միայն նշում է, որ վանքն «...ուների յուր պատմական ծագումը, որ ժողովրդական հավատալիքների հետ սերտիվ կապվում է, այսինքն՝ հայոց մեջ քրիստոնեություն տարածող Գրիգոր Լուսավորիչը այստեղ բանտարկված է եղել Տրդատ թագավորի հրամանով, որովհետև խոր Վիրապը թագավորական ժամանակ թե՛ աքսորավայր էր, և թե՛ բանտ էր...»⁴⁶: Վանքի առաջին հիշատակությունն ըստ նրա է. դարից է՝ կապված Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսի անվան հետ, իսկ ներկայիս եկեղեցու համար նշում է, թե այն «...ուչ ժամանակի է, հավանաբար 17-րդ դարի գործ է»⁴⁷:

Վանքի հետագա դարերի պատմության վերաբերյալ տեղեկությունները Ժ. դարից են: Հայտնի է, որ Բագրատունյաց Աբաս Ա. և Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորները 930-ական թթ. խոր Վիրապի վանքի մոտ ջախջախիչ պարտության են մատնել արաբական 13 հազարանոց զորքերին⁴⁸: Արծրունյաց պատմիչը հիշյալ դեպքերի առնչությամբ հաղորդում է. «Յայնժամ արքայ վառեալ ի գէն և ի զարդ արիական քաջութեան, առեալ զզաւրսն գնդին հաւատացելոց... այնուհետեւ սուսերամերկացն հոյլք զմիմեամբք խառնեցան, եւ ճայթ-

մունք եւ թնդիւնք եւ փայլատակմունք իբրեւ յամպոց ի վայր թափեալ երեւեցան, եւ ահագին աւրն սկսաւ լինել»⁴⁹: Անդրադառնալով դեպքերին՝ Մաղաքիա արք. Օրմանյանը մասնավորեցնում է, որ «Գագիկ վրայ կը հասնի, Արաբացիին վրայ կը յարձակի խորվիրապի մօտ, Գինոյ բլուրին ստորոտը, Լուսավորչի յիշատակին օրը սահմի 10-ին, որ այն միջոցին պէտք էր իյնար Յունիս 16-ին»⁵⁰: Պատմությունից տեղեկանում ենք նաև, որ Հայաստանում բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում՝ 1047 թ., Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ հարձակվող բյուզանդական բանակը մի շարք բերդերի (Սուրմառի, Ամբերդ, Ծիծեռնակաբերդ) հետ գրավել է նաև խոր Վիրապը⁵¹:

Վանքի պատմությունն ուղղակիորեն առնչվում է նաև Հայոց եկեղեցու թեմական եկեղեցուցների հետ, որոնց ստեղծման նախաձեռնությունը դարձյալ պատկանում է Ս. Գրիգոր Լուսավորչին⁵²: Խոր Վիրապի վանքային համալիրը, ի դեմս Վիրապավանից թեմի՝ Արարատյան հայրապետական

⁴⁹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն տանն Արծրունեաց, քննական բնագիրը և առաջաբանը՝ Գ. Տէր-Վարդանեանի, ՄՀ, հ. ԺԱ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 293:

⁵⁰ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Ս. Էջմիածին, 2001, էջ 1257:

⁵¹ ՀԺՊ, հ. III, էջ 430:

⁵² Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու առաջին տարիներին, Հայաստանեայց եկեղեցու նվիրապետական կառույցի ձևավորմանը զուգընթաց, Ս. Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոսներ ու երեցներ է ձեռնադրում և ուղարկում Մեծ Հայքի տարբեր շրջաններ, ինչպես նաև կառուցում է եպիսկոպոսարաններ Վաղարշապատում, Արտաշատում ու Դվինում՝ հիմնադրելով Արարատյան հայրապետական թեմը (Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմ. հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջ. և ծանոթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, «Էջմիածին», 1966, Թ-Ժ., էջ 85):

⁴⁵ Նույն տեղում, էջ 110:

⁴⁶ Թ. Թորամանյան, Նյութեր..., աշխատությունների երկրորդ ժողովածու, կազմեց և խմբագրեց՝ Կ. Ղաֆադարյան, աշխատակցությամբ՝ Ն. Թորամանյանի, Երևան, 2013, էջ 163:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ ՀԺՊ, հ. III, էջ 63, տե՛ս նաև Մ. Հասրաթյան, Խոր Վիրապի վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 438:

Թեմի կենտրոնն էր ու կարևոր օղակներից մեկը. այդ մասին են վկայում ԺԱ. և հետագա դարերում հանդիպող մատենագրական ու վիմագրական հիշատակությունները: Հայոց եկեղեցու թեմերին, եպիսկոպոսական վիճակներին ու նվիրապետական կարգերին հատուկ անդրադարձել է Պիոն Հակոբյանը⁵³: Հայտնի փաստ է, որ Բջնի հայ եկեղեցու եպիսկոպոսանիստ նշանավոր կենտրոններից էր: Իբրև հիշյալ կենտրոնի հիմնադրման փաստացի վավերագիր՝ Կ. Մաթևոսյանը վկայակոչում է տեղի Ս. Աստվածածին եկեղեցու 1031 թվակիր արձանագրությունը՝ Պետրոս Ա. Գետադարձ (1019-1058) կաթողիկոսի անվան հիշատակմամբ, որը մեջբերում ենք Շահաթունյանցի վերծանմամբ. «Թ. ՆԶ (1031): Շնորհիւն Աստուծոյ այս հրամանք իմ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի և Սմբատա Շահանշահի, որ հաստատեաց [եպիսկ]ոպոսարան ի Բջնի քաղաք զՍուրբ Աստուածածինս. հիմնարկել կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան՝ որդի Վասակայ, և տուաւ վիճակ ի Սուրբ Աստուածածինս ի Փոշեհանից մինչև ի Նիգ...»⁵⁴: Կ. Մաթևոսյանը միաժամանակ նկատում է, որ հիշյալ աթոռի եպիսկոպոսները կոչվել են Արարատյան գավառի դիտապետ⁵⁵:

Մեր պրպտումները պարզեցին, որ Զագավանից ժողովի ժամանակ (1270) Բջնի աթոռի հետ միավորված էր նաև Վիրապավանից թեմը. «...ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ (Յակոբ Ա. Կլայեցի, 1268-1286 - Ա. Հ.), յարհի եպիսկոպոսութեան տեառն Գրիգորի, նորին կամաւք և ձեռամբ բոլոր վի-

ճակին իւրոյ, որ ընդ իշխանութեամբ սուրբ աթոռոցն Վիրապին և Բջնոյ»⁵⁶: Միացյալ երկու թեմերը գլխավորել է Բջնի Գրիգոր արքեպիսկոպոսը⁵⁷: Պ. Հակոբյանը նրան այսպես է բնութագրում. «Արևելյան եպիսկոպոսներից ու թեմերից ամենահեղինակավորն ու, թերևս, միակն այդ տասնամյակներին Վիրապի և Բջնո Գրիգոր եպիսկոպոսն էր, որն իր անձնական ձեռներեցությամբ և քաջածանոթ Վարդան վարդապետի (Արևելցու) գործակցությամբ գլուխ է բերում այդ կարևոր ձեռնարկումը»⁵⁸: Պ. Հակոբյանը նկատի ունի Զագավանից ժողովի որոշումների կանոնակարգումը: Նա միաժամանակ նկատում է, որ ի դեմս Բջնի, նոր թափ էր ստանում Արարատյան թեմը, իսկ «Խորվիրապի վանքն էլ երկարատև անհայտությունից հետո կրկին ասպարեզ էր գալիս՝ ծավալելու համար իր օգտաշահ գործունեությունը»⁵⁹:

ՄՄ ՀՊ 3082 ձեռագրի 1267 թ. հիշատակարանում Բջնի եպիսկոպոսությունյան մասին կարգում ենք. «...աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Գրիգոր, որ ունէր զվերատեսչութիւն այցելականն դիտման՝ քա-

⁵³ Պ. Հակոբյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003:

⁵⁴ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., էջ 329:

⁵⁵ Կ. Մաթևոսյան, Հայաստանի թեմերը. պատմություն և արդիականություն, «Էջմիածին», 1998, Բ-Գ., էջ 188:

⁵⁶ Գարեգին վարդապետ [Յովսէփեան], Զագավանից ժողովը, «Շողակաթ» հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 23:

⁵⁷ Մեծավաստակ գիտնական Գարեգին Հովսէփյանը Գրիգորին բնութագրում է իբրև Բջնի ու Վիրապի արքեպիսկոպոս, Զագավանից ժողովի նախաթոռ եպիսկոպոս, Վարդանի (Արևելցու) հարազատ եղբայր, հայտնի՝ Բջնեցի մականունով, որը բազմաթիվ ձեռագրերի պատվիրատու-ստացող է, ինչպես նաև Ստեփանոս Օրբելյանի գլխավորությամբ՝ ընդդեմ Գրիգոր Անավարզեցու գումարված ժողովի մասնակից (Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս - Լիբանան, 1969, էջ 260):

⁵⁸ Պ. Հակոբյան, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 74:

⁵⁹ Նույն տեղում:

հանայական դա[սու] կատարող պետութեան Այրարատեան նահանգին, ներակայան ունելով զամուրն Բջնի...»⁶⁰: Հիշատակված Գրիգոր արքեպիսկոպոսը, որը նաև վերատեսուչ ու դիտ (դետ, դիտող՝ առաջնորդ) է Այրարատյան նահանգում, իրավամբ կարող է համարվել Բջնիի եպիսկոպոսանիստ կենտրոնի երևելիներից մեկը, որին դեռ կանգնադրանք:

Խոր Վիրապի թեմի վերաբերյալ հետագա հիշատակությունները ժէ. դարից են. Ոսկան Երևանցու վիճակագրական ցուցակը, որը հրատարակել ու մանրամասն քննել է Պ. Հակոբյանը, կարևոր տեղեկատու է Հայոց եկեղեցու նվիրապետության մասին: Հեղինակը նախ վկայակոչում է Ոսկան Երևանցու նկարագրած էջմիածնապատկան 17 հին ու նոր աթոռները՝ սկսելով հենց էջմիածնից: Նա նկատում է, որ Հավուց թառի կամ Ամենափրկչի և Վիրապավանից թեմերը Ոսկանի ժամանակ արդեն կորցրել էին իրենց նախկին դերն ու նշանակությունը և եթե սկզբում դրանք կից էին էջմիածնական եպիսկոպոսական վանքերին ու աթոռներին, ապա ժամանակ անց ներկայացված են իբրև արքեպիսկոպոսական թեմեր⁶¹: Մաղաքիա արք. Օրմանյանը հիշյալ ժամանակաշրջանի համար տարբերակում է նաև էջմիածնի կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող «պատուակալ» արքեպիսկոպոսարաններ, որոնք էին Խոր Վիրապը, Ուշին և Բաղեշը⁶²:

Ավելի ուշ Խոր Վիրապի թեմը հիշատակված է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հաստատած՝ վանական թեմերի ցանկում, ապա նրա հանձնարարությունը՝ 1765 թ. իր նոտար

Երեմիա Օշականցու⁶³ կազմած «Աստուածակառույց մեծի Աթոռոյս սրբոյ էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրակական արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին» տեղեկագրում, որը «Ուղեցույց Հայոց եկեղեցու նվիրակական տերունի և վանական թեմերի» խորագրով ներկայացրել է նաև Պ. Հակոբյանը: Այստեղ է, ուր հիշատակվում են նաև Վիրապավանից թեմի բոլոր 11 վիճակները. «...ունի զվիճակս յերկոջս Երեւանու, զՎէթի, զԱրկուռի, զԱրտաշար, զՄուշաղբիւր, զՋղուն, զՎանստան, զՄանկուս, զԱւանիկ, զՎանիկ, զԴեղձնավանք, եւ զՈււցաձորն բոլորս»⁶⁴: Տեսակետ կա, թե Վանստանը, ի թիվս նշված գյուղերի՝ Խոր Վիրապի թեմի հարկատու գյուղերից մեկն էր⁶⁵:

Պետք է փաստել, որ ժ. դարում արդեն Վիրապավանից թեմն իբրև այդպիսին չի հիշատակվում: Ինչպես գրում է Ներսես վրդ. Մելիք-Թանգյանը, Ռուսաց կայսրության մեջ հիշյալ ժամանակաշրջանում գոյություն ունեն Հայոց վեց թեմ. դրանք էին՝

⁶³ Ս. Էջմիածնի արդյունաշատ հոգևորական Երեմիա արք. Օշականցին եղել է Սիմեոն Երևանցի, ապա Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների նոտարը, գրագիրը. առավել աչքի է ընկել ձեռագրեր ու թղթեր ծաղկելու արվեստում: Այս հոգևորականի գործունեությունն ու տապանագիրը ներկայացրել ենք առանձին հոդվածով (Ա. Հարությունյան, Գրիգ, ծաղկող Երեմիա Օշականցին և նրա տապանագիրը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2014, թիվ 3 (47), էջ 114-124):

⁶⁴ Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնափյց որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, ի Սիմէօնէ Կաթողիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 280, տես նաև Պ. Հակոբյան, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 183:

⁶⁵ Աշխարհբեկ Քալանթար, Վանստան, պատրաստել են հրատարակության Հ. Մելքոնյանը և Գ. Սարգսյանը, «Հայաստան. Քարե դարից միջնադար», Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 112:

⁶⁰ Ժ. Գ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 350:

⁶¹ Պ. Հակոբյան, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 101-103:

⁶² Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2958:

1. Նախիջևանի և Բեսարաբիայի
2. Աստրախանի
3. Երևանի
4. Վրաստանի
5. Ղարաբաղի
6. Շիրվանի⁶⁶

Վիրապավանից թեմը վերոնշյալներից պետք է որ ընդգրկված լիներ Երևանի կամ Արարատյան թեմի կազմում, մինչդեռ «Երևանի թեմին պատկանում են նախկին՝ Երևանի, Նախիջևանի եւ Օրդուպատի գաւառների, նախկին Շուրագեալի գաւառակի եւ Ղարսի նահանգի եկեղեցիները, Ղարաբաղի վիճակից կտրուում է եւ այս մասը ընկնում Տաթևի մետրոպոլիտոսի իւր հօտով»⁶⁷:

Վիրապավանից թեմի խնդրին դեռ կանգնադառնա՞նք՝ վանական համալիրի որպիսութիւնը միջնադարի զարգացած շրջափուլում ներկայացնելիս:

Ժ. Գ. դարում խոր Վիրապի վանքը, ինչպես վերը նկատել էր Պ. Հակոբյանը. «կրկին ասպարեզ էր գալիս»: Վանքի պատմութիւնը հիշյալ ժամանակաշրջանում որոշակիորեն լուսաբանվում է խոսքովի արգելոցում գտնվող միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր ու կրթամշակութային կենտրոն Վանստանի (Իմիրզեկ) վանքում հնագետ Աշխարհբեկ Քալանթարի՝ 1912 թ. իրականացրած հնագիտական պեղումների արդյունքների հիմամբ, որը վերջերս հրատարակվեց հնագետ-վիճագագետներ Գ. Սարգսյանի և Հ. Մելքոնյանի աշխատասիրությամբ⁶⁸: Պեղումների ընթացքում հայտ-

նաբերվել են վեց տասնյակից ավելի արձանագրութիւններ՝ փորագրված հուշարձանի որմերին և հուշակոթողների վրա: Դրանցից մի քանիսը խոր Վիրապի անվան հիշատակմամբ են, որոնք տեղին ենք համարում ստորև վկայակոչել:

Վիճագրերից մեկը պատմում է Իվանե Զաքարյանի աթապակութեան տարիներին (1212-1227) Վանստանի վանքի հիմնադիր և առաջին վանահայր տեր Դավթի կողմից Ս. Աստվածածին եկեղեցու, նաև խոր Վիրապի Կաթողիկե եկեղեցու ու պարիսպների կառուցման մասին.

ԸՍՏ ՀՐԱՄԱՆԻ ԱՅ ԺԱՄԱՆԱԿԻ
ԱԹԱՊԱԿ ԻՎԱՆԷԻ, / ԵՄՄԵՂԱՊԱՐՏՍ
ԴԱԽԻԹ, ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՍԵԱՆ /
ՆԱՀԱՆԿԻ, ՇԻՆԵՑԻ ԶՄԲ ԿԱԹՈՂԻԿԷՆ
Ի ՎԻՐԱՊԻՆ ԵԻ / ՇՈՒՐԻ ԶԱՆԱԿԻ
ՊԱՐՍՊԵՑԻ, ՆՈՅՆԵՊԷՍ ԶԱՄԱԾԻՆՍ
ՇԻՆԵՑԻ ԱԹՈՐՈՍ / ՀԱՅՈՒՆՈՍՄԵ
ՆՇԱՆԻ ԵԻ ԸՆԾԱԵՑԻ Ի ՍԱ ԶԴՈՒՆԱ
ՎԵՐԻ ԱՅԳԻՆ / ԵԻ :Ճ: (100) ԳՐՈՒԻ
ՀՈՂ Ի ԶԱՓԱՐԱՆԻՔԵՆ, ԵԻ ԶՆԱԽԱԶՈՐՈ
ՀՈՂԵՆ / ԵԻ ԳՐԵՑԻ ԶԱԽԱԳ ԽՈՐԱՆԻՆ
ՇԱԲԱԹ ԱԻՐԵ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՍՍ⁶⁹:

Վիճագրում հիշատակված Դավթը Արարատյան նահանգի առաջնորդն է, այսինքն՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդը, որի թեմական կենտրոնն էր խոր Վիրապի նշանավոր վանքը, ուր համաձայն հիշյալ վկայագրի՝ շինարարական մեծածավալ աշխատանքներ են իրականացվել: Վիճագիրը բնույթով շինարարական-նվիրատվական է, ուր կարևորվում է հատկապես Դավթի առաջնորդության (փոխանորդության) օրոք Ս. Վիրապի Կաթողիկե եկեղեցու կառուցումն ու պարսպապատումը⁷⁰: Ցա-

⁶⁶ Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, առաջաբանը և ծանոթագրութիւնները՝ Ա. Բոգոյանի, Ս. Էջմիածին, 2011, էջ 550:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Աշխարհբեկ Քալանթար, Վանստան, պատրաստել են իրատարակության Հ. Մելքոնյանը և Գ. Սարգսյանը, «Հայաստան. Քարե դարից միջնադար», Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 49-92:

⁶⁹ Նույն տեղում, էջ 57, արձ. 2:

⁷⁰ Նույն տեղում, էջ 104:

վոք, հիշյալ ժամանակաշրջանով թվագրվող կառույցները ինքն Վիրապում հեն պահպանվել, առկա բոլոր շինությունները վերակառուցվել կամ նորովի են շինվել ԺԷ. դ. երկրորդ կեսին:

Վիմագրում ուշագրավ է նաև այն, որ Վանաստանի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է իբրև աթոռ Հացունյաց Ս. Նշանի համար, ուստի հարկ ենք համարում չհիշանցել նաև այս բացառիկ հիշատակությունը: Հայ մատենագրություն մեջ պահպանվել են «Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին... որ Հացունեաց կոչի» խորագրով բազմաթիվ գրվածքներ՝ ընդգրկված հիմնականում ԺԲ-ԺԸ. դդ. ձեռագրերում և տարբեր աշխատություններում⁷¹: Անանուն Զրուցագրի կամ կարծեցյալ Շապուհ Բագրատունու պատմությունից տեղեկանում ենք, որ բյուզանդական Հերակլ կայսրը, գրավելով պարսից Քասրե (Խոսրով Փավրեզ) արքայի ամրոցը, բաց է անում գանձատունն ու գտնում Քրիստոսի փրկական խաչափայտը. «...եւ գնացին ի քաղաքն ուր էր բնակութիւն Քասրէի. եւ շրջայպատեցին զնա եւ երիս աւուրս առին զքաղաքն եւ քակեցին զամրոց: Եւ բացեալ գտուն գանձին էգիտ ի նմա զփրկական փայտ խաչին Քրիստոսի եւ ուրախ եղեւ ոյժ»⁷²: Ըստ ավանդության՝ Հայոց երկրում

Հերակլին թանկարժեք նվերներով ընդառաջ է գնում Սյունյաց Բյուրեղ իշխանուհին, որի դիմաց մեծ իմաստուն Հովհան Մայրապոստոս խորհրդով և տիկնոջ հավատի զորությամբ՝ կայսրը նրան խաչափայտից⁷³ մասունք է շնորհում: Գոհանալով Աստծուց՝ տիկինը ճանապարհ է ընկնում դեպի տուն և երբ անցնում է Հացին (Արտազ գավառի գյուղերից, ներկայումս՝ Խայսուն⁷⁴) կոչվող դաշտով. «...յանկարծակի նստաւ չորին որում կայր նշան խաչին ոսկիապատ կարքն: Եւ ոչ եղեւ հնար շարժել զնայ ոչ եպիսկոպոսաց եւ ոչ ի քահանայից, նայ եւ ոչ տիկինն՝ յորժամ էառ ի գիրկս զոսկի զսկեւոյնն, յորում կայր նշան սրբոյ խաչին Քրիստոսի, ոչ կարաց շարժել ի տեղուէն»⁷⁵: Ավանդությունը վկայում է, որ Հացունյաց լեռան վրա բնակվող միայնակյաց մի մարդ բարեպաշտ տիկնոջն ասել է, թե այս էր Աստծո պատգամը և խաչափայտը հենց այստեղ պետք է «բնակվի»: «Եւ տիկինն սկսեց ու վաճել կառուցեց սուրբ [խաչ]նշանի համար: Նաեւ գնեց Հացին կոչուող բերդ[աւան]ը եւ Ռունգն բերդն ու [դրանք նուէր] տուեց սուրբ նշանի վանքին...»⁷⁶:

Հացունյաց խաչի պատմության վերաբերյալ բազում ավանդություններ են հյուսվել՝ այն կապելով Սյունյաց Ս. Խաչ վանքի կամ Կարինի Խաչկավանքի հետ: Ա. Սահակյանը վկայակոչում է նմանօրինակ մի պատմություն (Սյունիքի տարբերակ)՝ գրառված 1858 թ.՝ Վայոց ձորի Արկազան գյուղում,

⁷¹ Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, Խ. Բ., Երևան, 1984, էջ 531-533, Հ. Ղևոնդ Ալիշան, Հայապատում. պատմիչք և պատմությունք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 221-222, թ. 183, Քաջբերունի, էջ 268-269, առավել մանրամասն տես Ա. Սահակյան, «Պատմութիւն Հացունեաց խաչին» գրույցը և նրա տիպաբանությունը, ՊԲՀ, 1981, թիվ 4, էջ 153-166, նույնի՝ Հացունյաց անվավեր պատմությունը և նրա բանավոր տարբերակները, ՊԲՀ, 1982, թիվ 3, էջ 135-143:

⁷² Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), աշխատասիրութեամբ՝ Պ. Յովհաննիսեանի, ՄՀ, Խ. Թ., Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1012 (այսուհետև՝ Շապուհ Բագրատունի):

⁷³ Վ. Առաքելյանը ծանոթագրում է, որ խաչափայտը պարսիկները գերել էին 614 թ. Երուսաղեմի գրավման ժամանակ և վերադարձվեց ինքնակոչ արքայից արքա Շահրվարազի կողմից՝ 629 թ. սեպտեմբերի 13/4-ին, որը եկեղեցին նշում է իբրև Սուրբ Խաչի տոն (տես նույն տեղում, էջ 152, ծանոթ. 50):

⁷⁴ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 351:

⁷⁵ Շապուհ Բագրատունի, էջ 1013-1014:

⁷⁶ Նույն տեղում:

Սարգիս Զալալյանցի կողմից⁷⁷: Պատմութեան հիմքում գլուղի Ս. Խաչ վանքի անվան ստուգաբանությունն է, ըստ որի՝ վանքն այսպես է կոչվել տեղում ամփոփված խաչամասնիկի անունից, որը Սյունիքի Մառի իշխանուհուն է շնորհել հունաց կայսրը: Վերջում Ա. Սահակյանը մի տարակուսելի ընդհանրացում է անում, թե Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը չի հիշատակում այս պատմությունը, քանի որ նա ծանոթ չի եղել վերջինիս, իսկ եթե ծանոթ էր, ապա չի արժևորել, քանի որ «...ներկա ավանդությունը իբրև Հացունյաց խաչի պատմություն վաղուց իր իրավունքների մեջ էր և ճանաչված ու հաստատված էր ազգային մատենագրության մեջ, որպես գրավոր շրջանառության նյութ»⁷⁸: Պետք է փաստել, սակայն, որ Սյունյաց պատմագիրը հետևողական է նման հարցերում և իր Պատմության էջերում մանրամասն տեղեկություններ է հաղորդում գավառի այս կամ այն վանքում պահվող սրբությունների մասին⁷⁹: Տեղին են

նկատում հնագետ-վիմագրագետներ Հ. Մելքոնյանն ու Գ. Սարգսյանը, երբ նշում են, թե Ստեփանոս Օրբելյանը չի հիշատակում Հացունյաց խաչի պատմությունը, քանի որ ակներևաբար տեղյակ էր, որ խաչափայտը պահվում է ոչ թե Սյունիքում, այլ Արարատյան թեմի Վանստանի վանքում, ինչի օգտին է վկայում նաև վերոհիշյալ արձանագրությունը⁸⁰: Ստացվում է, որ ավանդույթի ուժով Արտագի Հացիկն գլուղում հանգրվանած, ապա Սյունիք «տեղափոխված» խաչափայտի մասունքը կամ նրանից ինչ-որ մի մաս պահվել է Վանստանում, որի պատվին էլ կառուցվել է անունով զարմանալիորեն չհամապատասխանող Ս. Աստվածածին եկեղեցին:

Ի հավելումն նշենք, որ Ստեփանոս Օրբելյանի ժամանակակից, Գլաճորի համալսարանի բաբունապետ Եսայի Նչեցու գրչին վերագրվող ՄՄ Հ^ր 1422 «Ժողովածոյ» ձեռագրի գրչության հիշատակարանում պահպանվել է խիստ ուշագրավ մի վկայություն Թորգոմա տան «յեռանձնեայ յերրորդութեան» մասին. դրանցից առաջինը Հացունյաց Սուրբ Նշանն է. «Հատեալ մասն ի կենդանարարն փայտէ աստուածեանն խաչէ՝ Նշանն Հացունեաց, մխեալ արեամբ Աստուծոյ հրախառն վտակաւք», երկրորդը՝ Խոր Վիրապը. «Վիրապն անդընդաին՝ տեղի չարչարանաց սուրբ հաւրն մերո լրմամբ ԳԺ (13) ամաւք...», երրորդը՝ Նոյյան տապանը. «տապանն Նոյեան՝ մայրն երկրորդ ի սեռի մարդկութեանս, հանգուցեալ ի բարձրաբլուր գագաթն Մասեաց, որ է լեռն Սարաբաւ գաւառի...»⁸¹: Նկատենք մի ուշագրավ

⁷⁷ Սարգիս Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփլիս, 1858, էջ 132-133:

⁷⁸ Ա. Սահակյան, Հացունյաց անվավեր պատմությունը և նրա բանավոր տարբերակները, էջ 136-137:

⁷⁹ Ստեփանոս արք. Օրբելյանը տարբեր առիթներով հիշատակում է նաև վանքերում ու եկեղեցիներում պահվող սրբությունները. Պատմության ԺԱ. գլուխը, որը կրում է «Յայտնութիւն եկեղեցւոյն Շաղատայ և գիւտ այնչափ սրբոցն, որ ի նմա...» խորագիրը, ներկայացնում է հոգևոր այս օջախի «գլուտը», երբ. «...բացեալ զդրոնս սրբոյ եկեղեցւոյն Նախավկային Ստեփաննոսի. և տեսին բազմահոյլս բազում խաչս ոսկիս և արծաթիս... Եւ նշխարք սուրբ և պատուական մարտիրոսացն անհամար, անթիւ որ յորմս եկեղեցւոյն մնաց» (Սրբեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 42-43) կամ «Վանորայք և ուխտք եկեղեցեաց թէ քանի էին յայսմ աշխարհի» ԿԲ. գլխում պատմագիրը վկայակոչում է գավառի առավել

հայտնի հոգևոր կենտրոնները՝ չանտեսելով նրանցում պահվող սրբությունները, ինչպես օրինակ. «Թանառեի վանք յորում կայ նշխարք սրբոյն Ստեփաննոսի» (տես նույն տեղում, էջ 340):

⁸⁰ Աշխարհբեկ Քալանթար, Վանստան, էջ 105:

⁸¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի

օրինաչափություն ևս. հիշատակված երեք սրբություններն էլ Արարատյան նահանգում են, ուստի նաև այս տեսանկյունից պետք է բացատրել Ս. Նշանի ամփոփումը Վանքատանի վանքում: Նշված ձեռագիրը, որը կրում է 1284 թ., գրվել է Արարատյան (հիշատակարանում՝ Սարարադեան) նահանգի թեմակալ առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի պատվերով, որի անունը հիշատակված էր նաև Ձագավանից ժողովի մասնակիցների կազմում:

Վանստանի հնագիտական պեղումներով հայտնաբերված 1283 թվակիր մեկ այլ արձանագրություն ևս փաստում է, որ ԺԳ. դարում խոր Վիրապի ու Վանստանի առաջնորդությունը միևնույն թեմի ենթակայություն տակ է եղել:

ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՆՍ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԱԹԱՊԱԿ ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՍԱԴՈՒՆԻՆ, ՇՆՈՐՀԻՆ ԱՅ ԵՄ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, ԱՌԱՋՆՈՐԴ / ՎԻՐԱՊԻՆ ԵՒ ՄԲ ՈՒԽՏԻՍ ՎԱՆԸՍՏԱՆԱՅ, ՍԱԼԵՅԻ ԶԵԿԵՂԵՅԻՍ, ՈՐ ԲՆԷ ԶԷՐ ՍԱԼԱԾ, ԱՐԱՐԻ ԱՅԼ ԱՐԴԻՆՍ ԸՆԾԱՅԻՑ ԵՒ ՍՊԱՍԱՆՈՐՔ ԽՈՍՏԱՅԼԱՆ Ի ՏԱՐԻՆ :Ը: (8) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, :Բ: (2) ԻՆՁ, :Բ: (2) ԷՆԴՐ ՎԱՐԴԱՆԱ, :Բ: (2) ... / ԹԱՄԶԿԱՆՆ, Ի ԹՎԻՍ :ԶԼԲ: (1283), Ի ՏԱԻՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ⁸²:

Այստեղ հիշատակված է խոր Վիրապի ու Վանստանի առաջնորդ Գրիգոր վարդապետը (թերևս վերոհիշյալ Գրիգորը թեմակալն է, իսկ մյուսը՝ առաջնորդը), որը սալել է եկե-

ղեցու (Վանստանի Ս. Աստվածածնի - Ա. Հ.) ի սկզբանե անսալ հատակն ու այլ ընծաներ տվել՝ փոխարենը ստանալով Ը. (8) պատարագ Հայտնություն կամ Սուրբ Ծննդյան տոնին: Առաջնորդ Գրիգոր վարդապետը հիշատակված է նաև Հյուսիսային Հայաստանի Մահկանաբերդ գավառի մեծ իշխան, հայոց և վրաց զորքերի գլխավոր հրամանատար, աթապակ ու ամիրսպասալար Սադունի՝ 1278 թվակիր նվիրատվական վիմագրում:

ԵՄՂԱԹԱՊԱԿ ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՍԱԴՈՒՆԻՆ, ՏՎԻ / ԷԲ: (2) ԶԱՂԱՑԱՅՏԵՂ ՅԵՐԻՑԱԲԱՇԻՆ :Բ: (2) ԱՌՈՒՈՎ ԵՒ / ՄԱԼԻԳՆ... Ի ԹՎԻՆ : ԶԻԷ: (1278), ՅԱՌԱՋՆ ՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍ...⁸³:

Այս և վերոնշյալ վիմագրում հիշատակված Գրիգոր վարդապետը, ապա նաև իր եղբայր Վարդանը, Արարատյան նահանգի թեմակալ առաջնորդ, նշանավոր Գրիգոր արքեպիսկոպոս Բջնեցու հոգևոր որդիներն ու աշակերտներն էին: Նկատենք, որ ինչպես վերը նշեցինք, Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին Բջնիի աթոռին միավորված էր նաև Վիրապավանից թեմը: Գրիգոր և Վարդան եղբայր վարդապետների գործունեությունը հիմնականում կապված է եղել խոր Վիրապի հետ, որտեղ էլ նրանք կնքել են իրենց մահկանացուն⁸⁴:

Ոսկան Երևանցու կազմած հայ եկեղեցու նվիրապետության վիճակագրական ցուցակում հիշատակված է նաև Էջմիածնի թեմի եպիսկոպոսություններին Վիրապավանքը, որի ենթակայության տակ էին Վանստանը, Ուրծավանքը և Մուշաղբյուրի վանքը: Այսինքն՝ վիմագրերում առկա Վանստա-

անուան Մատենադարանի, Խ. Դ., կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երևան, 2008, էջ 1231-1232, տես նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 556-557:

⁸² Աշխարհիբեկ Քալանթար, Վանստան, էջ 62-63, արձ. 11:

⁸³ Նույն տեղում, էջ 60-61, արձ. 8:

⁸⁴ Նույն տեղում, էջ 106:

նի ու խոր Վիրապի միացյալ առաջնորդությունն ակնհայտորեն պայմանավորված էր հենց հիշյալ հանգամանքով: Այս առումով ուշագրավ է ՄՄ Հ^մ 7827 1680 թ. գրված Աւետարանի գրչության հիշատակարանում վկայված հետևյալ հատվածը. «[Ա]րդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի ձորն Ուրծոյ, ի թէմն Վիրապայ, ի գեւղն, որ կոչի Ճարմառին, ձեռամբ սուտանուն իրիցու Յովանիսի, ի խնդրոյ յՈւլուպէկի եւ Գուլանի...»⁸⁵: Հիշատակարանը պարզում է պատմական Այրարատ նահանգի Ոստան գավառի Ուրծածոր բնակավայրը, և ի մասնավոր՝ Ճարմառի գյուղը հիշյալ ժամանակաշրջանում Վիրապավանից թեմի ենթակայության տակ լինելու հանգամանքը: Փաստի առնչությամբ առավել խոսուն վկայություն է պահպանվել Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Հակոբ ծայրագույն վարդապետ Քոսյանի կազմած՝ Կարինի գյուղերում պահվող ձեռագրերի ցուցակում: Կոճնկոց գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում պահվող 1676 թվակիր «Աւետարան» ձեռագրերից մեկի գրչության հիշատակարանում գրիչ Հովհաննես երեցը հաղորդում է հետևյալը. «Բայց գրեցաւ ի թէմն Վիրապայ, ի ձորն յՈւրծայ, ի գեւղն որ կոչի Ճառմառիս, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսիս, ի թուականիս Հայոց Ռ. Ճ. ԻԵ. (1676), ի հայրապետութեան Տեառն Յակոբայ ի յաթոռ Սուրբ Էջմիածնա, եւ եպիսկոպոսութեան թէմի եւ վիճակիս Վիրապա Դաւիթ սրբազան վարդապետին, որ նորոգեաց եւ լուսաւորեաց զխոր վիրապն եւ զիւր թէմն. Աստուած ինքն անփորձ եւ հաստատուն պահէ. ամէն: Գրեցաւ ձեռամբ անարժան եւ տխմար Յովանէս սուտ անուն

իրիցու եւ ծնողացն իմոց. ամէն»⁸⁶: Հիշատակարանն աղբյուրագիտական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ժէ. դարի երկրորդ կեսի՝ Արարատյան նահանգի թեմական կառուցվածքի ու նրա վիճակների մասին: Այս համատեքստում առաջնային է նաև խոր Վիրապի արդյունաշատ վանահայր Դավթի անվան հիշատակումն իբրև սրբազան վարդապետ, որը նորոգել ու պայծառացրել է խոր Վիրապի վանքն ու իր եպիսկոպոսական թեմը: Այս վերջին հիշատակությունից կարելի է ենթադրել, որ Դավիթը նաև Վիրապավանից թեմի առաջնորդն էր հիշյալ ժամանակաշրջանում: Նշյալ հիշատակարանը ևս որոշակի է դարձնում Ուրծածորի Ճարմառի գյուղի կարգավիճակի հարցը, այն է՝ տվյալ բնակավայրը խոր Վիրապի եպիսկոպոսական թեմի վիճակներից էր, որը նաև գրչության հայտնի կենտրոն էր: Նկատենք նաև, որ միևնույն վայրում գրված այս և նախորդ ձեռագրի գրիչը միևնույն Հովհաննես երեցն է:

Դառնալով Վանստանի վիմագրերին՝ պետք է փաստենք, որ խոր Վիրապում նմանօրինակ վիմագրերի բացակայությունը հաշվի առնելով, մեծապես կարևոր է պեղումներով ի հայտ եկած վիմագրերի գյուտը: Իրավամբ, դրանք նաև քրիստոնեության առաջին սրբավայրերից մեկի պատմության լուսաբանման արժանահավատ վավերագրեր են: Ինչպես ձեռագրական վերոնշյալ հիշատակություններն առավել ուշ ժամանակաշրջանի համար, այնպես էլ ժ.Գ. դարին հարազատ գտնված վիմագրերն ուղղակիորեն հավաստում են, որ հիշյալ վանքերը գտնվել ու գործել են միևնույն թեմի ու թեմական առաջնորդի ենթակայության տակ, իսկ աթոռանիստն, ըստ ամենայնի, խոր Վիրապի վանքն էր:

⁸⁵ ՄՄ ձեռ. Հ^մ 7827, 242բ: Տե՛ս նաև Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի, Վաղարշապատ, 1895, էջ 55, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազէտի, կազմեց՝ Հր. Աճառեան, Վիեննա, 1924, էջ 25, Հ^մ 25:

⁸⁶ Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու, կազմեց՝ Հ. Յակոբ ծ. վրդ. Քօսեան, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1963, թիվ 1-3, էջ 25:

Խոր Վիրապն անուղղակիորեն հիշատակված է նաև Վանստանի՝ դարձյալ ԺԳ. դարի նվիրագրերից մեկում:

ԿԱՄԱԽՆ ԱՅ, ԵՄ ԱԻԹԱԽ ՅՈՎԱՆԷՍ,
ՄԻԱԲԱՆԵՅԱ ԱԲ ՎԱՆԻՍ ԵՒ
ՎԱՆԸՍՏԱՆԻ ԱԲ ԱԾԱԾՆԻՆ ԵՒ ԵՏՈՒ
ԱՐԴԻԻՆՍ ... :Կ: (60) ԼԻՏՐ Պ... /
[ԵՒ ՍՊԱՍԱՌՐՔՍ] ԵՏՈՒՆ Ի ՏԱՐՈՋՆ
:Բ: (2) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՄ Ի ՏԱԽԻ
ՅՈՎԱՆՈՒ :Ա: (1) ԻՆՁ ԵՒ :Ա: (1)
ԻՄ ՄԱԻՐՆ՝ ՍԻՐԱՄԱՐԳԻՆ⁸⁷:

Հովհաննեսը կրում է աւթախ կամ աւրթախ կոչումը, որն ըստ վիմագրագետ Ս. Ավագյանի ստուգաբանման՝ նշանակում է ընկեր, ընկերակից, պաշտոնակից, մոնղոլական դիվանի արտոնությունից օգտվող վաճառական⁸⁸: Միաբանելով սուրբ վանքին (թերևս՝ Խոր Վիրապին կամ միգուցե՝ Վանստանի վանքին և այդ վանքի Ս. Աստվածածին - Ա. Հ.) ու Վանստանի Ս. Աստվածածին՝ Հովհաննեսը նվիրաբերել է Կ. (60) լիտր⁸⁹ ինչ-որ միջոց կամ կենցաղային օգտագործման պարագա, որի անունը եղծված է վիմագրում: Սուրբ վանքն ըստ Աշխարհբեկ Քալանթարի ժողովածուն կազմողներ Գ. Սարգսյանի և Հ. Մելքոնյանի՝ նույնանուն է Խոր Վիրապի վանքի հետ՝ նկատի

առնելով երկու վանքերի՝ միևնույն թեմում միավորված լինելու հանգամանքը⁹⁰:

Եթե Վանստանի վանքը հիմնադրվել է ԺԳ. դ. առաջին կեսին տեղ Դավթի կողմից, ապա դեռևս վաղ միջնադարում հիմնադրված Խոր Վիրապի վանական համալիրը շարունակել է գործել ու ծաղկում ապրել՝ առավել հայտնի դառնալով իբրև կրթության ու գրչության կենտրոն (որոշ ընդհատումներով)⁹¹:

Խոր Վիրապի վանքը հաճախ է հիշատակվում նաև ԺԵ. դարի մատենագրության մեջ՝ կապված հայրապետական աթոռի՝ Սսից էջմիածին տեղափոխվելու իրադարձության հետ, ինչով էլ պայմանավորված է վանքի՝ այս փաստի առնչությամբ վկայությունները բազմաթիվ ուսումնասիրություններում: Կաթողիկոսարանի՝ էջմիածնում վերահաստատվելու ուղղությամբ հայ հոգևորականությունը մտահոգված էր դեռևս ԺԲ-ԺԳ. դդ.՝ ի դեմս Ներսես Շնորհալու⁹², ապա Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի⁹³: Զծավալվելով խնդրի

⁸⁷ Աշխարհբեկ Քալանթար, Հայաստան..., էջ 66, արձ. 14:

⁸⁸ Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 340-342:

⁸⁹ «Լիտր» կշռային միավորը հատուկ քննության ենթ առել Վաղարշապատի վիմագրերին նվիրված մեր ուսումնասիրության մեջ և պարզել, որ գոնե ԺԵ-ԺԸ. դդ. վիմագրերում հիշատակված «լիտր»-ի մեծությունը համարժեք է եղել Երևանյան լիտրին, ըստ որի՝ 1 լիտրը կշռել է 12 ռուսական ֆունտ կամ 5 կիլոգրամ (Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 262):

⁹⁰ Աշխարհբեկ Քալանթար, նշվ. աշխ., էջ 66, ծանոթ. 18:

⁹¹ Վանքի՝ հիշյալ ժամանակաշրջանի գիտակրթական կյանքը քննության է առնված սույն ուսումնասիրության երկրորդ՝ «Խոր Վիրապի ուսումնական ու գրչության դպրոցը» գլխում:

⁹² Ներսես Շնորհալին (Կալյեցի - 1166-1173) Կիլիկիայի հայկական պետականության վերելքի նախօրեին ցանկացել է Վաղարշապատում վերահաստատված տեսնել թագավորական գահին ու կաթողիկոսական աթոռը. իր այս մտահոգությունը նա արտահայտել է «Ողբ Եդեսիոյ» (1144) նշանավոր պոեմի տողերում (Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 34-35):

⁹³ Իր «Ողբ»-ում ևս պատմագիր Ստեփանոս Օրբելյանը ջանում է արդեն Կիլիկիայի հայկական թագավորության վախճանին Վաղարշապատում տեսնել թագավորական ու հայրապետական գահերը, քանզի միայն այս կերպ հնարավոր կլինի պահպանել մեր անց-

չուրջ՝ պետք է փաստենք, որ աթոռի տեղափոխման ձգտումն առավել կարևոր է դարձել հատկապես Կիլիկյան հայկական պետականությունից թուլացման պայմաններում, այսինքն՝ ԺԳ. դարի կեսերին: Հարցը հաջողությամբ լուծվում է միայն 1441 թ., երբ պետական իշխանությունների աջակցությամբ էջմիածնում գումարվում է համագլխին ժողով, որին մասնակցում էին Հայաստանից ու հայկական գաղթաշխարհից ժամանած բազմաթիվ եպիսկոպոսներ, վարդապետներ ու անգամ աշխարհականներ՝ կալվածատեր իշխաններ, մելիքներ և այլք: Ժողովականները որոշում են էջմիածինը վերստին դարձնել հայոց կաթողիկոսանիստ կենտրոն՝ կաթողիկոս ընտրելով 1409 թվականից խոր Վիրապում ճգնած Կիրակոս վարդապետ Վիրապեցուն⁹⁴: Այս փաստի առնչությամբ ժամանակի նշանավոր մատենագիր ու եկեղեցական գործիչ Թովմա Մեծոփեցին (1378-1446)⁹⁵, որն իր գործուն մասնակցությամբ էր ունեցել աթոռի տեղափոխման հիշյալ գործընթացին, վկայում է. «...հաւանութեամբ ամենայն հայկազեան գաւառի, աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց՝ եղաք հայրապետ եւ կաթողիկոս առաքելական աթոռոյն Թադէոսի եւ Բարթողիմէոսի եւ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի՝ զտէր Կիրակոս Վիրապեցին, այր սուրբ եւ ընտրեալ...»⁹⁶, որը «ԼԲ.

(32) ամաւ յառաջ ելեալ ի գաւառէն իւրմէ, եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն եւ կենդանաթաղ զերեզման Լուսաւորչին ի Վիրապն, եւ անտի առանձնացեալ ի յանապատն Վանստանայ. եւ այժմ, ընտրութեամբ եւ Հոգոյն Աստուծոյ կոչմամբ, եղաք ի յաստիճան հայրապետութեան...»⁹⁷: Հիշատակությունը պարզվում է, որ մինչ կաթողիկոս ընտրվելը Կիրակոսն առանձնացել ու ճգնակյաց կյանք է վարել նաև Վանստանի վանքում. ԺԳ. դարի՝ վերը հիշատակված վիճաբերը պարզեցին, որ հիշյալ երկու վանքերը գտնվում էին թեմական միենույն կառույցի ենթակայության տակ:

Թովմա Մեծոփեցին իր Պատմության հիշատակարանում նշում է, որ 1441 թ. կաթողիկոսական ընտրության մասնակիցների թվում էր նաև խոր Վիրապի Անտոն եպիսկոպոսը. «Ի ՊՂ. (1441) թվականիս մեր, ազգեցութեամբ հոգոյն Սրբոյ եւ հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ, միաբանութեամբ ամենայն Հայոց եղին կաթողիկոս ի սուրբ էջմիածինն՝ զսքանչելի եւ զփառաւոր այրն Աստուծոյ զտէր Կիրակոս՝ պատրիարք եւ հայրապետ ամենայն Հայոց: Եւ այս են ժողովեալ վարդապետք եւ եպիսկոպոսք. Յովհաննէս վարժապետ եւ ուսուցիչ ի սուրբ ուխտէն Հերմոնի վանից եւ աշակերտք իւր... տէր Յովհաննէս Բջնու, տէր Անտոն Վիրապին... աւելի քան զԳՃ. (300) անձինս, եւ բազում միայնակեացք, եւ ազատք, եւ որդիք ազատաց, ձեռաւորք եւ տանուտէրք, եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ժողովրդեան՝ յարանց եւ ի կանանց»⁹⁸:

Խոր Վիրապում, ապա Վանստանում երկար տարիներ առանձնացած Կիրակոս վարդապետի՝ էջմիածնի «նորոգ» աթոռի գահակալ ընտրվելու առթիվ Սամուել Անեցու ժամանակագրության շարունակո-

յալի փառքը (Ստեփաննոս Օրպելեանի Ողբ ի Ս. Կաթողիկէն, քնագիրը յառաջաբանով և ծանոթութիւններով հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 48):

⁹⁴ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ., Երևան, 2008, էջ 122, 651:

⁹⁵ Թովմա Մեծոփեցու կյանքն ու գործունեությունը հանգամանալից քննության է ենթարկել Գարեգին Հովսեփյանը: Տե՛ս Գարեգին վրդ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նյութերով), Վաղարշապատ, 1914:

⁹⁶ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 222:

⁹⁷ Նույն տեղում, էջ 223:

⁹⁸ Նույն տեղում, էջ 218-220:

ղը հաղորդում է հետևյալը. «ԶԱՅ Լուսա-
ւորչին ի Սոյ գողացեալ բերին յէջմիածին
եւ վերստին հաստատեցին զկաթողիկոսու-
թիւնն, զԽոր Վիրապայ հայրն՝ տէր Կիրակոս,
օրհնելով կաթողիկոս: Մինչ յայս կաթողի-
կոսք ի Սիս նստէին: Յետ այսօրիկ ազգամաժ
Հոգոյն Սրբոյն ժողովեցան ի Վաղարշապատ
եպիսկոպոսք եւ վարդապետք եւ հաստա-
տեցին զաթոռ սուրբ Լուսաւորչին՝ զՍուրբ
էջմիածին, եւ աւրհնեցին կաթողիկոս զտէր
Կիրակոսն՝ ճգնաւոր առաջնորդն Սուրբ Վի-
րապին, որ եկաց ամս Բ. (2), ի թւին ՊՂ.
(1441)»⁹⁹: Ժամանակագիր Դավիթ Բաղիշե-
ցին հիշյալ դեպքերը դնում է Հայոց ՊՂԱ.
(1442) տարեթվի դիմաց՝ միաժամանակ հա-
ղորդելով նաև ուշագրավ տեղեկություն-
ներ հատկապես Վաղարշապատի վանքերի
վերաբերյալ. «Թվին ՊՂԱ. (1442) գողացան
զսուրբ Գրիգոր Լուսաւորչի աջն ի Սրսայ և
տարան յէջմիածին: Եւ վերստին սրբեցին և
չինեցին զՍուրբ էջմիածին, զՍուրբն Հովի-
սիմէն և զԳայիանէն, զոր ի հինահարութենէ
չար բռնաւորաց և աւարառաց խանգարեալ
էր... և արդ, Քրիստոսի շնորհիւն նոր նորո-
գեցաւ»¹⁰⁰: Ակադ. Լ. Խաչիկյանը նկատում
է, որ աթոռի՝ Սսից էջմիածին տեղափոխե-
լու գործի նախաձեռնողները ունեին նաև
քաղաքական որոշ հեռանկարներ, քանի որ
էջմիածնում վերահաստատված հայրապե-
տական աթոռը. «...պետք է նպաստեր հա-
մահայկական կենտրոն ստեղծելու գործին,
պետք է որոշ չափով շաղկապեր միմյանց
հայ ժողովրդի տարբեր բռնապետական իշ-
խանությունների լծի տակ հեծող հատված-
ները»¹⁰¹:

Կիրակոս Վիրապեցու՝ կաթողիկոս ընտրվե-
լու կապակցությամբ վկայություն է պահ-

պանվել նաև ՄՄ ՀՊՐ 996 Սերկելիլի գյուղում՝
1442 թ. գրված «Ճառերտիր»-ի գրչության
ծավալուն հիշատակարանում, ուր կարդում
ենք նրան ուղղված դրվատանքի հետևյալ
տողերը. «Իսկ այժմ շարժեալ ի գութ ողոր-
մութեան արարիչն Աստուած եւ ողորմեցաւ
տառապեալ ազգիս Հայոց, եւ ժողովեաց բա-
զում իմաստունս եւ առաքինիս՝ բանիբուն
վարդապետք եւ ուղղափառ եպիսկոպոսք,
եւ խորագնազգեստ կրաւնաւորք, եւ ողջա-
խոհ քահանայք, եւ սրբասէր ազտիք եւ ժո-
ղովուրդք, որ ընդրեցին... որպէս հայրս մեր
հոգեւոր՝ տէր Կ[ի]ւրակոս կաթողիկոսս, որ
իւր ժամանակն ոչ միս է կերել եւ ոչ գին[ի]
խմել, եւ ոչ սուտ ասել, եւ ոչ երգումն կերել,
ոչ նզովք եւ անէծք ի բերանն է եղել Խէ. (47)
տարի է, որ յանապատի է եւ սուրբ կենդա-
նաթաղ Խոր Վիրապին սպաս[աւ]որել»¹⁰²:

Խոր Վիրապի վանքի գոյատևման մա-
սին տեղեկությունները մինչև Ժէ. դարակես
խիստ կցկտուր են: Կ. Մաթևոսյանը նշում է,
որ վանքի գրչատունը շարունակել է գոր-
ծել նաև հաջորդ դարերում՝ վկայակոչելով
1577 թ. Խոր Վիրապում՝ Մաղաքիա քահա-
նայի ընդօրինակած Ավետարանը¹⁰³, որը
ինչպես կտեսնենք ուսումնասիրության երկ-
րորդ գլխում ոչ թե գրվել է այստեղ, այլ
1683 թ. Երևանցի ժամհար Առաքելը Մատթե-
ոս աբեղայի միջոցով ընծայել է Խոր Վիրապի
վանքին՝ իր և իր ծնողների հիշատակին¹⁰⁴:
Այս փաստը հընթացս նկատել է նաև Կ. Մա-
թևոսյանը¹⁰⁵:

¹⁰² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի
անուան Մատենադարանի, հ. Գ., կազմեց՝ Օ.
Եգանեսան, Երևան, 2007, էջ 1751-1752:

¹⁰³ Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա
գրչության կենտրոնը, էջ 177:

¹⁰⁴ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի
Ամենափրկիչ վանքի, հ. Ա., կազմեց՝ Ս. Տէր-
Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 128-129, ձեռ. 89:

¹⁰⁵ Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 178:

⁹⁹ Սամուէլ Անեցի և շարունակողներ, Ժամա-
նակագրութիւն, էջ 290:

¹⁰⁰ Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը,
Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 353:

¹⁰¹ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Գ., էջ 122:

Ժէ. դարից վանքի և նրա վանահայրերի վերաբերյալ տեղեկութիւնները հաճախադեպ են: Պատմագիր Առաքել Դավրիժեցին բարձրաստիճան հոգևորականների միջև ծագած խնդիրների առնչութեամբ Հավուց թառի և Գեղարդի հոգևոր առաջնորդների կողքին քանիցս հիշատակում է Խոր Վիրապի առաջնորդ Մանուել եպիսկոպոսին. վերջինս նշանակալի դերակատարում է ունեցել եկեղեցական կյանքում ստեղծված բարդ հարաբերութիւններում: Պատմագրի հաղորդմամբ՝ Սրապիոն Ուռհայեցի վարդապետի՝ Զուղա ժամանելու առիթով նրան ընդառաջ են գնում Դավիթ Դ. Վաղարշապատցի (1590-1629) կաթողիկոսն ու նրա աթոռակից Մեքիսեդեկ Գառնեցին. «...և առեալ զոմանս յիւրեանց խորհրդակցացն՝ զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց թառայ, և զմիւս Մանուէլ եպիսկոպոսն Խորվիրապայ, և զԱստուածատուր եպիսկոպոսն Գեղարդայ, և զոմանս ի մարմնաւոր ազգականաց իւրեանց, և եկեալ հասին ի գիւղն Զուղայ, յորում և վարդապետն Սրապիոն եկեալ կայր»¹⁰⁶:

Վանական համալիրի շրջափակում ներկայումս առկա շինութիւններն ու պարիսպը թվագրվում են Ժէ. դարի երկրորդ կեսով և ԺԸ. դարասկզբով: Մխիթարյան միաբան Սուքիաս Էփրիկյանի բնորոշմամբ. «Վանքիս շինուածոց մեծագոյն մասը նորաշէն կարելի է համարել, կառուցուած կամ նորոգուած լինելով Ժէ. դարու կիսէն վերջը, Յակոբ կաթողիկոսի օրով, Դաւիթ անուն առաջնորդէն»¹⁰⁷: Հիրավի, Ժէ. դարը վանական համալիրի վերազարթոնքի շրջանն է՝ պայմանավորված Դավիթ Վիրապեցի (Տփիսեցի, Վրացի) վանահոր մեծածավալ շինարարական գործունե-

ութեամբ. հիմնականում հիշյալ ժամանակաշրջանով էլ թվագրվում են հուշարձանների որմերին պահպանված քննութեան ենթակա վիմագրերը (տե՛ս «Խոր Վիրապի վիմագրական ժառանգութիւնը» գլուխը):

Արեւելյան Հայաստանում հատկապես Ժէ. դարակեսին մեծ թափ ստացած եկեղեցաշինութիւնը հետևանք էր նաև երկրում ստեղծված քաղաքական քիչ թե շատ նպաստավոր պայմանների: Մի շարք եկեղեցիների նորոգման և նորերի կառուցման համար Աբաս Բ. և Սուլեյման շահերի տված պարսկերեն հրովարտակներն ուղղակիորեն ապացուցում են Ժէ. դարի լայնածավալ եկեղեցաշինութեան իրողութիւնը: Մաշտոցյան Մատենադարանում պահվող 1661 թվակիր հրովարտակներից մեկում Աբաս Բ.-ը հայաբնակ շրջանների իշխանութիւններին կարգադրում է որևէ կերպ չնեղել հայ բնակչութիւնը՝ եկեղեցիների ավելի բարձր կառուցման ու վերանորոգման հարցում. «...թող այսուհետև վերահիշյալ եկեղեցիների պատճառով, որոնք ավելի ընդարձակ կամ այլ կերպ կառուցված կլինեն, վերահիշյալ հայերին անօրինական պահանջներ չներկայացնեն: Ընդհանրապես չպետք է նրանց նեղեն այլ պետք է թողնեն որպեսզի հանգիստ զբաղվեն հաղթական պետութեան հարատեմանն ուղղված ազդեցիկներով: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրութիւն ու ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն: Գրվեց 1071 թ. (1661) օրհնյալ ռամազան ամսին»¹⁰⁸: Այս և համաժամանակյա մի քանի այլ հրովարտակների հիմամբ էլ նորոգվել կամ ի հիմանք են կառուցվել Հայաստան աշխարհի տվյալ պատմաշրջանի հոգևոր կենտրոնները: Պարսկերեն հրովարտակների ուսումնասիրող, աղբյուրագետ Քրիստինե

¹⁰⁶ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 61:

¹⁰⁷ Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Խ. Երկրորդ, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 205:

¹⁰⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց՝ Զ. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 43-44, վավ. 11:

Կոստիկյանը 1664-1665 թթ. չափի թույլ-տվություններ ու տեղի կառավարիչ Միրզա Իբրահիմի հանձնարարություններն ուղղված կառույցների թվում հիշատակում է Ագուլիսի Ս. Հովհաննես, Մուղնիի Ս. Գևորգ, Ս. Թադևոս առաքյալի եկեղեցիներն ու Գեղարդի և Խոր Վիրապի վանքերը¹⁰⁹:

Մուրադ Հասրաթյանի դիտարկումներն ուղմիջնադարյան եկեղեցաշինության ուղղությամբ փաստագրում են այս պատմաշրջանում շինարարական գործի զարգացման ու կազմակերպման մի շարք նոր գործոնների գոյությունը: Ճարտարապետի հավաստմամբ՝ շինարարություններն իրականացվում էին խոշալական կապիտալի ֆինանսական ներդրման արդյունքում և եթե. «ԺԲ-ԺԴ. դարերում խոշոր կառույցներն իրականացվում էին իշխանական տների միջոցներով՝ ապա նրանց վերացումից յետոյ այդ գործը ստանձնեց հայ վաճառականությունը»¹¹⁰: Աչքի են ընկել հատկապես Զուղայի ու Ագուլիսի վաճառականները, որոնց միջոցներով հոգևոր համալիրներ են կառուցվել ոչ միայն հայրենի Գողթնում, այլև նրա սահմաններից դուրս: Այս շարքում Մ. Հասրաթյանը հիշատակում է նաև Խոր Վիրապը, որը վերակառուցվեց Դավիթ Վիրապեցի վանահոր օրոք, ագուլեցի Շմավոնի և Թիֆլիսեցի Ավթանդիլի միջոցներով¹¹¹:

Խոր Վիրապի առաջնորդ Դավիթ վարդա-

պետի օրոք իրականացված կառուցողական աշխատանքների մասին տեղեկություններ է հաղորդում նաև Զաքարիա Ագուլեցին. «Այս Գ. (3) ամ է, որ ոմն վրացի ինքն ծառայէր: Դավիթ վարդապետ կաթողիկոսի հրամանաւ եկեալ, աստ բնակեալ պարիսպն քաշեց, թէ այլ ինչ»¹¹²: Այդ է փաստում նաև Հ. Ղևոնդ Ալիշանը. «Ամենայն չէնք տեղւոյն, պարիսպը, բնակարանք և եկեղեցիք երկու՝ նորաչէնք են յետ կիսոյ ԺԷ. դարու, ի Դաւթէ Տփղիսեցւոյ առաջնորդէ տեղւոյն կառուցեալք յաւուրս Յակովբայ Դ. կաթողիկոսի»¹¹³:

Դավթի անունը վկայված է նաև ՄՄ ՀՊ 329 1678 թ. Արևուտի գյուղում գրված Աւետարանի գրչության հիշատակարանում, ուր գրվատանքի է արժանանում նրա՝ Խոր Վիրապում ծավալած նորոգչական գործունեությունը. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՃԻԷ. (1678), ի ձեռամբն մեղապարտ և զանարժան գրչի՝ Պետրոս իրիցի... ի յառաջնորդութեան վանիցն և վանորէիցս Դաւթի բարունապետի արհիեպիսկոպոսի, որ նորոգեաց զԽոր Վիրապն և լուսաւորեաց ու պայծառացուց քան զառաջինն և զայլն ամենայն»¹¹⁴ (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Արևուտում կամ Արևուտիում գրված ու մեզ հասած ձեռագրերի հիշատակարաններում Խոր Վիրապը բազմիցս է հիշատակվում: Այս փաստը թույլ է տվել ուսումնասիրության երկրորդ գլխում առանձնակի քննության ենթարկել գրչության հիշյալ երկու կենտրոնների կապը: Վերը արդեն նկատեցինք, որ Սիմեոն Երեանցի կաթողիկոսի գրագիր Երեմիա Օշականցու՝ 1765 թ. կազ-

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 12: Շահ Սուլեյմանի 1684 թվակիր պարսկերեն հրովարտականից մեկը բովանդակում է շահի հրահանգը Չուխուր Սաադի կառավարչին՝ Էջմիածնի, Խոր Վիրապի և շրջակա այլ վանքերի կառուցվածքները նոր մահմեդականացած անձանց ունեցություններից պաշտպանելու առնչությամբ (տես Նույն տեղում, էջ 120, վավ. 51):

¹¹⁰ Մ. Հասրաթյան, Հայաստանում ուղմիջնադարում շինարարական գործի կազմակերպումը, Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԺԷ., Պէյրուֆ, 1997, էջ 206:

¹¹¹ Նույն տեղում:

¹¹² Զաքարիա Ագուլեցու Որագրությունը, յերեվան, 1938, էջ 81 (այսուհետև՝ Զաքարիա Ագուլեցի):

¹¹³ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 436-437:

¹¹⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երևան, 2004, էջ 71:

մած Հայ եկեղեցու նվիրապետության ու վանական թեմերի ցուցակում Ակոռին Վիրապավանից թեմի վիճակներից էր, ինչով էլ կարելի է բացատրել այս երկու վանքերի հաճախադեպ միասնական հիշատակումը:

Դավթի վանահայրության օրոք են կառուցվել վանքի պարիսպներն ու ներսի պարսպակից շինությունները (1666-1669), բոլորովին նոր ոճով վերակառուցվել է պարսպի հարավարևմտյան անկյունում գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ թաղածածկ դահլիճի հորինվածքով եկեղեցին (1669 թ.), որի ավագ խորանի աջակողմյան խորշից իջնում են 6,5 մ խորությամբ և 4,5 մ տրամագծով Ս. Վիրապը (տե՛ս գծանկ. 1ա, 1բ) (նկ. 7-10, 18-21), ինչպես նաև մեկ զույգ մույթերով, գմբեթավոր դահլիճի հորինվածքով Ս. Աստվածածին եկեղեցին (տե՛ս գծանկ. 2ա, 2բ) (նկ. 4, 22-25): Ինչպես Ստ. Մնացականյանն է փաստում, Վիրապն է այս ողջ համալիրի հնագույն կառույցը, որն իրենից ներկայացնում է Արտաշատի պալատական շենքի մի մասը: Ծարտարապետի համոզմամբ՝ այն. «...հայկական ճարտարապետության հնագույն գմբեթածածկ կառուցվածքներից մեկն է և նշանավորում է գմբեթային կոնստրուկցիաների զարգացման այն նախնական շրջանը, երբ դեռևս չէին կարողանում գմբեթ կառուցել քառակուսի հիմքի վրա»¹¹⁵: Այն, որ կառույցը մեզ է հասել փոփոխություններով, վկայում են փոքր բեմը, պատերի մեջ առկա խորշերը, միջնադարի զարգացած և ուշ շրջափուլերին հարազատ ազդեցված փոքր խաչքարերը, սալահատակը և այլն (նկ. 11-13):

Երևանի՝ 1679 թ. հունիսի 4-ի ուժգին երկրաշարժից ավերվել են վանքի շինություններից շատերը. պատմագիր Զաքարիա Քանաքեռցին այդ մասին վկայում է. «Ի թուին



Ռ և ՃԻ և Ը. ի յունիս ամսոյ Դ., աստուածասաստ բարկութիւն եղև ի վերայ երկրին Արարատեան... և եկեալ շարժս այս ի կողմանցն Գառնույ՝ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք և վանորայք և եկեղեցիք: Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք՝ Աղչոց վանք, Այրիվանք, Հաւուց թառ, ԳՏրգակերտն և զԽոր-Վիրապն, ԳՋրվէժ, ԳՁագավանք: Երեք եկեղեցիք յԵրևան՝ զՆորագաւիթ, զՆորագեղ, զՁորագեղ, զՆորք, զԳամրէզ»¹¹⁶: Խոր Վիրապի՝ երկրաշարժից ավերված շինությունները վերակառուցվել են 1680-1695 թթ.՝ դարձյալ Դավիթ Վիրապեցու հոգածությամբ: 1703 թ. ավարտվել է Ս. Աստվածածին եկեղեցու վերակառուցումը, որի արևմտյան որմին կից եռակամար սրահին ժԹ. դարում փոխարինել է սյունազարդ զանգակատունը¹¹⁷: Վերջինիս կառուցումն ըստ էության իրականացվել է ԺԹ. դարի երկրորդ կեսին՝ Երևանի փոխթեմակալ Մեսրոպ վարդապետ Սմբատյանցի ջանքերով, հոգևորականներից ու աշխարհականներից կազմված «Արտաշատյան» ընկերության կողմից: Նրանց առաջնային նպատակն էր վերանորոգել նաև Խոր Վիրապի վանքը, կառուցել վանական դպրոց ու հոգ տանել նրա արդյունավետ զարգացման համար: Հիշյալ ընկերության անդամների կազմում հիշատակվում է նաև Խոր Վիրապի վանահայր արժանապատիվ Ստեփանոս վարդապետը¹¹⁸:

¹¹⁶ Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատ.՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, էջ 149:


¹¹⁷ Մատթեոս Փափագյանցի պատկերագրքում գետեղված լուսանկարում զանգակատունը դեռևս թերավարտ է (միայն ներքնահարկի չորս մույթերն են), իսկ եկեղեցու արևմտյան պատին հստակորեն ուրվագծվում են եռակամար սրահի հետքերը (տե՛ս նկ. 3՝ պատկերագրքի Հ^մ 285 նկարի արտատպում):

¹¹⁸ [Հաղորդագրություն] Ազգային, «Արարատ», 1870, թիւ ԺԱ. մարտ, էջ 275:


¹¹⁵ Ստ. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, էջ 49:



Գծանկ. 1ա, 1բ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և Ս. Վիրապի կտրվածքն ու հատակագիծը (արտատպված՝ «Նյութեր Կովկասի Հնագիտության» (MAK) ժողովածուից)



Գծանկ. 2ա, 2բ Ս. Աստվածածին եկեղեցու կտրվածքն ու հատակագիծը (արտատպված՝ «Նյութեր Կովկասի հնագիտության» (MAK) ժողովածուից, հատակագիծը՝ Մ. Հասրաթյանի)



Գծանկ. 3 Խոր Վիրապ վանական համալիրի գլխավոր հատակագիծը (ըստ Մ. Հասրաթյանի)

Ճարտարապետական իր ողջ ընդհանրության մեջ համալիրը նախ և առաջ վանքամրոց է՝ շրջափակված աշտարակավոր հաստատուն պարիսպներով (տե՛ս գծանկ. 3): Պատահական չէ Մ. Հասրաթյանի այն տեսակետը, թե «Խոր Վիրապի վանքը Հայաստանում՝ Ժ. դ. կրոնական և պաշտպանական ֆունկցիաները զուգակցող համալիրի՝ վանք-ամրոցի լավագույն ու ամենաբնորոշ օրինակն է»¹¹⁹: Հիշյալ շրջանի վանք-ամրոցները ճարտարապետական տեսք են ստացել

հատկապես նոր կառուցվող մենաստաններում (Հալիձորի Հարանց անապատ, Տաթևի Մեծ անապատ, Շատին վանք, Խոր Վիրապ և այլն), որտեղ արդեն իսկ շեշտված է կրոնական ու պաշտպանական տարրերի զուգակցումը¹²⁰:

Հարկ է նկատել, որ Խոր Վիրապի վանքն իբրև հոգևոր նշանավոր կենտրոն, ուխտավորների սիրելի սրբավայրերից էր և է: 1692 թ. գարնանն այստեղ ուխտի է եկել Վենետիկի Մխիթարյան միաբանության

¹¹⁹ Մ. Հասրաթյան, Հայոց դարձի նախասկզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը, էջ 190: Տե՛ս նաև Ծաղկաբաղ հայկական հուշարձանների, կազմեցին՝ Ա. Ն. Քյուրքյան, Լ. Ա. Տեր-Գրիգորյան, խմբագրությամբ՝ Դ. Քերթմենյանի, Երևան, [2006], էջ 22:

¹²⁰ ՀԺԴ, հ. IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., Երեւան, 1972, էջ 601: Տե՛ս նաև Մ. Հասրաթյան, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, 17-58:

հիմնադիր Մխիթար Սեբաստացին: Գալով էջմիածին՝ իր համերկրացի Ստեփանոս Սեբաստացի ուխտավորի հետ, նա որոշում է շրջել Հայաստանի սրբավայրերով, և առաջին վայրը, ուր ոտք է դնում ապագա արքայի, Խոր Վիրապի վանքն էր: Մաղաքիա արք. Օրմանյանի հաղորդմամբ՝ նա այստեղից անցնում է Սևանավանք, որտեղ էլ տեսնում է հայտնի տեսիլքը՝ կապված Վենետիկյան միաբանության հիմնադրման հետ¹²¹:

Դառնալով վանքի պատմությունը՝ նշենք, որ Պարսից տերություն քաղաքական անկայունությունից պայմանավորված՝ ԺԸ. դ. Խոր Վիրապը մի որոշ ժամանակ ամայանում է: Հայտնի է, որ մինչ կաթողիկոս օծվելն այստեղ ուխտի է եկել Աբրահամ Կրետացին (կաթողիկոս՝ 1734-1737): Աբրահամ Խոջաբեցի (1730-1734) կաթողիկոսի հրամանով նա շրջագայում է Արարատյան դաշտի վանքերում, որի վերաբերյալ տեղեկություններ է թողել իր իսկ Պատմության էջերում. «Եւ գնացի նախ՝ Երևան, որ էր հոկտեմբեր ԺԶ. (16), և մի գիշեր մնացի Երևան: Եւ միւս օրն գնացի ի սուրբ Վիրապ, և անտի ի Ակոռի և ի սուրբ Յակոբայ աղբիւրն՝ ի Մասիս: Եւ անդ կատարեալ զուխտն իմ և մատուցանել ետու պատարագ: Եւ կատարեալ մեր զուխտն և դարձաք ի գիւղն Արկուռին: Եւ անդ սակաւիկ մի հանգչեալ և ճաշ արարեալ՝ դարձաք ի Վիրապն: Եւ ի Վիրապին յատակն իջեալ իմ ժամրարական պատրաստութեամբն՝ աւարտեցի զպատարագն և ելեալ ի Վիրապէն մնացի զգիշերն»¹²²: Վանքի միաբանության կացության, ապա շինությունների վիճակի վերաբերյալ տեղեկություններ Կրետացին չի հաղորդում: Մատենադարանի պարսկե-

րեն հրովարտականքից մեկը բովանդակում է Նադիր շահի 1735 թ. հրամանգիրը՝ էջմիածնից և շրջակա այլ վանքերից (նաև՝ Խոր Վիրապից) գանձվող հարկերի, նաև մուաֆուլթյան իրավունքի մասին՝ գրված Աբրահամ կաթողիկոսի խնդրագրի հիման վրա: Վերջինս խանին է ներկայացնում Միրզա Մուհամմադ Քազիմի՝ Ուլաքլիսայի (էջմիածնի) այգիների, աղացների, դիակների, խանութների, իջևանատների, անասունների և այլնի, նաև այլ վանքերից մալոջհաթ¹²³ հարկը պահանջելու փաստը, մինչդեռ նախկինում էջմիածինը և մյուս վանքերը նման հարկ չեն վճարել: Հրովարտակում նշված է, որ կարգադրվել է հստակեցնել իրողությունը, պարզել. «...թե հին ժամանակներից հիշյալ վանքերից որն է մուաֆուլ եղել, որը գումար վճարել դիվանի սարքարին, և թե ամեն տարի որքան գումար է ստացվել դիվանի սարքարի կողմից...»¹²⁴: Այսօրինակ հիշատակություններն առնվազն վկայում են վանական կյանքի գոյության մասին:

1765 թ. Սիմեոն Ա. Երևանցի (1763-1780) կաթողիկոսը վանքում ծավալում է նորոգչական աշխատանքներ ու միաբանություն հաստատում և ինչպես վերը նշեցինք՝ թեմին տալիս է 11 գյուղ (Վեդի, Արկուռի, Վանստան, Մանկուս և այլն): Սիմեոն կաթողիկոսի հաղորդմամբ. «Վանքս այս ի բառնալ թագաւորութեան Պարսից, յամս քանիս ամայացաւ (որպէս եւ այլք բազումք), զորոյ

¹²¹ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 3104:

¹²² Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 38-39:

¹²³ Մալոջհաթը սեփականության և գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկն է, որը միշտ միատեղ է հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Այն նաև բնակչությունից գանձվող ռենտահարկի մեծ մասն էր կազմում, որը գանձվում էր ռայաթներից (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտականք, պրակ չորրորդ (1734-1797), կազմեց՝ Բ. Պ. Կոստիկյան, Երևան, 2008, էջ 107):

¹²⁴ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտականք, պրակ չորրորդ, էջ 36, վավ. 9:

եկեղեցիսն և զպարիսպն, գոմ խաչանց և համբարք գարշութեանց էին արարեալ տաճիկք և մեք յաջողմամբն Աստուծոյ ի բաց վանեալ զտաճիկսն, մաքրեալ զվանքն, բերաք ի շինութիւն, և կարգեցաք զառաջնորդ և արարաք վանք միաբանակեցաց՝ որպէս յառաջն, ի փառս Աստուծոյ և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի ՌՄԺԴ. (1765) թուոյն մերում: Որ և է չէն և հաստատ ի մերումս ժամանակի»¹²⁵:

Նույն թվականի վավերագրերից մեկում հիշատակված է Խոր Վիրապի «նորոգ» վերատեսուչ Ավետիք վարդապետը (1767-1772 թթ.՝ եպիսկոպոս¹²⁶), որը դարբին Բեկնազարի (միւսումնական) հետ դիմում է վեհափառ հայրապետին՝ օժանդակութիւն ստանալու և վանքում որոշակի տնտեսութիւն ստեղծելու հարցով: Կաթողիկոսը ոչ միայն աջակցում է, այլև «գրեաց և թուղթ առ ժողովուրդս թեմի նորին ի Վէդեցիսն և յԱրկուռեցիսն յորդորելով զնոսա ի նոյն, զի օգնեսցեն նմա արօրիւք և սերմանեօք, պղնձեղինօք, երկաթեղինօք, հանդերձեղինօք և ամենայն պիտոյիւք ըստ իւրեանց պայմանադրութեան»¹²⁷: Սիմեոն կաթողիկոսի օրոք իրականացվող Խոր Վիրապի և Գեղարդի վանքերի նորոգման համար ստեղծվել էր գանձանակ, որի մասին նա ակնարկում է Բայազետի Գեորգ վարդապետին ուղղված թղթերից մեկում¹²⁸: Այս շրջանում է, որ Սիմեոն կաթողիկոսի՝ սուլթան Հուսեյինին ուղղված մի վավերագրում կարդում ենք, որ վանքի մեծ եկեղեցին (Ս.

Աստվածածին - Ա. Հ.) վերջինիս կողմից վեր էր ածվել համբարանոցի, ուստի հայրապետը կարգադրում է ազատել կառույցը և հանձնել առաջնորդ Ավետիք վարդապետին¹²⁹:

Այնուհետ Խոր Վիրապը հիշատակվում է Երեանի նահանգի վանքերի կազմում՝ իբրև մաղաֆությունից, այսինքն՝ հարկատվութիւնից ազատ վանք, ինչպես Մայր Աթոռն է¹³⁰: Մ. Օրմանյանի հավաստմամբ՝ Սիմեոն Երեանցին. «Խորվիրապայ հողերն ալ ազատեց Բայատ կոչուած Տաճիկներու ոտնձգութենէն»¹³¹: Այն, որ Խոր Վիրապը այգիներ է ունեցել նաև Երեանում, տեղեկանում ենք Սիմեոն կաթողիկոսի 1767 թվակիր մի վավերագրից, ըստ որի՝ նախկինում Խոր Վիրապին պատկանած Երեանի Գեթսեմանի մատուռին¹³² կից այգին ներկայումս Մայր Աթոռի սեփականութիւնն է¹³³:

Սիմեոն կաթողիկոսի հաղորդած տեղեկութիւնները փաստում են, որ Աբրահամ Կրետացու այցելութեան ժամանակ վանքը պետք է որ անմխիթար ու ամայի լիներ՝ չունենալով առաջնորդ ու միաբանութիւն: Վանքի՝ հիշյալ շրջանի անմխիթար վիճակը նկատի ունի Սարգիս Ծոցիկյանը, երբ գրում է, թե. «Վերաշինուած վանքը, սակայն, ԺԸ. դարուն, պարսից ասպատակումներէն կամայանայ, և մասնական քանդումներ կունենայ»¹³⁴: Այս ժամանակ է, որ Լուսավորչի Աջը Խոր Վիրապից փոխադրվում է Ս. էջմիածին. «1760 թուին, Լուսաւորչի Աջը, այս

¹²⁵ Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 280-281:

¹²⁶ Դիւան հայոց պատմութեան (այսուհետև՝ ԴՀՊ), գիրք ԺԱ., Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը. 1777-1779 թթ., հրատարակեց Գիւր Կ. քին. Աղանեանց, Թիֆլիս, 1913, էջ 456-457:

¹²⁷ ԴՀՊ, գիրք Գ., Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը. 1763-1767 թթ., հրատարակեց Գիւր քին. Աղանեանց, Թիֆլիս, 1894, 144-145:

¹²⁸ Նույն տեղում, էջ 161, 376:

¹²⁹ Նույն տեղում, էջ 180:

¹³⁰ Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 140-141, 144:

¹³¹ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 3525:

¹³² Գեթսեմանի ԺԲ-ԺԳ. դդ. մատուռը ներկայումս գոյություն չունի: Այն քանդել են 1920-ական թթ. և տեղում կառուցել Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շէնքը:

¹³³ ԴՀՊ, գիրք Գ., էջ 652:

¹³⁴ Ս. Ծոցիկեան, Արարատ, հատոր Ա., էջ 322:

վանքէն կը փոխադրեն Էջմիածնի մասանց գանձարանը»¹³⁵:

Խոր Վիրապի վանքում ստեղծված անկայունությունը նաև առաջնորդ Ավետիք եպիսկոպոսի անհնազանդությունը էր պայմանավորված: 1772 թ. նա ինքնակամ հեռանում է վանքից, հասնում Վան, ապա Երուսաղեմ, ինչի համար Սիմեոն կաթողիկոսը բազում հորդորներից հետո զրկում է նրան եպիսկոպոսական աստիճանից¹³⁶: Վեհափառի հրամանով նույն վանքի միաբան տեր Կարապետ աբեղան նշանակվում է վեքիլ (լիազոր, հավատարմատար). «... զթուղթ գրեաց ի վերայ թեմի վանիցն. այսինքն՝ առ Վէթուլ և Արկուռույ ժողովուրդսն, զի գառաջնորդական և զվանքական հասսն և զիրաւունսն տէր Կարապետ աբեղային տացեն, որովք գտունն այն չէն պահեսցեն մինչև ցգալ առաջնորդին»¹³⁷: Ամիսներ անց, Մայր Աթոռի միաբան Մարկոս վարդապետը նշանակվում է Խոր Վիրապի առաջնորդ. «...յայսմ միջոցի Իւջքիլիսայի վանից միաբան Մարկոս վարդապետն ընդ առաջնորդին իւրոյ Զաքարիա վարդապետին եկեալ էր ի սուրբ Աթոռս: Վասնորոյ՝ և սրբազան վեհընդնա սրբոյն Խորվիրապայ վանիցն առաջնորդ արարեալ, որում և առաջնորդական կոնդակ տուեալ, յղեաց անդ՝ առ ի շինութեան պահել զսուրբ Տունն այն»¹³⁸:

Ղուկաս Ա. Կարնեցի (1780-1799) կաթողիկոսի 1781 թվակիր թղթերից մեկում հիշատակվում է Խոր Վիրապի միաբան Հարություն պետը (առաջնորդը). «Եւ յետ երկուց աւուրց սրբազան Վեհն զերիս ժողովարարս ևս էհան ի սրբոյ Աթոռոյս. զՅակոբ վարդա-

պետն Շամախեցւոյ յղեաց ի Բայազիտ և ի Դիատին, զգեանջեցի տէր Յակոբ պետն յղեաց ի յԱլաշկերտ և... և զԽոր Վիրապու միաբան Յարութիւն պետն՝ ի Թփրախղալա...»¹³⁹:

Խոր Վիրապում վանական կյանքը որոշ դադարից հետո շարունակել է գոյատևել նաև ԺԹ. դարում. «...ուսաց ձեռքն անցնել է հոք, Խոր Վիրապի վանքը դարձեալ կարգի կը բերուի: Այժմու վանահայրն է ծերունի կուսակրօն մը, Ղուկաս վարդապետ Եղիազարեան»¹⁴⁰: Մեսրոպ Թաղիադեյանն իր 1816 թ. այցելությունը Խոր Վիրապ այսպես է նկարագրում. «Ի վերայ կրկնագագաթ գլխոց բլրոյն Արտաշատայ՝ ունէր յառաջն դղեակ. այժմ յարեւելեան գագաթանն ևեթ երեւի վանքն Խոր Վիրապայ Լուսաւորչին Հայաստանեայց, զոր ի նորոյ վերանորոգեալ էր Ներսես վարդապետ ոմն, Հաստափոր կոչեցեալ, միաբան Սրբոյ Կաթողիկէին: Ունէր ամբողջ վիմապարիսպ շուրջանակի, ի մէջ ունելով զմեծ իմն եկեղեցի յանուն Տիրամօր, և ի հիւսիսոյ նորա մատուռն ինչ կառուցեալ ի վերայ Վիրապին անդնդայնոյ, ուր ճգնեցաւ սուրբն Գրիգորիոս զամս հնգետասան՝ իբրև որդի վերնամարտին Անակայ, այլ ել անտուստ և լուսաւորեալ պայծառացոյց զհամօրէն Հայաստանեայս՝ իբրև որդի հոգեւոր՝ առաքելոյն Թաղթէոսի»¹⁴¹: Հիշյալ այցելության կապակցությամբ Լեոն նշում է, որ Մեսրոպ Թաղիադեյանն իր ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարադաղցու հետ Խոր Վիրապից շարժվել է դեպի Մասիսի լանջին ծվարած Ս. Հակոբ վանքը, իսկ ճանապարհորդությունը Մեսրոպի համար ունեցել է ճանաչողական նշանակություն, քանի որ

¹³⁵ Նույն տեղում:

¹³⁶ ԴՀՊ, գիրք Ը., Սիմեոն կաթողիկոսի յիշատակարան. 1767-1776 թթ., հրատարակեց՝ Գիւրա ա. քին. Աղանեսնց, Թիֆլիս, 1908, էջ 339:

¹³⁷ Նույն տեղում, էջ 177:

¹³⁸ Նույն տեղում, էջ 217:

¹³⁹ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա., աշխ. Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 233:

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Թաղիադեյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, էջ 97:

սկսել է հատուկ վերաբերմունք տածել հատկապես հնուկությունների նկատմամբ¹⁴²:

Խոր Վիրապի վանքի հյուսիսարևմտյան կողմում է գտնվում «Օթեաց Խաչ» կոչվող սրբավայրը¹⁴³: Ըստ ավանդության՝ երբեմնի Արտաշատ մայրաքաղաքի բլուրներից մեկի վրա հանդիպել են Հայոց աշխարհում քրիստոնեություն քարոզող առաքյալներ Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը¹⁴⁴: Ի նշան հանդիպման՝ նրանք ժայռի վրա խաչանշաններ են դրոշմել և օծել սրբալույս մյուռոնով, իսկ գիշերը օթեանել են նույն հարկի տակ, որտեղից էլ ծագում է բլրի՝ «Օթեաց Խաչ» անվանումը¹⁴⁵: Խոր Վիրապ այցելած Մեսրոպ Թադիստյանին վանականները ցույց են տվել արևմտյան բլրագագաթին պահպանված խաչանշանն ու պատմել ավանդություն-

ներ. «...յարեմտեան գագաթի բլրոյն, որ ի թիկանց սորա՝ է սեպուհ հզօր, յորոյ վերայ ցուցին ինձ ոմանք ի վանականաց Վիրապին՝ զդրոշմ ինչ խաչանիչ, գծեալ ըստ ասից իւրեանց՝ մատամբ առաքելոյն Թադիսի»¹⁴⁶: 1859 թ. Ալեքսանդրապոլցի Վարդան Քեանդարյանի միջոցներով նշված վայրում մատուռ է կառուցվել, որն ունեցել է նաև շինարարությունը վերաբերող արձանագրություն (տե՛ս «Խոր Վիրապի վիմագրական ժառանգությունը» գլուխը, արձ. 18): Մատուռն ու սրբավայրը հիշատակում են նաև Մատթեոս Փափագյանցն ու Քաջբերունին: Վերջինիս կարծիքով այն կառուցված է 1860-ական թթ., Խոր Վիրապի վանահայր Հակոբ վարդապետ Քեանդարյան Ալեքսանդրապոլցու հոգածությամբ¹⁴⁷: Ինչպես կտեսնենք վիմագիրը քննելիս՝ Քաջբերունին, վիմագրից անտեղյակ, որոշ տվյալներ չփոթել է:

Խոր Վիրապի որպիսությունը ԺԹ. դարասկզբին, այլև ժամասաց Սիմեոն վարդապետ Երեանցու վանահայրությունն իր «Անձնական պատմութեան» էջերում նկարագրել է Մանուել վարդապետ Կյուսմուշխանեցին (Ալթունյան կամ Շահինով): 1830 թ. կազմված այս աշխատությունը հրատարակվել է նախ «Արարատ»-ի էջերում¹⁴⁸, ապա Գյուտտ ավագ քահանա Աղանյանցի աշխատասիրությամբ¹⁴⁹: Նա նախաբանում գրում է, որ ««Անձնական պատմութիւն»-ը Մանուէլի ինքնագիր աշխատութիւնից արտագրել է «քօլլէժսկի սօվէթնիկ» (կոլեգիական խորհրդական - Ա. Հ.) Սարգիս Խորասանո-

¹⁴² Լեո, Երկերի ժողովածու, հ. վեցերորդ, Երևան, 1987, էջ 743:

¹⁴³ «Օթեաց Խաչ» անունով հայտնի այս սրբավայրի պատմության վերաբերյալ վերջերս զեկուցում կարդացինք «Արշալույս քրիստոնեության հայոց» խորագրով միջազգային գիտաժողովում (Հարությունյան Ա., Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հանդիպումը նշանավորող «Օթեաց Խաչ» սրբավայրը, «Արշալույս քրիստոնեության հայոց» միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, Երևան, 2016, էջ 57-58):

¹⁴⁴ Այս մասին վկայված է Ս. Բարդուղիմեոս առաքյալի վկայաբանության մեջ՝ այսպերպ. «Ի քսանևիններորդ ամի Սանատրկոյ թագաւորին եմուտ սուրբ առաքեալն Բարթողոմէոս ըստ հրամանի Հոգւոյն Սրբոյ ի Հայք, որ ընտրեաց զնոսա յառաքելութիւն կոչմանն հեթանոսաց ... Եւ եկեալ սուրբ առաքեալն ի բլուրն Արտաշու, հանդիպեցաւ այլ ոմն յերկոտասանիցն Յուդայ Յակոբեան, և կանգնեցին ի տեղւոջն ուր պատահեցան միմեանց զնշան տէրունական խաչին, և հրաժարեցին ի միմեանց մեծաւ ուրախութեամբ և գնացեալ Յուդայի յիւր տեղիսն» (Վկայաբանութիւն Սրբոյն Բարդուղոմէոսի առաքելոյ, «Սոփերք հայկական», հ. ԺԹ., էջ 24-25):

¹⁴⁵ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., էջ 13, տես նաև Ա. Հախնազարյան, Արտազի երեք վանքերը, Երևան, 2012, էջ 37-38:

¹⁴⁶ Թադիստյան Մ., նշվ. աշխ., էջ 97:

¹⁴⁷ Քաջբերունի, էջ 29:

¹⁴⁸ Խոր Վիրապ վանուց որպիսութիւնք (ստորագրված՝ «Բ. վ. Ա.»), «Արարատ», 1916, Ա-Բ., էջ 96-104:

¹⁴⁹ ԴՀՊ, գիրք ԺԲ., Մանուէլ Կիւմիւշխանեցի, մասն I, ծանօթութիւններով հրատարակեց Գիւր Կ. Բ. Աղանեանց, Թիֆլիս, 1917:

վը բաւական աղաւաղ գրչութեամբ...»¹⁵⁰, իսկ ինքը որոշել է «Դիվան»-ներին էջերում զետեղել նաև հիշյալ աշխատութիւնը, որն ըստ նրա «մի կարեւոր պատմական դօկումէնտ» է:

Արարատյան դաշտի վանքեր կատարած շրջագայութեան շարքում Ակոռիի Ս. Հակոբ վանքից հետո Մանուել վարդապետը Կարապետ վարդապետի և Ստեփան աղա Մելիքյանցի ընկերակցութեամբ ժամանել է Խոր Վիրապի վանք՝ այն բնորոշելով իբրև «...դայեակ սնուցիչն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ...»¹⁵¹: Մանուել վարդապետը վանքն այսպես է նկարագրում. «...ի մէջ դաշտին Արտաշատու, այն է՝ այժմ Գառնի Պասարու, ձուլած եւ բարձրացեալ լեռան միոյ կառուցեալ կայ մայր ամենայն վանօրէիցն մերոց շրջապատ բարձրաբերձ պարսպովք և դղեկօք, ուր կան երկու եկեղեցիք, մինն յանուն սուրբ Աստուածածնի, և միւսն Լուսաւորիչ և վիրապ, ի յատակս որոյ է խորափորի տեղին տասն և հինգ ամ բնակութեան Սրբոյ Հօրն մերոյ...»¹⁵²: Այնուհետ ներկայացվում է վանքի անմխիթար վիճակը, շինութիւնների ոչ նպատակային շահագործումը, ապա Սիմեոն վարդապետի վանահայրութեան գալն ու տեղում ոչինչ չգտնելը. «Ի հոկտեմբեր ամսոյ առաքեցին զյիշեալ վանահայրն անդ, ուր ոչ խուցք բնակութեան գտնէ միայն ինքեան կայր, ոչ մշակ և ոչ սպասաւոր, ոչ հաց օրական և ոչ աման ջրոյ և ջրկիր, ուստի պարտաւորեալ վանահօրն, ի գիւղօրայս վիճակին անցուցանէր զաւուրս յուսով ապառնի գարնան...»¹⁵³: Այստեղ է, որ

Սիմեոնին վանահայր նշանակելու կոնդակ-հրամանագրում Մանուել վարդապետ Կյումուշխանեցին հիշատակվում է Խոր Վիրապի վանքի ու վիճակի առաջնորդ:

1840-ական թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վանքը բարեկարգում է և վանահայր նշանակում Գալուստ վարդապետին¹⁵⁴: Նրա մասին Մեսրոպ արք. Սմբատյանցը գրում է, թե «Էջմիածնայ Սինօգի հրամանաւ յամի 1838 կուղարկուի Սեանայ միաբանից կարգիցը՝ Գալուստ վարդապետ կադն՝ Պայագիտցի, սա ևս երկու տարի կառավարելով, նոյն Սինօգի հրամանաւն կերթայ Խորվիրապայ վանքը, ուր վանահայրութեան պաշտօն կատարելով քանի տարի, կը վաղճանէ ծերութեան աւուրց մէջ»¹⁵⁵: Սինօգի հրամանով 1862 թ. Խոր Վիրապի վանահայր է նշանակվել Նոր Բայագետի երբեմնի գործակալ Պետրոս վարդապետ Փիլիպպոսյանը, որի դեռևս 1866 թ. վանահայրութեան պաշտոնին լինելը փաստում է Մեսրոպ Սմբատյանցը¹⁵⁶:

Միսաք Արամյանցի՝ ԺԹ. դարավերջին Էջմիածին կատարած ուղևորութեան տպավորութիւններից պարզվում է, որ Խոր Վիրապի վանքը դարձյալ անմխիթար ու բարձիթողի վիճակում է: Խոր Վիրապը, որը բժիշկ ճանապարհորդի խոսքերով խորհրդանշում է «Հայաստանեայց քրիստոնէութեան սուրբ արգանդը», որը նաև «Ս. Իջման նուիրավայրի գոյութեան սաղմն է, նրա խորհրդաւոր նշանակութեան առհաւատչեան», ուխտավորին է ներկայացել ողորմելի ու անխնամ

¹⁵⁰ Նույն տեղում, էջ Ա:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 111:

¹⁵² Նույն տեղում:

¹⁵³ Նույն տեղում, էջ 114: ԺԹ. դարասկզբին՝ Խոր Վիրապի լքված ու անմխիթար վիճակը թերևս պետք է պայմանավորել տվյալ ժամանակաշրջանում՝ Դավիթ-Դանիելյան գավազանակովի հետ կապված ռուս-պարսկա-

կան հակամարտությամբ, երբ Խոր Վիրապի դաշտում էր հաստատվել պարսկական արքունի բանակը՝ Աբաս Միրզայի գլխավորությամբ (*Մաղաքիա արք. Օրմանեան*, Ազգապատում, հ. Բ., էջ 3847, 3879, 3881):

¹⁵⁴ *Վահան Եպիսկոպոս Տերյան*, Խոր վիրապի վանքը և ուխտագնացություն, էջ 33:

¹⁵⁵ *Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց*, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայագիտ գաւառ, էջ 71:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 79, 193:

վիճակում: Այցը գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցի Արամյանցն այսպես է ներկայացնում. «Մտնում ենք տաճարը. առաջին երևոյթը, որ մեր աչքին ընկնում է, դա ցորենի ահագին շեղջն էր, որ բուրգի նման բարձրանում էր եկեղեցու հիւսիսային կամարակապի տակ»¹⁵⁷: Եկեղեցին ցորենի շտեմարան դարձրած զարմանալի այս երևոյթին հաջորդում են հարակից շինությունների նկարագրությունները. «...շուրջը աւերակ է, շինութիւնները բոլորովին խախտուած, մինչեւ անգամ այն սենեակները, որ ուսումնայարկի նշանակութիւն ունէին, տապալուել են»¹⁵⁸: Դառնալով Ս. Վիրապի նկարագրությանը՝ Արամյանցն այն ներկայացնում է որպես. «...մի խոր և մթին փոս, քարակուռ պատերով և լայն յատակով, որի արեւելեան կողմում կազմած է սեղան՝ պատարագ մատուցանելու համար»¹⁵⁹: Նկարագրական այս դառը, միաժամանակ ուշագրավ տեղեկությունները ժամանակաշրջանի համար արժանահավատ վավերագրի արժեք ունեն: Մկրտիչ Ա. Վանեցի իրիմյան (1892-1907) կաթողիկոսի արխիվային վավերագրերից մեկը բովանդակում է 1898 թ. խոր Վիրապ այցելած երեք ուխտավորների գրավոր նկատողությունը կաթողիկոսին, որով շեշտվում է հոգևոր իշխանությունների անուշադրությունն այս նշանավոր կենտրոնի նկատմամբ, և որ վանքը ենթակա է ավերակ դառնալու¹⁶⁰:

Յավալին այն է, որ վանքը նման վիճակում է եղել նաև նախորդ դարասկզբին: 1912 թ. օգոստոսին խոր Վիրապ է այցելել Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ վրդ. Տեր-

Մովսիսյանը (Մագիստրոս), որն իր մուայլ տպավորությունները թղթին է հանձնել դարձյալ նույնատիպ բառերով: Հիշյալ ժամանակաշրջանում վանքը վանահայր Հի ունեցել, այլ կառավարվել է երեք հոգաբարձուի և մեկ քահանայի կողմից, ովքեր եկել են միայն կիրակի ու տոն օրերին: Մեսրոպ վարդապետը վանքը բնութագրում է իբրև «պատմական յիշողութիւններով այնքան հարուստ վանք», «Լուսաւորչի չարչարանաց վայր», «միջնադարեան հայ գրականութեան եւ մտաւորական կեանքի կենդրոններից մէկը», որը լքված է ու ամայի¹⁶¹: Մեսրոպ վարդապետը ցավով է արձանագրում, որ վանքի հոգաբարձության կողմից ոչ միայն ծեփի հաստ շերտով են պատվել Ս. Վիրապի հնամենի կոպտատաշ քարերը, այլև սալահատակը փոխարինվել է նորով: Նա վկայում է, որ թուրքերի կողմից վնասվել են Ս. Աստվածածին եկեղեցու որմերի՝ Ժ. Դարին հարազատ քանդակազարդ քարերը, որոնք իրենցից. «...ներկայացնում են Աւետարանների սկսուածքներում սովորաբար հանդիպող կանացի գլխով թռչնազարդ խորանազարդեր»¹⁶²:

Վանքային համալիրը նման ծանր վիճակից ի վերջո դուրս է եկել ու կրկին ծաղկում ապրել շնորհիվ երջանկահիշատակ Վազգեն Ա. (1955-1994) վեհափառ հայրապետի նախաձեռնած շինարարական ու բարեկարգման աշխատանքների: Ակադ. Վարազդատ Հարությունյանը, շարադրելով Վազգեն վեհափառի օրոք կատարված շինարարական աշխատանքների պատմությունը, անդրադառնում է նաև խոր Վիրապին՝ նշելով, որ այս վանքը վերաշինված ու պայծառացված տեսնելը նորընտիր Վազգեն հայրապետի

¹⁵⁷ Միսաք բժ. Արամեանց, Սալիանից Էջմիածին. նկարագիր ուխտաւոր ուղևորութեան, Թիֆլիս, 1887, էջ 109:

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 111:

¹⁶⁰ Խրիմյան կաթողիկոսին ուղղված դիմումների և այլ վավերագրերի արխիվ, ՄՄ կաթողիկոսական դիվան, թղթ. 108, վավ. 1081:

¹⁶¹ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսեան (Մեսրոպ Մագիստրոս), Յօդուածների ժողովածու, էջ 253:

¹⁶² Նույն տեղում, էջ 254:

սրտի բաղձանքն էր, որն ի սկզբանե տեղ էր գրավել նրա շինարարական ծրագրերում¹⁶³: 1957 թ. նոյեմբերի 18-ին, Մայր Աթոռին առնթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամների հետ վեհափառի այցը Խոր Վիրապ նշանավորվել է տեղում կատարվելիք աշխատանքների ծավալն ու բնույթը պարզելու առումով: Կազմված ծրագրի համաձայն՝ որոշվել է աշխատանքներն իրականացնել երեք ուղղություններով. գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցու նորոգում, Ս. Վիրապի վրա կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորոգում և պարիսպների ու վանական շենքերի վերաշինություն ու ընդհանուր բարեկարգում: Ծարտարապետ Արծրուն Գալիկյանի նախագծով և Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցներով 1959-1960 թթ. Խոր Վիրապի վանքում ծավալվել են վերաշինման աշխատանքներ, որոնք վեհափառ Հայրապետի թելադրանքով վերսկսվել են 1970 թ. և շարունակվել մինչև 1980-ական թթ. կեսերը: Վ. Հարությունյանի հավաստմամբ՝ տեղական միջոցառումների չնորհիվ հնավանդ Խոր Վիրապի վանքը վերագտավ իր վաղեմի տեսքը, որով և իրականացավ շինարար Հայրապետի երազանքը¹⁶⁴:

Ավելի ուշ, Մուրադ Հասրաթյանը ևս անդրադառնում է Վազգեն Հայրապետի շինարարական գործունեությանն ու հայ ճարտարապետությունը բերած նպաստին: Այս համատեքստում շեշտվում է հատկապես Խոր Վիրապի ու Գեղարդավանքի հիմնանորոգումը: Խորհրդային տարիներին, ինչպես փաստում է ճարտարապետը, Խոր Վիրապը գտնվում էր սահմանապահ ուղեկալի տարածքում և անմատչելի էր դարձել այցելու-ուխտավորների համար: Այս արգելքի վերացումից հետո հրատապ խնդիր էր ան-

մխիթար վիճակում հայտնված վանքի բարեկարգումն ու նորոգումը, որը և կյանքի կոչվեց վեհափառ Հայրապետի անմիջական հսկողությունը¹⁶⁵:

Վազգեն վեհափառի օրոք՝ Խոր Վիրապում իրականացված շինարարական աշխատանքների մասին տեղեկություններ են ավանդել նաև ժամանակի հոգևոր հայրերը: 1966 թ. մայիսին վանքի վանահայր Տ. Գրիգոր քահանա Ջաֆտեյանը Տ. Հարությունյան քահանա Տերտեղյանի հետ Ս. Գրիգոր Լուսավորչի «մուտն ի Վիրապն» տոնին դիմավորել են Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Վահան եպիսկոպոս Տերյանի գլխավորությամբ Մայր Աթոռից Խոր Վիրապ ուխտի գնացած բազմությունը: Ուխտագնացությունը նկարագրելուց հետո սրբազանը տեղեկություններ է հաղորդում Վազգեն վեհափառի օրոք իրականացված բարենորոգչական աշխատանքների մասին, մասնավորապես՝ ամբողջությամբ սալապատվել է Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու հատակն ու բակը, նորոգվել Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատերը, տանիքը, զանգակատան ներքնահարկը, պարսպի արևելյան շքամուտքը, տեղադրվել է Ս. Աստվածածին եկեղեցու խաչը և այլն: Նորոգչական աշխատանքներն իրականացվել են Կալիֆորնիայի (ԱՄՆ) հայ հավատացյալների միջոցներով¹⁶⁶:

Ավելի ուշ, վանքի վանահայր Տ. Գուրգեն ավագ քահանա Մուրադյանը գրում է, որ 1980-ական թթ. Խոր Վիրապը, մշտապես գտնվելով Հայրապետի ուղղորդության կենտրոնում, պայծառացել ու նոր տեսք է ստացել, մասնավորապես՝ հիմնովին վերանորոգ-

¹⁶³ Վ. Յարուբիւնեան, Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, [1988], էջ 100:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 100-104:

¹⁶⁵ Մ. Հասրաթյան, Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի վերանորոգչական-եկեղեցաշինական գործունեությունը, «Էջմիածին», 2008, Ժ., էջ 53:

¹⁶⁶ Վահան եպիսկոպոս Տերյան, Խոր Վիրապի վանքը և ուխտագնացություն, էջ 32:

վել է Ս. Աստվածածին գլխավոր եկեղեցու տանիքը, վերակառուցվել Ս. Սեղանը, սալապատվել են եկեղեցիների հատակը՝ աստիճաններով հանդերձ և բակը: Նշելի է նաև դեպի վանք տանող ճանապարհի ասֆալտապատումը, նախամուտքի, պարսպի ճակատային մասի, վանատան ու օժանդակ կառույցների վերակառուցումը: Նորոգչական աշխատանքներն իրականացվել են նվիրատվությամբ Կալիֆորնիայի թեմի առաջնորդարանի, Բեյրութի կրոնասեր Տիկնանց, տիկին Վինես Նահիկյանի (ԱՄՆ), տիար Հակոբ Տերտերյանի (ԱՄՆ), տիար Ժան Ապաճյանի (Բելգիա)¹⁶⁷: 1991 թ. բակի հարավարևելյան կողմում կառուցվել է աղբյուր-հուշարձան (Լ. Դիլանյանի նախագծով), որի թիկունքին փորագրվել է շինարարությանը վերաբերող արձանագրություն (տե՛ս «Խոր Վիրապի վիմագրական ժառանգությունը» գլուխը, արձ. 38):

Այն, որ Խոր Վիրապի բարենորոգչական աշխատանքներն իրականացվել են հիմնականում Կալիֆորնիայի Հայոց առաջնորդարանի եռանդուն ջանքերով ու հանգանակությամբ, վկայում է նաև այդ առիթով հրատարակված երկկեզու (հայերեն, անգլերեն) գրքույկը, ուր ընդհանուր տեղեկություններ են հաղորդվում վանքի պատմական անցյալի, ներկա վիճակի ու կատարվելիք շինարարական ծրագրերի մասին¹⁶⁸: Փաստելի է, որ Վազգեն վեհափառ հայրապետի և Կալիֆորնիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբկեն եպս. Վարժապետյանի հոգածությամբ կյանքի կոչված Խոր Վիրապի վանքի «վերագարթոնքը» համայն Հայության նվիրական երազանքների անբաժանելի մասն էր, քանզի. «Եթե Ս. Էջմիածինը Հայուն համար լոյսի աղբիւրը եղաւ, Ս. Խոր Վիրապը

Հայութեան Հոգիին վառարանն է, ուր Քրիստոնէական կրակի մկրտութիւնն ընդունեց ան»¹⁶⁹:

Խոր Վիրապն իր ուրույն «դիմագիծն» ունի նաև Վազգեն վեհափառի հաջորդ Գարեգին Ա. (1995-1999) Ամենայն Հայոց կաթողիկոսի հուշերում ու խորհրդածուլթյուններում: Խոր Վիրապ՝ «Խորհուրդ Խորին...» բնաբանով է նա ներկայացնում 1994 թ. մայիսի 9-ին վանք կատարած իր ուխտագնացությունը, որը ձոնում է Վազգեն հայրապետին: «Արարատեան դաշտի պռունկին, պատմական Արտաշատի սրտին, Մայր Արաքսի «հին հին դարուց յիշատակներու յուշարար դրացնութեան մէջ...» հանգրվանած համալիրում ըստ Գարեգին Ա. կաթողիկոսի՝ ամեն ինչ հոգի է. «...համատարած անդորրութիւն, ներքնահայեցում: Այստեղ կը զգամ, որ տիեզերքը կը տրոփէ իր Արարչին կշռոյթովը...: Այստեղ հոգեւորին թագաւորութեան անգահ գահակալութիւնն է: Այստեղ մարդը իր բուն, սկզբնաստեղծ եւ աստուածակնիք լինելութեան պատկերին գիտարարը կը դառնայ, երբ կարենայ այստեղ հոգիով ապրած եւ հոգին ապրեցուցած մարդը զգալ իր կողքին...»¹⁷⁰: Գարեգին Ա. հայրապետի համոզմամբ՝ այս վանքը երկրորդ Նոյան տապանն է. «...որուն անունն է Խոր Վիրապ, եւ որուն «շինարար»ին անունն է Գրիգոր եւ ազգանունը դարձաւ Լուսաւորիչ: Եւ այստեղէն եղեւ փրկութիւն ազգիս Հայոց, լուսեղէն քարոզութեամբն Սրբոյն Գրիգորի մերոյ նահապետին հաւատոյ»¹⁷¹:

Խոր Վիրապի վանքը շարունակում է պայծառանալ նաև Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք: Վանքի հոգևոր դասը և

¹⁶⁷ Գուրգեն ա. քին. Մուրադյան, Ս. Խորվիրապի վանքը, «Էջմիածին», 1982, Գ., էջ 34:

¹⁶⁸ Խոր Վիրապի վանքը (The Monastery of Khor Virab), հրատարակություն առաջնորդարանի Հայոց Գալիֆորնիոյ, ՀՎր 7:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 6:

¹⁷⁰ Գարեգին Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, Հոգեմտաւոր ճառագայթումներ (հատընտիր), Ս. Էջմիածին, 1997, էջ 125, 129:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 130:

բազմաթիվ ուխտավորներ 2001 թ. մեծ շուքով նշել են քրիստոնեություն ընդունման 1700-ամյակը. այդ մասին են վկայում բազմաթիվ կանգնեցված խաչքար-կոթողները: Ըստ վիճակագրի՝ դրանցից մեկը 2001 թ. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն է նվիրել Գերասիմ Ռոբերտի Սարոյանը, իսկ մյուսը՝ բոլնեցի Ֆրանսազայ Հարություն Առաքելյանը:

2009 թ. արգենտինազայ բարերարներ Գրիգոր և Օֆելյա Դերձակյանների միջոցներով նորոգվել է վանահոր կացարանը, ինչի առնչությամբ շինության արեւմտյան պատին արձանագիր մարմարյա սալ է փակցվել (արձ. 41): Նշենք նաև, որ 2013 թ. վանքի խաչքավոր Ավետիք Նազարեթյանի կողմից Ս. Վիրապին է նվիրաբերվել Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց և Հայոց Դարձի քսանչորս տեսարանները ներկայացնող սրբապատկերը (նկ. 17): Նույն թվականին գրքի մեկենաս Վահե Դարբինյանի միջոցներով ձեռք են բերվել նաև զանգակատան արժեքավոր զանգերը:

Վանքի պատմության արժանահիշատակ

էջերից մեկն էլ բոլորովին վերջերս (26 հունիս, 2016 թ.) Հռոմի Ֆրանցիսկոս պապի՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում Խոր Վիրապ ուխտի գալն էր, որի ընթացքում սրբազան քահանայապետը այս հոգևոր կենտրոնին մի կանթեղ նվիրեց: Հեռանալիս Ֆրանցիսկոս պապն ու Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը դեպի Արարատ լեռը բացվող դիտահրապարակից աղավիններ բաց թողեցին՝ ի խաղաղություն Հայոց աշխարհի (նկ. 107-108):

Հավելենք, որ Խոր Վիրապի վանքի՝ տարբեր դարերում գործած մեզ հայտնի առաջնորդ-վանահայրերի գավազանագիրքը ներկայացված է աշխատության վերջում. այս փաստը թույլ է տալիս արձանագրել, որ չնայած որոշակի դադարներին՝ վանքը մշտապես գործել է:

Վանքի գոյատևման ընթացքն ի վերջո փաստագրված է այստեղից մեզ հասած ձեռագիր մատյաններում ու քարեղեն վկայագրերում, որոնք առանձին-առանձին ներկայացված են ուսումնասիրության հաջորդ երկու գլուխներում:





ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԸ

*Կատարեցաւ սա ի Վիրապն, մինչ կաաք մէք ի յուաման,
ի Թվին ԶԵԺ (1266), յիշեցէք ի Տէր ...*

ՏԻՐԱՑՈՒ ԳԻԻԶ

*(Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի
Հմր 212 ձեռագրի Հիշատակարանից)*



Մ իջնադարյան Հայաստանի պատմության տարբեր շրջափուլերի հոլովոլթում խոր Վիրապի վանքն ունեցել է իր առանձնահատուկ դերն ու նշանակությունը: ԺԳ. դարից սկսած վանքը գրչության նշանավոր կենտրոն է դարձել: Ինչպես վերը նշվեց, այստեղից մեզ է հասել մոտ տասը ձեռագիր մատյան, որոնց մեծ մասը պահվում է Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (ՀՊՐ 544, 811, 3082, 3825, 5413, 5756, 6752, 7044): Ձեռագրերի ինչպես գրչության, այնպես էլ հետազայի հիշատակարանները կարևոր աղբյուրագիտական նյութ են ոչ միայն տվյալ ձեռագրի ստեղծման ու հետագա «ճակատագրի», այլև վանքի պատմության, վանական միաբանության ու տնտեսության, ինչպես նաև տեղում ծավալված կրթամշակութային ու հոգևոր կյանքը լուսաբանելու առումով:

Խոր Վիրապում գրչության արվեստի սկզբնավորումն ու զարգացումը անմիջականորեն կապված է մեծանուն ուսուցչապետ Վարդան Արևելցուն՝ տեղում դպրոց-վարդապետարան հիմնելու, ապա վարժապետական գործունեություն ծավալելու հետ: Կիրիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը տարբեր առիթներով անդրադարձել է նրա գիտական վաստակին՝ նշելով, որ Վարդանը «Վանականի աշակերտն էր, Կիրակոս Գանձակեցու, Մաղաքիայի աշակերտակիցը, նշանաւոր հանդիսացած իւր պատմութեամբ եւ ուրիշ գրուածներով»¹: Ըստ Արշակ Ալպոյաճյանի՝ Վարդանը մեկն էր Վանականի աշակերտներից, որը ջանում էր իր ստացած գիտելիքները տարածել ու լուսավորել մարդկանց: Նա «...ծնած պէտք է ըլլայ 1200-12-ի ատենները, Վանական վրդ-ի ձեռքին տակ իւրա-

ցուց Ս. Գրոց մեկնութեան այն կերպը, զոր ապա իր գիրքերուն մէջ կիրարկեց»²:

Վարդան Արևելցուն՝ խոր Վիրապում շուրջ վեց տարի աշակերտած Գևորգ Լամբրոնացին (Սկևռացի) իր իսկ ձեռքով՝ 1267 թ. գրված ՄՄ ՀՊՐ 3082 «Ժողովածոյ» ձեռագրի հիշատակարանում շեշտում է նաև Վարդանի՝ հիշյալ վանքում ծավալած վարժապետական գործունեությունը. «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղեւ ի տիեզերահռչակ սուրբ ուխտն Վիրապին... ի մեծ վարդապետէն եւ յաստուածազգեաց առնէն Վարդանայ, որ ընդ այն ժամանակս ի վերա ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն [կա]տարի առաքինութիւն, եւ զուսուց- [չ]ապետութեանն եւս զգործ ի կիր արկեալ ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկեալսն յաստուածայինսն ուղղէր ճանապարհ»³: Հիշատակարանի վերոնշյալ հատվածը, որը 1270 թ. գումարված Ձագավանից ժողովի առնչությամբ վկայակոչել է նաև Գ. Հովսեփյանը⁴, ուշագրավ տեղեկատու է Վարդան վարդապետի՝ խոր Վիրապում ծավալած մատենագրական, ապա ուսուցչական գործունեության առումով:

Վարդան Արևելցուն՝ խոր Վիրապում հիմնած դպրոցի աշակերտների թվի վերաբերյալ կարևոր տեղեկություն է հաղորդում նաև Դավիթ Երեցը, որը 1290 թ. շարադրել է նրանցից մեկի՝ Գրիգոր Բալուեցու վկայաբանությունը. «...ելանէր ի քաղաքէն իւրմէ եւ գնացեալ դադարէր յարեւելս՝ յԱյրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ առ հռչակաւոր իմաստասէր վարդապետն հայոց Վարդան,

¹ Գարեգին կաթողիկոս Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռչեանք հայոց պատմութեան մէջ, էջ 252:

² Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, Ա. հատոր, Գահիրէ, 1946, էջ 241:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 351. Ընդգծումը մերն է - Ա. Հ.:

⁴ Գարեգին վարդապետ [Յովսեփեան], Ձագավանից ժողովը, էջ 31-32:

որ եւ դպրոց կարգեալ էր նորա Խ. (40) աշակերտօք, զոր մինն սա գտանէր ի մէջ նոցա»⁵: Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, թե Գրիգոր Բալուեցին. «...առաջ ամուսնացեալ քահանայ է եղած, բայց երկու տարիէ այրի մնալով՝ կերթայ աշակերտիլ Վարդան վարդապետի մօտ Խորվիրապի եւ Կայէնի վանքերը, եւ վեց տարի ետքը վարդապետական գաւազան ստանալով, Բալու կղաւնայ, եւ Ս. Յակոբի վանքը հաստատելով քաղաքին եւ շրջակայից մէջ քարոզութեամբ կը զբաղի...»⁶:

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Հ՞ր 212, Խոր Վիրապում՝ 1266 թ. գրված «Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի ի Վարդանայ» ձեռագրի գրչութեան հիշատակարանում վկայված է Վարդանի աշակերտներից Տիրացու գրչի անունը. «...ես՝ Տիրացու, անարժան աշակերտ գոյով նորուն (Վարդանի - Ա. Հ.), անդառ տեղեան գրեցի զսա անարհեստ գրչութեամբ... Կատարեցաւ սա ի Վիրապն, մինչ կապ մեք ի յուսման, ի թվին ԶԵԺ.⁷ (1266), յիշեցէք ի Տէր...»⁸: Ակնհայտ է, որ Տիրացուն Վարդան Արեւելցու անմիջական աշակերտն է, որը հիշյալ թվականին ուսանելիս է եղել Խոր Վիրապում: Դեռ ավելին, Արտազի թեմի առաջնորդների գաղազանագրքում հիշատակվում է նաև Տիրացու Ա. եպիսկոպոսի անունը, որը նախ աշակերտել է Վարդան Արեւելցուն ու ձեռագիր ընդօրինակել, ապա եղել

է Արտազի Ս. Թադեոս առաքյալի նորաստեղծ թեմի առաջնորդը՝ հաջորդելով Հովսեփ վարդապետ Արտազեցուն: Նրա առաջնորդութեան տարիները սահմանվում են մոտ 1285-1298 թթ.⁹: Էրմիտաժի (V3 835)՝ 1290 թվակիր Ավետարանի գրիչ «Փիլիսոփա» մականվամբ Թորոսը, ձեռագրի գրչութեան հիշատակարանում խոսելով երկրում տիրող ծանր ու դժվարին ժամանակների մասին, երբ. «...քանդեալ աւերեցան գեղեցկաշէն քաղաքն Հոռվմայեցոց ծովեզերեայքն Տրապաւսոյ և Աքայիոյ, և եկեղեցիք քրիստոնէից եղեն հաւտից և խաշանց փարախ, և զկնի մի ամի առաւ աստուածարեալ դղեակն Հռոմկլա ի գոռոզէն փարաւոնէ, որ էր աթոռ հայրապետացն Հայոց...»¹⁰, հավելում է, որ հայոց Հեթում թագավորը հրամայում է. «...գալ ի դիրս սուրբ առաքելոյն Թադէոսի, առ գերահռչակ եւ արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելո, և յայսմ ժամանակի փայլէր իբրեւ զՋահ վառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանգիստ վտանգելոց, քաղցելոց եւ ծարավելոց շնորհօք սուրբ Առաքելոյն»¹¹: Թորոս գրիչը փաստում է, որ Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Գ.-ն (1270-1289) տարիներ առաջ ուխտի է եկել այս վանքը. «...և բազում սէր գտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկէս տէր Տիրացուէ. նաև ես՝ նուաստս Թորոս, վայելեալ ի սէր սորա...»¹²:

⁵ Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 105:

⁶ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Խ. Բ., էջ 2105:

⁷ «ԵԺ.» գրերով պատճենված է «հնգետասան» բառը:

⁸ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Խ. Ա., կազմեց՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 551, տես նաև Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 346-347:

⁹ Ա. Հախնազարյան, Արտազի երեք վանքերը, էջ 86:

¹⁰ Մաքսուդեան Մ., Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանուց և եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ և անձանց մասնաւորաց, «Արարատ», 1911, մարտ, էջ 223-224:

¹¹ Մաքսուդեան Մ., նշվ. աշխ., էջ 224, տես նաև Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, Խ. Բ., Երեւան, 1999, էջ 52, Ա. Հախնազարյան, նշվ. աշխ., էջ 86:

¹² Մաքսուդեան Մ., նշվ. աշխ., էջ 224:

Խոր Վիրապի աշակերտների թվում էին նաև Գլաձորի համալսարանի հիմնադիր Ներսես Մշեցին, նրա աշակերտ, բաբունապետ Եսայի Նչեցին, հայ միջնադարյան գրականության երևելիներից Հովհաննես Պուլզ Երզնկացին, բանաստեղծ, երաժիշտ Գևորգ Սկեռացին, Գրիգոր Բջնեցին, Մաղաքիա աբեղան և այլք: Միջնադարյան Հայաստանի կրթամշակութային նշանավոր գործիչ Ներսես Մշեցին իր սկզբնական կրթությունն ստացել է Մշո Ս. Առաքելոց վանքում, ապա Խոր Վիրապում (1266-1271 թթ.)՝ աշակերտելով Վարդան Արևելցուն: Վերջինիս մահից հետո (1271 թ.) նա բաբունապետ է դարձել և որոշ ժամանակ անց վարդապետարանը Խոր Վիրապից տեղափոխել առավել ապահով Մշո Ս. Առաքելոց վանքը¹³: Ուսումնասիրողները փաստում են, որ Ներսեսն այստեղ

էլ երկար չի մնացել և քուրդ ավազակներից հարկադրված՝ իր իսկ աշակերտ Եսայի Նչեցուն հետ հեռացել է Քաջբերունիք, իսկ այնտեղից՝ Գլաձոր (Աղբերց վանք, 1280 թ.)։ «...խոյս տալով յասպատակութենէ Մարաց՝ ի կողմանց Տարօնոյ տարեալ էր զնա (Եսայի Նչեցուն - Ա. Հ.) ի գաւառն Քաջբերունեաց, փոխադրելով ի Ս. ուխտէն Ղազարու, զոր և (ուր) ԺԵ. ամ անդ էր փոխեալ Դասատուն Վարդապետացն մերոց»¹⁴: Հենց այս շրջանում Տարոնից ու Սասունից ժամանած շնորհալի ուսումնականների աջակցությամբ Ներսեսը հիմնում է երբեմնի հռչակավոր համալսարանը՝ վաստակելով «Գլաձորցի» մականունը¹⁵: Պատահական չէ Աբգար Մովսիսյանի այն միտքը, թե վաստահաբար կարող ենք ասել, որ միջնադարի ամենամեծ ու փայլուն Գլաձորի դպրոցի բացումը հենց Խոր Վիրապում է նախապատրաստվել, որտեղ և կատարելագործվել են հիշյալ դպրոցի ականավոր դպրապետներ Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին և այլք: Խոր Վիրապում էր 6-8-ամյա այն դպրոց-վարդապետանոցը, որտեղ շատերը գալիս էին իրենց ուսումը բարելավելու և վարդապետական աստիճան ստանալու համար¹⁶:

Վարդան Արևելցու կյանքն ու գործունեությունը, այդ թվում նաև՝ Խոր Վիրապում անցկացրած տարիներն աղբյուրագիտական քննության է ենթարկել ձեռագրագետ Փայլակ Անթապյանը: Ըստ ուսումնասիրողի՝ Վարդանը Խոր Վիրապ եկած պիտի լինի Կայենաբերդից կամ Հաղբատից, հավանա-

¹³ Ըստ Լ. Խաչիկյանի՝ Մ. Օրմանյանը, հետևելով Մ. Չամչյանին, փաստում է, թե Ներսեսը վարդապետանոցը հաստատել է Մշո Ս. Առաքելոց կամ Ղազարի վանքում, իսկ վերջինիս աշակերտ Եսայի Նչեցուն ուսանելու է ուղարկում Մուշ (Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., էջ 2103)՝ մի վայր, որտեղ Եսայի Նչեցուն լինելու մասին որևէ վկայություն չի պահպանվել (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա., Երևան, 2012, էջ 304, ծանոթ. 4): Պետք է նշել, որ Մ. Չամչյանի հաղորդմամբ՝ Ներսեսը Վարդանի մոտ ուսումը կատարելագործելուց հետո տեղափոխվում է Գլաձորի վանք, որտեղ էլ մահացել է Հայոց ՉԼԳ. (1284) թվականին. «Ներսես վարդապետ Մշեցի՝ այս է ի Մուշ աւանէ գաւառին Տարոնոյ՝ կրօնաւորեալ ի վանս Ղազարու՝ որ և ասի Առաքեալք Մշոյ... ի լսելն զիմաստութեան մեծին Վարդանայ՝ գնաց առ նա և ուսաւ նաև ի նմանէ բազում ինչ և կացեալ ի վանս Գլաձորոյ՝ ի գաւառին Վայոց ձորոյ՝ յաշխարհին Սիւնեաց, անդ մեռաւ ի թուին Հայոց ՉԼԳ. (1284). յետ երեքտասան ամաց մահու նորին Վարդանայ» (Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1984, էջ 274): ԺԴ. դարասկզբի երևելի ուսուցչապետների շարքում Գարեգին Զարբանալյանը հիշատակում է նաև Գլաձորի վանքի առաջնորդ Եսայի Նչեցուն անունը (Գ. Զարպիանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, հ. Բ., Վենետիկ, 1878, էջ 191):

¹⁴ Ղ. Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 131:

¹⁵ Ա. Գ. Աբրահամյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1983, էջ 84-86, տես նաև Ի. Գ. Ղարիբյան, Գլաձոր. տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները, Երևան, 1983, էջ 42-43:

¹⁶ Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X-XV դարեր), Երևան, 1958, էջ 271:

բար, 1257-1258 թթ., իսկ արդեն 1260-ական թթ. Խոր Վիրապի դպրոցը. «...Համբավ էր վայելում, համարվում էր «տիեզերահռչակ», որտեղ ինքը՝ «Իբրեւ զարեգակն փայլէր», այլ կերպ՝ «հեռավոր Կիլիկիայից, Բարձր Հայքից, Բալուից, Մուշից... չէին գա այստեղ ուսանելու»¹⁷: Նա նկատում է նաև, որ միջնադարում մեծ ճանաչում վայելող բարձրագույն ուսումնական այս հաստատությունում դասավանդում էին ինչպես կրոնական-աստվածաբանական, այնպես էլ՝ փիլիսոփայական տարբեր առարկաներ: ՄՄ Հ՝ 2522 «Վարդան Արեւելցի. Մեկնութիւն Սաղմոսաց» ձեռագրի 1457 թվակիր հիշատակարանում Մատթեոս գրիչը Վարդանի վարժապետական գործունեությունը մասին կարեւոր տեղեկություններ է հաղորդում, որ ավելորդ չենք համարում ստորև հիշատակել. «...փառք եւ պարծանք Այրարատեան գաւառիս եւ Իբրեւ զարեգակն փայլէր յաշխարհի սքանչելի այրն Աստուծոյ եւ մեծանուն հռետորն Վարդան վարդապետն՝ վարժելով զբազումս ի կրթասիրաց ի գիտութիւն Աստուածաշունչ կտակարանաց, երեւելին ի գիտնականս, այլ եւ յոյժ ըզձալի փափագմամբ մեկնեալ զՍաղմոսս աստուածահօրն Դաւթի, թողու գանձ անհամեմատ սուրբ եկեղեցւոյ, եւ ինքն առ անծկալին Յիսուս վերափոխի, որոյ յիշատակն աւրհնութեամբ լիցի...»¹⁸:

1267 թ. հենց Խոր Վիրապում է Վարդան Արեւելցին ավարտել իր «Հաւաքումն պատմութեան» երկը, այստեղ են սկսել շարադրվել նաև «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Երգոց-Երգոյն», «Աշխարհացոյց» և այլ գործեր, այսինքն՝ նրա կյանքի վերջին շրջանը որոշ ընդմիջումներով ընթացել է Խոր

Վիրապում¹⁹: Նշելի է նաև Ձագավանից ժողովում ընդունված և ըստ ամենայնի՝ Վարդան Արեւելցու հեղինակած «Սահմանք»-ը՝ հորինված և հաստատված 1270 թ. «ընդ իշխանութեամբ սուրբ աթոռոցն Վիրապին և Բջնոյ, եկեղեցականաց և աշխարհականաց, վանաւրէից, վարդապետաց և ծերոց, և քահանայից գեղջից, ժողովրդակալաց»²⁰:

ՄՄ Հ՝ 3082 ձեռագրի գրիչ, Վարդան Արեւելցու աշակերտ Գևորգ Լամբրոնացու 1267 թվակիր հիշատակարանը պարզում է նաև այն, որ Վարդանն իր աշակերտների հետ չըջել ու միաժամանակ մի քանի վանքերում է հաստատվել. «Եւ անտի փոխեալ [եկե]ալ առ մեծ իշխանն Քուրդ, եւ մեր գլխի նորա հետեւեալ՝ ժամանակ [ին]չ արարաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր եւ զառաջինն աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս: Եւ քանզի դէպ լինէր եւ անտի եւս փոխիլ նմա ի գործ բարոք ուսուցչութեանն՝ ի տեղի, ուր Տէր յաջողեսցէ, յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս՝ ի բուն տունս իւրեա[նց], ի մեծ[ահու]չակ, հրեշտակակրան, աստուածաբանակ սուրբ ուխտս Թեղինեաց, ուր եւ յանկ իսկ հանաք զառաջարկեալս»²¹: Այսինքն՝ մատյանի գրչությունն սկսելով Խոր Վիրապում՝ Գևորգ Լամբրոնացին այն ավարտին է հասցրել Սաղմոսավանքի²² և

¹⁹ Փ. Անթապյան, նշվ. աշխ., էջ 41, 130-131:

²⁰ Գարեգին վարդապետ [Յովսէփեան], Ձագավանից ժողովը, էջ 41:

²¹ ՄՄ ձեռ. Հ՝ 3082, 477ա. տես նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 352:

²² Վիմագրագետ Ա. Մանուչարյանի կարծիքով՝ ԺԳ. դ. կեսերին Սաղմոսավանքն ուներ լուսավորության պահանջներին համապատասխանող անհրաժեշտ բարենպաստ պայմաններ, որոնց շնորհիվ հնարավոր էր նաև տեղում բարձրագույն վարդապետական դպրոցի հիմնադրումը, ինչի նախաձեռնողը եղավ ակա-նավոր մատենագիր Վարդան Արեւելցին: Հիմք ընդունելով Տիգրան Պետրոսյանցի տեսակետը՝ նա փաստում է, որ Վարդանն

¹⁷ Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա., էջ 40:

¹⁸ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը., խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2013, էջ 354. Ընդգծումը մերն է - Ա. Հ.:

Թեղենյաց վանքի գրչակենտրոններում:

Մատենադարանի մի շարք ձեռագրեր (ՄՄ ձեռ. Հ^մ 2642, 3697, 4834, 5452, 9067 և այլն) բովանդակում են նաև Վարդան Արևելցու աշխատությունների ընդօրինակությունները, որոնք հիմնականում մեկնություններ են. սրանք որպես կանոն ունեն նաև աղբյուրագիտական արժեք ներկայացնող ներածական ու ավարտական հիշատակարաններ (հեղինակի), որոնք հավաստի տեղեկություններ են հաղորդում հեղինակի, գրչության վայրի ու ժամանակի մասին: ՄՄ Հ^մ 2690, 4834, 5452 և այլ ձեռագրերի բովանդակությանը կից հեղինակային հիշատակարաններում վկայություններ են պահպանվել Վարդան Արևելցու մատենագրական-վարժապետական ավանդի, ապա որոշ տեղաշարժերի վերաբերյալ:

Եթե ՄՄ Հ^մ 3082 ձեռագրի դեպքում նման տեղաշարժը նկատելի է անմիջապես գրչության ժամանակի հիշատակարանից, ապա Վարդան Արևելցու «Մեկնութիւն Երգոյն» աշխատությունը պարունակող ՄՄ Հ^մ 5452 «Ժողովածոյ» ձեռագրում այն արտահայտված է հեղինակի ավարտական կամ նախագաղափար օրինակի հիշատակարանում: Այս դեպքում գրչագրումը. «...սկսաք ի ԶԺԳ. (1264) թուիս Հայոց ի Սուրբ Վիրապիս, եւ կատարեցաւ ԶԺԷ. (1268), առաջի սուրբ եւ փառաւորեալ նահատակին՝ Ստեփանոսի, ի սուրբ ուխտս Աղ-

ջոց վանիցս...»²³: Այնուհետև հաջորդում են Աստուծոց ողորմություն և մեղքերի թողություն հայցելու հետևյալ տողերը. «Աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի ներել սխալանացն մեր յամենայն իրս և որ ի գիրս յայս եւ խը[ն]դրել յԱստուծոյ ողորմութիւն և թողութիւն մեղաց եւ ամենայն երախտաւոր պարոնացն Սաղոնին, Սմպատայ, Պռաւայ, Քրդին եւ ամենայն բնակչաց երկրիս...»²⁴: Հիշատակված «երախտաւոր» պարոնները՝ Սաղոնը, Սմբատը, Պռոշն ու Քուրդը, տվյալ ժամանակաշրջանում այդ և մերձակա տարածաշրջանի աշխարհիկ իշխանության հզոր և երևելի տերերն էին, որոնց դիմելու երևույթը Փ. Անթապյանին հիմք է տվել ենթադրել, որ սա «...մի լրացուցիչ ապացույց է նրանց և Վարդան Արևելցու միջև եղած բարեկամական համագործակցության և՛ մշակութային, և՛ ազգային-քաղաքական բնագավառներում: Այս համագործակցության ընթացքում է, որ, ամենայն հավանականությամբ, հղացվել է Խոր Վիրապի ուսումնական ու գիտամշակութային կենտրոնը ավելի պայծառացնելու միտքը, որը հասցրեց Գլաձորի հիմնադրմանը»²⁵:

Գրեթե նույնական շարադրանքն ունի նաև ՄՄ Հ^մ 2690 «Ժողովածոյ» ձեռագրի թարգմանչի հիշատակարանը, ուր դարձյալ վկայված է մեկնության գրչությունն այս անգամ 1267 թ. Խոր Վիրապում սկսելն ու մեկ տարի անց ավարտը Աղջոց Ս. Ստեփանոս վանքում²⁶:

Լ. Խաչիկյանը վերոնշյալ տեղաշարժերի առումով նկատում է, որ Վարդանը. «...վերադառնալով Կիլիկիայից 1246 թվա-

իր դպրոցը 1267 թ. Խոր Վիրապից տեղափոխել է Սաղմոսավանք (Ա. Մանուչարյան, Սաղմոսավանք, Երևան, 2015, էջ 37-38): Մեր կարծիքով Վարդան Արևելցու բարձրագույն դպրոցը, հիմնադրի հաճախակի տեղափոխություններով պայմանավորված՝ ժամանակ առ ժամանակ զուգահեռ գործել է նաև Նշված վանքերում (նաև՝ Թեղենյաց ու Աղջոց), սակայն հիմնական կայանը մինչև Արևելցու մահը (1271 թ.) շարունակել է մնալ Խոր Վիրապի վանքը:

²³ ՄՄ ձեռ. Հ^մ 5452, 115բ:

²⁴ Նույն տեղում, 115բ-6ա:

²⁵ Փ. Անթապյան, Նշվ. աշխ., գիրք Ա., էջ 141-142:

²⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը., էջ 1197:

կանին և կատարելով Կոստանդին կաթողիկոսի հանձնարարությունները, մեկուսանում է Անդրեի վանքում, այնուհետև անցնում է Խորվիրապ, ապա Սաղմոսավանք, Թեղենյաց մենաստան, Հառիճ, Խորակերտի մենաստան, Հաղբատ և այլ վայրեր: Նրա վերջին կայանը եղել է Խորվիրապի մենաստանը...»²⁷: Կիրակոս Գանձակեցին Անդրեի վանքը որակում է իբրև Վարդանի «միայնարան» ու հաղորդում հետևյալը. «Եւ առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթողիկոսն Կոստանդին ի Կլայն Հռոմայական, և ինքն եկեալ ի ձորն Կայանոյ ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէն կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա վարդապետական բանին»²⁸: Պատմագրի հիշատակությունը վկայում է, որ այստեղ ևս Վարդան Արևելցին զբաղվել է ուսուցչական գործունեությամբ:

Այն, որ Վարդան Արևելցին հիմնականում հանգրվանել է Խոր Վիրապի վանքում, փաստում է նաև Ա. Ալպոյաճյանը: Ըստ նրա՝ Վարդանն այստեղ մնացել է վեց տարի ու «...թէեւ բոլոր այն վանքերը, ուր ինք մնացած է շատ քիչ, միշտ ուսուցանել է չէ դադարած եւ շատ աշակերտներ հասցուցած է»²⁹:

Հայտնի է, որ Դանիելի «Մեկնութիւն»-ը Վարդան Արևելցին սկսել է գրել 1267 թ. Խոր Վիրապում, ապա շարունակել Սաղմոսավանքում և 1268 թ. ավարտել Աղջոց Ս. Ստեփանոս վանքում: Ինչպես նկատում է Փ. Անթապյանը. «1267 թվականից մինչև 1268 թվականի սկզբները նա բացակայել է Խոր Վիրապից: Սակայն, 1268 թվականին նա վե-

րադառնում է Խոր Վիրապ և այստեղ շարունակում իր մանկավարժական ու մատենագրական աշխատանքները՝ մինչև կյանքի վերջը»³⁰:

Փաստելի է, որ Խոր Վիրապի գրչության կենտրոնը տվյալ ժամանակաշրջանում սերտ կապեր է ունեցել Սաղմոսավանքի, Թեղենյաց, Աղջոց Ս. Ստեփանոս վանքերի նշանավոր գրչության կենտրոնների հետ, ինչի մասին են վկայում ձեռագիր հիշատակարանները: Չի բացառվում նաև այն, որ գրչության հիշյալ կենտրոններում գործած գրիչները, ծաղկողները կամ կազմողները միևնույն անձինք են եղել, որոնք պարբերաբար գործել են տվյալ վանքերում կամ ժամանակ առ ժամանակ փոխարինել միմյանց:

Կ. Մաթևոսյանը, ի շարս Խոր Վիրապում գրված մատյանների՝ հիշատակում է նաև ՄՄ Հ՞ր 4834 ձեռագիրը³¹: Հիմք ընդունելով ԺԳ. դարի հիշատակարանների ժողովածուում ամփոփված տեղեկությունները՝ նա ձեռագիրը վերնագրում է «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցոյ»՝ ստեղծված 1267-1268 թթ., Խոր Վիրապի և Աղջոց վանքերում³²: Մատենագրարանի համառոտ

³⁰ Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա., էջ 42:

³¹ Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, էջ 176:

³² ԺԳ. դարի հիշատակարանների ժողովածուն կազմող Ա. Մաթևոսյանը հիմք է ընդունել ձեռագրի բովանդակության մաս կազմող Վարդան Արևելցու «Դանիէլի մէկնութեան» հեղինակային հիշատակարանը. «...Եւ սկսաք ԶԺԶ. (1267) թուին, ի Սուրբ Վիրապին, և կապարեցաւ ԶԺԷ. (1268), առաջի սուրբ և փառաւորեալ նահապարկիս Սուրբ Ստեփանոսի, ի սուրբ ուխտս Աղջոց վանիցս...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 365), որը գրեթե նույնությամբ վկայված է վերոհիշյալ ՄՄ Հ՞ր 5452 ձեռագրում (էջ 115բ), ինչպես նաև ՄՄ Հ՞ր 2019 «Ժողովածոյ»-ում (գրված Ջուղայում՝ 1600 թ., գրիչ՝ Երեմիա երեց). (Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է., էջ 1061-1062): Նույն ժողովածուի համապատաս-

²⁷ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա., էջ 304:

²⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 311. ընդգծումը մերն է - Ա. Հ.:

²⁹ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, Ա. հատոր, էջ 242:

ձեռագրացուցակում այն ներկայացված է որպես «Ժողովածոյ»՝ թվագրված 1289-1296 թվականներով, իսկ գրչության վայրերն են՝ Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Ճմին գյուղաքաղաքին մերձակա Ս. Թեոդորոս վանքն ու Եզնկան։ Այսկերպ են նաև ձեռագրի՝ հրատարակության պատրաստվող ընդարձակ նկարագրության տվյալները, քանի որ գրչության հիշատակարանները փաստացի տեղեկություններ են հաղորդում այդ մասին. «Ի թուականիս Հայոց ՁԼԸ. (1289), ի յամսեանս յուլիս ԺԸ. (18), եղեւ կատարումն գրոցս ձեռամբ Առաքել գրչի, արդեամբք եւ ծախիւք Ահարոն վարդապետի, յիշատակ իւր եւ ծնողաց, եւ եղբարց, եւ քերց եւ ամենայն ազգատոհմից՝ կենդանեաց եւ հանգուցելոց, եւ որք միանգամ աւգնական եղեն Մելիսանին, եւ Վարդին, եւ Հասնահ Յատրին, որ զթուխթն յաթան ծախեց, եւ Վարդան սարկաւագին, որ ի կոկելն աւգնեց, ընդ հովեաւ Սուրբ Թեոդորոսի, մերձ ի գեղաքաղաքս Ճմին...»³³:

Հիշատակարաններից մեկն էլ վկայում է ստացող Ահարոն վարդապետի (Գրիգոր մականվամբ) օժանդակությամբ ձեռագրի գրչագրման ավարտի մասին. «...Ահարոն, մականուն Գրիգոր յորջորջեալ, զգլթած եւ զմարդասէր կաման իւր եւ զգաւրացուցիչ աւգնականութիւն սկիզբն առնել գծագրութեան կտակիս եւ ի յաւարտն հասանել շնորհաւք նորին ի թուին Հայկազին տուժարի ՁԽԵ. (1296), ի մայրաքաղաքիս Եզնկա, ի թագաւորութեան պարեպաշտին Հեթմոյ, եւ ի հայրապետութեան տէր Գրիգորի, եւ յառաջնորդութեան քաղաքիս տեառն Ներսիսի»³⁴:

Խան թվականների տակ կազմողը գետեղել է նաև ձեռագրի գրչության ու ստացողի հիշատակարանները (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 636, 781-784):

³³ ՄՄ ձեռ. Հմ 4834, 57բ:

³⁴ Նույն տեղում, 213ա:

Այսու, մնում է փաստել, որ ձեռագիրը որևէ կապ չունի Խոր Վիրապի գրչության դպրոցի հետ, պարզապես Վարդան Արևելցու «Մեկնութեան» նախագաղափար օրինակի ավարտական հիշատակարանը մեկ անգամ ևս հավաստում է այն, որ այդ աշխատությունը նա սկսել է շարադրել Խոր Վիրապի վանքում՝ 1267 թ., ավարտել մեկ տարի անց՝ Աղջոց վանքում (ինչպես ՄՄ Հմ 2019, 2690, 5452 ձեռագրերի դեպքում):

Կ. Մաթևոսյանը Խոր Վիրապում գրված ևս երկու ձեռագիր է հիշատակում Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքից (Հմ 89, 358 (212)): Դրանցից առաջինն ըստ նրա՝ գրվել է Խոր Վիրապում՝ 1577 թ., Մաղաքիա քահանայի ձեռքով³⁵: Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրացուցակում առկա տվյալ ձեռագրի հիշատակարանում գրչության՝ 1577 թվականի առնչությամբ Խոր Վիրապը չի հիշատակվում. «Զմեղուցեալ եւ զանարհեստ գրիչս զՄաղաքիա մղտեսիս, զնուլաստ հոգիս, զանուամբ միայն քահանայս եւ գործովս ոչ իւրք եւ զկողակիցն զՄարիամն եւ զորդին իմ զտէր Աստուածատուրն եւ զտարածած վախճանեալ տիկինն իւր զԽանգատն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս տղայ հասակաւ, ապրիլի ԺԱ. (11), թվին ՌԻԶ. (1577)...»³⁶: Փոխարենն այն վկայված է հետագայի՝ 1683 թվակիր հիշատակարանում, համաձայն որի՝ հիշյալ թվականին ձեռագիրն ընծայել են Խոր Վիրապի վանքին. «Արդ, յիշատակ է գայս սուրբ Աւետարանս ի դուռն Խոր Վիրապին, որ ես՝ Երեւանեցի ժամահար Առաքեալս, ետու յիշատակ ինձ եւ իմ ծնողացն, այսինքն հօրս՝ Գրիգորին եւ մօրս՝ Խանումին, եւ իմ կողակից Հուրիխանին եւ ետու ի ձեռն սրբայկրօն

³⁵ Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, էջ 177:

³⁶ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., էջ 128:

Մատթեոս արքային, որ տայնի ի Սուրբ Խոր Վիրապն, ՌՃԼԲ. (1683) ապրիլի մէկ»³⁷: Այս փաստը նկատել է նաև ուսումնասիրողը, գրելով, որ «1683 թ. Երևանցի Ժամհար Առաքելը Մատթեոս արքայի ձեռքով մի Ավետարան է նվիրում Խոր Վիրապին»³⁸: Հավելենք նաև, որ ցուցակում ձեռագիրը թվագրված է ԺԳ-ԺԴ. դդ., իսկ գրչութեան վայրը՝ անհայտ: Կարծում ենք՝ ձեռագրի գրչութեան հիշատակարան չի կարելի համարել անգամ 1577 թվակիր հիշատակարանը, քանի որ ըստ ցուցակում առկա ծանոթագրութեան՝ ձեռագրի խոնավութունից փափկած, ապա որոշ եղծված ու կարկատված մասերը գրվել են Մաղաքիա գրչի ձեռքով³⁹, որը, բնականաբար, ձեռագրի բուն գրիչը չէ: Մնում է միայն հաստատապես ասել, որ այս մատյանը ևս հետագայում Խոր Վիրապի վանքին նվիրաբերված ձեռագրերից մեկն է:

Վարդան վարդապետի անունով, առանձին աշխատություններից զատ, մեզ են հասել նաև բազմաթիվ ճառեր, խրատներ, ներբողներ՝ ընդգրկված տարբեր ձեռագրերում (ՄՄ Հ՞ր 1324, 2178, 2715, 5197, 5444 և այլն, Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի Հ՞ր 253, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Հ՞ր 372 և այլն): Դրանցից մեկը, որը հիշատակում է նաև Փ. Անթապյանը, տեղ է գտել Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի Հ՞ր 25 «Գիրք ձեռնագրութեան» ձեռագրում, որն սկսվում է այսպես. «Վարդան վարդապետի ասացեալ յաղագս քահանայութեան. Դարձեալ ծանիք, ով եղբայրք, քահանայական աստիճանն, քան Աստուած խոնարհագոյն կարգ է...» և ավարտվում. «ի գրոց հրամանաց խրատ

գրեցաւ ի Սուրբ Վիրապիս, ձեռամբ ծառայ ծառայից քրիստոնէից՝ Վարդան վարդապետի ի Տեառնէ Աստուծոյ պատկառողէ եպիսկոպոսաց...»⁴⁰: Փ. Անթապյանն իրավամբ նկատում է, որ հիշյալ խրատի հեղինակային պատկանելիությունը որևէ տարակույս չի հարուցում, քանի որ «քաջ գիտենք, որ Խոր Վիրապում գործած Վարդանը՝ Արևելցին է»⁴¹: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Հ՞ր 376 «Մաշտոց (ձեռնագրութեան և քահանայութեան)» ձեռագիրը բովանդակում է նաև Վարդան վարդապետի քահանայական ձեռնագրութեան կարգին առնչվող խրատը, որը «...գրեցաւ ի Սուրբ Վիրապիս, ձեռամբ նուաստ Վարդան վարդապետի, ի Տեառնէ Աստուծոյ պատկառող եպիսկոպոսաց, եւ առաքեցաք առ ամենայն եպիսկոպոսունս, որ ի ձեռնագրութեան օրն կարդան»⁴²:

Վարդան Արևելցու մահվան թվականի և Խոր Վիրապում թաղված լինելու առնչությամբ գրականության մեջ առկա են իրարամերձ կարծիքներ⁴³. անդրադարձը դրանց մեր

⁴⁰ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 144:

⁴¹ Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա., էջ 191:

⁴² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Խ. Երկրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 301:

⁴³ Ըստ Սամուէլ Անեցու «Ժամանակագրության» շարունակողի ու Դավիթ վանահոր մի վկայության՝ Վարդան Արևելցին իր մահկանացուն կնքել է Խոր Վիրապում՝ փրկչական ՌՄԿԹ. (1269) թվականին. «ՌՄԿԹ: Աւագ Սարգիսն մեռաւ: Մեռաւ ս. վարդապետն Վարդան» (Սամուէլ քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, աշխ. Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 161, Յովհաննէս վանական և իւր դպրոցը, գրեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1922, էջ 50): Այս միտքը հետագայում առաջ է քաշել նաև Լ. Խաչիկյանը (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, Խ. Ա., էջ 304): Ժամանակագրության վերջին հրատարակության մեջ նշված է Հայոց ՉԺԹ. (1272) թվականը. «ՌՄՀԲ. (1272)

³⁷ Նույն տեղում, էջ 129:

³⁸ Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, էջ 178:

³⁹ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Խ. Ա., էջ 128:

խնդրից դուրս համարելով՝ հարկ ենք համարում միայն նշել, որ ընդունելի է համարվում այն տեսակետը, թե Վարդան Արևելցին մահացել է 1271 թ. ու թաղվել Խոր Վիրապում⁴⁴. այդ է փաստում նաև Փ. Անթապյանը՝ հիմք ընդունելով Վարդանի՝ 1271 թվակիր ինքնագիր հիշատակարանը, ինչպես նաև նրա «Աշխարհացոյց»-ի մեջ հետազայում ներմուծված⁴⁵ հետևյալ հաղորդումը. «Եւ Արտաշատ քաղաքն, ուր կայ Խորվիրապն... եւ ի բերան վիրապին հանգուցեալ կան Բ. (2) չիրիմ մեծամեծք եւ մեծահոգակ եւ եռամեծին տիեզերալոյս վարդապետին Վարդանայ եւ Ներսէսի Շինողի...»⁴⁶: Համանման

Կատարեցաւ սուրբ վարդապետն Վարդան...» (Սամուէլ Անեցի և շարունակողներ, էջ 255):

⁴⁴ Ուսումնասիրողներից Գարեգին Զարբախյանը թեև Վարդան Արևելցուն մահացած է համարում 1271 թ., այդուհանդերձ կարծում է, որ մեծ ուսուցչապետը կյանքի վերջին տարիներն անց է կացրել Հաղբատի վանքում, որտեղ էլ կնքել է յուր մահկանացուն. «Կենաց վերջին տարիները Հաղբատայ վանքին մեջ անցուց, ուր շարագրեց Երգոց երգոյն մեկնութիւնը, և հոն մեռնելով թաղուեցաւ յամի 1271» (Գ. Զարպիսանյան, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար), Վենետիկ, 1932, էջ 737): Փ. Անթապյանի վկայակոչած փաստարկներն ապացուցում են Վարդանի՝ Խոր Վիրապում գործելու ու հենց այստեղ էլ մահկանացուն կնքելու իրողությունը, հետևապես Գ. Զարբախյանի տեղեկությունը մնում է իբրև տեսակետ:

⁴⁵ «Աշխարհացոյց»-ի այդ հատվածն ըստ Փ. Անթապյանի՝ պետք է որ ներմուծված լինի ԺԳ. դարի վերջերին. «Ընդմիջարկող խմբագիրը կամ գրիչը այսպիսի հավելում կարող էր անել այն ժամանակ, երբ համոզված լիներ, որ դա ոչ միայն կարևոր, այլև ճիշտ ու հայտնի իրողություն է: Իսկ ԺԳ. դարի վերջերը, այնքան հեռու չեն նրա մահվան՝ 1271 թվականից, որպեսզի ավանդություններ հյուսվեին, որոնք կարողանային նրա գերեզմանը միաժամանակ մի քանի տեղ ցույց տալ, տեղաշարժել Կայենաբերդից կամ Հաղբատից մինչև Խոր Վիրապ» (Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա., էջ 47):

⁴⁶ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէ-

վկայություն է պահպանվել նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ՀՊ 1456, ԺԷ-ԺԸ. դդ. թվագրվող «Ժողովածոյ» ձեռագրի բովանդակային միավորներից մեկում, որը ձեռագրացուցակի համապատասխան հատորում համառոտ է տրված⁴⁷: Մեր ձեռքի տակ չունենալով ձեռագիրը՝ տեղին ենք համարում այդ հատվածն ամբողջությամբ վկայակոչել Երուսաղեմի Հայոց պատրիարքության «Սիոն» պաշտոնաթերթից.

«Այս է պատմութիւն, զոր աչօք մերովք տեսաք զգտումն նշխարաց Բ. վարդապետացն, Վարդանայ եւ Ներսէսի Շինողի ի Խոր Վիրապի բերանն, եւ գրեալ էր յիւրեանց կոնտակն, թէ ես՝ Վարդան վարդապետս եւ Ներսէս հայրապետս, ի փոքունց ի վեր ուխտադիր եղաք միմեանց հետ թէ գկուսութիւնն սբ. պահմք, որչափ որ ի մարմնի եմք եւ երթամք յԵրուսաղէմ լուսաբուրդի գերեզմանին սպասաւորութիւն առնեմք մինչեւ ի մահ: Եւ զնացեալ մեր սպասաւորութիւն արաք սբ. լուսաբուրդ գերեզմանին ԺԳ.: Յետոյ տեսաք ի գիր ծաղկոցին Գ. բան գրած. մին թէ դատաստանի աւրն Գաբրիէլ զփողն նախ ի Խոր Վիրապն հնչեցուցանէ, որ ելանէ Սբ. Լուսաւորիչն եւ առնէ զՀայոց ազգն եւ երթայ ի դատաստան: Բ. բան գրած էր, թէ Լուսաւորիչն ԺԳ. տարի ի Խոր Վիրապին որչափ որ եկաց, ամէն շաբաթ երկիւն ի յընթեաց ժամն, դասուք հրեշտակօք իջանէր Քրիստոս

րեանի, Բարիզ, 1960, էջ 29: Այս վկայությունը հետագայում օգտագործել է ֆրանսիացի հայագետ Անտուան Ժան Սեն-Մարտենը՝ նկատելով, որ այստեղ. «Դարձեալ կայ այլ նշխարս պատուականս Դավթի Դունեցունյն և Յիզտիբուզտի զինուորացն» (Memoires historiques et geographiques sur l'Armenie, Par M. J. Saint-Martin, tome second, p. 420-421):

⁴⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հինգերորդ, կազմեց Նորայր եպս. Պողոս-րեան, Երուսաղէմ, 1971, էջ 153-154: Նույնաբովանդակ վկայություն կա նաև նույն շարքի ՀՊ 1600 ձեռագրի բովանդակային միավորներից մեկում (տես նույն տեղում, էջ 394):

առ Լուսաւորինն Գրիգորի ի մէջ Վիրապին ասել եւ լսել առնէր հետ Գրիգորի Լուսաւորչին, մխիթարէր զնա մինչեւ յԲ. շի առաւօտուն, որ կայնէ ԼՁ. սահաթ, եւ ապա կու համբառնայր յերկինս: Եւ Գ. բան գրած էր, թէ ի չորրորդ դասէ հրեշտակացն Գ. հրեշտակ պահապան էր դրեր Լուսաւորչին, որ կու սպասաւորէին նմայ: Տեսաք, որ այդ խոր անդունդքն երկինք էր դարձեր, վասն որոյ ելաք թողաք զԵրուսաղէմ եւ եկեալ բնակեցաք աստ ի Խոր Վիրապս մինչեւ կատարեցաք մահուամբ: Ահա զայս գրեցաք, ի թվին Զ. եւ ԺԸ.ին (1269), մեզ կտակ եւ ձեզ յիշատակ»⁴⁸:

«Լուամ» գրական հանդեսում Գյուտ ավագ քահանա Աղանյանցը հիշատակում է նախորդ դարասկզբին՝ Օձուն այցելութեան ընթացքում Տ. Գեղամ և Տ. Ղազար քահանաների շնորհիվ ձեռք բերված մի քանի ձեռագիր մատյան⁴⁹, որոնցից մեկը՝ վերնագրված «Սաղմոսի մեկնութիւն», գրվել է 1775 թ. Խոր Վիրապում, Բարսեղ աբեղայի ձեռքով: Գ. Աղանյանցը վկայակոչում է ձեռագրի բովանդակութեան առաջին կանոնից հետո զետեղված մի ծանոթագրութիւն, ուր Խոր Վիրապի նկարագրութեանը զուգահեռ անմիջական աղբրաներ կան Վարդանի՝ Խոր Վիրապում թաղված լինելու վերոնշյալ տեղեկութեան հետ. «Եւ ի դաշտն Արարատեան է Սուրբ Էջմիածինն, որ է Վաղարշապատ քաղաքն աթոռ թագաւորաց Հայոց մեծաց, և Դրւին քաղաք նման նմին, և Խորվիրապն, որ է տեղիք չարչարանացն Գրիգորի Լուսաւորչին ի մէջ օձից ԺԳ. (13) տարի, և յետոյ

բերաւ բոլոր մարմինն ձեռամբ Գրիգորի Մաքիստրոսի ի Կոստանդինուպոլսէ և եղաւ ի վիրապին ի ներքս չորս սեանց եկեղեցւոյն, և ի բերանն վիրապին հանգուցեալք կան շիրիմք Բ. մեծահռչակ և եռամեծի տիեզերալոյս վարդապետին Վարդանայ և Ներսէսի Շինողին...»⁵⁰:

Փ. Անթապյանը, հիշյալ վկայագրերն ընդունելով իբրեւ Վարդան Արեւելցու՝ Խոր Վիրապում թաղված լինելն ապացուցող գրավոր հավաստագրեր, նկատում է, որ այստեղ է, ուր խոսք է գնում այն մասին, թե Խոր Վիրապի նորոգման ժամանակ պեղել են տեղի գերեզմաններից մի քանիսը, այդ թվում և՛ Վարդան Արեւելցու գերեզմանը⁵¹:

Ըստ Զաքարիա Ագուլեցու՝ Ս. Վիրապի ու եկեղեցու նորոգման ժամանակ բացվել են Վարդան և Ներսէս վարդապետների (վերջինս, հավանաբար, ԺԳ. դ. վանահայրերից է) աճյունները. «...թվին ՌՃԺԸ. (1669) մարտի մէկուսն եկեղեցին ու հորն ձեռք տվին, Բ. (2) վարդապետի մարմին տապանի դուս եկաւ: Տապանին վերայ գրած էր մինն՝ Ներսէս վարդապետ, մինն՝ Վարդան վարդապետ, որ Բ. քինն ընդիր, սուրբ վարդապետք էին»⁵²: Աճյունները 1672 թ. վերստին ամփոփվել են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արեւմտյան կողմում կառուցված ստորգետնյա թաղածածկ դամբարանում (նկ. 15-16), ինչի առնչութեամբ Ագուլեցին գրում է. «Թվին ՌՃԻԱ.ումն (1672) այս Բ. (2) սուրբ վարդապետաց մարմինն այս հորի գլխի շինած եկեղեցուն յարեւմտեան կողմնի տակումն ներքնայտուն մաղազա կայ, այս մաղազիս յարաւային կողմն անփոփեցին»⁵³:

Ս. Վիրապի նորոգման ժամանակ բացվել է ևս մի դամբարան, որն ըստ էութեան

⁴⁸ Ն[որայր] եպս. Ծովական, Հայկական վանքեր, «Սիոն» կրօնական, գրական, բանասիրական պաշտօնաթերթ Երուսաղէմի հայ պատրիարքութեան, 1968, թիւ 5-6 (մայիս-յունիս), էջ 262:

⁴⁹ Գիւր Կ. քին. Աղանեսանց, Հնից-նորից (հնախուզական ուղևորութիւն), «Լուամ» գրական հանդէս, գիրք Ա., Տփլիսի, 1900, էջ 264:

⁵⁰ Նույն տեղում, էջ 269. Ընդգծումը մերն է - Ա. Հ.:

⁵¹ Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա., էջ 47:

⁵² Զաքարիա Ագուլեցի, էջ 81:

⁵³ Նույն տեղում, էջ 83:

Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսինն է: Այդ մասին վկայում է նաև Վարդան Արևելցին. «Վախճանեալ Ներսիսի մեծի պատրիարքի, թաղի յիւրում ձեռակերտին...»⁵⁴, ու ծանոթագրում. «Այլ օր. ի բերան վիրապին»⁵⁵: Այն, որ Ներսես Շինողը նույնպես հանգչում է իւր Վիրապում, փաստվեց նաև վերը նշված գրավոր աղբյուրներով, չնայած որ չենք բացառում հնարավոր չփոթը Ժ. Գ. Գ. վանահայր Ներսես վարդապետի հետ: Շրջանառվում է նաև հակառակ տեսակետը: Ս. Ծոցիկյանը գրում է, թե. «Կը կարծուի, թէ Շինող մականունը կրող այդ Հայրապետի գերեզմանն ալ կը գտնուի «Պառաւի փոս» կոչուած մօտակայ խոր տեղւոյն մէջ: Սակայն այդ կարծիքը յեղաշրջուեցաւ վերջերս, երբ որ Խաչիկ վարդապետ Տատեան Զուարթնոցի մէջ գտաւ դամբարան մը»⁵⁶: Խաչիկ վարդապետը Զվարթնոցի հնագիտական պեղումների 1907 թ. հաշվետվության մեջ անդրադառնում է ներսեսաչեն ջրհորի հայտնաբերմանը, ուր գտնվել է քանդակազարդ տապանաքարի բեկոր, որն ըստ նրա՝ հավանաբար պատկանելիս է եղել Ներսես Շինողին. «Եթէ չեմ սխալվում, թէ՛ յիշեալ տապանաքարը եւ թէ՛ ոսկորները Ներսէս Շինող հայրապետինը պիտի լինեն. քանի որ, ըստ վկայութեան Յովհանու Պատմագիր Կաթողիկոսի, Շինողի գերեզմանը՝ «իւրով իսկ ձեռամբ շինեալ դամբարանի» տաճարի հիւսիսային կողմն է ընկնում»⁵⁷: Հնագետ հոգևորականը հիմք է ընդունել Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումը, որը, մեր կարծիքով, Ներսես Շինողի՝ Վիրապում թաղված լինելու մասին է վկայում. «Եւ

ապա իբրեւ եկաց մեծ հայրապետն Ներսէս յառաջնորդութեան անդ իւրում ամս քսան, հրաժարեալ ի կենաց աստի, եղաւ մարմինն ի հանգստարանի անդ, զոր իւրովի իսկ յաւրինեալ էր ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին, որ ըստ արժանի աթոռոյ իւրում նախահաւըն էր կանգնեալ յարկ»⁵⁸: Պատմագիր հայրապետը «Քավարան» անվամբ բնորոշում է Ս. Վիրապը, որն ակնհայտ է դառնում Պատմության վերջում գետեղված «Շարից հայրապետացն Հայոց յայտարարութիւնք» մասի հետևյալ հիշատակությունից. «Տէր Ներսէս... երկասիրաբար յարգարեալ շինէ զբազմապայծառ փարախ բանաւոր ոչխարաց ի Վաղարշապատ քաղաքի, այլ եւ զվկայարան սրբոյն Սարգսի ի Դուին քաղաքի, այլ եւ զքաւարան Վիրապին սրբոյ ի յԱրտաշատ քաղաքի»⁵⁹:

Վարդան Արևելցու՝ իւր Վիրապում թաղված լինելու և մինչև 1271 թ. այստեղ գործելու առնչությամբ արժանահավատ վավերագիր է համարվում նաև նրա ինքնագիր հիշատակարանը՝ պահպանված ՄՄ ՀՊ 469, Մեծքար անապատում՝ 1260 թ. գրված «Ժողովածոյ» ձեռագրում (գրիչ՝ Ստեփանոս քահանա, կազմող՝ Առաքել Հնազանդենց)⁶⁰: Նրա գրչին է վերագրվում մատյանի ստացող Գրիգոր Բջնեցու՝ 1271 թ. շղագիր հիշատակարանը (էջ 260բ), որն ինչպես Գ. Հովսեփյանի, այնպես էլ Փ. Անթապյանի համոզմամբ՝ Վարդան Արևելցու ինքնագիրն

⁵⁴ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, ի Վենետիկ, 1862, էջ 70:

⁵⁵ Նույն տեղում, ծանոթ. 2:

⁵⁶ Ս. Ծոցիկեան, Արարատ, հատոր Ա., էջ 322:

⁵⁷ Խաչիկ Ժ. վարդապետ Դադյան, Հոգևածների ժողովածու, կազմեց՝ Ն. Պետրոսյան, Ս. Էջմիածին, 2007, էջ 63:

⁵⁸ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 413:

⁵⁹ Նույն տեղում, էջ 606. ընդգծումը մերն է - Ա. Հ.:

⁶⁰ Խոր Վիրապի գրչության կենտրոնին նվիրված հոդվածում Կ. Մաթևոսյանն այս ձեռագիրը ևս տեղադրում է վանքում գրված ձեռագրերի կազմում, մինչդեռ այն Խոր Վիրապի հետ է կապվում միայն Վարդան Արևելցու ձեռքով՝ պատվիրատու-ստացող Գրիգոր Բջնեցու հիշատակարանն այստեղ գրելու փաստով (Կ. Մաթևոսյան, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, էջ 176):

է. «Գիրքս սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, որ բաժանեալ է յերիս հատածս՝ ի Բնութեան, ի Կազմութեան եւ ի Կուսութեան, իմաստնոյ եւ շնորհալից եղբաւր մերոյ եւ ի սպասաւորի բանին՝ Գրիգորի, մականունն Բժնեցոյն է, շարագծեալ ի կրտսերէ նորին ի Ստեփանոսէ եւ շնորհեալ նմայ: Աստուած վայելել տացէ նմա յերկար ամաւք: Ոչ ոք յիմոց եւ ոչ յաւտարաց ունի իշխանութիւն ջալունջ (բողոք - Ա. Հ.) առնել: Եւ որ յանդգնի, յԱստուծոյ եւ ի սուրբ Գրիգորէ եւ ի մէնջ ընդ կապանաւք է: Ի թվին Հայոց ԶԻ. (1271) գրեցաւ յետին գիրս առ դրան Սրբոյ Վիրապիս»⁶¹:

Զնայած նրան, որ Վարդանի անունը հիշատակարանում ուղղակիորեն վկայված չէ, այդուհանդերձ Գ. Հովսեփյանն այն համարում է Վարդան Արեւելցու ինքնագիրը՝ հիմք ընդունելով այն, որ Վարդանն ունեցել է Գրիգոր անունով հարազատ եղբայր եւ հիշատակարանում վկայված Գրիգորը հենց նրա եղբայրն է⁶²: Այդ մասին ակնարկվում է նաև ՄՄ ՀՊ 3082 ձեռագրի գրչության ծավալուն հիշատակարանում. «Ընդ նմին եւ զհամապատիւ ինքեան ձեռասուն [որ]դեակս իւր հոգեւոր՝ զտէր Վարդան, հարազատ եղբարբ իւրով նախայիշեցեալն Գրիգորիւ, եւ զտէր Դաւիթ՝ քուերորդի տեառն Գրիգորի...»⁶³: Համաձայնելով Գ. Հովսեփյանի հետ՝ Փ. Անթապյանը հավելում է, որ հատկապես հիշատակարանի վերջնամասը հաստատում է, որ «...հիշատակարանագիրը, համենայն դեպս շարքային հոգեւորական չէ»⁶⁴:

⁶¹ Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ. Բ., էջ 829-830, տես նաև Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 375, յաւելում Բ. 60:

⁶² Գարեգին վարդապետ [Յովսէփեան], Ձագավանից ժողովը, էջ 33:

⁶³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 350:

⁶⁴ Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա., էջ 44, ծանոթ. 96:

Վարդանի՝ 1271 թ. վախճանվելու փաստի առնչությամբ «Պատմութիւն թաթարաց»-ի էջերում տեղեկություն է հաղորդում նաև Գրիգոր վրդ. Ակներցին, որը երբեմն վերագրվել է նաև Մաղաքիա արեղայի գրչին. «Ի թւականին Հայոց Զ. եւ Ի. (1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց Վարդան եւ Կիւրակոս, որոյ սուրբ աղաւթքնոցա ի վերայ մեր եւ ամենայն աշխարհի»⁶⁵:

Բերված բոլոր վկայությունները նկատի առնելով, մեզ մնում է համաձայնել ուսումնասիրողների այն կարծիքին, թե Վարդան Արեւելցին վախճանվել է 1271 թ. ու թաղվել խոր Վիրապի վանքում: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներսում՝ արեւմտյան կողմից, կարելի է նեղ աստիճաններով իջնել Ս. Վիրապին իր խորությամբ գիջող երկրորդ հոր-դամբարանը, ուր ըստ էության թաղված են Վարդան Արեւելցին ու ԺԳ. դ. վանահայր Ներսես վարդապետը:

Վարդան Արեւելցուց հետո խոր Վիրապում գործած ուսումնական ու գրչության դպրոցի մասին հիշատակություններ գրեթե չկան: Վերը նշեցինք, որ Վարդանի ուսուցչական գործունեությունը շարունակել է նրա աշակերտ Ներսես Մշեցին, ինչի վերաբերյալ տեղեկություն է հաղորդում իր աշակերտ Մաթեոս Կիլիկիացին. «...յետ փոխման նորա (Վարդանայ) ... նստաւ յաթոռ նորին եւ լուսափայլեաց զազգս Հայոց ուսմամբ գրոց (Ներսէս). եւ հասեալ բարիոք ծերութեան հանգեաւ... ի նոյն վանս Գլածորոյ»⁶⁶: Հիշատակությունը հավաստում է, որ Ներսես Մշեցին իր գործունեությունը հիմնականում ծավալել է Գլածորում, իսկ խոր Վիրապում գիտակրթական կյանքն ըստ ամենայնի դադարել է: Այսպես էր նաև Անիի դպրոց-

⁶⁵ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 65, տես նաև Մաղաքիայ արեղայի պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 52:

⁶⁶ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131:

վարդապետարանի դեպքում, որը դեռևս Ժ. դարակեսին կաթողիկոսանիստ Արգինայից սկզբնավորվող, ապա Անի մայրաքաղաքում կաթողիկոս Բարսեղ Ա. Անեցու (1081-1113) հոգածությամբ և ժամանակի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագի ուսուցչապետությամբ կրկին նոր կյանք ստացած բարձրագույն հոգևոր դպրոց էր⁶⁷: Կրթությունն ստանալով Հաղբատում և որոշ ժամանակ տեղի բարձրագույն դպրո-

ցում դասավանդելուց հետո՝ Հովհաննես վարդապետը տեղափոխվում է Անի ու ծավալում գիտակրթական բուռն գործունեություն: Նրա օրոք ծաղկում ապրած դպրոցը, ցավոք, երկար կյանք չի ունենում: Ինչպես նկատում է Թ. Հակոբյանը. «...Հովհաննես Սարկավագից հետո (1130-ական թթ. - Ա. Հ.) դպրոցը դադարել է գործելուց և մայրաքաղաքի ուսումնատենչ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալու համար նորից ուսումնառության էին գնում գլխավորապես Հաղբատ, որի բարձրագույն դպրոցն այնքան սերտ կապեր ուներ Անիի նշված ճեմարանի հետ»⁶⁸:

Չնայած պարբերաբար ընթացող քաղաքական վայրկերումներին՝ ԺԷ-ԺԸ. դդ. ևս խոր Վիրապը շարունակել է հիշատակվել իբրև գրչության կենտրոն: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Արևելյան Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար ստեղծվել էին քիչ թե շատ բարենպաստ պայմաններ: Տեղին է նկատում Հ. Փափագյանը, երբ գրում է, թե այս շրջանում մեծ թափ ստացավ նաև եկեղեցաշինությունը, նորոգվեցին մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ, կառուցվեցին սրահներ ու զանգակատներ (Մայր տաճար Ս. Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Մուղնիի Ս. Գևորգի, Ակոռիի Ս. Հակոբ վանքի և այլն)⁶⁹: Ահա այս դարաշրջաններով են թվագրվում խոր Վիրապից մեզ հասած ձեռագիր մատյաններից շատերը, որոնք հիմնականում ժողովածուներ ու ավետարաններ են: Հիշատակարանների քննությունն ուղղակիորեն փաստում է, որ խոր Վիրապի գրչության կենտրոնը եթե Վարդան Արևելցու օրոք, այսինքն՝ ԺԳ. դարի երկրորդ կ-

⁶⁷ Կ. Մաթևոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Անի-Շիրակի պատմության էջեր» (հոդվածների ժողովածու), Երևան, 2010, էջ 172:
Պատմաբան Թ. Հակոբյանի կարծիքով Հովհաննես Սարկավագ-Իմաստասերը չէր կարող համարվել Անիի բարձրագույն դպրոցի հիմնադիր, քանի որ դպրոցը. «... գոյություն ուներ Բագրատունիների թագավորության շրջանից և սկզբում սերտորեն առնչվում էր մեծ ուսուցչապետ Գրիգոր Մագիստրոսի անվան հետ» (Թ. Հակոբյան, Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 183): Տեղին է Մ. Աբեղյանի դիտողությունը, ըստ որի. «...Բագրատունի թագավորների օրով արդեն Անիում... մեծ ձգտում և ջանք կար գիտությունը նորոգելու հայերի մեջ և այդ ձգտման ու ջանքի ներկայացուցիչն էր Գրիգոր Մագիստրոսը, բայց իսկական կատարողը, գլուխ բերողը եղել է Սարկավագ Վարդապետը» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երևան, 1970, էջ 70): Ի հավելումն Մ. Աբեղյանի դիտողության՝ Կ. Մաթևոսյանը Բարսեղ կաթողիկոսի՝ Անիում կատարած կարևորագույն գործերից մեկը համարում է Հովհաննես Սարկավագի անմիջական մասնակցությամբ կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացումը: Նա փաստում է, որ ուսումնասիրողները երբևէ չեն խորացել դպրոցի հիմնադրման հանգամանքների մեջ, ինչի պատճառով անտեսվել են առանցքային բազմաթիվ հարցեր: Կարծիք է ձևավորվել, թե Սարկավագն Անիում մի մասնավոր կամ աշխարհիկ դպրոց է ստեղծել, մինչդեռ. «...իրողությունն այն է, որ ամիրայական իշխանության տակ գտնվող Անիում համահայկական նշանակություն ունեցող վարդապետարան կարող էր բացվել միայն կաթողիկոսական հովանավորության պայմաններում» (Կ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 53-54):

⁶⁸ Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 251-252:

⁶⁹ Հ. Փափագյան, Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, «Բանբեր Մատենադարանի», հ. 12, Երևան, 1977, էջ 193:

սին առնչություններ է ունեցել Սաղմոսավանքի, Թեղենյաց և Աղջոց Ս. Ստեփանոս վանքերի գրչակենտրոնների հետ, ապա ուշ միջնադարում, մասնավորապես՝ Ժէ. դարի երկրորդ կեսից այդ կապն Ակոռիի Ս. Հակոբ վանքի կամ Ակոռի գյուղի գրչության կենտրոնի հետ է⁷⁰: Նկատելի այս իրողությունը նպատակահարմար գտանք հատուկ ուշադրության արժանացնել, քանի որ արդեն վերը նշեցինք, որ Ակոռիից մեզ հասած հիշյալ ժամանակաշրջանի ձեռագրերում քանիցս վկայված է ոչ միայն ինքն Վիրապը, այլև վանահայր Դավիթ Վիրապեցու անունը, ուր փառաբանվում է նաև վերջինիս նորոգչական գործունեությունը ինքն Վիրապում: Պետք է նկատենք, որ Ակոռիի սերտ առնչությունները ինքն Վիրապի հետ պայմանավորված էր նաև երկու վանքերի միևնույն թեմում ընդգրկված լինելու հանգամանքով, քանի որ վերն արդեն նշեցինք, որ Սիմեոն կաթողիկոսի հրամանով՝ 1765 թ. Երեմիա Օշականցու կազմած տեղեկագրում Ակոռին ի թիվս այլ 11 գյուղերի՝ Վիրապավանից թեմի կազմում էր⁷¹:

Խոր Վիրապի և Ակոռիի եկեղեցիների որպիսության մասին ուշագրավ տեղեկու-

թյուններ են պահպանվել Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ Վրաց Հերակլ Բ. Թագավորին հասցեագրված 1782 թվակիր նամակում: Դատելով գրություն բովանդակությունից՝ վերջինս իւ. (48) թուման է հատկացրել՝ Մուղնիի Ս. Գևորգ (Ը. (8) թուման) և Ակոռիի (Խ. (40) թուման) եկեղեցիների բարեկարգման համար, քանզի. «...աւերեալ էին այլազգի զօրք արքային... ևս կողոպտեցեալ և մերկացեալ էր ի զգեստի և յանօթից»⁷²: Սրբազան հայրը դիմում է խնդրագրով, որ 40 թումանից մաս հատկացվի նաև ինքն Վիրապի ու Ակոռիի երկու եկեղեցիներին (այդ թվում՝ Ս. Հակոբ անապատին) միաժամանակ, որոնք ևս. «...իսպառ մերկացեալ են և ամայացեալ ամենեւին»⁷³: Նամակից պարզվում է, որ վեհապառ հայրապետն իբրև գոհունակություն. «Յղեաց որոյ և զմի ժամացոյց ընծայ և զԲ. (2) բեռն գինի՝ իբր օրհնութիւն...»⁷⁴:

Մանուկ վարդապետ Կյումուշխանեցին ևս ԺԹ. դ. առաջին կեսին ակնարկում է այդ իրողության մասին, նշելով, որ «...զԱրկուռին վիճակ նմին յատկացուցեալք զքսան գիւղս, յորս հազիւ գտանին ութն հարիւր տնուորք բնակիչք մերազնեայք»⁷⁵: Հիշատակություններ կան նաև այն մասին, որ միջնադարյան Ակոռին մեծ ավան կամ ավանագյուղ է եղել, որը նաև ինքն Վիրապի եպիսկոպոսական թե-

⁷⁰ ՄՄ ՀՊ 10573 ձեռագիրը Ակոռիի Ս. Հակոբ վանքի նվիրատվությունների մատյանն է (քյոթուկ), որը գիտական շրջանառության մեջ է դրել պատմաբան Հ. Փափագյանը (Հ. Փափագյան, Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, էջ 191-215): Ձեռագրի սկզբնամասի մանրատառ հիշատակագրությունից պարզվում է, որ վանքի հին եկեղեցու կաթողիկեի 1663-1671 թթ. նորոգումից, ապա ստորգետնյա ջրանցքի ու ջրամբարի կառուցումից հետո կազմվել է տվյալ մատյանը, որտեղ նկարագրված են կատարված աշխատանքներն ու թվարկված՝ նյութական միջոցներ տրամադրած նվիրատուների անունները:

⁷¹ Ակոռիի գրչության դպրոցին անդրադարձել ենք նաև այլ առիթով (Ա. Հարությունյան, Ակոռի բնակավայրը, սրբավայրերը և գրչության կենտրոնը, «Էջմիածին», 2016, Թ., էջ 116-138):

⁷² ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, էջ 295:

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

Ղուկաս կաթողիկոսի՝ Հաշտարխանի նվիրակ Հովսեփ վրդ. Արղությանին ուղղված 1788 թվակիր թղթերից մեկում հիշատակություն կա ոմն հանգուցյալ Գրիգոր աղայի կողմից Խոր Վիրապին 5 թուման կտակելու մասին, որն ինչ-ինչ պատճառներով վանքին չի հասել և նամակում նշվում է նաև այդ բացը լրացնելու մասին (ԴՀՊ, գիրք Թ., Յովսեփ կաթողիկոս Արղութեան. 1778-1800 թթ., հրատարակեց՝ Գիւր Կ. քին. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 86):

⁷⁵ ԴՀՊ, գիրք ԺԲ., էջ 114:

մի կենտրոնն էր⁷⁶: Նկատի առնենք նաև այն, որ այս երկու հոգևոր կենտրոնները գտնվում էին ճանապարհային միևնույն հանգույցի վրա և Ակոռի կարելի էր հասնել ինքուր Վիրապին հարակից ճանապարհով: Այս մասին վկայում է նաև Զաքարիա Ագուլեցին. «Գալօրն ղալավուզ բռնեցինք, գնացինք Ակոռի, սուրբ Յակոբ Մձբնայ հայրապետի աղբիւրն, ուխտ արարաք, այլվի այսօր եկինք ի Վիրապն: Ամայ գնալ ու գալն ժԳ. (13) աղաջ կայ. դժվար ճանապարհ է»⁷⁷: Այսինքն՝ ինքուր Վիրապից Ակոռի ձգվող ճանապարհը 32 կմ է⁷⁸:

Ակոռիի գրչության կենտրոնից հայտնի տասը ձեռագրերը (ՄՄ ձեռ. Հ՞ր 329, 4022, 4457, 4458, 5756, 6698, 7621⁷⁹, 10573, Երուսաղեմի ձեռ. Հ՞ր 1797) ստեղծվել են ժ. դա-

րի 40-70-ական թթ.⁸⁰: Գրչության հիշատակարանների քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը գրվել է Մուրատ և Պետրոս հայր և որդի գրիչների ձեռքով. ի դեպ, Մուրատը, որը հիշատակարաններում «գպիր» կոչումն է կրում, գրչագրել է ինքուր Վիրապում գրված ևս երկու ձեռագիր «Ավետարան» (ՄՄ ձեռ. Հ՞ր 5413, 6752), իսկ իր որդի Պետրոս երեցի՝ Ակոռիում ընդօրինակած ՄՄ Հ՞ր 5756 Ավետարանում և մի քանի այլ ձեռագրերում Մուրատն իբրև ծաղկող է հիշվում: Այս փաստը նկատել է նաև արվեստաբան Աստղիկ Գևորգյանը, որը նշում է, թե Մուրատի որդին (նկատի ունի Պետրոս երեցին) նույնպես զբաղվել է գրչության արվեստով և հայր ու որդի հաճախ միասին

⁷⁶ Թ. Խ. Հակոբյան, Սյր. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 142 (այսուհետև՝ Տեղանունների բառարան):

⁷⁷ Զաքարիա Ագուլեցի, էջ 109:

⁷⁸ Հ. Փափագյան, Ակոռու Ս. Հակոբա վանքի քյոթուկը, էջ 193:

⁷⁹ ՄՄ Հ՞ր 7621 «Ավետարան» ձեռագիրը, որը նախապես եղել է Նոր Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցու սեփականությունը, ինչպես կազմի հակառակ կողմում փակցված թղթին, այնպես էլ Հր. Աճառյանի կազմած Նոր Բայազետի ձեռագրացուցակում գրչության վայր է նշվում Խոր Վիրապը կամ Ակոռիի Խոր Վիրապ (Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Բայազետի, էջ 3, ձեռ. Հ՞ր 3): Դատելով ձեռագրի գրչության հիշատակարանից (տրվում է ձեռագրի նկարագրության համապատասխան բաժնում)՝ մենք հակված ենք այն վերագրել Ակոռիի գրչության կենտրոնին, իսկ Խոր Վիրապի հիշատակումը թերևս պայմանավորված է վանքերի, ինչպես վերը նկատեցինք, միմյանց հետ փոխկապվածությամբ: Բացառված չէ նաև այն, որ ձեռագիրը միաժամանակ երկու վանքում է գրվել, ինչը հավաստող կան այլ փաստեր ևս: Չնոռանանք, որ գրիչներ Մուրատն ու Պետրոսը հիշյալ ժամանակաշրջանում զուգահեռ գործել են նշված երկու վանքերում:

⁸⁰ ՄՄ Հ՞ր 4841 «Ավետարան» ձեռագիրը, ընդօրինակված Ակոռավանքում՝ 1417 թ., Հովհաննես կոնստանդնուպոլսի ձեռքով, երբեմն վերագրվել է Ակոռիի Ս. Հակոբ վանքին (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 1298-99, Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն (IX-XIX դդ.), Գահիրե, 1998, էջ 56, Մ. Հասրաթյան, Ակոռիի Ս. Հակոբ վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 31, ներդիր I, 1.3-3), մինչդեռ ձեռագրի գրչության հիշատակարանում հստակ նշված է. «... կատարեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրս Ջերմաճորոյ, ի վանքս Ակոռոյ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախա[վկայի] ...» (Հայերեն ձեռագրերի ժ. դարի հիշատակարաններ, հ. Ա., կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 202): Ակոռավանքը, հայտնի նաև՝ Զոռո Ս. Ստեփանոս, Զոռովանք, Փոքր Ակոռ և այլ անվանաձևերով, հիշատակված է տեղանունների բառարանում, ըստ որի՝ վանքը գտնվում է Արևմտյան Հայաստանում, Վանի նահանգի Շատախի շրջանում, պատմական Զերմաճորի գավառում, որտեղ 1417 և 1451 թթ. Ավետարան է ընդօրինակվել (Տեղանունների բառարան, հ. 1, էջ 142): Ձեռագիրը ծաղկող Աստվածատուր աբեղային Արամ Երեմյանը առանձին հոդված է նվիրել (Ա. Երեմյան, Մանրանկարիչ Աստվածատուր աբեղա, «Էջմիածին», 1958, Ը., էջ 56-59):

են աշխատել⁸¹: Հաստատապես կարող ենք ասել, որ Մուրատ և Պետրոս Հայր և որդի գրիչներն իրենց շոշափելի ներդրումն ունեն Ակոռիի գրչության կենտրոնի ձևավորման ու զարգացման գործում:

Մեսրոպ արք. Սմբատյանցի՝ 1896 թ. կազմած Նոր Բազայետի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրացուցակում արձանագրված է թվով 28 ավետարան⁸²: Օ. Եգանյանի հաղորդմամբ՝ Մատենադարանում են գտնվում դրանցից միայն 11-ը (Սմբատյանցի ցուցակի՝ Հ^մ 1-4, 6, 12, 14, 18, 20, 23, 28), իսկ մնացած 17-ի գտնվելու վայրն անհայտ է⁸³: Ձեռագրերից մեկը գրված է 1662 թ. Խոր Վիրապում՝ Մարգարե դպրի ձեռքով՝ ի հիշատակ Ջամալին և իր կողակցին, իսկ մյուսը՝ Արկուռի գյուղում՝ 1667 թ., Մուրատ գրչի ձեռքով⁸⁴: Խոր Վիրապում գրված ձեռագրի ներկայումս գտնվելու վայրն անհայտ է, իսկ Ակոռիի՝ 1667 թվակիր Ավետարանը ՄՄ Հ^մ 7621 գրչագիրն է, որն ի թիվս Նոր Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցուն պատկանած 38 ձեռագրերի, ժամանակին Երևանի գրական պատմական թանգարանին է հանձնվել վիճաբարգեստ Սեդրակ Բարխուդարյանի ջանքերով⁸⁵:

Մինչ Խոր Վիրապի և Ակոռիի գրչականտրոններից մեզ հասած ձեռագրերի նկարագրությունն անցնելը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև տարբեր ժամանակներում Խոր Վիրապին ընծայված ձեռագրերին: Այդօրինակ վկայություններից մեկը պահպանվել է ՄՄ Հ^մ 295՝ 1627 թ. գրված «Աւետարան» ձեռագրի 1715 թվակիր հետագայի հիշատակարանում, ըստ որի՝ ձեռագիրն ազատելով գերությունից՝ նվիրաբերվել է Խոր Վիրապի վանքին. «Ես՝ Ղափանցի Գրիգորի որդի Սիմէոնս, որ զայս ձեռագիր սուրբ Աւետարանս բազում աշխատանք ազատել էի ի գերութենէ՝ ի ձեռաց այլազգեաց, վերադարձ ժամանակի՝ յիշատակ տուր ի դուռն Սուրբ Վիրապին... Ի թվականիս մերոյ ՌՃԿԴ. (1715), մարտի մէկն»⁸⁶: Համանման է նաև ՄՄ Հ^մ 366, 1689 թ. Կ. Պոլսում գրված դարձյալ «Աւետարան» ձեռագրի 1765 թվակիր հիշատակարանը. «Յիշատակ է սուրբ Աւետարանս Ճահկուցի Անդրիասի որդի Դովաթին, որ առի իմ հալալ արդիօք և ետու յիշատակ ի դուռն սուրբ Խոր Վիրապ Լուսավորչի վանից»⁸⁷, կամ ՄՄ Հ^մ 557, 1386 թ. Երզնկայում գրված «Ժողովածոյ» ձեռագրի 1710 թվակիր հիշատակարանը. «Գրեցաւ ի թւին ՌՃԾԹ. (1710) ղեկտեմբերի Ի.ումն (20): Ես՝ Նոր Մշաղբրցի Յակոբ վարդապետս, այս իմ ստացեալ աստուածաբանից վարդապետաց գիրքս յիշատակ տվի իմ հոգեւոր հայր սրբազան Վարդանէս վարդապետին, որ է առաջնորդ ի Գրիգորին մերոյ Լուսաւորչին, որ ի Խոր Վիրապն է աթոռ նորա, այսինքն՝ Վարդանէս վարդապետին, յիշատակ իմ հօր՝ Յովանիսին, մօրս՝ Վարդիկին, եղբարցս՝ Վաթանին և Աղաջանին, և քւերն իմ՝ Յուշա-

⁸¹ Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, էջ 456:

⁸² Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, էջ 46-53:

⁸³ Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Խ. Ա, էջ 159:

⁸⁴ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 52:

⁸⁵ Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, էջ 159: «Գևորգյան» հավաքածուի կազմում Օ. Եգանյանը, Խոր Վիրապից փոխադրված, սակայն ոչ նույն տեղի գրչության 2 ձեռագիր է հիշատակում. դրանք ներկայիս ՄՄ Հ^մ 2417 և 2732 ձեռագրերն են (նույն տեղում, էջ 69):

⁸⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1984, էջ 1227-1128:

⁸⁷ Նույնի Խ. Ա., էջ 278:

խանին, որ են սոքա հանգուցեալ առ Քրիստոս...»⁸⁸: Հիշատակարանը պարզում է նաև խոր Վիրապի վանահոր՝ Վարդանես վարդապետի անունը, որը ձեռագրի ստացողն է:

Նմանօրինակ մի ուշագրավ վկայության հանդիպում ենք նաև Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի Հ^մ 629, 1446 թ.՝ Կայիփոսի ուխտում գրված «Յայսմաւորք» ձեռագրի հետագայի հիշատակարաններից մեկում, որ հետևյալն է. «Դարձեալ յիշեցէք Զաքար արհիեպիսկոպոսն սուրբ ուխտիս, տեղի չարչարանաց Սուրբ Լուսաւորչին՝ ի խոր Վիրապին, որ ստացաւ զսայ հալալ արդեանց եւ արդար վաստակոց՝ յիշատ[ակ] իւր ծնաւդաց, զհայրն՝ զՂուծիկն, եւ զմայրն՝ Յուստանէն...»⁸⁹: Յավոք, հիշատակարանն անթվակիր է, որի պատճառով մեզ անհայտ է մնում վանքի առաջնորդ Զաքար արքեպիսկոպոսի գործունեության ժամանակաշրջանը: Ուշադրության է արժանի նաև նույն հիշատակարանի երկրորդ մասը, որն, ըստ ամենայնի, վերաբերում է խոր Վիրապի միաբանությանը. «Դարձեալ յիշեցէք զվանից միաբանքս զյեսայի վարդապետն, զՏէր Խաչատուրն, Սարգիս եպիսկոպոսն, զՏէր Վարդան, զՏէր զՂազարն, զՏէր Մարգարէն, զՏէր Մելիքսէթն, Տէր Սահակն, Տէր Թումէն, Տէր Յովսափն, վանից մշակ Ներիճան, գտնտես Նանափաշէն. յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեան. ամէն»⁹⁰: Հիշատակարանը հավաստի աղբյուրագիտական նյութ է՝ վանքում ձևավորված վանական միաբանությունն ու տնտեսությունը լուսաբանելու առումով: Միաբանների անուններին զուգահեռ վկայված են նաև վանքի «մշակ» Ներիճանի ու տնտես Նանափաշայի անունները: Հր. Աճառյանին անհայտ է երիջան (երիճան) արական անձնանվան ծագումը: Այն երկիցս վկայված է Թավրիզի հայերեն ձեռագրացուցակի՝ 1713 թ. Եվդոկիայում գրված Հ^մ 64 Աւետարանի գրչության հիշատակարանում. «Եւ առ ի յիշատակ հոգւոյ իւրոյ... եւ իւր հանգուցեալ որդոցն Յովանէսին, Երիճանին եւ հանգուցեալ հօրեղբօրն Երիճան եւ ամենայն արեան զարմին սոցա հոգին Աստուած լուսաւորեսցէ»⁹¹:

«Նանափաշա»-ն ըստ Հր. Աճառյանի ստուգաբանման՝ իգական անձնանուն է և ծագում է թուրքերեն *nane* «մայր» + *pasa* «փաշա» բառերից⁹²: Նկատի առնելով այն, որ տնտեսի պաշտոնը սովորաբար տղամարդ էր վարում, ուստի այստեղ պետք է որ գործունենանք «Նանափաշա» արական անձնանվան հետ, որը գործածական է և՛ որպես իգական, և՛ որպես արական անձնանուն, ինչպես օրինակ՝ Արշալույս, Համբարձում և այլն:

Պակաս ուշագրավ չէ նաև խոր Վիրապի առաջնորդ Դավիթ Ա. եպիսկոպոսի անվան հիշատակությունն իբրև պատվիրատու-ստացող Հալիճորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատում՝ 1621 թ. Ղուկաս դպրի գրչագրած ու ծաղկած «Ժամագիրք Ատենի» ձեռագրի (Երուսաղեմի ձեռ. Հ^մ 2000): Այն գրվել է. «...ի խնդրոյ Դավիթ եպիսկոպոսին, ի վայելումն անձին իւրոյ, եւ հօրն՝ Սարգսին, եւ մօրն՝ Շահսուլթանին, եւ եղբարցն՝ Զալալին, Հեկագին, Գրիգորին, եւ եղբօրորդոցն՝ տէր Սարգսին, Կիրակոսին և այլ ամենայն արեան մերձաւորաց նորին... թվին ՌՀ. (1621)»⁹³: Հիշատակարանում

⁸⁸ Նույն տեղում, էջ 1260:

⁸⁹ Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Խ. Բ., կազմեց՝ Լ. Գ. Մինասեան, Վիեննա, 1972, էջ 105:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց՝ Հր. Աճառեան, Վիեննա, 1910, էջ 131:

⁹² Անձնանունների բառարան, Խ. Դ., Երևան, 1948, էջ 21:

⁹³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Խ. վեցերորդ, կազմեց Նորայր եպս. Պողաբեան, Երուսաղէմ, 1972, էջ 598, տես նաև ԺԵ.

գրիչն աղերսում է աղոթքներում հիշել Դավիթ եպիսկոպոսի անունը. «...որ է Սբ. էջմիածնայ և Խոր Վիրապէն, որ ետ գրել լուսայգարդ և աստուածախօս սուրբ տառս, որ կոչի ժամայգիրք... որ ետ զայս ժամագիրքս յիշատակ երոստաղէմայ, ի դուռն Սբ. Յակոբայ առաքելոյն, որդւոյն Զեբեդեայ...»⁹⁴: Ձեռագրում պահպանվել է նաև Դավիթ եպիսկոպոսի անվանակիր հիշատակարանը. «Եւ ես՝ անարժան Դաւիթ եպիսկոպոս, Գ. (3) անգամ եկայ ի Սբ. Երոստաղէմ, յետոյ և յառաջ Ժ. (10) տարի սպասաւոր կացի ի դուռն Ս. Յակոբայ: Աղաչեմ զձեզ եղբարք, յորժամ զսաղմոսն ասէք, եւ յետոյ զժամն՝ լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք մեղաւորիս...»⁹⁵:

Հազվադեպ է հակառակ երևույթը, երբ ձեռագիրը գնվում կամ նվիրաբերվում է վանքից: Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի Հ՞ր 1212, ԺԳ. դարի ձեռագրի հետագայի հիշատակարաններին մեկում (ԺԵ. դ.) Գրիգոր անունով մեկը հաղորդում է, որ ձեռագիրը գնել է «Վիրապ»-ի մեջ, որտեղ էլ այն նախկինում պահվել է. «Միւ եղբայր, յաղաւթս յիշեալ Գրիգոր, որ զգիրքս ստացայ գնոց մակ քառեակ արծաթոյ ի սուրբ Վիրապիս, զի ի մեր տեղոյն էր եւ ես գտայ եւ ոչ թողի մինչեւ ստացայ դարձեալ»⁹⁶:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հիշատակարաններում Խոր Վիրապի վանքը կարող էր միջոց լինել այս

կամ այն բնակավայրի տեղորոշման համար: Այս առումով հատկանշելի է ՄՄ Հ՞ր 1654 երկու ձեռագրից բաղկացած «Ժողովածոյ»-ի գրչության չափածո հիշատակարանի այն հատվածը, որտեղ ԺԳ. դարի գրիչ Տերտեր Երեանցի քահանան Երեանը բնորոշում է իբրև հարևան Խոր Վիրապի.

«Ես՝ Տիրացու, անձն անարժան,
Ծոյլ քահանայ թշուառական...
Յերկրէն եկի ա[յն] Վրացտան
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իր անունն է Էրեւան,
Խոր Վիրապի նա հարեւան»⁹⁷:

Ս. Գրիգոր Լուսավորչի վարքագրության համատեքստում Խոր Վիրապի անվան վկայության կարելի է հանդիպել հատկապես չափածո հիշատակարաններում. օրինակ՝ Վենետիկի մատենադարանի Հ՞ր 1330 «Տաղարան» ձեռագրի 1563 թվակիր չափածո հիշատակարանում գրիչ Նիկողոս դպիր Կաֆայեցին անուղղակիորեն վկայաբերում է քրիստոնեության մեր անդրանիկ խորհրդանիշներ Ս. էջմիածինն ու Խոր Վիրապը.

Վաղարշապատն էր գովելի,
Էջմիածինն էր պատուելի,
Լոյսն երկնից անճառելի,
Կամար կապեց տաճար ձեւի,
Սուրբ Գրիգոր զարմանալի,
Որ Անակայ որդի կոչի,
Հետ Տրդատայ հակառակի,
Քրիստոսի խաչին երկրպագուի,
Ետ չարչարանացն Գրիգորի,
Ետոյ (յ)իշեաց չարիսն Անակի,
Ետ արկանել Խոր վիրապի:
Իսկ հրեշտակ չորրորդ դասի,
Սպասաւորէր սուրբ Գրիգորի,
Սայ եւանէր Խոր վիրապի,
Եւ բժշկէր արքայն խոզաձեւի,

դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Խ. Բ., կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 32:

⁹⁴ Նույն տեղում, էջ 598-599, ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Խ. Բ., էջ 32:

⁹⁵ Նույն տեղում, էջ 599, ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Խ. Բ., էջ 32:

⁹⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Խ. Զ., յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 638:

⁹⁷ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ. Ե., կազմեց՝ Օ. Եզանեան, Երևան, 2009, էջ 769:

Եւ քարոզէր զարմանալի,
Մէջ քարոզին տեսաւ բարի,
Տէրն ամէնի իջաւ երկնի,
Գռանն երեստ սուրբ Գրիգորի,
Թէ ա՛ռ շինէ տաճար բարի,
... էջմիածին անուանի ...⁹⁸:

Հիշատակարաններից զատ Խոր Վիրապն ու Ս. Գրիգոր Լուսավորչի վարքը տեղ են գտել նաև բազմաթիվ քարոզգրքերի (Ս. Գրիգոր Տաթևացի, Սիմեոն Երևանցի, Պետրոս Բերդուկյան-Աղամալյան, Հակոբ Նալյան և այլք) ու գանձարանների միավորների խորագրերում: ՄՄ Հ^ր 127, Մարզվանում՝ 1781 թ. գրված «Ժողովածոյ»-ի միավորներից մեկը բովանդակությամբ քարոզգիրք է, ուր առանձին ենթամիավորներով վկայված են «Քարոզ ի վերայ ելման ի Վիրապեն սրբոյ Գրիգորի մեր[ոյ] Լուսավորչին...» և «Քարոզ ի վերայ տօնի եկեղեցւոյ՝ կարգեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսավորչէն յետ ելմանն ի Վ[իր]ապէն...» քարոզները⁹⁹: Նույնն է նաև ՄՄ Հ^ր 174 «Ժողովածոյ»-ի դեպքում, ուր տեղ են գտել Պետրոս վարդապետ Աղամալյանի քարոզները¹⁰⁰: Այս կերպ է նաև գանձարաններում. օրինակ ՄՄ Հ^ր 424 «Գանձարան» ձեռագրի միավորներում կարդում ենք. «Գանձ սրբոյն Գրիգորի Լուսավորչի մոտն ի Վիրապ», «Գանձ սրբոյն Գրիգորի Լուսավորչին երն ի վիրապէն և գիւտ նըշխարացն...» խորագրերը¹⁰¹:

⁹⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե., յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1995, էջ 683:

⁹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., էջ 544-545:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 693, այս և այլ հեղինակային քարոզների վերաբերյալ տես նույնի հ. Է., խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 102, 440, 449-450, 864, 925-926 (ՄՄ ձեռ. Հ^ր 2121, 2202, 2209, 2311, 2321 և այլն):

¹⁰¹ Նույնի հ. Բ, էջ 511, 518:

Հաշվի առնելով այն, որ Խոր Վիրապից և Ակոռիից (Ս. Հակոբ վանքից) մեզ հասած ձեռագրերի (շուրջ 20 միավոր)¹⁰² մի մասը մինչ օրս ուսումնասիրված, իսկ հիշատակարանները հրատարակված չեն, նպատակահարմար գտանք, իբրև հավելված, ստորև ժամանակագրորեն ներկայացնել նախ Խոր Վիրապում, ապա Ակոռիում գրված ձեռագրերի համառոտ նկարագրությունն ու վկայակոչել գրչության ժամանակի հիշատակարանների այն հատվածները, որոնք առնչվում են ուսումնասիրվող նյութի հետ, իսկ հետագայի հիշատակարանների առանձնակի հետաքրքրություն ունեցող մասերը վերապատմել կամ հարկ եղած դեպքում՝ հատվածաբար մեջբերել:

* * *

Խոր Վիրապի ուսումնական և գրչության դպրոցի քննությունն ուղղակիորեն վկայում է վանքի՝ հատկապես Ժ. Դարում իբրև գիտակրթական կենտրոն հռչակված լինելու հանգամանքը: Ի դեմս մեծանուն ուսուցչապետ Վարդան Արևելցու՝ վանքի գրչակենտրոնը սերտ առնչություններ է ունեցել Սաղմոսավանքի, Թեղենյաց ու Աղջոց վանքերի համանման կենտրոնների հետ:

Խոր Վիրապն իբրև գրչության կենտրոն նշանավորվել է նաև ԺԵ-ԺԸ. դդ. և այստեղից մեզ հասած ձեռագրերի զգալի մասը թվագրվում է հենց հիշյալ դարերով: ԺԵ. դարի երկրորդ կեսից Խոր Վիրապն ակնհայտ կապեր է ունեցել հարևան Ակոռիի գրչակենտրոնի հետ, որտեղ նշված դարի 40-70-ական թթ. գրված ավետարանները մեծ մասամբ Մուրատ և Պետրոս հայր և որդի գրիչների

¹⁰² Այս երկու գրչակենտրոններից քննության ենթակա ձեռագրերի ընդհանուր վիճակը, գրչական ու մանրանկարչական առանձնահատկությունները ներկայացնող որոշ լուսանկարներ զետեղել ենք աշխատության «Լուսանկարներ» բաժնում (տես նկ. 55-82):

ձեռքի արգասիքն են. վերջիններս զուգահեռ գործել են նաև Խոր Վիրապում, ինչով էլ պայմանավորված՝ հատուկ ուշադրության է արժանացվում նաև Ակոռիի ձեռագրական ժառանգությունը:

Գրչության երկու կենտրոններից ստորև ներկայացվող 18 ձեռագրերի համառոտ նկարագրությունն ու հիշատակարանների հատվածական մեջբերումը վկայությունն է այն բանի, որ մենք գործ ունենք Արարատյան դաշտում՝ հատկապես Ժէ-ԺԸ դդ. գործած նշանավոր գրչության դպրոցների հետ, որոնք ունեցել են իրենց հատուկ առանձնահատկությունները թե՛ գրչարվեստի, թե՛ մանրանկարչության տեսանկյունից, որն ակնհայտ է գրքի վերջում զետեղված լուսանկարների ամբողջական համատեքստում:



ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌՆԱԳԻՆՈՐԸ

Ա. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, Հ^մ 212, «Մեկնութիւն Դաւթի ի Վարդանայ»:

ՁԺԵ.-1266 թ.: Գրիչ՝ Տիրացու, աշակերտ Վարդանի:

Կաշեկազմ (աստառը՝ կապույտ քաթան), 354 թերթ, թուղթ, 24,3x16,9, միասյուն, խոշոր բոլորգիր, 29 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

352ա ...Վասն որոյ եւ ես՝ Տիրացու, անարժան աշակերտ գոլով նորուն, անդառ տեղեան գրեցի զսա անարհեստ գրչութեամբ, ի վայելս մեզ եւ յիշատակ, որ յապայտդ հանդիպիք եւ ժառանգէք զայս ամենալիր բուրաստանս: Վասն որոյ մախթել աղաչեմ եւ հայցել պաղատիմ, որք հանդիպիք սմա, ընթերցման արժանի արարէք զմեզ յիշման, զծնաւդսն մեր եւ զեղբարք եւ որք յիշէքդ, ի նոյն մնաք յիշման ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կատարեցաւ սա ի Վիրապն, մինչ կապ մեք ի յուսման, ի թիւն ՁԵԺ. (1266), յիշեցէք ի Տէր... Հաճոյացեալք եւ ընտրեալք արժանի աւրհնութեանց եւ բարի յիշատակի եւ եւս եւ զծնաւդսն մեր եւ զսնուցաւդսն եւ զերախտաւորն ի մարմնաւորս, եւս եւ ի հոգեւորսն (մեկ բառ ջնջած) հասարակացն ամենեցուն ողորմեսցի (մեկ բառ ջնջած) գալստեանն, եւ զոր գրեալս (մեկ բառ ջնջած) եւ նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն¹⁰³:

¹⁰³ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., էջ 551, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար,

Ձեռագրում պահպանվել է հետագայի հինգ հիշատակարան, որոնցից վաղագույնը կրում է 1367 թ. և բովանդակում է ստացող Պապ քահանայի աղերսն ուղղված գիրքն ընթերցողներին, որոնց խնդրում է իր և իր հարազատների հոգու փրկության համար Աստծուց ողորմություն հայցել: Հիշատակարանից պարզվում է, որ Պապ քահանան Հայոց ՁՂԷ. (1348) թվականին դուրս է եկել իր հայրենի երկրից, հասել Պոնտոս-Տրապիզոն ու հոգևոր ծառայության անցել Ս. Էջմիածին տաճարում, որտեղ էլ ստացել է ձեռագիրն ու այն վերակազմել. «Կրկնակի կապեցաւ սայ ձեռամբ իմով անարհեստիւ, զի ոչ ի վարժ, բայց տեսութեամբ եւս ուրեք, ի թիւն Հայոց ՊԺԶ. (1367), ի հոյակապ եւ ի հոչակաւոր քաղաքս Պոնտացոց Տրապէզ անուն յորջորջեալ: Քանզի ամ մի է կալով մեր աստ, առ դրան լուսայգարդ տաճարիս, որ յանուն Սուրբ Էջմիածնիս... Եւ յաւտարութեան կեանս, յոր ելաք ի տանէն մեր յարեւելի, էր թիւն ՁՂԷ. (1348), եւ յայս ամի ՊԺԶ. (1367), յաւգոստոս ամսու Զ. (6)»¹⁰⁴ (353ա):

Պապ քահանայի անվանակիր երկրորդ հիշատակարանը կրում է 1387 թ.: Չափածո տողերում հոգևոր հայրը ցավով է նկարա-

էջ 346-347: Հիշատակարաններից մեկում գրիչն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև գրչության պայմանների մասին. «Փանք ամենատեառն, որ հասոյց ի վերջ ի կէտ վերջին: Այլ, ով եղբայր, մի՛ մեղադրեր, ճշմարտիւ ասեմ, զի յեղանակս ձմեռն էր, դեղս սառցոյց և տունս ցուրտ և ես պանդուխտ, զի անպարապ, բազում մասն ճրագով գրեցաւ» (սույն տեղում):

¹⁰⁴ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., էջ 552:

գրում իրեն վիճակված պանդուխտի ունայն կյանքը, իսկ ստեղծված ծանր հոգեվիճակում միակ սփոփանքը ձեռագիրը ստանալն է.

«...Ի մեր յերկրէն եմ հեռայբնակ,
Պոնտոս քաղաքս տարաբնակ...
Եւ փարատիչ յախտէ յըստակ...
Զսայ ըստացայ ինձ յաղթանակ,
Յաւիտենից կենաց թաւշակ...»

Թվին Հայոց վեց եւ տասն յիսներեկօք յարաբարդեալ եւ Լ եւ վեց եւս յաւելեալ (1387)»¹⁰⁵ (56բ):

Ձեռագիրը վերակազմվել ու նորոգվել է 1593 թ., Ղուկաս վարդապետի խնդրանքով, սուրբ ուխտի սպասավորներ Սարգիս և Հովսեփ կրոնավորների ձեռքով. «...նորոգեցաւ սայ ի թւականիս Հայոց ՌԽԲ. (1593), ի խնդրոյ աստուածարեալ եւ երիցս երանեալ քաջ հրոնտորին Ղուկաս վարդապետի, զոր յոյժ փափաքմամբ եւ յորդորմամբ ետ նորոգել ի վայելումն անձին իւրոյ, իսկ յետ ելիցս աստեացս՝ յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ եւ ծնաւդաց իւրոց. ամէն: Ընդ նոսին եւ զմեզ զանարժան կազմաւորս եւ զնորոգաւոր սուրբ գրոցս, զմեղաւք լցեալս եւ զանյիշելի Սարգիս աշակերտս եւ զտէր Յովսէփ կուսակրան արեղայն, աղաչեմ յիշելոյ արժանի առնել եւ Աստուած ողորմի ասելոյ»¹⁰⁶ (354ա):

Ժամանակագրորեն վերջին հիշատակարանը 1696 թվականից է. Սուլթանում անուանով մեկն իր հիշատակագրության թվականը նշել է Ազարիայի տոմարով. «...փոքր թիւն ԶԱ. (1696) Ագամ ԻԲ.ումն...»¹⁰⁷ (354բ), որ նշանակում է՝ այդ տարի ձեռագիրն արդէն Նոր Զուղայում է եղել:

Բ. ՄՄ ձեռ. Հ^մր 3082, «Ժողովածոյ»:

Տեղը՝ Խոր Վիրապ, Սաղմոսավանք, Թեղենյաց վանք:

ԶԺԶ.-1267 թ.: Գրիչ՝ Գէորգ Լամբրոնացի, Մանվել: Ստացող՝ Գրիգոր Բջնեցի:

Կաշեկազմ՝ դռնակով և երբեմնի ունեցած զույգ կապիչներով (աստառը՝ շագանակագույն կտավ), 478 թերթ, թուղթ, 20,5x16, միասյուն, բոլորգիր (նկ. 55-56), 32 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

475բ Փակք... Եւ եղեւ աւարտ գրչութեան սորա, ի ձեռն տարաշխարհիկ պատանոյ ումեմն թարմատար գրչի Գէորգայ, ի Կիլիկիեան նահանգէն, յանմատչելի ամրոցէն՝ Լամբրան կոչեցելոյ, որ է ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի... Ի շրջագայութեան ամենակաց թուաբերութեան Հայկականս ազին տաւարի, յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ թու/476բ/ով վեցեկեաւ ընդ տասնեկի շարամանելոյ (1267)...

Հանդիպելոցդ սրբոյ մատենիս մաղթեմ աղերսիւ՝ զստացաւոր սորուն Գրիգոր վարդապետ, աղաւթիւք յիշել ի Քրիստոս, եւս առաւել զտէր Գրիգոր, եւ զծնաւդսն իւրեանց, եւ դուք յիշեալ լիջիք յողորմութիւնն Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս: Սխալանաց գրչիս ներեցէք իբրու /477ա/ տկար բնութեան, վասն զի որպէս յառաջն ասացի, թէպէտ եւ ոչ ներհուն գոլով մեր յարհեստ գրչութեան, որպէս պահանջէ մեծագոյն այսր իրողութեանս վարկ, սակայն եւ ոչ կամակատար եղեւ մեզ դիպիլ տեղոյ եւ ժամանակի, այլ փոփոխելով տեղի ի տեղի /// (մի քանի բառ ջնջված)....:

Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղեւ ի տիեզերահոչակ սուրբ ուխտն Վիրապին, որ էր ընդ իշխանութեամբ նախախնեցեալ տեառնն Գրիգորիս, ուր Սուրբ Լուսաւորիչն [մեր չո]րեքտասանամեայ երկարութիւն ժամանակին ի խորագոյն խա-

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 551-552:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 552:

¹⁰⁷ Նույն տեղում:

լար[չ]ուտն արգելեալ բանտի՝ ի մէջ չարաշուռն մահաբերիչ դժընդակաթոյնն սողնոց, ուրանաւ իբրոյ յարգանդի մաւր զմերն լիներ յղացեալ փրկութիւն, ուստի ելեալ ծագէր զլոյսն աստուածագիտութեան արեգակնաքատակ ծաւալմամբ յաշխարհս Հայոց, ծնանելով վերստին ի Քրիստոս ըստ մա[րգա]րէութեանն զազգ մի ողջուն, ուրանաւր եւ մեզ եղեւ ժամա[նակ] ինչ դեգերել ի դուռն աստուածագարդ այնր տաճարի, սակս կրթութեան [մերոյ], ի մեծ վարդապետէն աստուածագեաց առնէն Վարդանայ, որ [ընդ ա]յն ժամանակս ի վերայ ամենայն մասանցն բարեաց՝ որով բոլորն [կա]տարի առաքինութիւն, եւ զուսուց[չ]ապետութեանն եւս զգործ ի կիր արկեալ, ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկելսն յաստուածայինն ուղղէր ճանապարհ:

Եւ անտի փոխեալ [եկե]ալ առ մեծ իշխանն Քուրդ, եւ մեր զկնի նորա հետեւեալ՝ ժամանակ՝ [ին]չ արարաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր եւ զառաջինն աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս: Եւ քանզի դէպ լինէր եւ անտի եւս փոխիլ նմա ի գործ բարւոք ուսուցչութեանն՝ ի տեղի, ուր Տէր յաջողեսցէ, յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս՝ ի բուն տունս իւրեա[նց], ի մեծ[ահո]չակ, հրեշտակակրան, աստուածաբնակ սուրբ ուխտս Թեղինեաց, ուր եւ յանկ իսկ հանաք զառաջարկեալս: Բարւոք ընկալեալ զմեզ բարեբարոյ եւ սրբասէր քահանայի Սարգսի, սիրով եւ յաւժարամիտ կ[ամ]աւք սպասաւորելով, զոր աղաչեմ յիշման բարւոյ արժանի[ի] առնել ի մաքրափայլ աղաւթս ձեր¹⁰⁸:

378բ ԶՄանվէլ գրիչ յիշեցէք¹⁰⁹:

Հետագայի հիշատակարաններէց մեկն ամփոփում է երկրում տիրող քաղաքական դժվարին պայմաններում ձեռագրի փրկութեան պատմութիւնը, մասնավորապէս՝ Հայոց ՊԾԹ. (1410) թվականին. «...եկ Թամուրի որդին՝ Ամիրզայն, ի վերայ Բաղիշու եւ տարան ի Թավրէշ, եւ ես յամենայն ժամ լալոտ աչաւք կայի եւ աղեխարչեալ ընդդէմ սմա՝ ոչ գտանելով հնար ազատել զսա, զի անգեալ էր ի ձեռն անողորմ եկեղեցականաց: Ապայ յետոյ ուրախ արար եւ մխիթարիչ Հոգին Աստուած մխիթարեաց եւ ուրախացոյց զվշտագնեալ անձս եւ զբեկեալ սիրտս եւ զտրտմեալ ոգիս, եւ ինքեանք իւրեանց անձամբն բերին զգիրքս առ իս, բայց թուացեալ եւ բրդացեալ են կրունկք գրոցս, կտրատեալ եւ խարխարեալ: Աստուծոյ գոհութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: ՊԾԹ. (1410), եկաւ գիրքս»¹¹⁰ (260բ):

Ձեռագիրը նորոգվել է 1630 թ., Մովսես Գ. Տաթևացի (1629-1632) կաթողիկոսի օրոք, ոմն Քահանա գրչի ձեռքով: Նորոգումից հետո այն «ի հալալ արդեանց» ստացել է Ամիրզում (Համիթ, Դիարբեքիր) վերադիտող Բարսեղ վարդապետը՝ ի հիշատակ իրեն և իր մերձավորներին, ապա նվիրաբերել է Ս. Առաքելոց վանքին. «Նորոգեցաւ սուրբ գիրքս, որ կոչի տաւնապատճառ՝ արարեալ սրբոց վարդապետաց եւ հայրապետաց Հայոց՝ առ ի բացայայտել զպատճառ տօնից տէրունականաց եւ ամենայն սրբոց յիւրաքանչիւր տաւնից նոցա, ձեռամբ փծուն գրչի՝ նուաստ Քահանայի, յիշատակ տէր Բարսեղ վարդապետին՝ վերադիտողի Համիթ մայրաքաղաքի, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ հոգեւոր ծնաւդին իւրոյ եւ ուսուցչին տէր Սրապիոն վարդապետին, որ եղեւ կաթողիկոս եւ անուանեցաւ Գրիգոր, եւ մարմնաւոր

¹⁰⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 349-352. Ընդգծումները մերն են - Ա. Հ.:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 355:

¹¹⁰ ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա., էջ 111:

ծնաւդացն, եղբարցն, քվերցն եւ ամենայն արեան առու մերձաւորացն: Եւ եղ յիշատակ ի դուռն Սուրբ Առաքելոցն... Կազմեցաւ տառս ՌՅԹ. (1630) Թուին, ի Հայրապետութեան տէր Մովսէս կաթողիկոսին»¹¹¹ (478ա):

Գ. ՄՄ ձեռ. Հմբ 6752, «Աւետարան»:

ՌՃԺԱ.-1662 թ.: Գրիչ՝ Մուրատ դպիր (258ա-340ա), Անանուն Ա, Անանուն Բ, Անանուն Գ: Ծաղկող՝ Մուրատ դպիր (նկ. 59-62): Ստացող՝ Շայապ:

Կաշեկազմ՝ դռնակով և երեք կապիչներով (Ա. փեղկին 12 կոստղ-գամով ամրացված արծաթյա բարձրաքանդակ կրկնակազմ (Հայտնութեանական Տիրամայր՝ մանուկ Հիսուսը գրկին, անկյուններում մեկական քառաթև քերովբեներ - նկ. 57), աստառը՝ դրոշմազարդ կտավ, 340 թերթ, թուղթ, 20x13, երկսյուն, բոլորգիր, 20-22 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

338ա Փա՛ռք... Աստանօր աւարտեցաւ սուրբ Աւետարանս՝ ի սուրբ ուխտին Խոր Վիրապին՝ ի սուրբ տաճարի Սուրբ Լուսաւորչին և ամենայն սրբոց, որ աստ կան, ձեռամբ Գ. (3) մանկանց՝ գրողաց և աւարտողաց: /338բ/ ...ստացաւ ի սայ հալ[ալ] վաստակոց ի[ւրոց]՝ զբարեմիտ հոգելի և աստուածասէր Շայապն և կողակիցն Մուջանն, հայրն՝ Մարգարէն և մայրն՝ Հապիպն և որդիքն՝ Խլխաթն, Հերապետն, Մարտիրոսն և դուստրն՝ Գաւգալն, Մուրվաթն և եղբարքն՝ Մուրատն, Մելիքսէթն և կողակիցն Գաւգալն և քուրն՝ Խանուսն և Թարվեզն, Նարինջըն /339ա/ յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր և Աստուած ողորմի ասացէ՛ք կենդանեաց և մեռելոց և Աստուած ձեզ ողորմեսցի աւուրն դատաստանին. ամէն...:

Յիշեցէ՛ք զմեղապարտ գրիչս՝ դպիր Մուրատս և Աստուած զձեզ յիշէ. ամէ[ն], ի Թվականիս Հայոց ՌՃԺԱ. (1662): Հայր մեր, որ յերկինսդ ես:

Ժէ-ԺԸ. դդ. հետագայի հիշատակարաններից մեկը հայտնում է ձեռագրի՝ «Կարմիր Ավետարան» անունով հռչակված լինելու մասին, որը ենթակա չէր վաճառման կամ գնման և պահվում էր սրբությամբ. «Աւետարանս այս, որ է անուն սորա փոքրիկ Կարմիր Աւետարան յանուն Յիսուսի Քրիստոսի և գինն Ծ. (50) մառչիլ, որոց ո՛չ վաճառեն եւ ո՛չ գրենն, այլ պահեն սրբութեամբ եւ Աստուած բարով վայել տացէ»¹¹²:

Մյուս երկու հիշատակարաններից մեկը (340ա) բովանդակում է սուրբ եկեղեցու հավատավոր զավակներից ու ընթերցողներից ստացող Շահապի ու նրա զավակների հոգիների փրկության համար Աստուծոց ողորմություն հայցելն ու աղոթքներում հիշատակելը:

Գ. ՄՄ ձեռ. Հմբ 5413, «Աւետարան»:

Տեղը՝ Խոր Վիրապ, Ակոռի:

ՌՃԺԲ.-1663 թ.: Գրիչ, ծաղկող՝ Մուրատ դպիր (նկ. 67-68): Ստացող՝ Խլխաթ:

Կաշեկազմ՝ կոստղապատ, արծաթե երեք խաչերով (մեկը՝ ականակուռ), 3 ականակուռ վարդյակներով, դռնակով և երեք կապիչներով (աստառը՝ ծաղկազարդ կտավ), 216 թերթ, թուղթ, 28x21, երկսյուն, բոլորգիր, 24 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

214ա Փա՛ռք... որ ետ կարողութիւն տկար յոգոյ եւ մեղապարտի Մուրատիս* հասանել աւարտ սուրբ Աւետարանիս՝ ի սուրբ ուխտին Խոր Վիրապին եւ տեղի չարչարա-

¹¹¹ Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, Խ. Բ., էջ 378:

¹¹² ՄՄ ձեռ. Հմբ 6752, 340ա:

նաց մեր Լուսաւորչին՝ ի գեաւղն Արկուռի, /214բ/ ի ոտն աւագ Մասըսա Նոյեան տապանին, Սրբոյն Յակոբայ Մծբինա հայրապետին, եւ Սրբոյն Ըստեփանոսի Նախավկային, եւ Սրբոյն Սարգսի զօրավարին, եւ Սրբոյն Գրիգորի, եւ Սրբոյն Յովհաննու Կարապետին եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ի թուականիս Հայոց ՌՃԺԲ. (1663) ամին...:

Արդ, ցանկացող եղեալ այնմ հոգիանորոգ, լուսերանկ, ծաղկաւէտ, վարդափթիթ, անուշահոտ, քառավտակ եւ քառանկիւն սուրբ Աւետարանիս, զբարեմիտ եւ հեզահոգի խլիւթին, որ ըստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր եւ ծնաւդ իւրոց, հաւրն՝ Ղուպաթին, մաւրն՝ Սուլթանին եւ կողակցին՝ Շահզամանին եւ Աղայբեկին եւ որդոցն՝ Աւետիսին, Միրզեկին եւ Էվանէսին եւ դստերն՝ Սուլթանին եւ եղբօրն՝ Աւագին եւ կողակցն՝ Փարիխանին եւ որդոցն՝ Մուրատիսանին, Սարգիսին եւ դստերն՝ Լալիխանին եւ զոքանչին՝ /215ա/ Խումարին եւ քեռուն՝ Խլիւթին եւ Հերապետին եւ մաւրքուր Զանաղին եւ ամենայն յարեան մերձաւորացն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա եւ Աստուած ձեզ ողորմի իւր արքաութեան. ամէն...:

Յիշեցէք զմեղապարտ գրիչս՝ դպիր Մուրատս եւ Աստուած ձեզ յիշէ. ամէն: Հայր մեր, որ յերկ՝¹¹³:

*Ստորին լուսանցում՝ «Հող եւ մոխիր Մուրատիս»:

Ծնթ. Հիշատակարանում գրչության վայրի առնչությամբ միաժամանակ հիշատակված են և՛ Խոր Վիրապը, և՛ Արկուռի գյուղը:

Զեռագրի 1734 թվակիր հիշատակարանը պարզում է, որ այն հետադայում ստացել է տեր Դավիթ քահանան ու նվիրել Լիմ անապատի Ս. Գևորգ վանքին. «Ես՝ տէր Դաւիթ

քահանայս... սուրբ Աւետարանս ըստացայ ի հալալ ընչից իմոց եւ յետու յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց՝ Պօղոսին եւ Նազլուխանին, եւ հոբլոյն իմոյ՝ տէր Դաւթին եւ եղբարց իմոց՝ Դիւօին, Աւէտին եւ Գինոսին, եւ կողակցոյն իմոյ՝ Մըրվաթին, եւ որդւոց իմոց՝ Եղօին եւ Պօղոսին, եւ դստերն իմոյ՝ Խանուսին, եղի ի դուռնն սրբոյն Գէվորգեայ զօրաւարին ի ծովապատ անապատն Լիմ կոչեցելոյ»¹¹⁴: Նվիրատուն հիշատակարանն ավարտում է ձեռագիրն անապատից հանողներին ուղղված նզովքի, իսկ պահպանողներին՝ օրհնանքի հետևյալ տողերով. «Դարձեալ զայս եւս աղաչեմ զձեզ, զի մի ոք համարձակեսցի հանել սուրբ յանապատէս զայս սուրբ Աւետարանս, թէ՛ առաջնորդ եւ թէ՛ միաբան, այլ ոք քահանայից եւ կամ աշխարհականաց կա՛մ ծախելով եւ կա՛մ բաշխելով եւ կա՛մ այլ իմն կերպիւ ջանա հանել՝ այնպիսին դատի Աստուծոյ, եւ խնամով վայելողն եւ մեզ վերոգրեալքս յիշողն ի մէջ աղօթից յիշեսցէ զնա /216ա/ Քրիստոս Որդին Աստուծոյ միւսանգամ գալստեան իւրոյ լսել տացէ երանաւէտ բարբառն, որ ասէ. եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկըզբանէ աշխարհի, եւ ինքն օրհնեալ եղիցի անզրաւ յաւիտենիս. ամէն: Գրեցաւ թվի ՌՃՁ եւ Գ.-ին (1734), մայիսի ԺԴ.-ին (14)»¹¹⁵:

Ե. ՄՄ ձեռ. Հմր 3825, «Աւագթանգեղոս, Պատմութիւն Հայոց»:

ՌՃԻ.-1671 թ.: Գրիչ, ստացող՝ Ոսկան արեղա:

Կաշեկազմ (նկ. 58) (աստաւը՝ դրոշմազարդ կտավ), 263 թերթ, թուղթ, 20x11, միասյուն, նոտրգիր (նկ. 63), 26-28 տող:

¹¹³ Ա. Գեորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն. (IX-XVII դդ.) Գահիրէ, 2005, էջ 485:

¹¹⁴ ՄՄ ձեռ. Հմր 5413, 215բ:

¹¹⁵ Նույն տեղում, 215բ-216ա:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

165ա ...Արդ, աղաչեմք զհանդիպողդ սուրբ տառիս, կարգացողք եւ օրինակողք յերեսս անկեալ աղաչեմք յիշեցէք ի Քրիստոս զգծող զրոցս եւ զբարն իմ՝ Բաղասարն եւ մայրն իւր՝ Եղիսաբեթին եւ Մարիեանին, եւ հօրեղբարցն իմոց՝ Պանին եւ Այեանին, եւ Եղիշէին, Փարիխանին, եւ Սահնամին եւ Հիւրիխանին եւ Չինէխանին եւ Փարիխանին, Եաւհարին, եւ զիս զարժան մեղօք լի սուտ անւանամք այբեղայ տէր Ոսկան, որ գրեցի սա յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց՝ ապաւինելով ի բարեխօսութիւն Սուրբ Լուսաւորչին ի թողութիւն լիցի մեղաց իմոց եւ Աստուած յիշողացդ եւ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի. ամէն, Հայր որ՝:

207բ (առաջին չորս տողը կարմիրով) Փառք... որ /208ա/ ետ կարողութիւն տկար անձին իմոյ եւ մեղսամած մատանցս ծրել զպատմութիւնն երիցս երանեալ եւ երջանիկ Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Սուրբ ուխտս խնդրակա[տա]ր Խոր Վիրապս եւ ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնիս, ի թվին ՌՃԻ (1671): Ես՝ տէր Ոսկանս, գծագրեցի ձեռամբ իմով, որ յետինս եմ ի շարս բանասիրաց, անուամբ այբեղայ կոչի, յաղերսանկեալ աղաչեմ զհանդիպողք տառիս ինչ կերպիւ իցէ յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր, զիս զապիկար եւ զախմար եւ զանարհեստ եւ զփցուն գրրիչս՝ զտէր Ոսկանս, եւ ծնողսն իմ՝ զտէր Յովսէփն եւ զմայրն իմ, եւ զեղբայրսն իմ՝ Պօղոսն եւ զՄիսան, եւ զբարն իմ՝ Բաղասարն, եւ կողակցին իւրոյ՝ Մարիեանին, եւ Եղիսաբեթին եւ հօրեղբարց իմոյ՝ Բայեանին, եւ Այեանին, Եղիշին, եւ քոյերցն՝ Փարիխանին, եւ Հիւրիխանին, եւ Սահնամին, Բարիխանն եւ Գաւհարն, եւ Սառիկն:

Արդ, յաղերսանկեալ աղաչեմ զհանդիպողք տառիս ինչ կերպիւ իցէ, յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ զապիկար եւ զախ-

մար եւ զանարհեստ եւ զփցուն գրրիչս զտէր Ոսկան, եւ ծնողսն իմ, եւ զայլ ամենայն մերձաւորս, որ գծագրեցի զսայ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոյց. ամէն:

Ձ. ՄՄ ձեռ. Հ^թ 544, «Բառգիրք»:

ՌՃՁԹ.-1740 թ.: Գրիչ՝ Ըռաֆայէլ Զուղայեցի:

Կաշեկազմ՝ նորոգման ժամանակի դռնակով և զույգ կապիչներով (աստառը՝ կարմիր եւ դեղին շերտերով մետաքս, դռնակի աստառը՝ նորոգման ժամանակի ծաղկազարդ կտավ), 196 թերթ, թուղթ, 15,5x10, միասյուն, նոտրգիր (նկ. 64), 26 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1բ Իսկ այժմ՝ հայրապետութեան հանուրց Հայկազնեաց տեառն Ղազարոյ սրբազան կաթողիկոսի ի Քրիստոսէ հիմնեցեալ եւ տիեզերակալ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի եւ առաջնորդութեան Սուրբ Խոր Վիրապիս Պետրոս արհի եպիսկոպոսին եւ ի թուականի Հայոց ՌՃՁԹ. (1740), ի յամսեանն յունիսի Ժ. (10), ի դուռն Սուրբ Խոր Վիրապին գրեցաւ ձեռամբ Ըռաֆայէլ որդոյ Գրիգորի...¹¹⁶:

196բ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին, յանգ ելեալ աւարտեցաւ Բառգիրքս թվին Հայոց ՌՃՁԹ. (1740), սեպտեմբերի ամսոյ ԺԵ. (15), ի դուռն Սուրբ Խոր Վիրապին, ի հայրապետութեան Սուրբ Աթոռոյն Էջմիածնին տեառն Ղազարոյ սրբազան կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ Սուրբ Խոր Վիրապիս առաջնորդ Պետրոս աստուածաբան վարդապետին ...Արդ, որք ընթերցչիք զսա հոգեւոր բաղձանօք, յիշեսցիք զմատակարար գծող սորին՝ զհող ոտից ձերոց եւ ծառայ ամենեցուն, զբազմամեղ, վա[տ]թար եւ

¹¹⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., էջ 1197-1198:

նիհար տրուի Ըռաֆայէլս եւ զծնողսն իմ, նաեւ զեղբայրակիցն իմ զԳրիգորն, որ եմք ի Ճոռղայու նոր քաղաքէ, ընդ որս եւ դուք յիշեալ լիջիք առաջի անմահ գառին Աստուծոյ. ամէն¹¹⁷:

Ծնթ. Միւնուէյն ձեռագրի վերոնշյալ երկու հիշատակարանների վկայակոչումը պարզում է ձեռագրի ստեղծման ժամանակահատվածը, ըստ որի՝ այն սկսել են 1740 թ. հունիսի 10-ին և ավարտել նույն թվականի սեպտեմբերի 15-ին, այսինքն՝ զրջագրումը տևել է ավելի քան երեք ամիս:

Է. ՄՄ ձեռ. Հ^մ 7044, «Ժողովածոյ»¹¹⁸:

ՌՄԻԳ.-1774 թ.: Գրիչ, ստացող՝ Գրիգոր Սիւնեցի:

Կաշեկազմ՝ կիսով չափ մնացած զույգ կապիչներով (աստառը՝ թուղթ), 103 թերթ (գրչի էջակալում՝ 1-204*, որ է՝ 2ա-103բ), թուղթ, 14,5x10, միասյուն, նոտրգիր (նկ. 65), 21 տող:

*149-ից հետո սխալմամբ էջակալված 190 և շարունակած, ապա ուղղած՝ կապույտ թանաքով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

102բ Փակք... աւարտեցաւ ի ՌՄԻԳ. (1774) թուոյ Հայոց, ի ամսեանն օգոստոսի ԺԸ. (18), ընդ հովանեաւ միածնաիջի Սուրբ Վիրապիս, ի ժամանակս Սիմէօնի գերընտիր կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ վերադիտողի սուրբ ուխտիս Մարկոս հեզահոգի, եւ աշխատասէր վարդապետի եւ իշխանութեան Արարատեանս գաւառի /103ա/ Հիւսէին Ալի խանին, որ անտիրացեալ էր յերկիրն պարսից սակս արքունական կողմանէ, զի ոչ գոյր թագաւոր այլ ամենայն երկիր մի, մի խանտիրէր իւրոց ցուցանելով զհարկս ժողովրդոցն,

իսկ ի յայսմ դառն եւ դժընդակ ժամանակիս, ես՝ նուաստս ամենից եւ հող եւ կոխան ոտից կարկաւորաց եւ ծառայս ծառայից Գրիգոր արեղայս՝ ի յերկրէն Սիւնեաց եւ ի գիւղէն, որ կոչի Քաջանիսոյ, ի Սուրբ Վիրապն էի միաբան Մարկոս վարդապետին, հրամանաւ վերոյ յիշեցեալ վեհին, ժողովեցի աստի եւ անտի զփոքրիկ բանս շահու հոգոց ի[մոյց]: Արդ, որք հանգիւպիք սմա՝ ընթան[ա]լով եւ կամ հարեանցի ըզպօսն[ե]լով, աղաչեմ տեարսդ յիշեսջիք միով Աստուած ողորմիայիւ զհոգեւոր ծնողսս իմ եւ զփծուն գրիչս, զոր եւ ողորմածն ամենայնի զիւր առատ ողորմութեանն արժանի արասցէ զամենեսեանսս. ամէն:

1ա Գիրք <Գրք>, որ կոչի ժողովածու, ժողովեցեալ եղեւ ի Գրիգոր վարդապետէ Սիւնեցոյ, ի ժամանակ /// Տեառն /// ի ՌՄԻԳ. (1774) /// իսկ թվոյ փ[րկչական]/// հրատից ա[մսոյն]///:

Ծնթ. Ձեռագրի թ. 1-ը մասնակի պատուված-ընկած է, որի պատճառով հիշատակարանը թերի է: Մանր հիշատակագրություններ կան նաև 1բ էջին «Ես՝ տիրացու Դաւթին...», «Ես՝ անարժան եւ անպիտան յոյժ նուաստ», ապա առաջին միավորի խորագիրն է. «Շնորհիւ ամենասուրբ Երրորդութեան [Հօր եւ Որդւոյ] եւ Հոգւոյն [սրբոյ, որով ասեմք իւ]րական [արարածոց օրհնեալ է] Աստուած»:

Ը. ՄՄ ձեռ. Հ^մ 811, «Ժողովածոյ»:

ՌՄԻԳ.-1775 թ.: Գրիչ, ստացող՝ Գրիգոր վարդապետ Սիւնեաց գավառի:

Կաշեկազմ՝ նորոգման ժամանակի զույգ կապիչներով (աստառը՝ թուղթ), 200 թերթ (գրչի էջակալում՝ 1-391, որ է՝ 4ա-197ա), թուղթ, 19,8x16, երկսյուն, շղապրանման նոտրգիր (նկ. 66), 27 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

3ա (տիտղոսաթերթին) Գիրք, որ կոչի Քաղուածոյ Սաղմոսացն Դաւթի, արարեալ

¹¹⁷ Նույն տեղում, էջ 1198:

¹¹⁸ Ցուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի և հայատառ թուրքերէն ձեռագրերի, կազմեց՝ Հ. Ստեփանյան, Երևան, 2008, էջ 77:

սրբոյ եւ եռամեծի Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ... Ի ժամանակս գերարգելի հայրապետութեան Տեառն Սիմէոնի գերընտիր եւ սրբազան կաթողիկոսի եւ իշխանութեան ալլասեռից Հիւսէյին Ալի կոչեցեալ խանի, որ ի Արարատեան գաւառի:

Որ եւ արարի զայս գիրքս ըստ թախանձանաց սրտի իմոյ՝ ի սուրբ եւ գերահռչակ վանս Խոր Վիրապայ եւ ի նորին առաջնորդութեան տեառն Մարկոսի հեղաբարոյ եւ ծերունազարդ, հանճարաշատ վարդապետի, ի թուականութեան կենարարի ՌՉՁԴ-ի եւ ի Արաց երկոտասանի, եւ ի յԱրամեանս ազգի ՌՄԻԴ-ի (1775), փետրվար ամսոյ ԺԷ-ի (17): ԳՎՍԳ-ի («Գրիգոր վարդապետ Սիւնեաց գաւառի») ¹¹⁹:

197ա Փա՛ռք... աւարտեցաւ հոգելից սուրբ գիրքս, ի թուականութեանն Հայոց ՌՄԻԴ. (1775), փետրվար ամսոյ ԺԷ. (17), ի սուրբ ուխտն Խոր Վիրապ, ձեռամբ անիմաստ գրչի՝ Գրիգորի Սիւնեաց գաւառի, եւ ի գիւղէն Քաջանեցի... ¹²⁰:

¹¹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., էջ 818-819:

¹²⁰ Նույն տեղում, էջ 823-824:

ԱԿՈՌԻՈՒՄ (ԱՐԿՈՒՌԻ) ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳԻՆԵՐԸ

Ա. ՄՄ ձեռ. Հ^մ 4458, «Աւետարան»:

ՌՂԵ.-1646 թ.: Գրիչ, ստացող՝ Մարուք քահանա:

Մոմլաթապատ կազմ՝ մեջքը սև կաշի (աստառը՝ թուղթ), 251 թերթ, թուղթ, 24x17, երկայուն, բոլորգիծ (նկ. 79), 18-19 տող, լուսանցակողերը՝ կարմիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

251ա Փա՛ռք... գրեցաւ սա է թուիս Հայոց ՌՂԵ. (1646), յերկիրս յերեւան, ի գիւղայքաղաք Արկուռի, ի յոտն Աւաք Մասիս, ի դուռն Սուրբ Յակովբայ, ի Հայրապետութիւն Էջմիածնայ, ի թագաւոր/251թ/ութիւն Հայոց Փիլիպպոս կաթողիկոսն, ի իմոր Վիրապի միաբանիցն առաջնորդ Մկրտիչ վարդապետն, հոգեւոր արք Մանուէլ իպ[ի]սկոպոսն, ի դառն եւ ի տխուր ժամանակիս:

Արդ, երեսաանգեալ աղաչեմք ո՛վ քահանայք սրբազան, յիշեալ լիջիք դուք ի սուրբ յաղաւթս ձեր, մեղապարտ սուտանուն քահանայ Մարուքիս, իմ Հայրն, իմ Ղազար հաւրեղբայր, Յովսեփ իպիսկոպոսն առ Աստուած փոխեցաւ, մայրն իմ՝ Խանսաւթան, եղբայրքն իմ՝ Յարիճան, Խերատին, եւ առաւել մեղապարտիս կողակիցն՝ Մարիան, անդրանիկ որդին՝ Ղազարն, հոգեւոր ահեղ ատենին Քրիստոսի իմ դուստր եւ այս վերջին ժամանակէս իմ հոգեւոր որդի Խանուս[աղէն], Սանգուխան, միւս Խոսրովն յիշեցէք ի Քրիստոս:

Դարձեալ յիշեցէք Հէրիկն, բազում աշխատանք արար, Աւետարանիս թղթին դեղ

առաւ, Աստուած իւր միւսանգամ հատուցէ իւրաքանչիւր...¹²¹:

Ծնթ. Հիշատակարանն ընդհատվում է ձեռագրից ընկած թերթի պատճառով:

Բ. ՄՄ ձեռ. Հ^մ 4022, «Աւետարան»:

ՌՂԶ.-1647 թ.: Գրիչ՝ Մարուքէ:

Կաշեկազմ՝ դռնակով և երբեմնի ունեցած երեք կապիչներով (Ա. փեղկը կոստղապատ, աստառը՝ կարմիր վանդակապատ կտավ, դռնակինը՝ կարմիր մոմլաթի վրա դրոշմված բուսական զարդեր), 262 թերթ (կրկն. 110-119), թուղթ, 22,5x15,5, երկայուն, բոլորգիծ (նկ. 80), 21-23 տող, լուսանցակողերը՝ կարմիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

261աբ Փա՛ռք... գրեցաւ սա ի թվիս Հայոց ՌՂԶ. (1647), ի դառն եւ յանբարի ժամանակս, որ ամէն աւր երերման կու կենայք: Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս, ի յերկիրս յերեւան, ի գուղաքաղաք յԱրկուռի, ի Հայրապետութեան Էջմիածնայ[յ] տէր Փիլիպպոս կաթողիկոսին, իւր /261թ/ կենդանութեան ժամանակին շնորհաբաշխ աւծութիւն ետուր Զուղա[յ]եցի պատուական Հայրապետն մեր՝ տէր Յակովբ անուանի ամենայն երկրի: Տէր Աստուած, անսասան, ամրածածուկ աջով պահեսցէ եկ[եղ]եցեաց ջահ անշիջանելի: Եւ առաւել մեր Հայոց Աթուռս՝ Խոր Վիրապիս առաջնորդին՝ տէր

¹²¹ Հայերեն ձեռագրերի ԺԵ. դարի հիշատակարաններ, Խ. Գ., կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 214-215:

Մկրտիչ վար[դա]պետն Տաթևացին: Աստուած իւր հոգին պայծառացուցանէ, որ ի ձեռն անաւրինաց կու մաշէր: Թէպէտ այս ժամանակիս հաստատ ժամատեղաւք, պատարագաւք, պաշտաւնաւք զարդարեալ է, Աստուած իւր հոգին պայծառացուցանէ:

Ես՝ մեղաւոր, անարժանս, սուստանուն Մարութէս, գրեցաք կամաւքն Արարչին¹²²:

Հետագայի հիշատակարաններից վաղագույնը 1732 թվականից է՝ գրված անարվեստ նոտրգրով: Այն պարզում է ձեռագրի հետագայի ստացող պարոն Մկրտչի անունը, ուր վկայված են նաև նրա կնոջ ու որդիների անունները. «...ողոր[մի] ըստայցողի գրուսն՝ պարոն Մկրտչին, կողակից՝ Ազիզին, որդի՝ Մարքարին, Թօրօսին, կողակից՝ Թուխիկին, որդի՝ Ալէքսանին, որդի՝ Պետրոսին, տիրացուն Գարպելին, Ավաքին, յեղայգարին եւ ամենայն արուն մերցաւորաց, ընդե[ր]ցողաց, եւս լսողաց յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, թվին ՌՃՁԱ.-ին (1732)»¹²³: Այնուհետև ներկայացվում է ինչ-որ գերեվարութեան պատմութիւնը եւ այն, որ Ավետարանը հիշատակ է տեր Հարությունին:

Մյուս հիշատակարանը բովանդակում է Բյուրականցի խալիֆա (վարժապետ, բաբունապետ) Սարգսի կողմից ձեռագիրը տասը մանեթ-գրամով գնման եւ Սեանավանքին ընծայման պատմութիւնը, ուստի մեջբերում ենք ամբողջութեամբ. «Յիշատակ է սուրբ Աւետարանս Բիւրականցի խալիֆայ Սարգսին եւ որդոյն՝ Սուրբ Երուսաղէմայ նուիրակ Մկրտիչ արքեպիսկոպոսին, որդոյն՝ Օվանէսին եւ միւս որդոյն՝ մահտեսի Գրիգորին: Ուստի զայս սուրբ Աւետարանս իմով ձեռամբս գնեցի Ժ. (10) մանեթ գրամօք, ետու յիշատակ Սուրբ Սեանայ հրեշտակակրօն անապատին: Յիշատակ իմ ծնողացս եւ հա-

մայն կենդանեացս առ ի քաւութիւն մեղաց մերոց, որ ձեռամբ Սուրբ Սեանայ անապատի առաջնորդ՝ վսեմափայլ Սարգիս վարդապետին շնորհեցաւ սոյն Աւետարանս: Վասն որոյ ով ոք հանդիպիք սմայ, ընթերցողդ միով բանիւ յիշէք զվերոյգրեալ հանգուցեալսն եւ գեղանիսն եւ լինիջիք յիշեալ (մեկ բառ անընթեռնելի). ամէն: Յամի Տեառն 1816, [յ]ունվարի 8-ումն եւ ի թիվն Հայոց ՌՄԿԵ. (1816): Գրեցաւ Ղարաբիլիսայ, գիտութեամբ գործակալ տէր Ղազարին եւ տէր Սահակին, տէր Ղուկասին»¹²⁴:

Գ. ՄՄ ձեռ. ՀՊ 5756, «Աւետարան»:

ՌՃԺԵ.-1666 թ.: Գրիչ՝ Պետրոս դպիր: Ծաղկող, կազմող՝ Պետրոս դպիր եւ Մուրատ (գրչի հայրը) (նկ. 69-70): Ստացող՝ Եսաջան: Կաշեկազմ՝ ղոնակով, երբեմնի ունեցած երեք կապիչներով (աստառը՝ կարմիր դրոշմազարդ կտավ), 238 թերթ (կրկն. 121), թուղթ, 20x15, երկայուն, բոլորգիր, 21 տող, լուսանցակողերը՝ կարմիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

183բ-4ա ՌՎ հայրք եւ եղբայրք, զսուտանուն գրիչ, զմեղապարտ /184ա/ եւ զփցուն, զպերճ եւ զպղերգ զՊետրոսս յիշեսջիք, աղաչեմ:

237ա Փա՛ռք... որ ետ կարողութիւն տկար ոգոյ անարուեստ, մեղապարտ գրչիս՝ դպիր Պետրոսի հասանել աւարտ սուրբ Աւետարանիս Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յովհանու, սուրբ ուխտին իսոր Վիրապին Սուրբ Լուսաւորչին, Սրբոյն Յակովբայ Մրժբնա հայրապետին, եւ Սրբոյն Սարգիսի Զօրավարին /237բ/ եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ ի գեաւղն Արկուռի, ի թվականիս Հայոց ՌՃ ու ԺԵ. (1666) ամին... եւ լուեալ

¹²² Նույն տեղում, էջ 255:

¹²³ ՄՄ ձեռ. ՀՊ 4022, 2ա:

¹²⁴ Նույն տեղում, 262ա:

էր զբարեմիտ եւ հեզահոգի Եսայանն, որ ըստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր՝ Եսայանին եւ կողակից Մայրանին, դուստրն՝ Վարդ-խաթունին, Եղսաբերդին, հօրն՝ Յոհանէսին, մօրն՝ Սողթանին, եղբարցն՝ Հայրանին, Ներսէսին, Արղուծին եւ Ամիրին, եւ որդոցն՝ Պուտախին, Թարխանին, Յոհանէսին, Հապուլին, Սարտար եւ Խէչիկին, եւ քոյր՝ Ալամին, Մախմուրին եւ Աղլանփաշին, փեսայ Մարտիրոսին, հօրն՝ Գրիգորին, եւ աներին՝ Այվազին, զոքանչին՝ Թուրվանդին, Մուրատղուզին, /238ա/ Աղափաշին եւ ամենայն յարեան մերձաւորաց։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Աստուած զձեզ ողորմեսցի. ամէն...:

1բ (Մատթեոս ավետարանչի մանրանկարի շրջանակին՝ սևով) [Մ]ուրատս:

183բ (Հովհաննէս ավետարանչի մանրանկարի շրջանակին՝ սևով) Մուրատ յիշ[եցէք]:

236բ Յիշեա՛ զծաղկողս եւ կազմող սորա զփծուն գրիչս՝ զՄուրատս, եւ զկողակիցս իմ՝ Մայրանն, եւ որդին իմ՝ Պետրոս գրիչ, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն¹²⁵:

Դ. ՄՄ ձեռ. Հ^մր 7621, «Աւետարան»:

ՌՃԺԶ.-1667 թ.: Գրիչ՝ Մուրատ դպիր, Պետրոս դպիր: Ծաղկող՝ գրիչները (նկ. 71-72): Ստացող՝ Սաթըլմիշ:

Կաշեկազմ՝ դռնակով և զույգ կապիչներով (Ա. փեղկը կոստղապատ և հավասարաթև խաչով, աստառը՝ դրոշմազարդ կտավ), 262 թերթ, թուղթ, 20,3x14,7, երկայուն, բոլորգիր, 21 տող, լուսանցակողերը՝ կարմիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ

67բ Յիշեցէք գրիչ դպիր Պետրոսս եւ Աստուած յիշէ ձեզ:

261բ Փա՛ռք... որ ետ կարողութիւն տկար ոգո անարուեստ մեղապարտ գրչիս՝ դպիր Մուրատի հասանել աւարտ սուրբ Աւետարանիս Մաթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Թվին ՌՃԺԶ. (1667) ամին գրեցաւ սուրբ Աւետարանս Արկուռի, սուրբ ուխտին Խոր Վիրապին, Սրբոյն Յակոբա Մըծքնայ հայրապետին, Սրբոյն /262ա/ Ստէփանոսի Նախավկաին, Սրբոյն Սարգսի զաւրավարին եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ... եւ լուեալ էր զբարեմիտ եւ զհեզահոգի Սաթըլմիշին եւ կողակից Անախաթունին, որդոց՝ Փիրիբէքին, կողակցին՝ Ասըլզադին, որդոց՝ Այվազին, Արզընբէկին, զըստերն՝ Յուսնին եւ միուս որդոյն՝ Սիւսմունին, կողակից Մարգարիտին եւ որդոցն՝ Դանիէլին, Միրումին, Մէլիքբէկին եւ փոքր որդոյն՝ Յոհանին, կողակից Խանուսին, որդոց՝ Դաւիթադբէկին, Աղաբէկին եւ զստերացն՝ Եղսաբերդին, Խանսալթանին, եւ պարոն Սաթըլմիշի զստերացն՝ Մայրանին, Խանուսին, Զիլիխանին եւ ամենայն արեան մերձաւորացն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Տէր Աստուած յիշէ ձեզ...:

1751 թ. ձեռագիրը «Իւր հալալ վաստակոց» ձեռք է բերել Կարապետը՝ ի հիշատակ իրեն, եղբայր Սարգսին, որդի Մանուկին, «տան մեծին եւ փոքուն»։ Նոտրգիր հիշատակարանը պատկանում է տեր Դազար քահանայի գրչին (68ա):

1756 թվակիր շղագիր հիշատակարանը վկայում է անօրենների ձեռքից ձեռագրի ազատումը. «Յիշատակ է սուրբ Աւետարանս Փարինին ծնողացն՝ Էթարին, հօրն՝ Մարգարին, մօրն՝ Էթարին, որ ըստացաւ իւր հալալ ընչից իւր հոգեւոր յիշատակ, որ էր գերի ի ձեռն այլ ազգաց, Աստուած իւր կարողութիւնն տայ, որ ազատեց ի ձեռաց անօրենաց...»¹²⁶ (196բ):

¹²⁵ Աստղիկ Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, էջ 456:

¹²⁶ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազետի, կազմեց՝ Հր. Աճառեան, էջ 3:

Ձեռագրի ստացող է հիշվում նաև ոմն Երիցակ, որն էլ իր և Փարիխանի (Փարի) անունից եկեղեցու հոգևոր սպասավորներին Աստծո ողորմությունն ստանալու խնդրանք է հղում, ապա նշում, որ ոչ ոք իրավունք չունի Ավետարանը վաճառի կամ տնից դուրս հանի:

Ե. ՄՄ ձեռ. Հ^մ 4457, «Աւետարան»:

Տեղը՝ Ակոռի (°)

ՌՃԺԹ.-1670 թ.: Գրիչ՝ Մուրատ դպիր: Ստացող՝ տէր Հայրապետ:

Մոմլաթապատ կաղմ՝ մեջքը սև կաշի (աստառը՝ ծաղկաթուղթ), 222 թերթ, թուղթ, 26x20, երկայուն, բոլորգիր, 23 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

221ա Փա՛ռք... որ ետ կարողութիւն տկար յոգոյ մեղապարտ գրչի՛ դպիր Մուրատի հասանել օ(աւ)արտ սուրբ Աւետարանիս Մաթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յոհաննու, ի թուականիս Հայոց Ռ ու Ճ եւ ԺԹ. (1670) ամի... եւ ցանկացող եղեւ աստուածային տառիս՝ զհեզահոգի տէր Հայրապետ, /221բ/ յիշատակ իւրեանց յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Աստուած զձեզ ողորմի. ամէն:

Հետագայի հիշատակարաններից վաղագույնը 1789 թվականն է կրում: Այն հիշատակագրություն է, ուր կարդում ենք տեր Գալուստի (Կալուստ) ու իր ընտանիքի անդամների անունները: Առավել հետաքրքիր են ԺԹ. դարի հիշատակարանները: Անարվեստ բոլորգրով 1801 թվակիր հիշատակարանը պարզում է, որ հիշյալ թվականին ձեռագիրը նվիրել են «Ի դուռն Սրբոյն Գէորգեայ...»: Նկատի է առնվում Մուղնիի Ս. Գևորգը, քանի որ 1860 թվակիր հաջորդ հիշատակարանում բնակավայրը հստակ նշված է. «Յամի Տեառն 1860 եւ լուսաւորչական

1561 գտի զԱւետարանս ի վանս Սրբոյն Գէորգայ Մօղնույ»¹²⁷: Անթվակիր մեկ այլ հիշատակարան էլ վկայում է Ավետարանի՝ որպես բժշկարան գիրք հռչակված լինելու մասին. «Այս էլ բժշկարան անունով սուրբ Աւետարանս, որ գրուած է 1119 (1670) թուին Հայոց»¹²⁸:

Զ. ՄՄ ձեռ. Հ^մ 6698, «Աւետարան»:

ՌՃԻ.-1671 թ.: ԳՐԻՉ՝ Պետրոս երէց: ԾԱՂ-ԿՈՂ՝ Մուրատ, Պետրոս երէց (նկ. 73-78):

Կաշեկազմ (հին և նոր կաշվով վերականգնված 1978 թ., աստառը՝ նորոգման ժամանակի շագանակագույն կտավ), 292 թերթ, թուղթ, 20x14,5, երկայուն, բոլորգիր, 22 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

29բ (Մատթեոս ավետարանչի մանրանկարի շրջանակին՝ սևով) Մուրատի որդի տէր Պետրոս:

101բ (Մարկոս ավետարանչի մանրանկարի շրջանակին՝ սևով) Սակօ(աւ) ծաղկող սորայ Մուրատ¹²⁹:

290ա Փա՛ռք... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի Արարատեան, ի գիւղաքաղաքն Արկուռի, ի ոտն Աւագ Մասեան Նոյեան տապանի, եւ Սրբոյն Յակոբա Մծբնա հայրապետին, եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, եւ Սրբոյն Ստէփանոսի Նախավկային ու ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ի թվականիս Հայոց Ռ. ու ՃԻ. (1671) ամին, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ Յակոբ Զո[ւ]ղաէցուն, ի նորոգումն եւ ի շինութիւն Սուրբ Վիրապին, առաջնորդ եւ վերակացու Դաւիթ վարդապետի ր/291բ/աբունապետի:

¹²⁷ ՄՄ ձեռ. Հ^մ 4457, 221բ:

¹²⁸ Նույն տեղում, 2ա:

¹²⁹ Ա. Գեորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, էջ 514:

Ի գծող սորայ յիշէք զմեղապարտ եւ յանարժան Պետրոս էրէցս, որ միայն անուամբս եմ յիշելի: Արդ, ես անկեալ աղաչեմ զձեզ, որք հանգիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...:

ԺԷ. դարի խոշոր բոլորգրով հետագայի հիշատակարաններից մեկը պարզում է ձեռագրի ստացողներից Հովհաննեսի անունը, որն այն ձեռք է բերել «...հալալ ինչ իւրոց եւ ի վաստակոցն՝ յիշատակ իւր, Յովանէսին կողակից Մարգարիտին, որդոց՝ Խանէսին եւ կողակից Շահգամանին, Ամիրին, Մխիթարին, Թալիպին, դուստրն՝ Արզուին, Մայրան/292ա/ին, Եղիսին, եղբաւր՝ Զանագիզին, կողակից Մարգարիտին, որդոց՝ Միրաքին, յենկիպարին, Մուրատին, դուստր՝ Սալջուկին, եղբօր՝ Ամիրին, եղբաւր՝ Թորոսին, կողակից՝ յեղարին եւ որդոց՝ Մանուկին, Թապառուկին եւ դուստր՝ Խանումին, Վարդիսաթունին, Շուշանին, հայր՝ Գուլագիզին, կողակից՝ Արզուին, որդոյն՝ Մկրտիչին, յԱրագիզին, դստերն՝ Խանաղին, Զանագանին, Բարհիսոլթանին, մայր՝ Թուրվանդին, դստեր՝ Վարդիսաթունին, Սանդուխտին, Դաստագուլին, պապին՝ Զանագիզին, կողակից Սառային, եղբաւրն՝ Ամիրագիզին, Մուրատին, յԱրագիզին, Մխիթարին, Խանէսին, Փաղջանին եւ Շալխարապին»¹³⁰:

1771 թվակիր մեկ այլ հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը գնվել է ոմն Մխիթարի կողմից՝ «ի հալալ վաստակոց» (100բ): Պահպանվել է նաև 1913 թ. չղագրով մի հիշատակարան, որն արձանագրում է Ավետարանի գլուխների պակասավոր հատվածների տեղիները և այն, որ սուրբ գիրքը հոչակված էր նաև «Շեկ Աւետարան» անունով (229ա):

Է. ՄՄ ձեռ. Հմբ 10573, «Քէօթուկ Ա. Յակոբայ վանից Ակոուոյ»:

ՌՃԻ.-1671 թ.:

Կաշեկազմ՝ դռնակով և երբեմնի ունեցած զույգ կապիչներով (աստառը՝ վանդակազարդ կտավ), 204 թերթ, թուղթ, 13x10, միասյուն, բոլորգիր, նոտրգիր, տող՝ տարբեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԻ

ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Յաղագս հոգեւորական անջնջելի յիշատակագրութիւն՝ ի սուրբ եկեղեցիս Սուրբ Յակոբայ սքանչելագործ հայրապետի, զոր բովանդակեալ զամենայն զգեստք մի ըստ միոջէ, ըստ չափու հաւատոց եւ ըստ կարողութեան ընչից, շարակարգեցաք զամենայն եւ բացայայտեմք ի սուրբ տեղիս՝ առաջի ահաւոր եւ փրկագործ անմահ պատարագիս յականջս ձեր: Զի եւ դուք, ո՞վ աստուածասէր եւ ուղղադաւան միահամուռ ժողովուրդք, մեծամեծք եւ փոքունց, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, պարտիք մտադրութեամբ ունկն դնել եւ ամենայն ընծայաբերաց ի սուրբ եկեղեցիս՝ օրհնել եւ Աստուած ողորմի ասել միաբանութեամբ, զի եւ դուք ընկալիք մասն եւ բաժին ի սրբոցն Աստուծոյ /1բ/ եւ առատաձիր ողորմութիւն ի բարերարէն Աստուծոյ աստ հազարապատիկ եւ բիւրապատիկ եւ ի միւսանգամ գալստեան նորայ՝ զերկնից արքայութիւնն ժառանգեսջիք ընդ ամենայն ննջեցելովք ձերովք. ամէն¹³¹:

Ծնթ. Այնուհետե՝ գոհաբանական և Աստուծոյ ողորմություն հայցելու շարադրանք մինչև 7բ էջը: Սրան հաջորդում է թերևս Ս. Հակոբ եկեղեցին նորոգելու մասին հետեյալ հիշատակագրությունը՝ նոտրգրով. «Դարձեալ եկեղեցւոյն հին Կաթողիկէն, որ խիստ քաշ եւ խամ էր շինած, Դ. (4) սիւնքն այլ Գ. (3) գօշէ եւ խախուտ մահդասի խօճայ Մարգարէն սիւներն նոր լցնել ետուր քա/8ա/[րով], կրով Դ.

¹³⁰ ՄՄ ձեռ. Հմբ 6698, 291բ:

¹³¹ Հ. Փափազյան, Ակոու Ա. Հակոբայ վանքի Քյոթուկը, «Բանբեր Մատենադարանի», հ. 12, էջ 197:

(4) անկիւնը շինեաց եւ զԿաթողիկէն նորոգեաց եւ բարձրացոյց գեղեցիկ յօրինուածովք եւ մեծամեծ լուսամտերօք սոցա խարճն ի Գ. (3) թուման գնաց, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք սոցա հոգւոցն. ամէն»:

Զեռագիրը բովանդակում է Ակոռիի Ս. Հակոբ վանքին նվիրաբերված շարժական ու անշարժ գույքի վերաբերյալ հիմնականում անթվական գրառումները¹³²:

Ը. Երուսաղեմի Սրբոց Հակոբեյանց վանքի ձեռ. Հ^մր 1797, «Աւետարան»:

ՌձԻԴ.-1675 թ.: Գրիչ՝ Պետրոս երէց:

Խափաքարոյա կիսակաշի, 412 թերթ, թուղթ, 26x18,5, երկսյուն, բոլորգիր, 27 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

410ա Փա՛ռք... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս՝ ձեռամբ մեղապարտ եւ անարժան գրիչ Պետրոս իրիցիս, ի գիւղն Արկուռի, ի ոտն աւագ Մասեան, որ է զԱրարատեան, զՆոյեան տապանին, եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, եւ Սրբոյն Յակոբայ Մըծբինա հայրապետին, եւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, եւ Սրբոյն Սարգըսի Զաւրավարին, եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ:

Ի յառաջնորդութեան վանորէիցս Դաւթի րաբունապետի ահրեպիսկոպոսի, որ նորոգէ զամենայն եւ լուսաւորէ եւ պայծառացուցանէ եւ մեծամեծս կացուցանէ, զիոր Վիրապն եւ զայլն ամենայն, որ ոչ կարեմք լեզուաւ համբաւել զնա:

Այլ եւ աւարտիլ զսուրբ Աւետարանիս, ի թվականիս Հա[յ]ոց Ռ ու ձԻԴ. (1675) ամի եւ ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց բարեմիտ...¹³³:

Ծնթ. Զշարունակված, հավանաբար, պատվիրատու էի եղել:

Թ. ՄՄ ձեռ. Հ^մր 329, «Աւետարան»:

ՌձԻԴ.-1678 թ.: Գրիչ՝ Պետրոս երէց: Ստացող՝ Յակոբ:

Մոմլաթապատ կազմ, մեջքը՝ սև կաշի (աստառը՝ սպիտակ թուղթ, վրան նախկին կազմից դրոշմազարդ կտավ), 285+1 թերթ (կրկն. 140), թուղթ, 21x15, երկսյուն, բոլորգիր (նկ. 81), 21 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

282ա Փա՛ռք... /283բ/ Արդ, գրեցաւ զսուրբ Աւետարանս, ի թվականիս Հայոց ՌձԻԴ. (1678), ի ձեռամբ մեղապարտ եւ զանարժան գրիչ՝ Պետրոս իրիցի, որ լոկ անուամբ միայն եմ յիշելի, զաշխար[հ]ս զԱրարատեան, ի գիւղն Արկուռի, ի ոտն Աւագ Մասեան Նոյեան տապանին, եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, եւ Սրբոյն Յակոբայ Մըծբինա հայրապետին, եւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ի յառաջնորդութեան վանիցս եւ վանորէիցս Դաւթի րաբունապետի ահրեպիսկոպոսի, որ նորոգեաց զիոր Վիրապն եւ լուսաւորեաց ու պայծառացուց բան զառաջինն եւ զայլն ամենայն:

Արդ, յայսմ յամենայն բարութեանց սկիզբն եղեալ եւ եղեւ ցանկացող զսրբասէր եւ զհեզահոգի Յակոբին... որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն եւ հաւրն՝ Յովսէփին, /285ա/ մաւրն՝ Եղիսաբեղին, եղբաւրն՝ Ամիրին, եղբաւրն՝ Կիրակոսին, քերցն՝ Մարիամին, Գաւգալին: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Տէր Աստուած յիշէ զձեզ յիւր միւսանգամ գալըստեանն. ամէն...¹³⁴:

¹³² Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ. Գ., կազմեց՝ Ա. Մալխասեան, Երևան, 2007, էջ 68

¹³³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Խ. վեցերորդ, կազմեց Նորայր եպս. Պողա-

րեան, Երուսաղէմ, 1972, էջ 151:

¹³⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ. Բ., էջ 71-72:

Ժ. ՄՄ ձեռ. Հ^մր 8126, «Մաշտոց»:

Ժէ. դար: Գրիչ՝ Մարուգէ երէց:

Կաշեկազմ՝ երբեմնի ունեցած զույգ կապիչներով (աստառը՝ կարմիր մետաքս), 143 թերթ, թուղթ, 15,7x10,7, միասյուն, բոլորգիր (նկ. 82), 16 տող:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ

135բ Յիշեցէք ի Քրիստոս / զեղկելի հողս / զՄարուգէ գծողս / զՂարասարցի գողս / զմեղաւք լցեալ անցաւորս:

143բ [Փա՛]ռք ամենայսուրբ Երրորդութեանն, Հաւր եւ Որդոյ եւ Հո[գոյ]ն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն: [Որ] ետ կարողութիւն տկար ///ոյ Մարուգէ սուտանո[ւն] իրիցուս յաւարտ սոր[ա]:

Ծնթ. Մի շարք թերթերի (44բ-45ա, 46բ-47ա, 49բ-50ա, 57բ-58ա, 61բ-62ա, 69բ-70ա, 89բ-90ա) ստորին լուսանցներում առկա են գրչության կարճառոտ հիշատակարաններ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ԵՎ ԱԿՈՌԻԻ ԳՐԱԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՄԵԶ ՀԱՍԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

Հ.Պ.	Թվական	Բովանդակություն	Տեղ	Գրիչ	Ծաղկող	Ստացող
Ն. Զուղա 212	ՉԺԵ.-1266	Մեկնութիւն Դաւ- թի ի Վարդանայ	Խոր Վիրապ	Տիրացու		
ՄՄ 3082	ՉԺԶ.-1267	Ժողովածոյ	Խոր Վիրապ, Սաղմոսավանք, Թեղենյաց վանք	Գէորգ Լամբրոնա- ցի, Մանվէլ		Գրիգոր Բջնեցի
ՄՄ 4458	ՌՂԵ.-1646	Աւետարան	Ակոռի	Մարութ քահանա		Մարութ քահանա
ՄՄ 4022	ՌՂԶ.-1647	Աւետարան	Ակոռի	Մարութ		
ՄՄ 6752	ՌՃԺԱ.-1662	Աւետարան	Խոր Վիրապ	Մուրատ դպիր, Անանունք	Մուրատ դպիր	Շայապ
ՄՄ 5413	ՌՃԺԲ.-1663	Աւետարան	Խոր Վիրապ, Ակոռի	Մուրատ դպիր	Մուրատ դպիր	Խլխաթ
ՄՄ 5756	ՌՃԺԵ.-1666	Աւետարան	Ակոռի	Պետրոս դպիր	Պետրոս դպիր, Մուրատ (կազմող)	Եսաջան
ՄՄ 7621	ՌՃԺԶ.-1667	Աւետարան	Ակոռի	Մուրատ եւ Պետրոս դպիր	գրիչները	Սաթըլմիշ
ՄՄ 3825	ՌՃԻ.-1671	Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց	Խոր Վիրապ	Ոսկան աբեղա		Ոսկան աբեղա
ՄՄ 6698	ՌՃԻ.-1671	Աւետարան	Ակոռի	Պետրոս երէց	Մուրատ, Պետրոս երէց	
ՄՄ 10573	ՌՃԻ.-1671	Քէօթուկ Ս. Յակոբայ վանքի	Ակոռի			
Երսղմ. 1797	ՌՃԻԴ.-1675	Աւետարան	Ակոռի	Պետրոս երէց		
ՄՄ 329	ՌՃԻԷ.-1678	Աւետարան	Ակոռի	Պետրոս երէց		Յակոբ
ՄՄ 8126	ԺԷ. դար	Մաշտոց	Ակոռի	Մարութ երէց		
ՄՄ 544	ՌՃԶԹ.-1740	Բառգիրք	Խոր Վիրապ	Ըռաֆայէլ Զուղայեցի		
ՄՄ 7044	ՌՄԻԳ.-1774	Ժողովածոյ	Խոր Վիրապ	Գրիգոր Սիւ- նեցի		Գրիգոր Սիւնեցի
ՄՄ 811	ՌՄԻԴ.-1775	Ժողովածոյ	Խոր Վիրապ	Գրիգոր Սիւ- նեցի		Գրիգոր Սիւնեցի



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*Ես չեմ կարող չհավատալ
Այն գրերին,
Որ խոսում են երկիքն ի վեր
Սուրբ քարերից ավերակի,
Մեր պատմությունն արժնացնում,
Մարդ են դարձնում մեզ եռակի...*

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



Խոր Վիրապի պատմության ար-
ժանահավատ սկզբնաղբյուրներ
են նաև հուշարձանախմբի որ-
մերին, խաչքարերին ու տապանաքարերին
պահպանված վիմագրերը, որոնք ցարդ ամ-
բողջացված ու ըստ հարկի ուսումնասիրված
չեն: Հիմնական պատճառը, թերևս, «Դիվան
հայ վիմագրության» մատենաշարի Արա-
րատի մարզի վիմագրերն ընդգրկող պրա-
կի բացակայությունն է, ըստ այդմ էլ առկա
հրատարակությունները վիմագրագիտական
առումով թերի են և ունեն լրացումների կա-
րիք:

Վերն արդեն նշվեց, որ վանահայր Դավիթ
Վիրապեցու կամ Տփիսիսեցու անվան հետ է
կապված վանքի վերակառուցումն ու միա-
բանության վերահաստատումը: Հենց այդ
ժամանակաշրջանով էլ (Ժէ. դ. երկրորդ կես)
թվագրվում են վանքի վաղագույն արձա-
նագրությունները (բացառությամբ երկու-
սի, որոնցից մեկը կրում է 1181 թ., մյուսը՝
հնագրական առանձնահատկությունները
նկատի առնելով՝ հարազատ է ԺԳ-ԺԴ. դդ.):
Վիմագրերի համահավաք քննությունը կա-
րևորվում է հատկապես վանական համալի-
րի՝ Ժէ. և հետագա դարերում տեղի ունեցած
իրադարձությունների ուսումնասիրման,
կառուցողական ու նորոգչական աշխա-
տանքների, մեկենասների անձի լուսաբան-
ման, ինչպես նաև կոթողային հուշարձաննե-
րի, մասնավորապես՝ ագուցված խաչքարերի
գործառութային նշանակության առումով:

Ստորև ներկայացվում են նախ Ս. Վիրա-
պի ու Ս. Գրիգոր Լուսավորիչ թաղակապ
եկեղեցու, ապա Ս. Աստվածածին գմբեթա-
վոր եկեղեցու վիմագրերը՝ կից գրչագրե-
րով և աշխատության վերջում՝ վիմագրերի
հերթական համարակալմամբ տրված լուսա-
նկարներով¹: Առանձին ենթագլխով անդրա-

դարձ է արվում նաև վանքի շրջափակում
և հարակից գերեզմանոցում առկա տապա-
նագրերին:

Ինչպես վերը նշեցինք, վկայակոչված 69
վիմագրից 53-ն առաջին անգամ է դրվում
գիտական շրջանառության մեջ, մասնավո-
րապես՝ Ս. Վիրապից և Ս. Գրիգոր Լուսա-
վորիչ եկեղեցուց ներկայացված 22 վիմա-
գրից հրատարակված է միայն 9-ը, որից մեկը
ներկայումս չի պահպանվել: Ս. Աստվածա-
ծին եկեղեցու 17 վիմագրից հրատարակված
է 6-ը, իսկ բակից և հարակից գերեզմանոցից
վկայակոչված 26 տապանագրերը հրատա-
րակվում են առաջին անգամ:

¹ Վիմագրերի գրչագրերն ու լուսանկարները
մերն են – Ա. Հ.:


ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- / Տողատման կամ շեղ գծով նշված են բնագրի տողերի սահմանները:
- ... Կետերով նշված են եղծված կամ ջարդված գրերը՝ անկախ քանակից:
- [] Փակագծով նշված են փորագրողի բաց թողած, «պատիվ» նշանով կամ առանց դրա հապավված տառերի կամ տառակապակցությունների վերականգնումները. չեն բացվում «տերունական» յոթ բառերը:
- [] Փակագծով նշված են եղծված կամ ջարդված տառերի վերականգնումները:
- [] Փակագծով նշված են ակներև ավելորդ տառերը:

Ս. ՎԻՐԱՊԻ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Վերը նշվեց, որ Խոր Վիրապի վիմագրերը հիմնականում թվագրվում են ժէ. և հետագա դարերով՝ բացառությամբ 1181 թվակիր մի խաչքարի և մի արձանագիր շինաքարի. վերջինս կրկնակի օգտագործման քար է, որը հակառակ դիրքով տեղադրված է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խորանի աջակողմյան պատի շարվածքում՝ անմիջապես Ս. Վիրապի մուտքի հարևանությամբ։ Նկատի առնելով վիմագրի՝ ԺԳ-ԺԴ. դդ. հարազատ լինելու հանգամանքը և այն, որ վիմագրերն իբրև սկզբունք ներկայացնում ենք ժամանակագրորեն, ուստի նախ վկայակոչում ենք հիշյալ շինաքարի արձանագրությունը, որից հետո կանգրադառնանք վիմագրերի հիմնական խմբին (1181 թվակիր վիմագիրը ներկայացվում է «Օթյաց Խաչ» սրբավայրի մասին խոսելիս, քանի որ այն կրող խաչքարն ագուցված է հիշյալ սրբավայրի տեղում՝ 2015 թ. կանգնեցված խաչարձանի պատվանդանի ետնամասում, տե՛ս արձ. 19)։

1. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. եկեղեցու խորանի աջակողմում, Ս. Վիրապի մուտքի մոտ, գլխիվայր, մասամբ եղծված և դժվար-ընթեռնելի, 6 տող.



...
... «ՍՈՒՂԻԲ ԳՐԻԳՈՐ» ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ...
... ԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՂԻԴ ԵՒ ԶՄԱԿԹՈՐ
... ՔԼԱՆԶԼԱՆԱՅ] ...
... ՔԻ ՍԻՐՈՅՆ ՀԱԻՐ ԵՒ ԻՆՁ... ԱՄԱՐ Է...
... ԶԳՏԱՆՈՒԼ ԶԵՁ ՅԻՇՈՒՑ ՈՒ ՀԱՅ Հ...
... ԱԻ ԽԱԼԻՍՏՈՒՄՆ Ա....:

Խոր Վիրապի վիմագրերի կողքին ժամանակագրական առումով բացառիկ այս արձանագրությունից, ցավոք, քիչ բան է պահպանվել։ Ըստ ամենայնի՝ այն ընդարձակ արձանագրության մի մասն է միայն, այն էլ՝ մասնակի եղծված։ Հնագրական տեսանկյունից ԺԳ-ԺԴ. դդ. հարազատ արձանագրությունն առաջին հայացքից կրոնաբարոյախոսական բովանդակային հենք ունի, ուր Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի կամ նրա անվանակիր տվյալ եկեղեցու որևէ իրադարձությունը պայմանավորված՝ միաբանների (ժողովուրդ) և Մակթոր քահանայի անունից ինչ-որ աղոթք ու աղերսանք է հղվում ի սեր Բրիստոսի։ Մակթոր անձնանվան վերծանությունը երկմտելի է. այլուստ նման անձնանուն մեզ հայտնի չէ։


Վիմագրերի գերակշիռ մեծամասնությունն այս վանքում ժէ-ԺԸ. դարերից են։ Զաքարիա Ագուլեցու հաղորդմամբ՝ վանքի պարիսպների և ներսից կից շինությունների (սեղանատուն, տնտեսատուն, վանատուն, միաբանական խցեր և այլն) կառուցումից անմիջապես հետո իր եղբայր վաճառական Շմավոնը, որն ինչպես օրագրության մեջ, այնպես էլ վիմագրերում հիշատակվում է նաև Սիմոն, Սիամոն անվանաձևերով, 1669 թ. միջոցներ է տրամադրել Ս. Վիրապը և նրա վրայի խարխուլ եկեղեցին վերա-

կառուցելու համար. «Թվին ՌձԺԸ. (1669), մարտի մէկուսն երեւան, որ ես Ջաքարիայ, իմ եխայր պարոն Շմաւոն այսօր ըսկաբն արար Լուսաւորչի Խոր Վիրաբի հորն ու հորի վերայ եկեղեցին շինելոյ... Այս Շմաւոնս շատուց ցանկայր Խոր Վիրաբն շինելոյ, քանզի յին ժամանակաց հորն լցված էր, վերայ եկեղեցին խախթված էր, այս Վիրաբս ավերեալ էր, այլոց, թուրքի ձեռաց էր, անբնակ»²:

Հիշատակությունից պարզվում է, որ մինչ նորոգչական աշխատանքների մեկնարկը, վանքը թուրքերի ձեռքում, անմխիթար ու ամայի վիճակում էր, այստեղից էլ հետևություն, որ մի որոշ ժամանակ Խոր Վիրապում դադարել է վանական կյանքը կամ այն բավական անկանոն է եղել: Եկեղեցու կառուցման աշխատանքները շատ արագ են ավարտին հասել և արդեն 1670 թ. սեպտեմբերի 20-ին այն օծվել է, որի մասին Ջաքարիա Ագուլեցին հաղորդում է. «Թվին ՌձԺԺ. (1670) սեպտեմբերի Ի-ումն (20) շատ վարդապետ, էջմիածնայ աթոռակալ եկին, աւրհնեցին...»³: Նույն թվականին է վախճանվել խոջա Շմավոնը. «Այս Շմաւոնս Ըսպհան թվին ՌձԺԺ. (1670) դէքտեմբերի է.-ումն (7) առ Աստուած փոխեցաւ, ապայ իւր խոստմունքն կատարեցաւ. հորն, թէ եկեղեցին շինվեցաւ, աւրհնեցին, մնաց յիշատակ իւր, թէ իւր ծնողացն, իւր որդոցն, իւր կողակցացն հոյգոյն փրկութեան»⁴:

Շմավոնի մահից հետո նորոգման աշխատանքներին իրենց նպաստն են բերել նաև խոջաներ Ավթանդիլ Թիֆլիսեցին և Մակուեցի Այվազը: Նրանցից առաջինի անունը Շմավոն Ագուլեցու անվան հետ վկայված է եկեղեցու հյուսիսային որմին՝ արտաքուստ, մուտքի վերնամասում գետեղված վիմագրում.

2. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՈՐՄԻՆ, ԿՐԹԱՔՐՈՒՍՏ, 7 տող.



Ի ԹՎԻՆ ՌձԺ. ԵԻ ԼԸ.] ԻՆ (1669), [ՅԱՆԻ] / ՅԱԻՈՒՐՍ ՅԱԿՈԲ ՀԼԱՅՐԱԿԵՆԵՆԵ, / Ի ՅԱՌԱՋՆՈՐ[ՈՐ]ԴՈՒԹԵԼԱՆ.] ՏԵՐ ԴԱԻԹ / ՎԼԱՐԴԱԿԵՆԵՆ, ՆՈՐՈԳԵՑԻՆ ԶՄԲ ԵՎԵՆԴԵ/ՑԼԻՔՍ ԽՕՃԱՅ ՇՄԱԻՈՆՆ ԱԳՈՒ/ԼԵՑԻ ԵԻ ԽՕՃԱՅ ԱԻԹԱՆԴԻԼՆ / ԹԻՓԼԻԶԵՑԻ, ՅԻՇԵՑԻՔ Ի ՔՍ ՍԾ:

Հրատ.՝ Շահխաթունեանց, 396, Ալիշան, 437,

ՎՏ, 187, Տերյան, 31-32,

Հասարակայն, 187, MAK, B. XIII, 77.

Արձանագրության թվագիրն ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք է տվել: Վիմագրի առաջին հրատարակիչ Հովհ. Շահխաթունյանցն այն վերծանել է Հայոց ՌձԺ., այսինքն՝ փրկչական՝ 1661 թ., իսկ Ղ. Ալիշանը՝ ՌձԺԱ. (1662): Երկու դեպքում էլ վերծանությունը չի համընկնում Ջաքարիա Ագուլեցու հիշատակության հետ, համաձայն որի՝ Ս. Վիրապի նորոգումն սկիզբ է առել Հայոց ՌձԺԸ. (1669) թվականի մարտին, Շմավոն Ագուլեցու միջոցներով: Այս առումով Մ. Հասարակյանը կարծում է, թե Շահխաթունյանցը չի կարողացել ընթերցել թվականի միավոր «Ը»-ն, քանի որ նրան չփոթեցրել է գրչի՝ թվականից հետո փորագրած «ԱԱԻ», ապա առաջին «Ա»-ի վրայի «Յ» հավելումը, որը հաջորդ տողում ճիշտ ձևով փորագրել է «ՅԱԻՈՒՐՍ»: Սրանով հանդերձ՝ Մ. Հասարակ-

² Ջաքարիա Ագուլեցի, էջ 80-81:

³ Նույն տեղում, էջ 82-83:

⁴ Նույն տեղում, էջ 83:

յանը վիմագրի սկզբնամասը վերծանում է այսպես. «Ի ԹՎԻՆ ՌՃԺ ԵԻ Ը-Ն (1669) ՅԱԻ ՅԱԻՈՒՐՍ ՅԱԿՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ...»⁵:

Արձանագրության մանրագնին քննությունը պարզում է, որ ՌՃԺ. Թվատառերը հստակ են. դրանց հաջորդող երեք գրերի վերնամասում քարը կոտրված է, սակայն, այն չի խանգարում տառերի ընթերցմանը, որ են՝ ԵԻԻՆ: Եթե առաջին «Ե»-ն ընդունենք իբրև Թվականի միավոր, ստացվում է ՌՃԺԵ., այսինքն՝ 1666 թ., որը դարձյալ չի համընկնում Զաքարիայի հիշատակած Թվականին⁶: Բացի այդ, այս դեպքում անհասկանալի է մնում նաև ԻԻՆ գրերի նշանակությունը: Կարծում ենք՝ վերջին «ԻՆ»-ը Թվագրի վերջավորությունն է, օրինակ՝ ՌՃԺ.-ԻՆ, իսկ «ԵԻ»-ը՝ շաղկապ, որը պետք է կապեր Թվականի առկա գրերը միավոր տառին, որը տվյալ դեպքում բացակայում է: Եթե հիմնվենք Զաքարիա Ազուլեցու վկայության վրա, ապա բաց է թողնված միավոր «Ը»-ն, որով և կամբողջանալով ողջ Թվագիրը: Այսինքն՝ ենթադրելի է, որ մենք գործ ունենք «Ի ԹՎԻՆ ՌՃԺ. ԵԻ Ը.-ԻՆ» կառույցի հետ, պարզապես փորագրիչը միավորի «Ը»-ն վրիպել է: Ինչ վերաբերում է Մ. Հասրաթյանի այն տեսակետին, թե Թվականից հետո փորագրված է «ԱԱԻ», առաջին «Ա»-ի վրա «Յ» է ավելացված, որը հաջորդ տողում ճիշտ ձևով փորագրվել է «ՅԱԻՈՒՐՍ» ձևով, ապա չնայած նրան, որ վիմագրերում նման վրիպակները սակավադեպ են, այդուհանդերձ առաջին տողի վերջին այդ երեք գիրը համարում ենք գրչի վրիպում և վերծանության մեջ նշում ուղիղ փակագծերում:

Ս. Վիրապի ներսում՝ կամարավոր խորշի աջակողմյան որմին ևս պահպանվել է շի-

նություն նորոգմանը վերաբերող վիմագիր, որի վերջնամասը, ուր եղել է նաև Թվականը, ցավոք, ծածկել է առջևում հետագայում կառուցված բեմը: Հետաքրքիր է, որ այս վիմագրում ևս Շահխաթունյանցը, նաև Ալիշանը, Թվականը կարդացել են ՌՃԺ. (1661), որն այդպես էլ մտել է գիտական շրջանառության մեջ: Քաջբերունին ևս, առանց արձանագրությունը վկայակոչելու, նշում է, որ Վիրապի. «փոքրիկ սեղանի հարավային կողմում երևում է քարի վրա արձանագրություն, որ արձանագրում է, թե ազուլեցի Սիմոնը (Շամոն) և նրա ամուսին Գյուլում խաթունը նորոգեցին Սուրբ Վիրապը 1661 թվականին»⁷: Ծանոթագրություններում Քաջբերունու նշած արձանագրությունը նույնացված է վերահիշյալ վիմագրի հետ, ուր չեղտված է նաև այն, թե Մ. Հասրաթյանը հրատարակել է դրա գիտական վերծանությունը և ուղղել Թվականը, որ է՝ ՌՃԺ ԵԻ Ը. (1669)⁸, մինչդեռ Մ. Հասրաթյանն այս վիմագրին չի անդրադարձել, այլ հրատարակել է միայն նախորդը, որը դարձյալ առանց բնագրի վկայակոչման՝ Քաջբերունին հիշատակում է քիչ ավելի ուշ՝ սա ևս Թվագրելով 1661 թվականով. «...1661 թվին նորոգել են երկու եկեղեցիները (նկատի ունի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Աստվածածին եկեղեցիները - Ա. Հ.) ևս ազուլեցի Խոջա Շամոնը և Թիֆլիզցի Ավթանդիլը, որոնց արձանագրությունը երևում է մատրան հյուսիսային պատի վրա»⁹:

Ստորև վկայակոչում ենք Ս. Վիրապի բեմի արձանագրության բնագիրը՝ պակասող մասը լրացնելով նախորդ հրատարակիչներից, Թվականն ուղղում ենք 1669 հավանական համարելով, որ նորոգումներն իրականացվել են միաժամանակ:

⁵ Մ. Հասրաթյան, Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը, էջ 187:


⁶ Վիմագրի ռուսերեն հրատարակության մեջ ևս այս թվականն է նշված (МАК, в. XIII, с. 77):

⁷ Քաջբերունի, էջ 28:

⁸ Նույն տեղում, էջ 409, ծանոթ. 15:

⁹ Նույն տեղում, էջ 28:

3. Ս. ՎԻՐԱՊ. բեմի աջակողմյան որմին,
7 տող.



ՅԻՇԵԱԼ ԼԻ/ՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՔԻ /
ԽԱԻՃԼԱՅ ՍԻՄՈՆ ԵԻ /
ԻԻՐ Բ. (2) ԱՄԼՈՒՍԻՆ ԳՈՒԼՈՒՄ /
ԽԱԹՈՒՆԻՆ ԵԻ.../
[Ն ԴՋԵՅԵԱԼՔՆ, ՈՐ/Ք
ՆՈՐՈԳԵՑԻՆ [ՄԲ ՎԻՐԱՊՍ,
ԹԻԻՆ ՌՃԺԸ. (1669)]:

Հրատ.՝ Շահխաթունեանց, 397, Ալիշան, 437,
ՎՏ, 188, Տերյան, 32, MAK, B. XIII, c. 78.

Վիմագրի որոշ հատվածներ եղծվել ու
անընթեռնելի են դարձել, ըստ այդմ էլ վե-
րականգնել ենք՝ օգտվելով նախորդ հրա-
տարակիչներից: Վիմագրում հիշատակված
խոջա Սիմոնը նույն Շմավոնն է. այս մասին
վկայում է նաև նրա կրտսեր եղբայր Զաքա-
րիա Ագուլեցին. «Թվին ՌՃԺ. (1670) յու-
նիսի ԺԴ.-ումն (14), որ այսօր մեր եխպայր
Սիամոն, որ է Շմալոն, Երևանայ եկաւ Ագուլ-

լիս մին Ի. (20) մարդ յետն, ոմն ֆռանկ, ոմն
երևանցի հայ»¹⁰: Սիմոնի կամ Շմավոնի եր-
կու կանանց՝ Գուլաղին ու Գուլումին, Զա-
քարիա Ագուլեցին քանիցս հիշատակում է.
«Յամի ՌՂ. (1641), որ Քուրդունց Աղամիրի
որդի Շմալոն Ագուլիս Մարխանեց դուստրն
Գուլաղէն առաւ իւր կին»¹¹: Գուլաղի մա-
հից հետո (1660) Շմավոնը երկրորդ անգամ
է ամուսնացել. «Թվին ՌՃԺ. (1661) դեք-
տեմբերի ԺԶ.-ումն (16), որ վերոյ Շմալոնն
Երևան վերստին կարգվեցաւ, քանզի այ-
րի էր: Այս Սիմոնս առաւ Երևանցի խօջայ
Ավէտիսի որդոյ Արզնբէկի կինն, անուն էր
Գուլում, որ է Մաթոսի դուստր»¹²: Հենց այս
երկրորդ կնոջ անունն էլ հիշատակված է վի-
մագրում:

Զաքարիա Ագուլեցին վկայակոչում է
նաև Շմավոնի զավակների անուններն ու
ծննդյան տարեթվերը, մասնավորապես՝ Գու-
լաղից ունեցել է մի աղջիկ՝ Շուշան անունով
և չորս տղա՝ Խանազատ, Երանջան, Գրիգոր,
իսկ մեկը մահացել է փոքր հասակում: Գու-
լումից ունեւր դարձյալ մի աղջիկ՝ Սալվինազ
անունով և երկու տղա՝ Աղամիրը, որ հոր
անունն է և Ահարոնը¹³:

Շմավոնի անունը Սիամոն ձևով հիշատակ-
ված է նաև Ս. Վիրապի՝ նշված խորանի վեր-
նամասում ագուլեցված խաչքարին, ինչպես
նաև եկեղեցու ներսում՝ հարավային որմի
խաչաքանդակ քարին: Ըստ էության Սիմոնը
Երևանի խանության առաջնային ղեմքերից
է եղել. այդ է փաստում Զաքարիայի հետև-
յալ վկայությունը. «Թվին ՌՃԺ. (1668)
հոքտեմբերի ԻԷ.-ումն (27) Ագուլիս, ես՝ Զա-
քարիայ, իմ եխպայր որդի Գրիգորն վեր առի

¹⁰ Զաքարիա Ագուլեցի, էջ 94. ընդգծումը մերն
է - Ա. Հ.:


¹¹ Նույն տեղում, էջ 166:

¹² Նույն տեղում:

¹³ Առավել մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 166-
167:

այսօր, Ագուլաց դուս էլայ, որ գնամ Երևան. քանզի իմ եխպայր Սիմոն Երևան կրկին կարքված էր. համ Երևանայ խանին կշտին էր, համ Երևանայ զառաֆխանէն¹⁴ Սիմոնի զաֆտումն էր»¹⁵, այսինքն՝ Երևանի դրամահատարանը նրա վերահսկողության տակ էր:

4. ԽԱԶՔԱՐ. ագուլցված Ս. Վիրապում, խորանի վերնամասում, 2 տող.



ՆՈՐՈԳԵՑ ՍԲ ՎԻՐԱՊ / ԽԱՄԻՍԱՆ
ՍԻՄՈՆՆ, ԹՎԻՆ ՌՃԺԸ. (1669):

Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած վիմագիրը էական նշանակություն ունի վերոնշյալ արձանագրությունների թվականը վերջնականապես հստակեցնելու առումով: Զաքարիա Ագուլեցու վկայու-

թյան հիմամբ վերն առաջ քաշած մեր այն տեսակետը, թե նորոգումներն իրականացված պիտի լինեն 1669 թվականից ոչ շուտ, փաստվում է նաև նշյալ վիմագրով: Փաստորեն, խաչքարն իր արձանագրությամբ Ս. Վիրապի նորոգման քարեղեն վավերագիրն է, ուր վկայված է ոչ միայն նորոգման ստույգ ժամանակը, այլև մեկենասի անունը: Նախկինում այն ծեփի տակ է եղել և բացվել է վերջին տարիներին իրականացված բարեկարգման աշխատանքների ժամանակ:

Վիմագրերը փաստում են, որ Ս. Վիրապի և նրա վրա կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ թաղական եկեղեցու նորոգման աշխատանքներն իրականացվել են խոջաներ Շմավոնի (Սիմոնի), Ավթանդիլի, Այվազի հատկացրած միջոցներով, 1669 թ.:

5. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հարավային որմին, ներքուստ ագուլցված խաչաքանդակ քարին, 6 տող.



ՍԲ ՎԻՐԱՊ / ԽԱՄԻՍԱՆ ՍԻՄՈՆՆ, ԹՎԻՆ ՌՃԺԸ. (1669):

¹⁴ Բառիս զառաֆխանայ ձևը Ստ. Մալխասյանցը բացատրում է զրահների պահեստանոց, ռազմամթերքի պահեստ իմաստներով (Հայերեն բացատրական բառարան, Կ. Երկրորդ, կազմեց՝ Ստ. Մալխասյանց, Երևան, 1944, էջ 9):

¹⁵ Նույն տեղում, էջ 76:

Ինչպես նկատում է Մ. Հասրաթյանը, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վիմագրերից մեկում հիշատակված է նաև Զաքարիա Ագուլեցու անունը: Այս դեպքում այն վկայված է եղբոր՝ խոջա Սիմոնի անվան հետ մեկտեղ: Ըստ ամենայնի, արձանագրությունը կազմվել է նորոգման աշխատանքների ավարտի նախօրեին, քանի որ ինչպես Զաքարիան է նշում իր օրագրության մեջ, նորոգչական աշխատանքներն ավարտին հասան բավական կարճ ժամանակահատվածում, և եկեղեցու օծումը տեղի ունեցավ 1670 թ. սեպտեմբերին: Մ. Հասրաթյանի հավաստմամբ՝ այն տեղ է մոտ ինը ամիս, հիշյալ տարվա սկզբից մինչև սեպտեմբեր¹⁶:

Վիմագրի ռուսերեն թարգմանության մեջ բովանդակությունն աղավաղված է. «Двери церкви св. Вираба возобновили ходжи Симень, его братъ и... въ льто 1119 (1670 г.)»:

Ս. Վիրապում կիսով չափ պահպանվել է ևս մի երկտող վիմագիր.

6. Ս. ՎԻՐԱՊ. խորանի ձախակողմյան որմին, խաչաքանդակի տակ, 2 տող.




...Ի ՅԻՇԵՑԵՔ ՄԵՂՍ... /
ՈՒՄ ՈՀԱՆ ԲԱԲԸՆ....:

Արձանագրությունը մասամբ ծեփի տակ է: «Բաբըն»-ը պայմանական ենք վերծանել, կարծելով, թե հիշատակված է եկեղեցու վիմագրերից մեկում հանդիպող վերակացու Ոհան բաբան (տե՛ս արձ. 11):

Մեկենասներ Թիֆլիսեցի խոջա Ավթանդիլի և Մակուեցի խոջա Այվազի անունները հիշատակված են նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային որմին՝ երկու կողմում պահպանված կամարակապ խաչաքանդակների և խաչքարերի ստորին մասերում.

7. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հյուսիսային որմին, արտաքուստ, մուտքի վերնամասի երեք կամարակապ խաչաքանդակներից առաջինի տակ, 3 տող.



ԽԱՂԶՍ [Պ]ԲԱՐԵԽՍՍ / ԽԼՕՃԱՅ
ԱԻԹԱՅԵԴԻԼԻՆ, ԹՎԻՆ ՌՃԻ. (1671):

Հրատ.՝ Հասրաթյան, 188:

Թիֆլիսեցի Ավթանդիլի անունը, որը հիշվում էր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորոգման վիմագրում (արձ. 2), վկայված է նաև 1671 թ. նշված խաչաքանդակի հիշատակագրության մեջ, որի հոգու փրկության համար բարեխոսություն է հայցվում Աստծուց: Համոզիչ է դառնում նորոգչական աշխատանքներին վերաբերող վիմագրերի համար ընդունելի 1669 թվականը, որից ընդամենը երկու տարի անց՝ աշխատանքների ավարտից հետո, փորագրվել է խաչաքանդակի հիշյալ արձանագրությունը:

¹⁶ Մ. Հասրաթյան, Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, էջ 214:

Նշված երեք խաչաքանդակներից մյուսների տակ ևս գրություններ կան, պարզապես դրանք անավարտ մնացած, կամ հետագայում լրացնելու համար արված և այդպես էլ չլրացրած վիմագիր «կաղապարներ» են: Տրամաբանորեն խաչաքանդակները պետք է ձոնված լինեին եկեղեցու նորոգչական աշխատանքների ծախսերը հոգացած Զաքարիա Ագուլեցու եղբայր Շմավոնին (Սիմոն), նրա ծնողներին, կնոջն ու զավակներին, որոնց հոգու փրկության համար ևս բարեխոսություն պիտի հայցվեր:

8. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հյուսիսային որմին, նախորդից աջ, 1 տող.


ԽԱԶՍ ԲԱՐԵԽԼՕՍԱ...:

9. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հյուսիսային որմին, նախորդից աջ, 2 տող.

ՄԲ ԽԼԱՂՍ ԲԱՐԵԽՕՍ / ԽԼՕՃԼԱՅ...:

Վերջին վիմագրում առկա «խօճայ» բառը հիմնավորում է մեր վերոնշյալ տեսակետը:

10. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հյուսիսային որմի կենտրոնում ագուլեցված երեք խաչքարերից առաջինի տակ, 2 տող.



ԽԱԶՍ ԲԱՐԵԽԼՕՍ ՄԱԿՈՒԵՑԻ /
ԽՕՃԼԱՅ ԱՅՎԱԶԻՆ:

Հրատ.՝ Հասրաթյան, 188:

Մակուեցի խոջա Այվազը ևս եկեղեցու ու Ս. Վիրապի նորոգման մեկենասներից է, որի անունը վերն արդեն նշվեց:

Մյուս երկու խաչքարերը արձանագրություններ չունեն. դրանք ժամանակակից են եկեղեցուն, այսինքն՝ իրենց քանդակային ու հորինվածքային լուծումներով հարազատ են ժե-ժԸ. դդ.:

Ըստ Զաքարիա Ագուլեցու՝ Շմավոնը Ս. Վիրապի և եկեղեցու շինարարական աշխատանքների վերակացու կամ սարքար (պրսկ. sār-kar – տեր, պետ, տեսուչ, հրամանատար¹⁷) էր նշանակել Երևանցի Հակոբջանի որդի Օհան բաբային. «Սայ վերայկացու դրեց, թէ հորին շինելու, թէ վերայ եկեղեցին շինելու Երևանցի Յակոբջանի որդի Ոհան - բաբէն, որ սարքարութիւն անէ, հսաբն տայ Շմաւոնին»¹⁸: Այդ է վկայում նաև եկեղեցու արևելյան որմի վիմագրերից մեկը:

11. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու արևելյան որմին, արտաքուստ, երեք հավասարաթև խաչաքանդակներով քարին, 3 տող.



ՅԻՇԵՑԷՔԻ ՔՍ ՅՈՀԱՆ ԲԱ/ԲԱԻՆ ԵԼԻՂ
ԻՐ ՆՆՋԵՑԵԱԼՍՆ, ՈՐ / ԷՐ ՎԻՐԱԿԱՑՈՒ
ՄԲ ԵԿԵՂԵՑԵԼԱՅ:

Հրատ.՝ Հասրաթյան, 188:

¹⁷ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 692:

¹⁸ Զաքարիա Ագուլեցի, էջ 82:


Զաքարիա Ագուլեցին տեղեկություններ է հաղորդում նաև երեւանցի Հակոբջանի որդի Ռհան բաբայի հսկողությունը եկեղեցու կառուցման ավարտի և նյութական միջոցների ձեռքբերման վերաբերյալ. «Այս եկեղեցիս ապսպարեց Ռհան-բաբէն, թէ՛ շինէ, ինչ փող որ խարջիս, իմ քեռի Ղուգագէն առ»¹⁹, ապա հավելում, թէ. «Այս Ռհան-բաբէս եկեղեցիս շինեց, ամէն խարջ, թէ ուստի, թէ համալի, թէ իւրն դօնլուղ, դավտարով փողն վէքիլ Ղուգագէն առաւ»²⁰:

Շինարարական աշխատանքներին վերակացու նշանակելու սովորույթը տարածված է հատկապես ուշ միջնադարում: Այս առումով Մ. Հասրաթյանը նկատում է, որ շինարարական գործի նախաձեռնողները վերակացու էին ընտրում ոչ թե քարգործ վարպետներից, այլ համայնքի հեղինակավոր մարդկանցից կամ վանքի միաբանությունից. «Վերակացուները պատասխանատու էին շինարարութեան ողջ ընթացքի, միջոցների ճիշտ ծախսման համար եւ հրաւիրում էին ճարտարապետի կողմից դեկավարուող շինարարների խմբերին, որոնք ուշ միջնադարում չըջիկ էին եւ եկեղեցիներ ու աշխարհիկ խոշոր շէնքեր էին կառուցում իրենց հայրենի բնակավայրերից բաւական հեռու»²¹:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային որմը վիմագրառատ է. հոգեւոր շինությունների հյուսիսային որմերին սակավ հանդիպող այս իրողությունը²², հավանա-

բար, պայմանավորված է կառույցի՝ պարսպի տվյալ հատվածում տեղակայված լինելու հետ, երբ մուտքի համար միակ հարմար որմը հյուսիսայինն է՝ բացված բակից.

12. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻԱՅԻՆ ՈՐՄԻՆ, մուտքից ձախ, խաչաքանդակի տակ, 2 տող.



ԽԻՉՍԵԱՆԵ ԽՕՍՎՐԱ
ՑԻԳՐԱԳՐԻՆ ԲԸԻՃԻՉ

ՄԲ ԽԱՂՁՍ ԲԱՐԵՆՈՍ ՎՐԱ/ՑԻ
ԳՐ[ՈՒ]ԳՈՐԻՆ, ԹՎԻՆՂ ՌՃԾՁ. (1707):

Հրատ.՝ Ալիշան, 437

Գրիգորը, որը Վրացի է հիշվում, ըստ ամենայնի՝ վանքի այցելու-նվիրատուներից է: Նկատենք, որ վանահայր Դավիթ Վերակացին ևս կրել է Վրացի մականունը՝ ծագումով Վրաստանից լինելու համար: Փորագրիչը վիմագրում երկու տեղ վրիպել է. Գրիգոր անվան ի գրի փոխարեն նախ Ո է փորագրել, ապա Ի-ի փոքր ստեղծը կցել Ո-ի երկրորդ ստեղծին, մյուսն էլ թվականի Ծ տասնավորն է, որը զետեղված-հարմարեցված է նախապես փորագրված Խ-ի կիսակլոր մասնիկին:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Մ. Հասրաթեան, Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, էջ 208:

²² Փորագրիչներն արձանագրությունները հիմնականում զետեղել են շինությունների հարավային ու արևմտյան, երբեմն էլ՝ արևելյան որմերին, այսինքն՝ հիմնականում կառույցների արևահայաց որմերին, ինչը բնավ չի կարելի ասել հյուսիսային պատի համար, որը մեծ

մասամբ ստվերում է: Այս առումով բացառություն է նաև Հավուց թառի վանքի «Բլրի» եկեղեցին, որի հյուսիսային որմը ևս պատված է բազում արձանագրություններով:

13. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. *Եկեղեցու հյուսիսային որմին, մուտքից ձախ, 3 սոռ.*

ՄԲ ՎԼԻՂԻԱՊԻՍ ՆԵՐՔՈՅ ՖԱՐՇՆ /
ՅԼԻՇԼԱՏԱԼԻ Է ԱԼՍՍԱՊԼԱՏՈՅԻ ՊԵՏՐՈՍ
ՎԼԱՂԻԱՊԼԵՏԻՆ ԵԼԻՂ ԾԼՆՈՂԼԱՅ
ՆՈՐԻՆ, ԳԼՐԵՅԼԱԻՂ ՌՃԿԸ.ԻՆ (1719):

ՄԲ ՎԼԻՂԻԱՊԻՍ ՆԵՐՔՈՅ ՖԱՐՇՆ /
ՅԼԻՇԼԱՏԱԼԻ Է ԱԼՍՍԱՊԼԱՏՈՅԻ ՊԵՏՐՈՍ
ՎԼԱՂԻԱՊԼԵՏԻՆ ԵԼԻՂ ԾԼՆՈՂԼԱՅ
ՆՈՐԻՆ, ԳԼՐԵՅԼԱԻՂ ՌՃԿԸ.ԻՆ (1719):

Վիմագրում հիշատակված է Ս. Վիրապի ներքին «Փարշ»-ը: Փարշ տերմինը վկայված է նաև Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու հարավարևելյան սյան արևմտյան նիստի վիմագրում. «Յիշատակ է սուրբ եկեղեցու սուրբ դասի Փարշն մաղագործ Բայրամի որդի Յարութին եւ իւր բաժին Եղիսաբեթին, որ Վարդավառին նաւակատեաց պատարազն միշտ եղիցի սոցա հոգուն»²³: Կ. Ղաֆաղարյանը ծանոթագրութեան մեջ քննութեան է առնում միայն մաղագործ բառը, նշելով, որ բոշաներին, որոնցից շատերը նաև Կոնդում էին ապրում, անվանում էին իրենց արհեստի անունով²⁴, ինչպես տվյալ դեպքում, իսկ Փարշ տերմինին, որն ըստ վիմագրի՝ բնորոշում է եկեղեցու սուրբ դասի որևէ հատված կամ կառույց, Կ. Ղաֆաղարյանը չի անդրադառնում:

Փարշ բառը քանիցս հիշատակում է Առաքել Դավրիժեցին, ըստ որի՝ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսն իր շինարարական աշխատանքների շարքում Ս. Էջմիածնի

շրջակայքն ապահովել է քարակապ ֆարշով. «Եւ քարակապ ֆարշն, որ շուրջ զեկեղեցաւն է, և միւս ֆարշն, որ առաջի խցերոյն և այլ տանցն է»²⁵: Պատմութեան աշխարհաբար օրինակում այն թարգմանված է իբրև սալահատակ²⁶:

Այս տերմինը երկիցս վկայված է ՄՄ Հմր 1534 «Յայսմաւորք» ձեռագրի (գրված 1695 թ. Էջմիածնում, գրիչ՝ Գրիգոր, ծաղկող՝ Յովանէս, ստացող՝ Նահապետ կաթողիկոս) գրչութեան ծավալուն հիշատակարանում: Վկայութեաններից մեկը վերաբերում է Եղիազար Այնթապցի (1681-1691) կաթողիկոսի օրոք Ս. Գայանե վանքի շրջակայքը սալահատակ «ֆարշելուն». «Եւ շուրջ զեկեղեցեաւն սալատակ (=սալայատակ) ֆարշեցին եւ կանգնեցին յարեւելեան խաչս բազումս, եւ հաստատահեղոյս պարսպեցին, եւ տնկեցին հուպ այգիս, եւ կարգեցին միաբանս բազումս»²⁷: Հաջորդ հիշատակութիւնը Նահապետ Եդեսացի (1691-1705) կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանին է վերաբերում, երբ ի թիվս այլևայլ բարեկարգումների ու կառուցողական աշխատանքների՝ Սուրբ Աթոռի արևելյան կողմի սալահատակը «ֆարշեցին». «Իսկ ի վերայ յառաջնոց շինուածոցն Սրբոյ Աթոռոյս յաւել եւ զսալատակ ֆարշն յարեւելից կուսէ տաճարին եւ կանգնեաց ի վերայ խաչէրս բազումս...»²⁸:

Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ խոսքը սալարկման մասին է: Այդ է փաստում նաև բառի ստուգաբանությունը. Փարշ, Փարշել բառերն Արարատյան բարբառում բացատրվում են սալահատակ,

²⁵ Առաքել Դավրիժեցի, էջ 261:

²⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 251:

²⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 394:

²⁸ Նույն տեղում:

²³ Կ. Ղաֆաղարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 174, արձ. 105 (15):

²⁴ Նույն տեղում:

սալահատակել նշանակությունը²⁹: Ղարաբաղի բարբառում գործածվում են փարչ, փարչել (փարչիլ) բառաձևերը, որոնք ունեն նաև մեծ կարգի, գորգ, պատերն ու հատակը գորգով ծածկել իմաստները³⁰: Քննվող վիճակագրում, ըստ էության, նկատի է առնվում Ս. Վիրապի ներսի սալահատակը, որն իրագործվել է ի հիշատակ Աստապատցի Պետրոս վարդապետի և նրա ծնողների: Հիշյալ ժամանակաշրջանում Պետրոս վարդապետ Աստապատցի է վկայված Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերից մեկում, որը Մայր Աթոռում զբաղեցրել է աթոռակալի պաշտոնը և վախճանվել 1729 թ.³¹:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատին պահպանվել են նաև համառոտ հիշատակագրություններ, որոշներն էլ վերջին ժամանակներում արված սիրողական փորագրությունների պատճառով անընթեռնելի են դարձել:

14. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. եկեղեցու հյուսիսային որմին, մուտքից ձախ, 2 սող.

ԵՍ ԿԻՐԱՅԿՈՍ
ԸՍՈՐ ԵԿԻ, ԹՎԼԻՆ ԽՄԺԶ

ԵՍ ԿԻՐԱՅԿՈՍ
ԸՍՈՐ ԵԿԻ, ԹՎԼԻՆ ԽՄԺԶ. (1767):

15. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. եկեղեցու հյուսիսային որմին, նախորդի ստորին մասում, 5 սող.

²⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան, Խ. Է., Երևան, 2012, էջ 191:

³⁰ Նույնի Խ. Զ., Երևան, 2010, էջ 355:

³¹ Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 155-156, արձ. 237:

ԵՍ ՄԻՐ ԽՄԺԶ
ՌԻՍ ԵԿԻԲՍԼԻՉԻՆ
ՍԻՄԻՆԱ ԹՎԼԻՆ
ԻՆ ԱՅՍԼԱԳԽԶ

ԵՍ՝ ՏԻ(=Է)Ր ԽԱՉԱՏ/ՈՒՐՍ, ԵԿԻ
ՔՍԿՁԻԾ/Ս ԻՄ Ի ՉԱՐ, ԹՎԻՆ
ՌՄ/ԽԶ. (1797)-ԻՆ, ԱՅՍ ՎԱԼԵԼԻԲ:

Վիճակագրում որոշ հատվածներ կասկածելի ու անհասկանալի են մնում: Քակձիժ տառաշարքը թերևս կսկծից իմաստն ունի, այսինքն՝ տեր խաչատուրը ուխտի է եկել վանք կսկծիժ ունենալով, կսկծից զբաղված:

Խոր Վիրապի հոգևոր կառույցների որմերին պահպանվել են նաև փակագրություններ, որոնց անդրադարձել է վիճակագրատ Ս. Սաղումյանը:

16. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. եկեղեցու արևելյան որմին, արտաքուստ.


ՆԿՎ

ԱՆԻՐԱՎ

Հրատ.՝ Սաղումյան, 88:

Ս. Սաղումյանը փակագրի վերծանումը թեական է թողնում: Այսօրինակ անձնանուն մեզ հայտնի է: Հավանական է, որ այն մականվան իմաստ ունի, ինչպես օրինակ ձեռագիր մատյանների գրիչների դեպքում, երբ իրենց բնութագրում էին փծուն, տրուպ, անարժան և այլ անպատվաբեր մականուններով:

17. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. *Եկեղեցու հարավային որմին, արտաքուստ, 3 տող.*



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒ ԲՆԱԿԻՉ /
ՎԱՐԴԱՆ ՔԼԵԱՆԴԱՐԼԵԱՆՍ ԵԿԻ
ՈՒՐԽՏ Ի ՍԼՐԲԼՈՅ / ՎԱՆՍ ԽՈՐ
ՎԻՐԱՊԱ, Ի 1855 ԱՄԻ,
19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ:

Ալեքսանդրապոլցի Վարդան Քեանդարյանին հիշատակում է նաև Ղ. Ալիշանը: 1859 թ. նրա միջոցներով և անմիջական աշխատության մատուցել է կառուցվել վանքից դեպի արևմուտք գտնվող «Օթեաց Խաչ» կոչվող սրբավայրում, որի վերաբերյալ արձանագրություն է կազմվել: Ղ. Ալիշանը նրան բնորոշում է իբրև սուրբ ուխտի «վանահայր կամ վանապահ» և վկայակոչում արձանագրությունը³², որը մատուցել է նաև միասին ներկայումս չի պահպանվել:

18. «ՕԹՅԱՅ ԽԱՉ» ՍՐԲԱՎԱՅՐ. *մատուցի երբեմնի արձանագրությունը.*

1859 ԱՄԻ, 6 ԱՊՐԻԼ, ՇԻՆԵՑԱԻ ՄԱՏՈՒՌՍ
ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵԻ ԾԱԽԻԻՔ
ՎԱՐԴԱՆԱՅ ՔԵՆՏԵՐԵԱՆՅԻ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՅՈՒ:

Հրատ.՝ Ալիշան, 439:

Ուսումնասիրության առաջին մասում արդեն նկատեցինք, որ Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների հանդիպումը

նշանավորող այս սրբավայրն ու մատուռը հիշատակելով՝ Քաջբերունին շինությունը կառուցված է համարում 1860-ական թթ., իսկ Վիրապի վանահայր Հակոբ վարդապետ Քեանդարյան Ալեքսանդրապոլցու հոգածությամբ: Նշենք, որ Հակոբ Քեանդարյանը եղել է Մուղնիի Ս. Գևորգ վանքի վանահայրը և ըստ գավազանագրքում առկա տվյալների՝ նա նշված վանքում պաշտոնավարել է 1852-1855 և 1857-1859 թթ.³³: Ս. Էջմիածնի միաբան Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանը նրան այսպես է բնութագրում. «Յակովբ վարդապետ Քեանդարեանց Շիրակցի Ալեքսանդրապոլ քաղաքէ, շուշտակ, այր բարբարոյ և հիւրասէր. սորա վանահայրութեան ժամանակին՝ վանքային տնտեսական վիճակն կգտնուէր բաւական պայծառ դրութեան մէջ»³⁴: Ենթադրելի է, որ 1859 թ. Հակոբ վարդապետը Մուղնիից տեղափոխվել ու նշանակվել է իսկ Վիրապի վանահայր (հնարավոր է, որ այստեղ վանահայր է եղել նաև ավելի վաղ՝ 1855-1857 թթ.), որի պաշտոնավարության տարիներին Վարդան Քեանդարյան Ալեքսանդրապոլցու (որն ըստ ամենայնի Հակոբ վարդապետի եղբայրն է կամ մոտ ազգականը) միջոցներով ու անմիջական աշխատության մատուցել է հիշյալ մատուռը: Այս տեսանկյունից էլ կարելի է բացատրել առաջացած շփոթը, որն ըստ էության բխում է Ղ. Ալիշանի կողմից՝ Վարդան Ալեքսանդրապոլցուն իսկ Վիրապի վանահոր հետ նույնացնելուց: Փաստելի է նաև, որ ինչպես Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային որմին, այնպես էլ

³² Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 439:

³³ Ստորագրություն հռչակաւոր վանագ Ս. Գեորգայ, որ ի Մուղնի, գործ *Ստեփաննոս եպիսկոպոսի Մխիթարեան Շիրակացոյ, Դավրեժ, 1889, էջ 33, տես նաև Կ. Մաթևոսյան, Մուղնու Ս. Գևորգ վանքը, կազմեց և խմբագրեց՝ Եզնիկ արք. Պետրոսյան, Ս. Էջմիածին, 2009, էջ 49:*

³⁴ Ստորագրություն հռչակաւոր վանագ Ս. Գեորգայ..., էջ 33:

Ղ. Ալիշանի վկայաբերած վերոնշյալ արձանագրության մեջ հիշատակված Ալեքսանդրապոլցի Վարդանը հոգևոր աստիճան չի կրում և ըստ ամենայնի աշխարհիկ անձ է, որը նախ ուխտի է եկել խոր Վիրապի հոգևակավոր վանքը (1855 թ., դեկտեմբերի 19), ապա իր մերձավոր Հակոբ վարդապետի վանահայրության օրոք՝ 1859 թ. ապրիլին, խոր Վիրապի վանքին հարակից «Օթյաց խաչ» սրբավայրում մատուռ է կառուցել: Մատթեոս Փափազյանցն իր պատկերազրկում նշում է, որ առաքյալների հանդիպումը նշանավորվել է իրենց իսկ ձեռքով ժայռի վրա զույգ խաչանշան դրոշմելով, ապա հավելում, թե. «...այժմ սոյն ժայռի գլուխը առանձին հասարակ քարերից մի շինութեամբ ծածկուած է»³⁵: Պետք է արձանագրենք, որ հիշատակված շինությունը ներկայումս չի պահպանվել:

2015 թ. հոկտեմբերի 25-ին, Ս. Խաչի գյուղտի տոնին, վանքի հյուսիսարևմտյան կողմում՝ պարսպապատից դուրս, կանգնեցվել է յոթմետրանոց խաչարձան (ճարտարապետ՝ Հրաչյա Գասպարյան): Կոթողն օձվել է Մայր Աթոռի Վանորերից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի ձեռամբ և ասում են, թե թեև վեր խաչով պսակված սյունը տեղադրված է հենց «Օթյաց խաչ» կոչվող սրբավայրում: «Առաքելակերտ» այս օջախը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնօրինությանը ու երկու բարեպաշտ հայորդիների նյութական օժանդակությամբ վերստին կյանքի է կոչվել՝ ի նշան մեր հավատի ու ինքնության: Կոթողի պատվանդանի առջևի մասում փորագրվել է ավանդությունը բովանդակող հետևյալ արձանագրությունը.

ԱՍՏ ՊԱՏԱՀԵՑԱՆ ՍՈՒՐԲ
ԼՈՒՍԱՒՈՐԻԶՔՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ ԱՇԽԱՐՀԻ

ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ
ԵՒ ՕԹԵՑԻՆ ԶՄԻ ԳԻՇԵՐ ԱՌ ՎԻՄԱԻՆ
ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻՆ ԶՆՇԱՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ
ԵՒ ԴՐՈՇՄԵԱԼ ԱՆՈՒԱՆԵՑԻՆ
ԶԱՅՆ ՕԹԵԱՑ ԽԱԶ:

Պատվանդանի ետնամասում մակագրված են հիշատակի հետևյալ տողերը.

ՅԻՇԱՏԱԿՆ
ՀԱՅԿ ԱԻԵՏԻՍԵԱՆԼԻ,
ԷԴՈՒԱՐԴ ԵՒ ՍԻԵՏԼԱՆԱ
ԱԽԱԳԵԱՆԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

19. «ՕԹԱՑ ԽԱԶ» ՍՐԲԱՎԱՅՐ. ավանդաբար Տիրոջ սուրբ առաքյալների հանդիպման տեղում՝ 2015 թ. կանգնեցված խաչարձանի պատվանդանի ետնամասում ագուցվել է փոքրաչափ մի խաչքար՝ բերված մոտակայքից: Խաչքարի հորինվածքում աստիճանաձև պատվանդանի վրա կանգնած հիմնախաչն է, որի երկու կողմում մեկական փոքր խաչեր են պատկերված: Հնագետ Հ. Պետրոսյանի համոզմամբ՝ խաչի՝ բարձունքի վրա կանգնեցնելու երևույթը. «...ոչ միայն շեշտում էր խաչի առանձնակի-սրբազան կարգավիճակը, այլև ակնարկում էր Գողգոթայի բարձունքի վրա կանգնեցրած իրական խաչը»³⁶:

Խաչքարի ստորին մասում առկա է հայերեն եռատող արձանագրություն, որը, սակայն, դժվար թե ճշգրտելի է և վերծանությունը տեղ-տեղ պայմանական է մնում:

Արձանագրությունն անվերապահ կարող ենք համարել խոր Վիրապի վաղագույն քարեղեն վկայագիրը, քանի որ ինչպես վերը նշեցինք, տեղի վիմագրերը թվագրվում են ժէ. և հետագա դարերով (ևս մեկը ժԳ-ԺԴ. դդ., տե՛ս արձ. 1):

³⁵ Փափազյանց Մ., Հնությունը վանորեից, գիրք չորրորդ:

³⁶ Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառնությունը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 278:



† ԹՎ[ԻՆ] : ՈԼ: (1181) ԽԱԶՍ
[Ի ԲԱՂԻՐԵ ԽԱՒՍԼՈՒԹԻՒՆ]
[Մ ԽԻԹԱՐԱՅ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ]:

Նմանօրինակ երկբլթակ խաչաթեքերը փաստագրվում են դեռևս Թ-ԺԱ. դարերից: Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցու որմերի ներքին շարվածքում, հատկապես ձախակողմյան գմբեթակիր որմնամուկթին և ձախ ավանդատան դռան վերնամասում ևս նկատելի են կրկնակի օգտագործման շինաքարեր՝ նմանատիպ խաչաքանդակներով. դրանք արված են հնի նմանողությամբ, բայց ավելի ուշ: Հյուսիսային պատի մեջ օգտագործված խաչաքանդակ քարի ստորին մասում ընթեռնելի է [ՅՈՒՎԱՆԷՍԻ անձնանունը (նկ. 30-32): Խոր Վիրապից ոչ հեռու գտնվող Վանստանի վանքից ևս հայտնի են նմանատիպ մի քանի խաչքարեր ու խաչաքանդակներ:

Խոր Վիրապի նշված բլրի վրա կատարած մեր ուսումնասիրության արդյունքում արձանագրեցինք մի ուշագրավ երևույթ ևս, որը հետաքրքիր է հատկապես ազգագրական տեսանկյունից: Բլրի տարբեր մասերում՝ հողի վրա, ուխտավորները մանր քարերից խաչեր

էին կերտել, ինչը մեր կարծիքով միջավայրի՝ «Օթյաց Խաչի» ավանդույթյամբ ձևավորված քրիստոնեության սրբազան օջախ ընկալելու գաղափարախոսության վկայությունն է:

Դառնալով Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վիմագրությանը՝ նկատենք, որ շինության որմերին պահպանվել են նաև ԺԹ-Ի. դդ. տարբեր հիշատակագրություններ, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում հիշատակել.

20. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հարավային որմին, արտաքուստ.

ԵՍ ԱԼԷՔՍՍ

ԵՍ՝ ԱԼԷՔՍՍ...

Ակնհայտ է, որ արձանագրությունը թերի է մնացել: Ամենայն հավանականությամբ, այն Վարդան Ալեքսանդրապոլցու անվանակիր վիմագրերից մեկը պիտի լիներ և առկա հատվածը կարելի է շարունակել այսպես. ԵՍ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՅԻ ՎԱՐԴԱՆՍ, ...:


21. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. հիշատակագրություն եկեղեցու հյուսիսային որմին, արտաքուստ, 2 տող.

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԻՆԱԿ
ՍԱՐԳԻՍԵԱՆ / ՎԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ 1918 Թ.

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԻՆԱԿ
ՍԱՐԳԻՍԵԱՆ / ՎԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ, 1918 Թ.

Արձանագրությունը փորագրված է անվարժ ձեռքով, գրերը և տողերի դասավորությունը՝ անհամաչափ:

22. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ. *Եկեղեցու մուտքի բարավորին, արտաքուստ.*



ՄԱՐԱ ԳՐՈՍ

ՏԱՐԱԳՐՈՍ

Տառերի վրա առկա տարածե գծերից ալինհայտ երևում է, որ անունը փորձել են հետազայում ջնջել: Նկարիչ, ճարտարապետ Տարագրոս Տեր-Վարդանյանը (1878-1953) ճանապարհորդությունների ժամանակ սովորություն է ունեցել իր անունն արձանագրել հուշարձանների որմերին, ինչպես արել է Եղվարդում, Կեչառիսի վանքում, Գեղարդավանքում և այլուր:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Վանական համալիրի կենտրոնում վեր է խոյանում Տիրամորը նվիրված Ս. Աստվածածին գմբեթավոր եկեղեցին, որին արևմուտքից կից է սյունազարդ զանգակատունը: Ուսումնասիրության առաջին գլխում արդեն նշվեց, որ եկեղեցին կառուցվել է ԺԷ. դարի երկրորդ կեսին, Դավիթ Վիրապեցու վանահայրության օրոք: Ծարտարապետական տեսանկյունից այն գմբեթավոր դահլիճի հորինվածքով և մեկ զույգ որմնամույթերով կառույց է (գծանկ. 2 ա, բ, նկ. 22-25)՝ նման Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցուն (վերջինս կառուցված

է Նահապետ Եղեսացի կաթողիկոսի օրոք՝ 1694 թ., Աղամալ Նախիջևանցու միջոցներով): Ավագ խորանի երկու կողմում ուղղանկյունաձև ավանդասենյակներն են, միակ մուտքը արևմտյան կողմից է: Նորակառույց եկեղեցին մեծապես վնասվել է 1679 թ. երկրաշարժից, ապա վերակառուցվել 1703 թ.:

Եկեղեցու շինարարության փաստի առնչությամբ առանձնանշելի է արևելյան պատի կենտրոնում՝ արտաքուստ, խորանի լուսամուտից վեր ագուցված՝ Հայաստանում քրիստոնեության ընդունումը խորհրդանշող հարթաքանդակի մեջ զետեղված վիմագիրը.

23. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. եկեղեցու արևելյան որմին՝ հարթաքանդակի մեջ (գրչանկարը՝ գեղանկարիչ Գևորգ Համբարձումյանի).



ՏՐ ԴԱԻԹ ՇԻՆՈՂ ԵՒ ՍՊԱՍԱԽՈՐ՝ ՄԲ / ՎԻՐԱՊԻՍ, ԱՂԱԻԹԼՍ՝ ՅԻՇ ԼԵՑԷՔ:
ՄԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍ/ԱՒՈՐԻԶ:

Հրատ.՝ Ալիշան, 439, Փափագեանց, 4-րդ գիրք, Հասարկյան, 190, MAK, Ե. XIII, 76:

Վիմագրում տեր Դավիթը Ս. Վիրապի «չինոդ եւ սպասաւոր» է հիշվում, որով մեկ անգամ ևս չհշտվում է նրա վանահայրութեան օրոք վանքի վերակառուցումը: Ղ. Ալիշանն առանց արձանագրութիւնը վկայակոչելու՝ գրում է. «Ի ստորեւ են քանդակապատկերք Տրդատայ, Աշխենի, Ս. Լուսաւորչի, և այլն, հանդերձ անուամբք, առ որովք թուեցաւ ումեմն նշմարել թուական ՅԻԱ. (872)»³⁷: Թերեւս Ալիշանին հետեւելով՝ վիմագիրն աղավաղված ենք գտնում նաև Մ. Փափազյանցի պատկերագրքում, որ հետեւյալն է. «Տրդատ թագաւոր, Աշխէն և սպասաւորք Խորվիրապայ թաղեալ 321 թիւ»³⁸:

Վիմագրի ճշգրիտ վերծանութիւնը տալիս է Մ. Հասրաթյանը, որն անդրադառնում է նաև Ալիշանի վերծանութեանը, ըստ որի՝ վերջինս վիմագրի սկզբնամասը կարդացել է «ՏՐԴԱՏ» (ըստ էութեան նկատի է առնում Ղ. Ալիշանի նշած քանդակապատկերները անուններով թվարկելը)՝ չնկատելով «տէր» բառի վրա առկա «պատիվ» նշանը, իսկ վերջին չորս տառերն ընդունել է իբրեւ թվագիր, այսինքն՝ «ԹՎԻՆ» ՅԻԱ. (872)»³⁹: Նկատենք, որ «Թ»-ն «ԱՂԱԻԹ» բառի վերջին գիրն է, որին հաջորդում է «ՅԻՇԵՑԻՔ» բառի կրճատ «ՅԻՇ» ձևը: Ինչ վերաբերում է քանդակին, ապա այն ժամանակակից է եկեղեցուն և կարելի է թվագրել ժէ. դարավերջով:

Անդրադառնալով հիշյալ եկեղեցու ճարտարապետական հարդարանքին՝ Մ. Հասրաթյանը նկատում է, որ որմերի արտաքին միապաղաղութիւնը փոքր-ինչ մեղմվում է. «...վերին մասով ձգվող դեղնասպիտակավուն ֆելզիտից գոտիով, հարավային պա-

տի լուսամտի վերեւում խաչաձև շարված քարերով, տարբեր տեղերում ագուցված խաչաքանդակներով, ինչպես նաև գմբեթի թմբուկի տասներկու նիստերի ու արեւելյան ճակտոնի զարդաքանդակներով»⁴⁰ (նկ. 22-23, 37-40): Ինչ վերաբերում է եկեղեցու ներքին հարդարանքին, ապա այստեղ աչքի են ընկնում հատկապես հարավային և հյուսիսային որմերի խորանաձև խորշերի վերնամասի բավական նրբարվեստ զարդաքանդակները, բեմառէջքի վարդյակները, մուտքի խաչքարաձև փայտե դուռը և այլն (նկ. 27-29, 34-35): Նշվածներից, սակայն, առանձնանում է արեւելյան պատի քրիստոնեական պատկերագրութեամբ վերահիշյալ բազմաֆիգուր հարթաքանդակը, որի հորինվածքային մանրամասները ճարտարապետը փորձել է վերլուծել: Քանդակի աջ մասում Ս. Գրիգոր Լուսավորչին է, որի ձախ ձեռքին Սուրբ Գիրքն է, իսկ աջով օրհնում ու դիվահարութիւնից բուժում է գետնատարած Տրդատ արքային: Լուսավորչի երկու կողմում մեկական հրեշտակներ են, իսկ քանդակի ձախ կողմում՝ երկու անձ, որոնցից մեկը՝ թագակիր: Տրամաբանորեն այն պետք է Աշխեն թագուհին լինի, իսկ նրա նախորդը՝ Տրդատի քույր Խորովիդուխտը: Նրանց ոտքերի տակ առկա Դավիթ Վիրապեցու անվանակիր վերոնշյալ արձանագրութիւնը հիմք ընդունելով՝ Մ. Հասրաթյանը ենթադրել է, որ Աշխենի տեղում հոգեւորական է պատկերված և նա եկեղեցին վերակառուցող Դավիթ Վիրապեցին է, իսկ Դավիթից ձախ՝ անհայտ մեկը: Նկատենք, որ պատկերաքանդակում առկա բոլոր կերպարները կրում են լուսապսակներ: Քանդակի աջ եզրին գալարվող օձ է պատկերված՝ գլուխը Ս. Գրիգոր Լուսավորչի ոտքերի տակ. պատկերագրութիւնն ըստ Մ. Հասրաթյանի՝ «խորհրդանշում է օձերի հարեանութեամբ

³⁷ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 439:

³⁸ Մ. Փափազեանց, Հնութիւնք վանօրէից, գիրք չորրորդ:

³⁹ Մ. Հասրաթյան, Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը, էջ 190:

⁴⁰ Նույն տեղում:

սրբի՝ Վիրապում անցկացրած տարիները»⁴¹: Չնայած նրան, որ Տրդատի և Աշխենի թագերն առաջին հայացքից հոգեւորականի խույր են հիշեցնում, այդուհանդերձ դրանք թագեր պետք է դիտել, առավել ևս, որ մեր քանդակագործության մեջ, դեռևս զարգացած միջնադարում, հանդիպում են նաև նմանօրինակ թագեր, ինչպիսիք կարելի է տեսնել Հաղբատի ու Սանահինի վանքերի կոթողակա պատկերաքանդակներում:

Փաստելի է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատի (նաև՝ խոզակերպ), երբեմն՝ Աշխենի և Խոսրովի դուխտի, վիշապ-օձի և, ընդհանրապես, Վիրապի դժոխքում բազմիցս պատկերվել է ոչ միայն պատկերաքանդակներում (ինչպես օրինակ՝ Օձունի վաղմիջնադարյան կոթողի պատկերաքանդակները, ուր տեղ են գտել քրիստոնեության ընդունման ու տարածման հետ առնչվող դրվագներ՝ խոզակերպ Տրդատը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Հռիփսիմի դամբարանը, խաչերը պարզած սուրբ զինվորներ և այլ սուրբ կերպարներ, նկ. 99-100), այլև հայ մանրանկարչության մեջ⁴², սակավ նաև՝ որմնանկարներում⁴³:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Մաշտոցյան Մատենադարանի որոշ ձեռագրերից (ՄՄ ձեռ. Հ^մ 986, 1585, 1920, 2639, 3306, 6260, 6272, 8219) արված թեմատիկ ու լուսանցային մանրանկարչության լուսանկարները տրված են աշխատության վերջում (նկ. 83-98):

⁴³ Ս. Գրիգոր Լուսավորչի վարքը, ի մասնավոր՝ չարչարանքները, լավագույնս դրսևորված են Անիի Ս. Գրիգոր կամ մեկենաս Տիգրան Հոնենցի անունով հայտնի եկեղեցու (1215 թ.) որմնանկարներում (նկ. 101-102): Սա մեզ հասած այն բացառիկ կառույցներից է, որի ողջ ներսույթը կից գավթի և մատուռի հետ միասին հարդարված է որմնանկարներով. գմբեթին՝ «Համբարձման», գմբեթարդին՝ «Բարեխոսության», ապա «Հաղորդության» տեսարաններն են ու ավետարանական թեմաները. սրանց շարքում տեղ են գտել նաև Ս. Գրիգոր Լուսավորչի վարքը, Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը, Հայաստանում քրիստոնեության տարածումը պատկերող դրվագները (տե՛ս *Ա. Յ. Կակովսկի*, *Роспись церкви Григория Тиграна Оненца (1215 г.) в Ани: иконографический состав и идейный замысел*, ԲԵՀ, 1983, թիվ 2 (50), էջ 106-114, *Մուրադ Հասրաթյան, Նիկոլայ Քոթանջյան*, Տիգրան Հոնենցի եկեղեցի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 1014-1015):

Հնագետ Հ. Պետրոսյանը, խաչքարերի համալիր ուսումնասիրության համատեքստում, անդրադառնում է նաև հայկական վաղմիջնադարյան քանդակին՝ շեշտելով, որ «4-7-րդ դարերի այդքան բազմազան քանդակում Քրիստոսի խաչելության տեսարանն ընդհանրապես բացակայում է»⁴⁴: Ըստ հնագետի՝ խաչելությունը հաճախ այլաբանորեն է ներկայացվել, ինչպես օրինակ՝ փրկություն ստանալու համար աղոթող - խնդրառուի պատկերազրույթները, որը խաչքարային հորինվածքում արտահայտվել է խաչ բռնած երկու ձեռքերի տեսքով (խաչբուռ): Այս երևույթը արտահայտվել է նաև աղոթյալի՝ դիմացինի ոտքերից բռնելու կամ դիպչելու պատկերազրույթամբ (ինչպես Տրդատ արքայի և Ս. Գրիգոր Լուսավորչի դեպքում), ինչի վառ օրինակ է Խոր Վիրապի հիշյալ հարթաքանդակը⁴⁵: Ազաթանգեղոսի երկում այսպիսի է շարադրված նաև Տրդատ արքայի ու նախարարների՝ Գրիգորից ներողամտություն հայցելու պատմությունը. «Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն՝ բուռն հարեալ ունէին զոտից սրբոյն Գրիգորի և ասէին. «Խնդրեմք ի քէն, թող մեզ զյանցումն մեր, զոր մեք ընդ քեզ արարաք»»⁴⁶:

Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապում անցկացրած տարիները խորհրդանշող հարթաքանդակի թեմատիկան սերտորեն աղերսվում է աստվածաշնչյան Դանիելի կերպարի հետ, որի մարգարեության առյուծների գբում (Դանիէլ Զ. 16) տեսարանը հաճախ արտա-

րող դրվագները (տե՛ս *Ա. Յ. Կակովսկի*, *Роспись церкви Григория Тиграна Оненца (1215 г.) в Ани: иконографический состав и идейный замысел*, ԲԵՀ, 1983, թիվ 2 (50), էջ 106-114, *Մուրադ Հասրաթյան, Նիկոլայ Քոթանջյան*, Տիգրան Հոնենցի եկեղեցի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 1014-1015):

⁴⁴ Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար..., էջ 57:

⁴⁵ Նույն տեղում, էջ 57-58, նկ. 53:

⁴⁶ *Ազաթանգեղոս*, էջ 1408:

ցուվել է վաղ քրիստոնեական քանդակային արվեստում ու տարածում գտել զարգացած միջնադարում⁴⁷ (Աղցք, Աղջոց վանք, Աղթամար) (նկ. 103-105): Արվեստաբան Լիլիթ Զաքարյանը, Աղջոց Ս. Ստեփանոս վանքի քանդակային արվեստը քննելիս, հատուկ ուշադրություն է արժանացրել այս երևույթին՝ նշելով, որ. «...հայոց հիշողության մեջ Դանիելի կերպարը դարեր շարունակ գուճորդվում էր խոր Վիրապը նետված, օձերի մեջ երկար տարիներ ապրած ու ողջ մնացած սուրբ Գրիգոր Լուսավորչի հետ»⁴⁸: Դանիելին գույգ առյուծների կենտրոնում պատկերող Աղջոց վանքի հարթաքանդակի գոյությունը Ժ. Դարում արվեստաբանը պայմանավորում է երկրում տիրող քաղաքական դժվարին կացությանը, երբ. «...նորից հայտնվում է Փրկության հարացույցի կարևորագույն, իր կենսագրությանը բոլոր ժամանակների համար այժմեական կերպարներից մեկը՝ Դանիելը»⁴⁹: Այս տեսակետից Դանիելի կրած չարչարանքները, առյուծների գբում մնալը, և տեսիլքներն իրենց ողջ ընդհանրության մեջ կարող են նախատիպ համարվել Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց «վիրապյան» դրվագների համար:

⁴⁷ «Դանիելն առյուծների գբում» տեսարանն արտացոլող պատկերագրությունը լայն տարածում ունի նաև համաշխարհային արվեստում (*Francisco de Asis Garcia Garcia*, Daniel en el foso de los leones, Revista Digital de Iconografía Medieval, vol. I, n. 1, 2009, pp. 11-24):

⁴⁸ Լ. Զաքարյան, Աղջոց Ս. Ստեփանոս, Երևան, 2007, էջ 40-41:

⁴⁹ Նույն տեղում, էջ 42: Տեղին է նկատում Հ. Հակոբյանը, երբ նշում է, որ Գրիգորի կենսագրության առանձին հատվածներ բավական նման են հին Աստվածաշնչյան պոեմներին և իբրև օրինակ բերում զորավար ու կուսակալ Դանիելին հավատի համար Դարեհ արքայի հրամանով առյուծների հորը նետելու պատմությունը (Հ. Հակոբյան, Գրիգոր Լուսավորչի լեգենդի հիմնարկային և միջերկրածովյան զուգահեռները, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», էջ 28, 34):

Ս. Աստվածածին եկեղեցու արտաքին որմերին գեղարվեստական տեսք են հաղորդում նաև չորս ճակտոններին ագուցված համաժամանակյա խաչքարերը, որոնցից երեքն արձանագիր են: Խաչքարերն իրենց քանդակային պարզ դեկորատիվ արվեստով կրկնում են Վաղարշապատի Ս. Շողակաթ⁵⁰, Մուղնիի Ս. Գևորգ, Երևանի Զորավոր Ս. Աստվածածին, Ս. Հովհաննես, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին և ժամանակակից այլ եկեղեցիների որմերին ագուցված խաչքարերը⁵¹: Հ. Պետրոսյանը, առանձին կանգնած խաչքարերի օրինակով նշում է, որ ԺԶ-ԺԷ. դդ. խաչքարային հորինվածքում ի հայտ է գալիս մի ուղղություն, ուր «...վարդյակն առանձնանում է խորանից, անգարդ խաչախորքը, «բուսական» արմավազարդն ու խաչը հստակորեն պահպանում են այս խմբի հորինվածքի առանձնահատուկ տեսքը»⁵²: Հավելենք, որ քննության ենթակա խաչքարերը երկզված են հյուսածո պարզ զարդանախշերով, հիմնախաչը, որը դարձյալ պատկերվում է հյուսածո ոճով, ունի անգարդ խաչախորք, արմավազարդ, իսկ

⁵⁰ Ս. Շողակաթ եկեղեցու որմերին արտաքուստ ագուցված խաչքարերի ու դրանց արձանագրությունների մասին տես մեր հետևյալ հոդվածը. (Ա. Հարությունյան, Ս. Հռիփսիմեի և Ս. Շողակաթի վանքերի որմերին ագուցված խաչքարերի նորահայտ վիմագրերը, «Էջմիածին», 2011, Ե., էջ 88-94):

⁵¹ Այս տիպի խաչքարերի հորինվածքի, գործառույթի և հիշատակագրությունների վերաբերյալ վերջերս զեկուցում կարդացինք ՀՀ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտնականների 14-րդ միջազգային գիտաժողովին (Ա. Հարությունյան, ԺԷ-ԺԸ. դդ. եկեղեցիների որմերին ագուցված խաչքարերը. հորինվածք, գործառույթ, հիշատակագրություն, «Ազգաբանություն, հնագիտություն, բանագիտություն» երիտասարդ գիտնականների 14-րդ միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, Երևան, 2015, էջ 31-33):

⁵² Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար..., էջ 201:

վարդյակն ընդհանրապես բացակայում է հորինվածքում:

Մինչ խաչքարային հիշատակագրություններին անցնելը՝ տեղին ենք համարում վկայակոչել անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի այն միտքը, թե հուշարձանների գեղարվեստական հարգարման կարևոր մաս կազմող ագուցված խաչքարերը «...ստվորականից ավելի կարճ են լինում և նրանց վրա գրվում են շինության մեկենասների հիշատակագրությունները»⁵³: Այս բնորոշումը վերաբերում է նաև մեր կողմից քննվող խաչքարերին ու նրանց հիշատակագրություններին, որոնցում վկայված անձնավորություններին անվերապահ հակված ենք համարելու եկեղեցու շինարարության կամ նորոգման աշխատանքների մեկենասներ:

24. ԽԱԶՔԱՐ. ագուցված Ս. Աստվածածին եկեղեցու հարավային որմին, արտաքուստ, 4 տող.



ՄԲ ԽԱԶՍ ԲԱՐԵ/ԽԱԻՍ ՇԱԽԿԵՂՏՑԻ
ՄԻՐԻ/ՄԱՆԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԼԻԻՆԻՆ /
ԵՒ ՊՕՂՈՍԻՆ, ԹՎԻՆ՝ ՌՃԾԲ. (1703):

Հրատ.՝ MAK, B. XIII, 77.

Վիմագրի ռուսերեն թարգմանությունը տեղ է գտել Կովկասի հնագիտության նյու-

⁵³ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 132:


թերի ժողովածուում. այն սխալաշատ է, չարագասությունը՝ խառնված. «И Погося въ 1152 (1703 г.) Св. Крестъ-предстатель за Арутюна, сына Армана изъ Шоката»: Մեր վերծանության հիմամբ՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումը. Միրիմանի որդիներ Հարությունն ու Պողոսն, ըստ էության, նյութապես օժանդակել են եկեղեցու վերակառուցմանը, որի դիմաց նրանց անվանակիր խաչքար է կերտվել ու ագուցվել եկեղեցու շարվածքում: Շախկերտ (Շաղկերտ) կամ Շահկերտ գյուղը Նախիջևանի Երնջակ գավառի ներկայիս Ղազանչի գյուղն է, որը պատմական աղբյուրներում վկայված է դեռևս ԺԳ. դարից: Գյուղը հարուստ է միջնադարյան հուշարձաններով. պահպանվել են Ս. Հովհաննես եկեղեցու ավերակները, Ամենափրկիչ վանքի գմբեթավոր եկեղեցին, բերդ-ամրոցը, կամուրջը և այլն⁵⁴: Նախիջևանագետ Ա. Այվազյանը նշում է, որ «հին շահկերտցիների մի ստվար մասը բնակություն է հաստատել Շուշի քաղաքում, ուր հիմնել են Ղազանչեցվոց թաղը և եկեղեցին»⁵⁵: Շախկերտում զարգացած է եղել նաև գրչարվեստը, որի վերաբերյալ, ցավոք, կցկտուր տեղեկություններ են մեզ հասել. ՄՄ Հ^մ 2153 երկու տարբեր ձեռագրերից կազմված «Ժողովածոյ»-ի հիշատակարաններից մեկում կարդում ենք ձեռագրի հետագայի ստացող Շախկերտցի Մեսրոպ երեցի անունը. «Ես՝ Մեսրոպ էրէցս, ըստացա սուրբ տառս ի ձեռաց անօրինաց, որ ի գերութենէ, ի թուականիս մերում ՌՃՀԸ. (1729), սերգեմբերի մէկ, Շախկերտ»⁵⁶:

⁵⁴ Տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 56:

⁵⁵ Ա. Այվազյան, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Դ., Երնջակ գավառ, Երևան, 2008, էջ 112:

⁵⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է., էջ 232:

25. ԽԱԶՔԱՐ. ագուցված Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան որմին, արտաքուստ, 3 տող.



ՄԲ ԽԱԶՔԱՐ ԲԱՐԵԽԱԻՍ ԽՕԶԱՅ
ԲԱԼՍՂՏԱՄԻՆ / ԵՒ ՈՐԴՈՅՆ ՊԱՐՈՆ
ՍՏԵՓԱՆԻՆ ԵՒ ԱՅԼՈՅՆ,
ԹՎԻՆ ԹՃԾԲ. (1703):

Հրատ.՝ MAK, B. XIII, 77.

Վիմագրի ռուսերեն թարգմանության մեջ հրատարակիչը թույլ է տվել որոշ վրիպակներ, մասնավորապես՝ խոջա Բաստամի անունը կարդացել է Սիմեոն: Առաջին անձնական Ա և Ս գրերը կցագիր ընդունելով՝ մենք այն կարդում ենք «Բաստամ»՝ չբացառելով «Բատամ» («Բադամ») անվան հիշատակումը, որն ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է պարսկերեն *bādam* «նուշ» բառից և գործածական է եղել ոչ վաղ անցյալում⁵⁷: Բաստամը հիշատակված է իբրև խոջա, այսինքն՝ վաճառական, իսկ նրա որդի Ստեփանը կրում է «պարոն» հարգական տիտղոսը: Անկասկած, նրանք ևս մասնակցություն են ունեցել եկեղեցու կառուցման գործում: Նկատենք մի կարևոր հանգամանք ևս. խաչքարերը կրում են 1703 թ., այսինքն հենց այն տարին, երբ եկեղեցու վերակառուցումն ավարտվեց:

26. ԽԱԶՔԱՐ. ագուցված Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային որմին, արտաքուստ, 3 տող.



ՄԲ ԽԱԶՔԱՐ ԲԱՐԵԽԱԻՍ ՎԷԹՅԻ
ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵ/ՏԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ:

Այս արձանագրությունը ռուսերեն թարգմանությունների հրատարակիչը չընթանցել է՝ համարելով թերավարտ⁵⁸: Վիմագրում հիշատակված է Ղազար վարդապետը, որը տվյալ ժամանակաշրջանում վանքի վանահայրն է եղել, քանի որ Դավիթ Վիրապեցին եկեղեցու վերակառուցման ավարտին արդեն վախճանված էր († 1695): Ղազար վարդապետն ըստ ամենայնի ընթացող շինարարական աշխատանքների վերակացու հոգևորականն է եղել և խաչքարերից մեկը կերտվել է ի բարեխոսություն նրա ու իր ծնողների: Նա ծագումով «Վէթցի» կամ «Վիթցի» է, այսինքն՝ Վեդիից. դեռևս ԺԳ. դարի վիմագրում հանդիպող բնակավայրը «Վետի» ձևով հիշատակում է նաև Զաքարիա Ագուլեցին⁵⁹:

Ղազար վարդապետի անունը կարդում ենք Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի Հ՞ր 32 (հին Հ՞ր 47 Ա.) «Ժողովածոյ» ձեռագրի հիշատակագրություններից մեկում, որը ենթադրաբար գրված է ռուսահայոց առաջնորդ Հովսեփ

⁵⁷ Անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 359:

⁵⁸ MAK, B. XIII, c. 77.

⁵⁹ Զաքարիա Ագուլեցի, էջ 7:

արք. Արղունթյանի ձեռքով: Գիրը գետեղված է երկրորդ հատորի վերջում, այսպես. «Խորվիրապայ առաջնորդ Ղազար վարդապետն յետ աւերութեան երկրի ի հայրապետութեան Տեառն Ղազարու կաթողիկոսին, որ եկեալ է ի Ղալչան, ունեցեալ է ընդ ինքեան եւ սպասաւոր ոմն Սրապիոն. նա ասացեալ է թէ Ամենայն անօթն Խորվիրապայ, ի մտանելն յեկեղեցին, ի ձախակողմն խորանին, գոյ պահարան, անտի հանեցաք քար իմն, անօթն լցաք եւ անդէն փակեցաք, որ կայ մինչեւ ցայժմ: Զայս ասաց մեզ քիլցի Ազարի որդի Ամիրայ կոչեցեալ պարոն Յարութիւն, 1793 ի Գրիգորիոսյոյ»⁶⁰: Գրութիւնը պարզում է, որ Դավիթ Վիրապեցու մահից հետո վանահայրութեան պաշտոնը ստանձնած Ղազար վարդապետը, թերեւս ընդմիջումներով պաշտոնավարել է նաեւ Ղազար Ա. Զահկեցի (1737-1751) կաթողիկոսի օրոք և հոգ տարել վանքի ունեցվածքի պահպանութեան համար:

Խաչքարերով աչքի է ընկնում նաեւ եկեղեցու բեմառէջքը՝ հարդարված չորս ագուցված խաչքարերով և վարդյակաձև բուսական զույգ զարդաքանդակներով (նկ. 33): Բոլոր խաչքարերն ունեն հիշատակագրութիւններ, որոնցից միայն մեկն է հրատարակված:

27. ԽԱԶՔԱՐ. ագուցված եկեղեցու բեմառէջքին, աջից առաջինը, 5 տող.




ՄԲ ԽԱԶՔԱՐ ԲԱՐԵԽ/ԱԻՍ ՄԿՐՏՈՒՄԻՆ, / ԻՍՐԱԷԼԻՆ, ՄՈՎՍ/ԷՍԻՆ ԵՒ ԻԻՐ ԾՆՈՂԱՑՆ, / ԹՎԻՆ ՌՃԾԷ. (1708):

Հրատ.՝ Ալիշան, 439:

Ղ. Ալիշանը երկրորդ անձնանունը կարդացել է Իսմայլ, չնայած որ անվան երկու տառի կցադրումը ՄՄ-ի փոխարեն կարելի է վերծանել նաեւ ՄՐ, այսինքն՝ Իսրայել: Ներկայացվող մյուս խաչքարերը թվագրված չեն, սակայն քանդակային ու հնագրական առանձնահատկություններից դատելով՝ դրանք ևս կարելի է թվագրել ԺԸ. դարասկզբով:

28. ԽԱԶՔԱՐ. ագուցված եկեղեցու բեմառէջքին, աջից երկրորդը, 1 տող.




⁶⁰ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 183:

ՄԲ ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ ԲՍՏԱՑԻ
ԱԻԵՏԻՔԻՆ:

Ավետիքը, որն, ըստ ամենայնի, վանքի այցելու-նվիրատուներից է, ծագումով Բիստ (Բուստ, Բստո) գյուղից է, որը գտնվում է ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանում՝ Գիլան գետի ձախափնյա բարձրության վրա: Բնակավայրը հիշատակվում է դեռևս ԺԳ. դարից: Հայտնի է իր պատմական հուշարձաններով՝ Ս. Նշան անապատով (կոչվել է նաև Կարմիր կամ Բուստա վանք), Ս. Աստվածածին վանքով ու Ս. Սարգիս եկեղեցիով, կամուրջներով: ԺԵ. դարում գյուղում զարգացում է ապրել գրչարվեստը. հայտնի են Հակոբ Բիստեցի գրիչը, Մկրտիչ ծաղկողը⁶¹:

29. ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ ԵԿԵՂԵԳՈՒ ԲԵՄԱՆԷՋԻՆ, աջից երրորդը, 4 տող.



ՄԲ ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ Է ԱՌ / ԱԾ ՎԼԱՍԻՆ
ՂԱՐԱՅԲԱՂՑԻ / ԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ԻՒՐ
ՀԱՅՐ / ՀՈՎՍԷՓԻՆ:

30. ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ ԵԿԵՂԵԳՈՒ ԲԵՄԱՆԷՋԻՆ, աջից չորրորդը, 3 տող.



ՄԲ ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ ԱԿՈՒԵՑԻ / ՏԼԷՐ
ՆԻԿՈՂՈՍԻՆ ԵՂԲՈՐՆ ՄՈՎՍԷՍԻՆ:

Հատկապես այս վերջին հիշատակաբերությունը կարևորվում է Խոր Վիրապը Ակոուի հետ կապող իրողության ևս մի վկայությամբ, և այս անգամ՝ վիճաբանական: Աշխատության երկրորդ գլխում ուշադրություն դարձրինք այս երկու գրչության կենտրոնների փոխառնչություններին. այս դեպքում հիշատակված է, թերևս, Ակոուից Խոր Վիրապ ուխտի եկած և ինչ-որ նվիրաբերում արած Մովսես Ակոուցին, որի անունով նաև խաչքար է կերտվել:

Ս. Աստվածածին եկեղեցու որմերին՝ վերջին տարիներին արված տարատեսակ խզրոցների մեջ, տեսանելի են նաև որոշ փակագրեր ու հակիրճ գրառումներ:

31. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. եկեղեցու արևմտյան որմին՝ մուտքից աջ, արտաքուստ, 2 տող.

ՄԲ ԽԱՂՁՍ ԲԱՐԵԽՕՍ Է ԱՌ / ԱԾ ՎԼԱՍԻՆ
ՂԱՐԱՅԲԱՂՑԻ / ԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ԻՒՐ
ՀԱՅՐ / ՀՈՎՍԷՓԻՆ:

ԽԱՂՁՍ ԹՈՐՈՍ ԳՐՈՂԻՆՆՈՂՈՐՄԻ,
ՌՃՁՁ. (1737):

⁶¹ Տեղանունների բառարան, հ. 1, էջ 696:

Փակագրված է միայն անձնանունը, իսկ մնացածն արտահայտված է կցագրերով: Հետևելով Ս. Սաղումյանին՝ առկա խաչաքանդակը ԽԱԶ բառիմաստով ներմուծել ենք վերծանություն մեջ: Թվականի ձ-ն, ինչպես նկատել է Ս. Սաղումյանը, կցված է Ռ-ին, որը եզակի համառոտագրություն է⁶²: Վերջերս, կցագրված թվական մեզ հանդիպեց նաև Ս. Էջմիածնի միաբանական կացարանի որմերին ագուցված խաչքարերից մեկի վիմագրում⁶³:


32. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. Եկեղեցու հյուսիսային որմին, արտաքուստ.



ՄԱՐԿՕՍ

Հրատ.՝ Սաղումյան, 90:

33. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. Եկեղեցու հյուսիսային որմին, նախորդի հարևանությամբ, 1 տող.



Ի ԹՎԻՆ՝
ՌՄԻ. (1771):

Միայն թվագիրն է՝ փորագրված անվարժ ձեռքով:

34. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ. Հիշատակագրություն հարավարևմտյան մույթի արևմտյան նիստին, 5 տող.

ԵՍՏՐԴԱՏ ԶԱԼԱՌ
ԵԱՎԱԻ ՌԵՏՈՒՆԵԱՑ
ՀԱԵԿ ԳԻՒԼԱՑԻ 1919 ԹԱՆ
10 ՎԱՇՏՈՎԱ ԵԿԱՅ ԱՅՍՏԵՂ
ՊԱՀԱԿ

ԵՄ ՏՐԴԱՏ ԶԱԼԱՌ/ԵԱՆ, ՎԱՆԻ
ՌԵՏՈՒՆԵԱՑ / ՆԱՐԵԿ ԳԻՒԼԱՑԻ,
1919 ԹՎԻԱԿՂԱՆ / 10 ՎԱՇՏՈՎԱ ԵԿԱՅ
ԱՅՍՏԵՂ / ՊԱՀԱԿ:

Վիմագիրը կարևոր տեղեկատու է 1919 թ. քաղաքական դժվարին ժամանակներում՝ Խոր Վիրապում տիրող իրավիճակի մասին: Մեծ եղեռնի տարիներին հրաշքով փրկված բազմաթիվ հայեր, բռնելով գաղթի ճամփան, ապաստան գտան Արևելյան Հայաստանում ու աշխարհի տարբեր երկրներում: Համաձայն արձանագրության՝ Վանի նարեկ գյուղից Տրդատը «10 վաշտով», ինչ-որ խումբ հավաքած եկել է Խոր Վիրապի վանք, դարձել «պահակ» ու կազմակերպել տեղի անվտանգությունը:

35. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ. Հիշատակագրություն նախորդի մոտ, 6 տող.

1920 Թ. 9 ՄԱՐՏ
ՅԻՉԱՏԱԿ ԵՍ ԿԸ
ՄԵՌՆԵՄ ԻՍԿ ԴՈՒ
ՄՆԱ ՅԱԻԻՏԵԱՅ,
ԱՆԿԱՍՏԻԱԾԱՏ
ՌՐԵՆԿ. ԴԱՐԱԼԵՆԳԵԶԱ.

1920 թ. 9 ՄԱՐՏ / ՅԻՇԱՏԱԿ, ԵՍ ԿԸ /
ՄԵՌՆԵՄ, ԻՍԿ ԴՈՒ / ՄՆԱ ՅԱԻԻՏԵԱՅ,
ՅՈՎՀԱՆՆԵՍ
ԱԼՍՆՏՈՒԱԾԱՏ/ՌՐԵԼԱՅ,
ԴԱՐԱԼԵՆԳԵԶԱ:

Անվարժ փորագրությամբ աչքի ընկնող արձանագրության վերջում հիշատակված «Դարալենգեզա»-ն Դարալագյազ գավառն է (Միկոյան շրջան), որը գոյություն է ունեցել ԺԸ. դարից մինչև 1929 թ.: Ըստ տեղանվանական բառարանի՝ համապատասխանել է պատմական Սյունիք աշխարհի Վայոց ձոր կամ Եղեգիս գավառին, իսկ 1929 թ. նրա

⁶² Ս. Սաղումյան, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, էջ 89:

⁶³ Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 117, արձ. 111:

տարածքից կազմավորվել է ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջանը, 1956 թ.-ին մասնատվել է երկու շրջանների՝ Ազիզբեկովի և Եղեգնաձորի⁶⁴, որն ընդգրկում է ներկայիս ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջանը:

36. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. եկեղեցու արևմրտյան որմին, մուտքից աջ, 7 տող.

ԱՅՍ ԱՅՆ ՍՆ... / ՎԼԱՐԴԼԱՊԵՏԻ Է,
ՈՐ / ՄԵՌԱՆԵԼՈՒՆ / ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ /
ԵՐԵՒԱԿ ԹԷ ԳՐ / ԻԳՐ ԼՈՒՍԱՐՈՆ
ՄԵՍԻ ՊԱՄԻՆ

ԱՅՍ ԱՅՆ ՍՆ... / ՎԼԱՐԴԼԱՊԵՏԻ Է,
ՈՐ / ՄԵՌԱՆԵԼՈՒՆ / ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ /
ԵՐԵՒԱԿ, ԹԷ ԳՐ/ԻԳՐ ԼՈՒՍԱՐՈՆ
/ ՏԵՋՍԻ ՊԱՏՆՈՒԼԻՐԼԱԿ:

Վանքը պարսպապատ է. հարավային կողմում, արտաքուստ, ագուցված է պարսպի նորոգմանը վերաբերող արձանագիր ուղղանկյունաձև սալ.

37. ՊԱՐԻՍՊ. արձանագիր քար՝ ագուցված հարավային պարսպապատին, արտաքուստ, 5 տող.

ՇԻՆԵՑԱԿ ՈՐՄՍ ԱՐ/ԴԵԼԱՄԲ ԵԻ
ԴԵՄԲԵԻ ԾԱԽՈՒԲ
ԳԱՆՁԱԿԵՑԻ ԻՍԱՀԱ/ԿԵԱՆՑ
ԵԶԱՐՑ, Ի 23 / ՄԱՅԼԻՍԻ, 1886 ԱՄԻ:

ՇԻՆԵՑԱԿ ՈՐՄՍ ԱՐ/ԴԵԼԱՄԲ ԵԻ
ԾԱԽՈՒԲ / ԳԱՆՁԱԿԵՑԻ ԻՍԱՀԱ/ԿԵԱՆՑ
ԵԶԱՐՑ, Ի 23 / ՄԱՅԼԻՍԻ, 1886 ԱՄԻ:

Վիժագիրը վկայում է, որ պարսպապատի նորոգումն (քիչ հավանական է, որ կառուցմանը վերաբերի) իրականացվել է 1886 թ., ծագումով Գանձակից Իսահակյանց եղբայրների միջոցներով ու հոգածությամբ:

38. ՊԱՐԻՍՊ. արձանագիր քար՝ ագուցված արևելյան պարսպապատի կամարակապ մուտքի աջակողմում, արտաքուստ, 3 տող.

ՊԱՐԻՍՊ. ԳՐԻԳՈՐ /
ԴՈՒՍ ԶԵՆԱՄԲ
ՈՒՍՏԱԼՅԱՆ ԴԱՋԼԱՐԻՆ ՇԻՆԵՑԱԿ:

ՊԱՐԻՍՊ. ԳՐԻԳՈՐ /
ԴՈՒՍ ԶԵՆԱՄԲ
ՈՒՍՏԱԼՅԱՆ ԴԱՋԼԱՐԻՆ ՇԻՆԵՑԱԿ:

Գրիգորը, որն իրեն Քրիստոսի ծառա է բնորոշում, թերևս փորագրիչն է, իսկ ուստա, այսինքն՝ վարպետ Ղազարը, պարսպապատի մուտքի կառուցման աշխատանքներին մասնակցած շինարարներից կամ քարգործ վարպետներից է: Տառաձևերից դատելով՝ գիրն առավել հարազատ է ԺԸ. դարին, ինչը վկայում է, որ նախորդ արձանագրությունն իրապես վերաբերում է պարսպապատի նորոգմանը:

39. ԲԱԿ. խաչաքանդակ շինաքար՝ Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում, գիրը քարի վերին ձախ անկյունում վնասված է, 5 տող.



[ՄԲ] / ԽԱ/ԶՍ ԱՂ/ՏԻԲԱ/ԲԻՆ:

⁶⁴ Տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 50:

Աղտիբաբ (միգրացիոն Աղտիբաբ) անձնանվան վերծանությունը պայմանական է: Հր. Աճառյանը հիշատակում է իրանական ծագման Աղտիբաբ արական անձնանունը, որը հանդիպում է ԺԵ. դարից հետո գրված մի հիշատակարանում⁶⁵: Դատելով տառաձևերից՝ գիրը հարազատ է ԺԵ-ԺԸ. դդ.:

40. ԱՂԲՅՈՒՐ. 1991 թ. վանքի շրջափակի հարավարևելյան կողմում աղբյուր-հուշարձան է կառուցվել (Լ. Դիլանյանի նախագծով), որի թիկունքին զետեղվել է հետևյալ արձանագրությունը, 10 տող.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ի ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ Տ. ԳՈՒՐԳԵՆ
ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ
ԱՐԴԵԱՄԲ ԿՈՒՏԵԱՆՑ,
ԿԱՄԻԴԵԱՆՑ, ԿԱԴՐԻԿԵԱՆՑ.
ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԵՒ
ԿԱՌՈՒՑԱԻ ԱՂԲԻՐՍ Ի ԹՈՒԻՆ
ՌՆԽ. 1991 Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ
ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ:
Լ. ԴԻԼԱՆՅԱՆ:

41. ՎԱՆԱՏՈՒՆ. 2009 թ. արգենտինահայ բարերարներ Գրիգոր և Օֆելյա Դերձակյանների միջոցներով նորոգվել է վանահոր կացարանը, ինչի մասին է վկայում շինության արևմտյան պատին փակցված մարմարյա սալի արձանագրությունը, 7 տող.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ
Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Ի
ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԾԸ. ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ
2009 ՆՈՐՈԳԵՑԱԻ ԿԱՑԱՐԱՆՍ
ՎԱՆԱՀՕՐ ԽՈՐ ՎԻՐԱՊԱՅ ՎԱՆՈՒՑ
ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ
ՕՖԵԼԵԱՅԻ ԴԵՐԶԱԿԵԱՆ,

ՈՐՔ Ի ԲՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ. ԱՐԳԵՆՏԻՆԱ,
ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀՍ ԵՒ ՎԱՐՁՍ
ՊԱՐԳԵԻԵՍՑԵ ՆՈՑԱ ՏԷՐ
ԵՒ ՕՐՀՆԵՍՑԷ ԶԱՄԵՆԵՍԵԱՆ. ԱՄԷՆ:

42. ԽԱԶՔԱՐ. վանքի արևելյան կամարակալ մուտքը բարձրացող ճանապարհի աջակողմում 2013 թ. կանգնեցվել է Զուղայի խաչքարերից մեկի կրկնօրինակը (նախագիծը՝ Վարազդատ Համբարձումյանի, քանդակագործ՝ Արտակ Համբարձումյան, նկ. 109): Ձի անտեսվել նաև խաչքարի արձանագրությունը, որը փոքր-ինչ աղավաղված է. մենք այն ներկայացնում ենք ըստ Արզամ Այվազյանի վերծանության.

ՄԲ ԽԱԶՍ ՅԼԻ ԵԼԱՍԼԱԿ
ՇԱՐԱՆԻՆ, ՓԻՐԱՍՆԷ ԵՒ ՈՐԴՈՒՆ ԻԶ...⁶⁶:

Լուսանկարի հետ համեմատելով՝ երկրորդ անունը հակված ենք կարդալ ՓԻՐԱԿԷ:

Վարդյակի շուրջը թվագիրն է.
ԹՎԻՆ ԸԼ. (1581):

Պատվանդանի առջևի մասում փորագրված է կանգնեցմանը վերաբերող արձանագրություն, 6 տող.

ԿԱՆԳՆԵՑԱԻ ԽԱԶՔԱՐՍ Ի ԴՈՒՌՆ
ՎԱՆՈՒՑ ԽՈՐ ՎԻՐԱՊԱՅ
ՍՐԲՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՁԻՆ
ՆՈՒՐԱՏՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏ
ՀՐԱԶԵԱՅ ՄԻՍԱԿԻ ՊՕՂՈՍԵԱՆԻ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2013:

Պատվանդանի աջ կողմին նշված է. «Զուղա, 1581, կրկնօրինակ»:

⁶⁵ Անձնանունների բառարան, հ. Ա., էջ 113:

⁶⁶ Ա. Այվազյան, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Ա., Զուղա, Երևան 2004, էջ 75, արձ. 305:

ՏԱՊԱՆԱԳԻՆԵՐԸ

Խոր Վիրապի վիմագրական ժառանգության անբաժանելի մասն են նաև տապանազրերը: Նախորդ գլուխներում տարբեր առիթներով արդեն նշվեց, որ վանքի ներսում և շրջակայքում հնուց ի վեր թաղումներ են արվել: Պահպանված վկայությունների համաձայն՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան կողմում են հանգչում մատենագիր Վարդան Արևելցին և Ժ. Գ. դ. վանահայր Ներսես վարդապետը, որոնց անվանակիր տապանաքարերը բացվել են վանքի՝ 1660-ական թթ. վերաշինման ժամանակ, ապա ծածկվել հողով:

Քննություն ատնված տապանազրերը թվագրվում են ԺԷ. և հետագա դարերով. դրանք ներկայացվում են ստորև, ժամանակագրական կարգով.

Վանքի՝ ԺԷ. դարի բազմադյուն վանահայր Դավիթ Վիրապեցին թաղված է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատի հարևանությունը: Վերջինիս անունով չափածո տապանազիր է զետեղվել եկեղեցու նշված որմին:

43. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ. եկեղեցու հյուսիսային որմին, արտաքուստ, 11 տող.

ՔԻՏԱՊԱՆԱՍԱՄՓՈՒՆ
 ԵՆԵՆԻՅԱՆՆԵՏԻ ՈՐԵՎԱՌՔԱՄԱՔԻ
 : ՕՔՄԹՈՐԻՔԱՌՎԱՆԻ ՄԵԾԱՀԱՄԱՏՔԱԶԵՆԻ
 ԱՀԱՄԻՏԷ ԶԱՀՈԳԻ ԱԶՆՈՒՄՈ ՀՄՅԱԶԳՔԱՄՅԻ
 ԱԼԵՄԱՄԷԷԶՄԵԾՆԻՇԻՆՕՂՀԻՄԵՆ ՕՂԱՐՈՒԹԻՍԵԷՆՈՐՈԳ
 Ի ՎԻՄՔԱՆԵՆԵՑԵԱՅՍ ԵՄ ՊԱՄՊՔԱՆԻՆԻՄԻՆԻՄԻՆԻՄ
 ՊԵՄԻՆԱՄԱՂԵՆԶԱՅՍ ԱՄԵՐՉԻՆԵՑԱԶԳԻՔ ՈՒՄԵՆԱԶԵՆԱ
 ԱՇԽԱՆԻՄՔԱՓՈԽԵԱԿԵՆԵՆԻՍ ԻՀԱԿԿԱՆՈՒՄԻՆԻՍԻՍ
 ԻԵՂԵՆՈՐԶՕՐԵՆԻՍԻՆԵՆՔԵՏԻՎԱՅԵՆՈՐՈՒՄԻՆԻՍԻՆ
 ԼԵՑԱՐԻՆԻՍՍՈՐԵՆ՝ ԶՍԱՅԻՇԵՍՉԻՔԱՌԻՔԱՌԵՆ՝ ԻՍԱՄԲՈՂ
 ՊԱՏԱԳԻՆՍԱԶՆԱԿԵՅԵՐԳՍԱԾԱՍԻՆ >

Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ԱՄՓՈՒՓԻ
ՄԱՐԴՄԻՆ ԴԱԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ,
ՈՐ ԷՐ ՎԱՐՈՒՔ ԱՌԱՔԻՆԻ,
ԿԵԼՆ/ՕՔ ՄԱՔՈՒՐ, ԲԱՐՈՒՔ ԲԼԱՐԻ,
ՄԵԾԱՀԱԿԱՏ, ՔԱԶ ԵՒ ԲԱՐԻ,
ԽՈՆ/ԱՐՀԱՄԻՏ, ՀԵԶԱՀՈԳԻ,
ԱԶՆՈՒԱՏՈՀՄ ՅԱԶԳԷՂ ՎՐԱՅԻ, /
ԲՆԵԱԼ ԻՂ ՄԲ ԷԶՄԻԱԽՆԻ,
ՇԻՆՕՂ, ՀԻՄՆՕՂ ՍՐԲՈՅՈՒԽՏԻՍ,
ԵՒ ՆՈՐՈԳ/ՈՂ ՍՐԲՈՅՈՒՎԱՆԻՅՍ
ԵԿԵՂԵՑԵԱՅՍ ԵՒ ՊԱՐՍՊԻՍ,
ԱՆԴՆԴԱԽՈՐ ՄԲ ՎԻՐԱՊԻՆ /
ԿԵՆԴԱՆԱԹԱՂ ԳԵՐԵԶՄԱՆԻՍ,
ԼՈՒՍԱԻՈՐԶԻՆ ՄԵՐՈՅ ԱԶԳԻՍ,
ՈՐ ՎՃԱՐԵԱՅ ԶԿԵԱՆՍ / ԱՇԽԱՐՀԻՍ
ՎԵՐԱՓՈԽԵԱԼ Ի ՅԵՐԿՆԱՅԻՆ,
Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ
ՌՃ/Խ. ԵՒ Դ. (1695) ԱՄԻՆ,
ՈՐ ԶՕՐԷՆԻ ԿԻՐԱԿԷԼԻՆ,
ՓԵՏՐՎԱՐ Ժ. (10) ԵՐՐՈՐԴԻՆ,
ՈՐՔ ՎԱՅԵ/ԼԷՔ ՅԱՐԴԻՆՍ ՍՈՐԻՆ,
ԶՍԱ ՅԻՇԵՍՋԻՔ ԱՌ Ի ԲԱՐԻՆ,
Ի ԺԱՄ ՍՐԲՈՅ/ ՊԱՏԱՐԱԳԻՆ,
ՅԱՂԴԱԻԹ Խ ԵՒ ՅԵՐԳՍ
ԱԼՍՏՈՒԱԽԱՅԻՆ:

Հրատ.՝ Շահխաթունեանց, 396, Ալիշան, 438-439,
Փափագեանց, 4-րդ դիրք, ՎՏ, 200 (պակասավոր):

Տապանագիրն առաջին հերթին բացառիկ է եկեղեցու պատին փորագրված լինելու առումով, ուր ոչ միայն ընդգծված է Դավիթ վարդապետի դրական վարքագիծը (առաքինի, կենօք մաքուր, բարուք բարի, մեծահաւատ, քաջ եւ արի, խոնարհամիտ, հեզահոգի), այլև շեշտվում է նրա հոգածությամբ վանքը վերահիմնելու, կառուցելու ու նորոգելու ազգանվեր գործը (շինող, հիմնող սրբոյ ուխտիս, եւ նորոգող սրբոյ վանիցս, եկեղեցեացս եւ պարսպիս, անդնդախոր Ս. Վիրապիս): Դավիթ Վիրապեցին վախճանվել է 1695 թ. փետրվարի 10-ին, «գորէնի կիրակէին», որն ինչպես Ղ. Ալիշանն է գրում.

«այսինքն է Բ. կիրակէի Մեծի պահոց, յորում պաշտի շարականն, որ զՕրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին, և այլն»⁶⁷:

Վիմագրի որոշ հատվածներ ներկայումս անընթեռնելի են դարձել. վերականգնել ենք՝ հիմք ընդունելով Հովհ. Շահխաթունյանցի վերծանությունը: Ղ. Ալիշանն ակնհայտորեն օգտվել է Շահխաթունյանցից՝ բաց թողնելով արձանագրության՝ չափածոյի տեսքով ներկայացված 10րդ և 23րդ տողերը:

Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ՝ Խոր Վիրապում է թաղված նաև Սպահանի և Զուղայի երբեմնի առաջնորդ Ստեփանոս վարդապետ Զուղայեցին: Խոսելով Նահապետ Ա. Եդեսացի կաթողիկոսի մասին՝ պատմագիրը փաստում է նրա եկեղեցաշեն գործունեությունը, միաժամանակ նշում նաև խիստ ու հիշաչար վարքագիծ ունենալու մասին: Ստեղծված խառնակությունների արդյունքում Ստեփանոսը կարճ ժամանակով և ոչ պաշտոնապես գրավում է հայրապետական գահը (1695-1696), բայց ինչպես Զաքարիան է փաստում. «... ոչ կարաց վարել զիշխանութիւն կաթողիկոսութեան: Քանզի Նահապետին բազումք կային բարեկամք թէ՛ ի մերում աշխարհիս և թէ՛ յԱսպահան, որք ոչ կամէին զկաթողիկոսութիւն Ստեփանոսի...»⁶⁸: Այս դեպքերից հետո Երևանի Փարզալի խանի հրամանով Ստեփանոսին ու նրա համախոհներին տուգանում են Ռ. (1000) թուման ու նետում բանտը: Ժամանակ անց Ստեփանոսին տեղափոխում են մի մոլթ զնդան, ուր. «... ի զազրութենէ հոտոյն և յաճմանէ հերացն և ի բազմանալ որթանցն վշտացեալ՝ մեռաւ անդէն և ըստ կտակաց նորին տարեալ ի Խոր-Վիրապն՝ և թաղեցին անդ ի թուին Ռ և Ճ ի Խ և է և ի յունուար Դ.»⁶⁹:


⁶⁷ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 439, ծանոթ. 1:

⁶⁸ Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն, էջ 169:

⁶⁹ Նույն տեղում:

Ստեփանոս վարդապետի տապանաքարը չի պահպանվել կամ այն արձանագրություն չունի, ըստ այդմ անհայտ է մնում գերեզմանի ստույգ տեղը:

44. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Հարթ ուղղանկյունաձև, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատին կից՝ անմիջապես վերոնշյալ արձանագրության ուղղությունամբ, գիրը՝ 8 տող.



ԱՍՏ ՀՈՂԷ ՅԱՐԿԻ ՅՈՒՐ ԴԱՄԲԱՆ
ԿԱՏԱՐԵՅԱՆ ՏՈՒ ՅԱՖԻՏԵԱՆ
ԱՄՓՈՓԵՑԱԴԻ ՏԻ ՅԱԿՈՎԲԱՅ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԼԷՐ-ԱՎԵՏԻՔԵԱՆ,
ՈՐ ՎՃԱՐԵԱԼ ՅԻՐ ՄԱՀԱՑՈՒՆ
ՀԱՌՈՅ ԻՐՅՆ ԵՄՈՒՏ Ի ՔՈՒՆ,
ՈՐ ԵՒ ԼՍԵՅՄ ՓՈՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ,
ԱՐԺԱՆԱՅԼԱԴԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԼԱՆ: 1828:

Չափածո վիմագիրը կրում է տեղական բարբառի ազդեցությունը: Վեցերորդ տողում անհասկանալի է «հաւոյ իրցն» կապակցությունը: Առաջին հայացքից տապանաքարը պետք է որ Դավիթ Վիրապեցու չիրմաքարի տեղում լինի, քանի որ եկեղեցու պատի տապանագրային շարադրանքը անմիջապես սրա ուղղությունն է. այս դեպքում մնում է հավանական համարել, որ Հակոբ վարդապետ Տեր-Ավետիքյանին, որն ըստ էության վանքի վանահայրն է, թաղել են իր նախորդներին Դավիթ գերեզմանին կից:

ԺԹ. դարի 7 տապանաքար կա նաև զանգակատան հյուսիսային կողմում. դրանցից 5-ն արձանագիր են.

45. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, հարդարված է բուսական եզրագրերով, վերնամասում ունի ոճավոր խաչաքանդակ, որի տակ տապանագիրն է, 10 տող.



ԱՅՍ ԴԱՊԼԱԿՆ ԲԵԿ/ԶՂԱԶԼԼՈՅ
ՍԱՐԳԱ / ՄԵԼԻՔՍԱՅԵԱ ԶՏԼԷՐ-/
ՍԱՀԱԿԵԼԱԿՆ, ՈՐ ՀԱԼԵԿ/ԵԱԻ ԱՌ ՏՐ /
1857 ԱՄԻ / ՆԿԱՐՈՂ ՏԱ/ՊԱՆԻՍ,
ԵՍ՝ Վ/ԱՍԻԼԸՍ, / 1859:

Ակնհայտ է, որ փորագրիչն անվարժ է եղել, գրերն անհամաչափ ու անկանոն են, ինչի արդյունքում փոքր-ինչ թերի է մնում վերծանությունը: Տապան բառը փորագրված է դապան ձևով, ընդ որում ա-ի փոքր ստեղծը բաց է թողնված: Նկատելի են նաև «պատիվ» նշանի անհարկի օգտագործման դեպքեր. օրինակ՝ սկզբի այս բառի կամ զ նախդիրի վրա: Երկմտելի է մնում սարգա տառակապակցությունը, որը, թերևս, ինչ-որ պաշտոն

կամ կոչում է բնորոշում: Մեկիքսայ անձնանունը, որն այլուստ մեզ չի հանդիպել, միգուցե Հր. Աճառյանի հիշատակած Սայմելէք կամ Սայմելիք⁷⁰ իգական անձնանվան ձևափոխված տարբերակն է, որն այսկերպ գործածվել է իբրև արական անձնանուն:

Ննջեցյալը ծագումով Բեկջղազլու գյուղից է, որը ներկայիս ՀՀ Արարատի մարզի Ոստան գյուղն է: Տեղանվանական բառարանում այն վկայված է նաև Բեկջազալու, Բեկջիազլու, Բեկջիվազլու, Բեկջիդազլու անվանաձևերով: Երևանի նահանգի նույնանուն գավառի Բեկջիդազլու գյուղի անունը առաջացել է թուրքերեն բեկ (ազնվական) և ջիազ (օժիտ) բառերից, որ փոխաբերական իմաստով նշանակում է հարուստի օժիտ⁷¹:

Ուշագրավ է վիմագրի վերջնամասում գետեղված վարպետ Վասիլի անվան ստորագրությունը, որն իրեն բնորոշում է նկարող (կամ հնարող) տապանի: Տապանագրային ներկա համատեքստում նկարող ասելով պետք է նկատի առնել տապանաքարի քանդակագործին, որն, ի տարբերություն վիմագրի անվարժ փորագրություն, բավական արհեստավարժ է աշխատել:

46. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, գիրը՝ 8 տող.



⁷⁰ Անձնանունների բառարան, հ. Դ., էջ 389:

⁷¹ Տեղանունների բառարան, հ. 1, էջ 649:

ԱՅԼՍ] Է ՏԱՊԱՆ / ՀԱՆԳՈՅԵԱԼ / [Խ] ԶԻՆՆՈՎՆԻԿ / ՀԱՃԻ ՂԱԶԱՐ / ՏԼԵՂ-ՍԱՀԱԿԵԱԼ]Ց / ԲԵԿԺԻՂԱԶԼԼՈՒԻ ԳԵ/ՂԱ, ՎԱԽՃԱՆ ԵՂԼԵԻ / 1878 ԱՄԻ, 22 ՄԱՐՏԻ:

Հաջի (հաճի), այսինքն՝ մահտեսի Ղազար Տեր-Սահակյանցը տապանագրում հիշատակված է իբրև «չիննովնիկ», այսինքն՝ աստիճանավոր, պետական պաշտոնյա, որ ներկայումս արհամարհական նշանակություն է գործածվում⁷²: Զիննովնիկ բառին նախորդող Խ-ն համարում ենք ավելորդ, քանի որ այն որևէ կերպ չի կապվում շարադասություն հետ: Ննջեցյալը ծագումով դարձյալ Բեկջիդազլու, ներկայիս Ոստան գյուղից է: Ազգանունների ու միևնույն բնակավայրից ծագումով լինելու ընդհանրությունները թույլ են տալիս կարծել, որ այս և վերոնշյալ տապանագրում հիշատակված անձինք հարազատներ կամ համագյուղացիներ են:

47. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, գիրը՝ 7 տող.

ՏԱՊԱՆԱՆՈՒՍԱ
ՀՈԳԻԲԱՐՍԵՂԻ
ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱ
ՊՏԵԱՆ ԻՒՎԱ ՅԵ
ՍԻ ՎԱԽՃԱՆԵԱԼ
1881 Ե 18 ԴԵԿՏԵՄ
ԲԵՐԻ


ՏԱՊԱՆԱՆՈՒՍԱ/ՀՈԳԻ ԲԱՐՍԵՂԻ / ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱ/ՊԼԵՏԵԱՆ ԻՒՎԱՅԵ/ՅԻ, ՎԱԽՃԱՆԵԱԼ / 1881 ԱՄԻ, 18 ԴԵԿՏԵՄ/ԲԵՐԻ:

Ննջեցյալը ծագումով իվայեցի է հիշվում, այսինքն՝ յուվայեցի: Յուվան երևանի նահանգի երևան գավառի գյուղերից է,

⁷² Հայերեն բացատրական բառարան, հ. չորրորդ, կազմեց՝ Սյր. Մալխասեանց, Երևան, 1945, էջ 23:

ներկայիս՝ ՀՀ Արարատի մարզի Շահումյան գյուղը⁷³:


48. ՏԱՊԱՆԱՔԱՐ. օրորոցաձև, հյուսիսային նիստի՝ արձանագրության համար նախատեսված խորադիր զույգ հարթությունների վրա խոշոր փորագրությանը երկսյուն տապանագիրն է, 4 և 3 տողից.



Է ԻԶՂՎԵԼՍՏՆԻ ԿԼԱՎԱՅ ՍԷՏ/ՐԱԳ
ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱ/ՆՑ, ԾՆ[Ն]ԼԵՂԱԼ Է 1854
ԱՄԻ, / 10 ՅՈՒՆՈՎԱՐԻ:
ՎԱԽՃԱՆԵԼԱՂ / 1895 ԱՄԻ,
25 / ՓԵՏՐՎԱՐԻ:

Սեղրակ Տեր-Բարսեղյանցը ժամանակի նշանավոր այրերից է. այդ է վկայում նրան բնորոշող «իզվեստնի կլավայ» (ռուս. ИЗВЕСТНЫ ПЛАВА) կոչումը: Այստեղ է թաղված նաև նրա որդի Խաչատուրը (արձ. 49), որը ևս վախճանվել է 1895 թ., թերևս դժբախտ պատահարի կամ համաճարակի զոհ են դարձել:

49. ՏԱՊԱՆԱՔԱՐ. օրորոցաձև, հյուսիսային նիստին առկա է նախորդի պես երկսյուն տապանագիր, 5 և 4 տողից.



Է ՈՐԹԻՆ ՍԷՏ/ՐԱԳԻ՝ ԽԱՉԱՏՈՒ/Ր,
ՁՆԵԱԼ Է 1886 ԱՄԻ, / 15 ՀՈԳՈՍՏՈՍԻ /
ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՑ: / ՎԱԽՃԱ/ՆԵԱԼ 1895
/ ԱՄԻ, 2-Ն ՍԷԿՏԵՄ/ԲԵՐԻ:

Խոր Վիրապի վանքից հյուսիս-արևելք՝ ճանապարհի հարևանությամբ, տարածվում է ԺԹ-Ի. դդ. գերեզմանոցը (նկ. 47), ուր

թաղումներ են արվում նաև այսօր: Համեմատաբար հին տապանաքարերի խառը դասավորությունը տեղիք է տալիս կարծելու, որ դրանց մեծ մասը տեղափոխվել է հարակից դաշտերից: Տապանաքարերը հիմնականում ուղղանկյուն խորանարդաձև, երբեմն էլ՝ օրորոցաձև են (քիչ չեն նաև անմշակ սալատապանները). նրանցից շատերն արձանագիր են և ունեն խաչաքանդակներ: Տապանագրերն աչքի են ընկնում լեզվաոճական բազում առանձնահատկություններով, ուղղաբանական սխալներով, կաղապարված բարբառային արտահայտչամիջոցներով. բազմաթիվ են Պ > Բ (ՏԱԲԱՆ), Տ > Դ (ՊԵԴՐՈՍ), Գ > Բ (ԼՈՒՍԱՀՈՔԻ), Ծ > Ձ (ՁՆՎԱԾ), Կ > Գ (ԱՐՇԱԳ) և այլ տառադարձումները, որոնք, ըստ ամենայնի, տեղի խոսակցական լեզվի ազդեցությունն են կրում: Փորագրությունները հիմնականում արված են անվարժ ձեռքով, պահպանված չէ տողերի, անգամ տառերի համաչափությունը:

Հարկ է նկատել, որ տապանագրերում հիշատակված ննջեցյալների ազգանունների մեծ մասը ժամանակաշրջանի թելադրանքով պայմանավորված՝ յան-ի փոխարեն ունեն ով վերջավորությունը, ինչպես օրինակ՝ Գեորգով (արձ. 54), Դալիբով (արձ. 56), Բադալով (արձ. 58), Սահակով (արձ. 66), Գրիգորով (արձ. 68), Հոնանով (արձ. 69): 1828 թ. փետրվարի 10-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհին գտնվող Թուրքմենչա գյուղում Պասկևիչի և Աբաս-Միրզայի միջև ստորագրվում է «Թուրքմենչայի դաշնագրությունը», ըստ որի՝ Ռուսական կայսրությանն էին անցնում Երևանի ու Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը, ինչպես նաև վերահաստատվեցին Պարսկաստանի՝ դեռևս Գյուլիստանի պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները⁷⁴: Ռուսերենի գործածության փոխադրե-


⁷³ Տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 940:

⁷⁴ ՀԺՊ, հ. V, էջ 170-171:

ցուծյամբ էլ պետք է բացատրել Արևելյան Հայաստանի հայերեն տապանադրերում առկա նման երևույթը⁷⁵, որը, թերևս, արդյունք է ոչ թե հանրուծյան ինքնակամուծյան, այլև՝ պարտադրանքի:


Ընդհանուր պատկերացում կազմելու համար վկայակոչում ենք տապանադրերից մի քանիսը՝ ժամանակագրական կարգով:

50. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան բուսական զարդաքանդակներ ու խաչ, գիրը՝ 5 տող:



ԼՈՒՍԻՍԱՆՈՒԹԻ ԵՆՕՔ / ՄՕՎՍԵՍ/ԵԱՆ,
ՎԼԱՊԻՃԱՆԵՑԱԻ' / 1882 ԱՄԻ:

51. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան խաչաքանդակ, գիրը՝ 9 տող:



⁷⁵ Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին՝ ԺԹ. դարավերջին և նախորդ դարում արված բազմաթիվ խաչագրերի ու համառոտ գրությունների մեջ ևս հանդիպում են նմանօրինակ ազգանուններով ուխտավորների գրառումներ. «ԵՍ՝ ՄԱԹԷՈՍ ՍԱԵԱՏՕՎ, 1880», «ԵՍ՝ ԱԹՈ ԱՎՈԲՈՎ, 1886» և այլն:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ՀԱՆԳՈՒՑԵԱԼ / ՄԱՀՏԵՍԻ ԹԱ/ԲԱՐՈՒԲԳԻՆ / ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐ/ԼԱՊԵՏԻՆ, ՎԱԽՃ/ԱՆԵԱԼ 1888 ԱՄԻ / 15 ՀՕԿՏԵՄԲԷ/ՐԻ:

Հր. Աճառյանը Թաբարուք (Թափառուկ) անձնանվան չորս հիշատակություն է վկայակոչում, որոնք հանդիպում են ԺԵ. դարից հետո: Ունի արաբական ծագում և նշանակում է «օրհնություն ստանալ»: Գործածական է եղել ինչպես արական, այնպես էլ իգական անունների դեպքում⁷⁶: Ներկա տապանադրում Թաբարուքը, որը ննջեցյալն է, Կարապետի կինն է. երկուսն էլ որպես մահտեսի են հիշվում:


52. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան՝ շրջանի մեջ ներառված խաչաքանդակ, գիրը՝ 3 տող:



1891 ԱՄԻ / ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ
ԿԱ/ԼՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ:

53. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան՝ շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ, գիրը՝ 5 տող:

⁷⁶ Անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 240-241:




1891 ԱՄԻ, ԱՊՐ/ԵԼԻ 27 ՎԱԽՃԱՆՈՒ/ԵՑԱԻ,
ԱՅՍ ՏԱՊԱ/ՆԸ ՆԱՆԱՍԻ /
ԱԼԱՀՎԵՐԴԵԱՆ:

54. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև,
վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.



1892 ԱՄԻ / ԱՅՍ ԵՍԱ/ԲԱՆՆ
ՄՐՎ/ԱԹ ԳԵՈՐԳԼՈՎ:

55. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև,
վրան՝ շրջանի մեջ ներառված հավասարաթև
խաչ (բաղկացած 5 խաչերից), գիրը՝ 4 տող.



1892 ԱՄԻ / ԱՅՍ ԵՍԱ/ԲԱՆ ՊԵՂԻՐՈՍ /
ԳՐԻԳՈՐԵԱՆ:

56. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև,
վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.




ՄԱԼԼԵՂԻ ԴԱ/ԲԱՆՆ ԵՍ, ՏԵՐ / ԴԱԼԻԲՈՎ
ՎԼԱԽՃԱՆԵԱՆ / 1892 Թ.

57. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, գի-
րը՝ 11 տող.

ԱՅՍ ԵՍ ՀԱՆԳԻՍՏԸ / ԽԱՉԱՏՈՒՐ /
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ, / ՈՐ ԳԱՂԹԵՑ ԽՈՅԻ /
ԳԱՎԱՌԻՑ 1828 Թ. ԵՒ / ՀԻՄՆԵՑ ՄԽԻ-
ԹԱՐԻ ԵՒ / ՍԻՄՈՆԻ ԸՆՏԱՆԻՔ/ՆԵՐԸ,
ՄԱՀԱՑԱՎ 1893 / Թ. ՀԻՇԱՏԱԿ ՍԻՄՈՆԻ
ԾՈՌ ՀԱԿՈԲԻՑ / 2005 Թ.:

58. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, գի-
րը՝ 5 տող.




ԱՅՍ ԵՍԱ/ԲԱՆՆ ՀԱ/ՆԳՈՒՑԵԱԼ
ԼՈՒՍ/ԱՀՈՔԻ ՀԱՐՈՒԹ/ԻՆ
ԲԱԴԱԼՈՎ / 189[4] ԱՄԻ:

59. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.




ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ԱՌԱԿԵԼ ԳԱԼ/ԼԻԱՆ,
ՎԼԱԽՃԱԼՆԵՑԱԿ / 1894 ԱՄԻ:

60. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան խաչաքանդակ, գիրը՝ 2 տող.




1897, ԽԱՍՉԱՍՏՈՒՐ:

61. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.




ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ԼՈՒՍԱՀՈՒԳԻ /
ԽԱՉԱՏՈՒՐ ՏՐ / ԽՈՒԴԱՆԵՆ /
ՄԱՀԱՅԱՆ / 1900 Թ.:

62. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, գիրը՝ 4 տող.




ԱՅՍ ՏԱՊԱՆ Է / ՄԵԱՑԱԿԱՆ
ՍԱՐ/ԳԻՍԻԱՆ, ՎԱԽՃԱՆԱՑԱԻ /
1904 ԱՄԻ, Ի ՄԱՐԺԻ 15:

63. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, գիրը՝ հարավային նիստին, 3 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ԼՈՒՍԱՀՈՒԳԻ / ԿՈՐԻԻՆ
ԵՆՈՒԲԵԱՆ, ՁՆՎԱԻ 1897 Թ. /
1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ՎԱԽՃԱՆ 1907 Թ.
ՀՈՒԼԼԻՍԻՆ 1:

64. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյունաձև, վրան խաչաքանդակ, գիրը՝ 6 տող.



1907, ՀՈՒԼԻՍԻՆ / ՏԱՍՆԵՐԿՈՒՍԻՆ, /
ԱՅՍ ՏԱՊԱՆ / ԼՈՒՍԱՀՈՒԳԻ /
ԱՐՏԱԳ ՆԵՐ/ՍԽԵԱՆՅ:

65. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածե, վրան խաչաքանդակ, գիրը՝ 8 տող.



ԱՅՍ Է ՏԱՊ/ԱՆՆ ՀԱՆԳՈՒ/ՑԵԱԼ
ԼՈՒՍ/ԱՀՈԳԻ ՀՈ/ՎՆԱՆ ՄԱՀ(°) /
ՍԱՖԱՐԵԱ/ՆԻՆ, 1908 Ա[ՄԻ], /
28 ՀՈԳԴԵ[Մ]Բ[ԵՐ]Ի:


Միգուցե անձնանունը պետք է կարդալ
Հովնան անմահ Սափարեան:

66. ՏԱՊԱՆԱՔԱՐ. օրորոցածե, գիրը՝ հարավային նիստին, 3 տող.

ԱՅՍԷ ՏԱՊԱՆՆ ՀԱՆԿՈՒԿԵԱԼ
ԼՈՒՍԱՀՔԻ ՄԱՐԳԱՐԱՅ ՍԱ
ՀԱԿՈՎ-1911 Ա 15 ԱԲԻՐԼԻ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՀԱՆԿՈՒՑԵԱԼ /
ԼՈՒՍԱՀ[Ո]ԲԻ ՄԱՐԳԱՐԱՅ ՍԱ/ՀԱԿՈՎ,
1911 ԱՄ[Ի], 15 ԱԲԻՐԼԻ:

67. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածե, վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.




ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ / ՀԱՆԿՈՒՑԵԱԼ /
ՍԱՐԳԻՍ ԲԱ/ՏԻԼԵԱՆ, 1918:

68. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածե, վրան խաչաքանդակ, գիրը՝ 3 տող.



ԱՆՏՐԱՆԻԿ / ԳՐԻԳՈՐՕՎ, / 1918:

69. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցածե, վրան խաչաքանդակ, գիրը՝ 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱ[Ն] / ՀԱՆԿ[ՈՒ]ՑԵԱԼ /
ՌԵԲԵԿԱ / ՀՈՆԱՆՈՎ:

* * *

Ամփոփելով իմ Վիրապի վանքի քարեղեն տարեգրությունը՝ հարկ է վերստին փաստել, որ ընդօրինակված 69 վիմագրից նախկինում հրատարակվել է միայն 16-ը: Խոր Վիրապից ընդամենը երեք արձանագրություն գիտական շրջանառության մեջ դրած Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցին հաջորդեցին Հ. Ղևոնդ Ալիշանը, Կարապետ Կոստանյանցը, Մատթեոս Փափազյանցը, վերջին տարիներին՝ Սուրեն Սաղումյանն ու Մուրադ Հասրաթյանը:

Վկայակոչված արձանագրությունների գերակշիռ մասը ԺԷ-ԺԸ. դարերից են, որոնց հիմամբ լուսաբանվում է իմ Վիրապի բազմարդյուն վանահայր Դավիթ Վիրապեցու եկեղեցաշինական գործունեությունը

ԺԷ. դ. երկրորդ կեսին: Այսինքն, եթե նշված իրադարձությունների վերաբերյալ մատենագրական տեղեկությունները գտնում ենք Զաքարիա Ագուլեցու օրագրության էջերում, ապա վիմագրական վավերագրերը հուշարձանի որմերին ու խաչքարերին են:

Վանքից հյուսիս-արևմուտք գտնվող «Օթյաց խաչ» սրբավայրի տեղում՝ 2015 թ. հոկտեմբերին կանգնեցված յոթմետրանոց խաչարձանի պատվանդանի ետնամասում ագուլեցված խաչքարը վավերացրեց նաև վանքի վաղագույն՝ 1181 թ. արձանագրությունը, որն ունի հիշատակագրային բովանդակություն: Չնայած սրան, վանքի վիմագրության հիմնական ատաղձը ուշմիջնադարյան է, ինչն էլ այս հոգևոր կենտրոնի գոյատևման լավագույն ապացույցն է:



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ

Վիժագրի թվականը կամ մոտավոր ժա- մանակը	Հ ^մ	Հուշարձանը, արձանագրություն տեղը	Բնույթը
1181 թ.	19	«Օթյաց Խաչ» սրբավայր, խաչարձանի պատվանդանին	խաչքարային հիշատակագրություն
ԺԳ-ԺԴ. դդ.	1	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., բեմի աջակողմում	հիշատակագրություն
ՌՃԺԸ.-1669	2	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	շինարարական
ՌՃԺԸ.-1669	3	Ս. Վիրապ, բեմի աջակողմում	շինարարական
ՌՃԺԸ.-1669	4	Ս. Վիրապ, խորանի վերնամասում	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԺԹ.-1670	5	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., հարավային որմին	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԻ.-1671	7	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԽԴ.-1695	43	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	տապանագրային հիշատակություն
ԺԷ. դար	6	Ս. Վիրապ, բեմի ձախակողմում	հիշատակագրություն
ԺԷ. դար	8	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	9	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	10	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	11	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., արևելյան որմին	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	16	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., արևելյան որմին	հիշատակագրություն (փակագիր)
ԺԷ. դար	23	Ս. Աստվածածին եկ., արևելյան որմին	շինարարական
ԺԷ-ԺԸ. դդ.	39	Բակ	խաչքարային հիշատակագրություն

ՌՃԾԲ.-1703	24	Ս. Աստվածածին եկ., Հարավային որմին	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԾԲ.-1703	25	Ս. Աստվածածին եկ., արևելյան որմին	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԾԶ.-1707	12	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	հիշատակագրություն
ՌՃԾԷ.-1708	27	Ս. Աստվածածին եկ., բեմառէջքին	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԿԸ.-1719	13	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	հիշատակագրություն
ՌՃԶԶ.-1737	31	Ս. Աստվածածին եկ., արևմտյան որմին	հիշատակագրություն (փակագիր)
ՌՄԺԶ.-1767	14	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	հիշատակագրություն
ՌՄԽԶ.-1797	15	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	հիշատակագրություն
ԺԸ. դար	38	Պարսպապատի արևելյան մասում	շինարարական
ԺԸ. դար	26	Ս. Աստվածածին եկ., Հյուսիսային որմին	խաչքարային հիշատակագրություն
ԺԸ. դար	28	Ս. Աստվածածին եկ., բեմառէջքին	խաչքարային հիշատակագրություն
ԺԸ. դար	29	Ս. Աստվածածին եկ., բեմառէջքին	խաչքարային հիշատակագրություն
ԺԸ. դար	30	Ս. Աստվածածին եկ., բեմառէջքին	խաչքարային հիշատակագրություն
ԺԸ. դար	32	Ս. Աստվածածին եկ., Հյուսիսային որմին	հիշատակագրություն (փակագիր)
ԺԸ. դար	33	Ս. Աստվածածին եկ., Հյուսիսային որմին	թվագիր
ՌՄՀԷ.-1828	44	Բակ	տապանագիր
ՌՅԴ.-1855	17	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հարավային որմին	հիշատակագրություն
ՌՅԶ.-1857	45	Բակ	տապանագիր
ՌՅԸ.-1859	18	«Օթյաց Խաչ» սրբավայր	շինարարական (չպահպանված)
ՌՅԻԷ.-1878	46	Բակ	տապանագիր
ՌՅԼ.-1881	47	Բակ	տապանագիր
ՌՅԼԱ.-1882	50	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԼԵ.-1886	37	Պարսպապատի Հարավային մասում	շինարարական
ՌՅԼԷ.-1888	51	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽ.-1891	52	Գերեզմանոց	տապանագիր

ՌՅԽ.-1891	53	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԱ.-1892	54	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԱ.-1892	55	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԱ.-1892	56	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԲ.-1893	57	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԳ.-1894	58	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԳ.-1894	59	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԽԴ.-1895	48	Բակ	տապանագիր
ՌՅԽԴ.-1895	49	Բակ	տապանագիր
ՌՅԽԶ.-1897	60	Գերեզմանոց	տապանագիր
ԺԹ. դար	20	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հարավային որմին	Հիշատակագրություն (անավարտ)
ՌՅԽԹ.-1900	61	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԾԳ.-1904	62	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԾԶ.-1907	63	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԾԶ.-1907	64	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԾԷ.-1908	65	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԿ.-1911	66	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԿԷ.-1918	67	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԿԷ.-1918	68	Գերեզմանոց	տապանագիր
ՌՅԿԷ.-1918	21	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	Հիշատակագրություն
ՌՅԿԸ.-1919	34	Զանգակատան Հարավարևմտյան մույթին	Հիշատակագրություն
ՌՅԿԹ.-1920	35	Զանգակատան Հարավարևմտյան մույթին	Հիշատակագրություն
ՌՆԽ.-1991	40	Աղբյուր-հուշարձան	չինարարական
Ի. դար	36	Ս. Աստվածածին եկ., արևմտյան որմին	Հիշատակագրություն
Ի. դար	22	Ս. Գրիգոր Լուսավորիչ եկ., Հյուսիսային որմին	Հիշատակագրություն
Ի. դար	69	Գերեզմանոց	տապանագիր
ՌՆԾԸ.-2009	41	Վանատուն	չինարարական
ՌՆԿԲ.-2013	42	Բակ	խաչքարային Հիշատակագրություն

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

ԴԱՎԻԹ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԱՐԱՏՅԱՆ
ՆԱՀԱՆԳԻ

ԺԳ. դարասկիզբ, վկայված է Վանստանի վանքի վիմագրերից մեկում՝ իբրև առաջնորդ Արարատյան նահանգի, որը նորոգել է Վիրապի Ս. Կաթողիկեն ու պարսպապատել այն, ինչպես նաև «ի հիմանց» կառուցել Վանստանի Ս. Աստվածածին եկեղեցին։ Հիշյալ շրջանում Արարատյան նահանգի թեմական կենտրոնը խոր Վիրապի վանքն էր։

ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՋՆԵՑԻ

ԺԳ. դարի երկրորդ կես, 1270 թ. Ջազավանից ժողովի մասնակիցներից, ում առաջնորդության օրոք միավորված էին Բջնիի ու Վիրապավանից թեմերը։ Վարդան Արևելցու եղբայրն է։ Նրա անունը կարդում ենք ՄՄ Հ՝ 3082 ձեռագրի գրչության հիշատակարանում՝ իբրև Արարատյան նահանգի դիտ, վերատեսուչ։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ - 1270-1280-ական թթ., Վանստանի վանքի վիմագրերից մեկում (1283 թ.) հիշատակվում է իբրև առաջնորդ Ս. Վիրապի և Վանստանի, որը նորոգել է Վանստանի Ս. Աստվածածին եկեղեցին։ Գրիգոր արքեպիսկոպոս Բջնեցու հոգևոր որդին է։ Ենթադրելի է, որ նախորդ Գրիգոր արքեպիսկոպոսը թեմակալն է, իսկ վերջինս՝ վանքի առաջնորդը։

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ - ԺԳ. դար, Ջազարիա Ագուլեցու հաղորդմամբ՝ Ս. Վիրապի վրա կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու՝ 1669 թ. նորոգչական աշխատանքների ժամանակ բացվել են Վարդան Արևելցու ու ԺԳ. դ. վանահայր Ներսես վարդապետի

աճյունները՝ տապանաքարերին համապատասխան արձանագրություններով։

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԻՐԱՊԵՑԻ - 1409 թվականից մինչև կաթողիկոս ընտրվելը (1441 թ.), սրբակենցաղ այս վանահոր վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ժամանակի պատմագիր Թովմա Մեծոփեցին։ Հենց վերջինիս միջնորդությամբ նաև տեղի ունեցավ Վաղարշապատի 1441 թ. հայտնի ժողովը, որի արդյունքում կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցին (1441-1443 թթ.)։

ԱՆՏՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1441 թ., հիշատակում է Թովմա Մեծոփեցին, ըստ որի՝ Վաղարշապատում՝ 1441 թ. տեղի ունեցած կաթողիկոսական ընտրության ժողովի մասնակիցների թվում էր նաև խոր Վիրապի Անտոն եպիսկոպոսը։

ՄԱՆՈՒԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1590-1600-ական թթ., Սրապիոն Ուռհայեցի վարդապետի աթոռակալությանը նախորդած դեպքերի առնչությամբ Հավուց թառի Մանուել եպիսկոպոսի և Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսի կողքին քանիցս հիշատակում է պատմագիր Առաքել Դավրիժեցին։

ՋԱԲԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԺԷ. դարասկիզբ (պայմանական), անունը վկայված է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի Հ՝ 629, 1446 թ.՝ Կայիփոսի ուխտում գրված «Յայսմաուրք» ձեռագրի հետագայի հիշատակարաններից մեկում՝ իբրև ստացող։

ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1621 թ., պատվիրատու-ստացող Հալիձորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատում՝ 1621 թ. Ղուկաս դպրի գրչագրած և ծաղկած «Ժամագիրք Ատենի» ձեռագրի:

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱԹԵՎԱՑԻ - 1640-ական թթ.: Հիշատակված է Ակոռիում գրված 1646 և 1647 թվակիր ավետարանների գրչուլթյան հիշատակարաններում: Դրանցից մեկում ընդգծված է նրա տոկոնությունը երկրամասում տիրող ծանր կացության պայմաններում:

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԻՐԱՊԵՑԻ (ՏՓԽԻՍԵՑԻ, ՎՐԱՑԻ) - 1660-ական թթ.-1695 թ., Վիրապավանից թեմի առաջնորդը և ինքը Վիրապի արդյունաշատ վանահայրերից, ում օրոք ի հիմանց վերականգնվեց ու նորոգվի կառուցվեց ողջ համալիրը: Դավիթ Բ. վանահայրը քանիցս հիշատակված է վանքի վիմագրերում, ինչպես նաև ինքը Վիրապում, Ակոռիում ու Վիրապավանից թեմի ենթակայության տակ գտնվող գյուղերում գրված ձեռագրերի հիշատակարաններում (ՄՄ ձեռ. Հ^մր 329, 6698, Երսղմ. ձեռ. Հ^մր 1797 և այլն):

ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ [ՎԵԹՅԻ] - 1695-1740-ական թթ. (ընդմիջումներով), հիշատակված է Ս. Աստվածածին գմբեթավոր եկեղեցու հյուսիսային պատին ագուցված խաչքարի վիմագրում: Նրա անունը կարդում ենք նաև մատենագրության մեջ:

ՎԱՐԴԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ - 1710 թ., հիշատակված է ՄՄ Հ^մր 557 «Ժողովածոյ» ձեռագրի 1710 թվակիր հետագայի հիշատակարանում, որպես ինքը Վիրապի առաջնորդ և ձեռագրի ստացող:

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1740 թ., հիշատակված է ՄՄ ձեռ. Հ^մր 544, ինքը Վիրապում՝ 1740 թ. գրված «Բառգիրք» ձեռագրի գրչուլթյան հիշատակարանում:

ԱՎԵՏԻՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1765-1772 թթ., քանիցս վկայված է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի թղթերում ու կաթողիկոսական կոնդակներում, իբրև ինքը Վիրապի «նորոգ» վերատեսուչ ու առաջնորդ: 1767 թ. Սիմեոն կաթողիկոսը Բաբերդի առաջնորդ Սարգիս և Մայր Աթոռի միաբան Մինաս վարդապետների հետ եպիսկոպոս է ձեռնադրում նաև ինքը Վիրապի առաջնորդ Ավետիք վարդապետին: 1772 թ. վանքից ինքնակամ Վան, ապա Երուսաղեմ հեռանալու, նաև երդմնազանցության համար կաթողիկոսի կողմից զրկվում է եպիսկոպոսական աստիճանից՝ դառնալով արքեպիսկոպոս:

ՄԱՐԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ - 1772 թ., հիշատակված է ՄՄ ձեռ. Հ^մր 7044 և Հ^մր 811, ինքը Վիրապում գրված «Ժողովածոյ» ձեռագրերի 1774 թ. գրչուլթյան հիշատակարաններում: Սիմեոն Երևանցին իր հիշատակարանում քանիցս վկայաբերում է Մայր Աթոռի միաբան Մարկոս վարդապետին՝ իբրև հաջորդ երդմնազանց և անխոհեմ Ավետիք եպիսկոպոսի:

ՍԻՄԵՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ - մինչև 1804 թ., վկայված է Դավիթ Ե. Էնեգեթցի կաթողիկոսի կոնդակներից մեկում (ԴՀՊ, գիրք Է., հրատ.՝ Գիւտ ա. քհն. Աղանեսանց, Թիֆլիս, 1909, էջ 425-426), իբրև «անբարի և անուղիղ» վարքի տեր առաջնորդ, որին հաջորդել է Մայր Աթոռի միաբան, առաքինի տեր Հովհաննես արքեպիսկոպոսը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1804 թ., Դավիթ կաթողիկոսի կոնդակում հիշատակվում է իբրև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շնորհաշատ վարդապետ-արքեպիսկոպոս, որը ժամանակավոր ստանձնել է Խոր Վիրապի վանքի վեբիլի (լիազոր, հավատարմատար) պաշտոնը:

ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - 1810-ական թթ., հիշատակված է Ս. Ծոցիկյանի տեղագրական ուսումնասիրության մեջ, ըստ որի՝ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմը անցնելուց հետո Խոր Վիրապի վանքում դարձյալ աշխուժանում է վանական կյանքը, իսկ վանահայրը Ղուկաս վարդապետն էր:

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ - 1828 թ., հիշատակված է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն հյուսիսից կից տապանաքարի վիմագրում:

ՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ - 1830-ական թթ., տեղեկանում ենք Մանուել վարդապետի «Անձնական պատմություն»-ից, որը հրատարակել է Գյուլտ ա. քհն. Աղանյանը «Դիվան հայոց պատմության» ժ. Բ. գրքում:

ՍԻՄԵՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՒԱՆՑԻ - 1830-ական թթ., եղել է Ս. Էջմիածնի ժամասացը: Նրա մասին հիշատակում է Մանուել վրդ. Կյումուշխանեցին, նաև Մեսրոպ Թաղիադյանը:

ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՅԱԶԵՏՑԻ - 1840-ական թթ., նշանակվել է Ս. Էջմիածնից: Հիշատակվում է Ղ. Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 439) և Վահան եպս. Տերյանի հոդվածում:

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԵԱՆԴԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՑԻ - 1859 թ. (միգրացիոն նաև՝ 1855-1857 թթ.), հիշատակված է «Օթյաց Խաչ» սրբավայրում երբեմնի գոյություն ունեցած մատուռի կառուցման առնչությամբ, որի մասին վկայում է Ղ. Ալիշանը: Մատուռը կառուցվել է Հակոբի ազգական Վարդան Քեանդարյան Ալեքսանդրապոլցու միջոցներով:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻԼԻՊՊՈՍՅԱՆ - 1862 թ., ըստ Մեսրոպ արք. Սմբատյանցի տեղեկության՝ մինչ Խոր Վիրապի վանահայր նշանակվելը նա Նոր Բայազետում ստանձնել է գործակալի պաշտոնը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ - 1870-ական թթ., հիշատակված է նաև իբրև անդամ «Արտաշատյան» ընկերության («Արարատ», 1870, մարտ, էջ 275):

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԼԽԱՍՅԱՆ ԲԱԳՈՒԱՆԵՑԻ - 1887 թ., հիշատակված է Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատության մեջ (էջ 439):

ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ - 1898 թ., այս վանահոր անունը կարդում ենք Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի արխիվային վավերագրերից մեկում, ըստ որի՝ Խոր Վիրապի վանահայր Հմայակ վարդապետը կաթողիկոսին հուսադրել է, թե ի թիվս այլ վարդապետների՝ իրեն ևս եպիսկոպոս է ձեռնադրելու (Խրիմյան կաթողիկոսին ուղղված զիմումների և այլ վավերագրերի արխիվ, Մատենադարանի կաթողիկոսական դիվան, թղթ. 108, վավ. 1086):

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՎԱԾԱՆՑՅԱՆ - ԺԹ. դարավերջ, անունը վկայված է Երվանդ Լալայանի արխիվային վավերագրերից մեկում, որտեղ նա անդրադառնում է խոր Վիրապի վանահայրերից մի քանիսին (ՀՊԹ, Երվանդ Լալայանի ֆ., ԱԱ 58)⁷⁷:

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - 1940-1953 թթ.⁷⁸:

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - 1953-1966 թթ.:

Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԶԱՖՏԵՅԱՆ (Զիֆ-Թերյան) - 1966-1980 թթ., հիշատակում է Վահան եպս. Տերյանն իր հոգևածում (հոգևոր սպասավոր՝ Տ. Հարություն քհն. Տերտերյան):

Տ. ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ - 1980-1994 թթ., ունի հեղինակային հոգևած վանքի մասին (հոգևոր սպասավոր՝ Տ. Թադևոս քհն. Տերտերյան, իսկ 1986-ից՝ Տ. Մխիթար քհն. Սարիբեկյան):

Տ. ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ - 1994-2000 թթ. (հոգևոր սպասավորներ՝ Տ. Թադևոս քհն. Տերտերյան և Տ. Հովհաննես քհն. Շահնազարյան):

Տ. ԶԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆ - 2000-2007 թթ. (հոգևոր սպասավոր՝ Տ. Թադևոս քհն. Տերտերյան, իսկ 2004 թ. նոյեմբերի 21-ից - 2005 թ. նոյեմբերի 10-ը՝ Տ. Հուսիկ քհն. Նուրիջանյան, 2005 թ. նոյեմբերից-դեկտեմբեր՝ Տ. Եփրեմ աբեղա Սարգսյան,

2005 թ. դեկտեմբերի 17-ից - 2006 թ. ապրիլի 17-ը՝ Տ. Հովնան աբեղա Հակոբյան, 2006 թ. մայիսից 2007 թ. փետրվարի 16-ը՝ Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյան):

Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆ - 2007-2013 թթ.:

Տ. ԱՐԻՍ ԱԲԵՂԱ ՏՈՆՈՅԱՆ - 2013-2017 թթ. (հոգևոր սպասավոր՝ Տ. Ահարոն աբեղա Շահվերդյան - 2016 թ. հունվարի 20-ից):

Տ. ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՂՈՒԼԻԿՅԱՆ - 2017 թ. փետրվարի 10-ից:

Գարեգին Բ. վեհափառ հայրապետի տնօրինությամբ 2006 թ. ստեղծվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վանորեից տեսչությունը, որի հիմնական նպատակը Հայաստանի էջմիածնապատկան յոթ վանքերում (Խոր Վիրապի վանք, Ս. Գայանե վանք, Ս. Հռիփսիմե վանք, Ս. Շողակաթ վանք, Գեղարդավանք, Սևանավանք, Հառիճավանք) վանական միաբանությունների ձևավորումն է, ապա նաև՝ մեր հոգևոր կենտրոնների պահպանումն ու բարեզարդումը:

Տ.ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆ
Մայր Աթոռի Վանորեից տեսուչ՝ 2006-2009 թթ.:

Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ
Մայր Աթոռի Վանորեից տեսուչ 2009 թ.-ից:

⁷⁷ Այս տեղեկությունը մեզ է հաղորդել աստվածաբան Հայկ Հակոբյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:

⁷⁸ Այս և ստորև հիշատակվող վանահայրերի անվանացանկը մեզ է տրամադրել Խոր Վիրապի նախկին վանահայր Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

ԳԱՎԱԶՄՆԱԳԻՐՔ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ

Դավիթ՝ առաջնորդ Արարատյան նահանգի	ԺԳ. դարասկիզբ
Գրիգոր արքեպիսկոպոս Բջնեցի	ԺԳ. դ. երկրորդ կես
Գրիգոր վարդապետ	1270-1280-ական թթ.
Ներսես վարդապետ	ԺԳ. դար
Կիրակոս վարդապետ Վիրապեցի	1409-1441 թթ.
Անտոն եպիսկոպոս	1441 թ.
Մանուել եպիսկոպոս	1590-1600-ական թթ.
Զաքար արքեպիսկոպոս	ԺԷ. դարասկիզբ
Դավիթ Ա. եպիսկոպոս	1621 թ.
Մկրտիչ վարդապետ Տաթևացի	1640-ական թթ.
Դավիթ Բ. վարդապետ Վիրապեցի	1660-ական թթ.-1695 թ.
Ղազար վարդապետ Վեթցի	1695-1740-ական թթ.
Վարդանես վարդապետ	1710 թ.
Պետրոս արքեպիսկոպոս	1740 թ.
Ավետիք եպիսկոպոս	1765-1772 թթ.
Մարկոս վարդապետ	1772 թ.
Սիմեոն վարդապետ	մինչև 1804 թ.
Հովհաննես արքեպիսկոպոս	1804 թ.
Ղուկաս վարդապետ Եղիազարյան	1810-ական թթ.
Հակոբ վարդապետ Տեր-Ավետիքյան	1828 թ.
Մանուել վարդապետ Կյուժուճխանցի	1830-ական թթ.
Սիմեոն վարդապետ Երևանցի	1830-ական թթ.
Գալուստ վարդապետ Բայազետցի	1840-ական թթ.
Հակոբ վարդապետ Քեանդարյան Ալեքսանդրապոլցի	1855-1857, 1859 թթ.
Պետրոս վարդապետ Փիլիպպոսյան	1862 թ.
Ստեփանոս վարդապետ	1870-ական թթ.
Պողոս վարդապետ Մալխասյան Բազումանցի	1887 թ.

Հմայակ վարդապետ Սարգսյան	1898 թ.
Կարապետ վարդապետ Աստվածատրյան	ԺԹ. դարավերջ
Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան	1940-1953 թթ.
Տ. Հարություն քահանա Հարությունյան	1953-1966 թթ.
Տ. Գրիգոր քահանա Ջաֆտեյան	1966-1980 թթ.
Տ. Գուրգեն ավագ քահանա Մուրադյան	1980-1994 թթ.
Տ. Մխիթար քահանա Սարիբեկյան	1994-2000 թթ.
Տ. Զարեհ վարդապետ Կաբադյան	2000-2007 թթ.
Տ. Նարեկ աբեղա Ավագյան	2007-2013 թթ.
Տ. Արիս աբեղա Տոնոյան	2013-2017 թթ.
Տ. Տարոն վարդապետ Ղուլիկյան	2017 թ.-ից

ՎԱՆՈՐԵՑ ՏԵՍՈՒՋՆԵՐ

Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազյան	2006-2009 թթ.
Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյան	2009 թ.-ից

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայոց Մեծ դարձի և Ս. Գրիգոր Լուսավորչի վարքի ու վկայաբանության անմիջական խտացումն է խոր Վիրապի վանական համալիրը, որի պատմության էջերում են անթեղված մեր անցյալի ու ինքնության փառահեղ «վավերագրերը»: Վանքի տեղագրական, պատմական, մատենագրական ու վիճակագրական ժառանգությունն ամփոփող սույն աշխատության հիմնական նպատակը՝ Ս. Էջմիածնից հետո մեր երկրորդ խոշոր սրբավայրի հնարավոր հավաք նկարագիրը կազմելն էր: Այս տեսանկյունից մեր առջև դրված խնդիրը հեշտ լուծելի կամ դժուարին չէր, քանի որ գործ ունեինք մի ամբողջ վանական համալիրի պատմագիտական և այստեղից մեզ հասած ձեռագիր ու վիճակագրական վկայագրերի աղբյուրագիտական քննության հետ, ուր առկա էին բազմաթիվ չլուսաբանված հարցեր, որոնց փորձել ենք տալ սպառնիչ պատասխաններ: Միով բանիվ, կատարված աշխատանքի արդյունքում արված եզրահանգումներն ամփոփենք ստորև.

Հայոց երբեմնի նշանավոր մայրաքաղաքներ Արտաշատի ու Դվինի համայնապատկերում իր ուրույն տեղն ու դիրքն ունեցող վանքի պատմության վաղագույն փուլը կապված է Ս. Գրիգոր Լուսավորչի՝ քրիստոնեության ընդունման ու տարածման համար Արտաշատի բանտ-արգելարանի վիրապում փակվելու ու 13-15 տանջալից տարիներ այստեղ անցկացնելու հետ: Ազաթանգեղոսի Պատմության էջերում մանրամասն նկարագրվում են նշված իրադարձությունները, ուստի մատենագրի հաղորդած տեղեկություններն այս պատմաչրջանի համար արժանահավատ ու բացառիկ են: Դրանք

անուղղակիորեն վերաբերում են նաև վիրապի տեղում վանքի հիմնադրմանը, որտեղից էլ համալիրն ստացավ իր խոր Վիրապ ընդհանրացված անվանումը: Հետագա դարերի մատենագրական երկերում ու ժամանակագրություններում (Մովսես Կաղանկատվացի, Հովհան Մամիկոնյան, Ուխտանես, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Մխիթար Այրիվանեցի, Ժամանակագիրներ Անանուն Սեբաստացի, Դավիթ Բաղիշեցի, Հակոբ Կարնեցի և այլք) բազմիցս վկայված են խոր Վիրապն ու նրա պատմության հետ առնչվող մանրամասները: Հիշատակությունները հիմնականում վերաբերում են Ս. Գրիգոր Լուսավորչի չարձարանաց դրվագներին, վիրապ նետվելուն, նոր կրոնի ընդունմանը, ապա նաև վանքի հիմնադրմանն ու եկեղեցաշինությանը:

Այն, որ է. դարում Ներսես Շինող կաթողիկոսն այստեղ ևս եկեղեցի է հիմնել, վկայում են Հովհաննես Դրասխանակերտցին, ապա նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները, իսկ նույն դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադասի հիշատակությունը ներսեսաչեն եկեղեցու ճարտարապետական հորինվածքի վերաբերյալ, առավել որոշակիացնում է շինության գոյությունը: Ըստ նշված վկայության՝ այն գտնվել է Դվինից ոչ հեռու (ընդամենը 3 փարսախ, այսինքն՝ 17,256 կմ) և իրենից ներկայացրել շուրջանակի սրահով, զմբեթած և գլխարկի նմանվող՝ սպիտակ սրբատաշ քարից կառուցված մի եկեղեցի՝ պսակված ություն ռոտոնդայով:

Միջնադարի զարգացած շրջափուլում խոր Վիրապի վանքը հռչակվում է իբրև եպիսկո-

պոսանիստ կենտրոն և այս համատեքստում կապեր հաստատում Հայոց եկեղեցու թեմական ենթակառուցյունների հետ: Վանքը, ի դեմս Վիրապավանից թեմի՝ Արարատյան հայրապետական թեմի կենտրոնն էր ու Հայ եկեղեցու կարևոր օղակներից մեկը. այդ մասին են վկայում ԺԱ. և հետագա դարերում հանդիպող մատենագրական ու վիմագրական հիշատակությունները: Ձագավանից ժողովի ժամանակ (1270 թ.) Բջնիի աթոռի հետ միավորված էր նաև Վիրապավանից թեմը, իսկ միացյալ երկու թեմերը գլխավորել է Բջնիի Գրիգոր արքեպիսկոպոսը:

Խոր Վիրապից ոչ հեռու գտնվող Վանստանի վանքում Աշխարհբեկ Քալանթարի՝ 1912 թ. իրականացրած հնագիտական պեղումներով հայտնաբերված վիմագրերի համաձայն՝ Խոր Վիրապն ու Վանստանը գտնվել են միևնույն թեմական առաջնորդի ենթակայության տակ: Նորահայտ վիմագրերից մեկում հիշատակված է Արարատյան նահանգի կամ նույնանուն թեմի առաջնորդական փոխանորդ տեր Դավիթը, որը և հիմնել է Վանստանի վանքը ԺԳ. դարում: Արարատյան նահանգի թեմական կենտրոնը հիշյալ ժամանակաշրջանում հենց Խոր Վիրապի վանքն էր: 1283 թ. մեկ այլ վիմագրում հիշատակված է Խոր Վիրապի և Վանստանի առաջնորդ Գրիգոր վարդապետը, ինչը մեր վերոնշյալ տեսակետի քարեղեն ապացույցն է:

Խոր Վիրապի թեմական կենտրոնի և նրա վիճակների մասին հետագա հիշատակությունները ԺԷ. դարից են, որոնց հիմամբ պարզվում է, որ Վիրապավանից թեմն այս շրջանում ևս ակտիվորեն գործում էր՝ իր ենթակայության տակ ունենալով Վանստանը, Ուրծավանքը և Մուշաղբյուրի վանքը: Սիմեոն Նրեանցի կաթողիկոսի նոտար Նրեմիա Օշականցուն՝ 1765 թ. կազմած էջմիածնի նվիրապետական թեմերի ու վիճակների ամփոփ տեղեկագրում հիշատակվում են նաև Վիրապավանից թեմի բոլոր 11 վիճակները, որ են՝

Վեղի, Արկուռի, Արտաշար, Մուշաղբյուր, Ջղուն, Վանստան, Մանկուս, Ավանիկ, Վանիկ, Դեղձնավանք, Ուրցածոր, իսկ թեմական կենտրոնը հենց Խոր Վիրապի վանքն էր:

Վանքի պատմությունն առնչվում է նաև 1441 թ. կաթողիկոսարանի՝ Սսից էջմիածին տեղափոխվելու իրադարձության հետ, երբ Վաղարշապատում հրավիրված եկեղեցական ժողովի մասնակիցների թվում էր նաև Խոր Վիրապի Անտոն եպիսկոպոսը: Այստեղ է, որ ժողովի արդյունքում Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում երկար տարիներ Խոր Վիրապում ճգնակյաց կյանք վարած Կիրակոս վարդապետ Վիրապեցին:

Վանքի վերաշինման նախաձեռնությունը, սակայն, վերապահված էր ԺԷ. դարի արդյունաշատ հոգևորական Դավիթ վարդապետ Վիրապեցուն (Վրացի, Տփլիսեցի), որը, երկրում ստեղծված քաղաքական քիչ թե շատ նպաստավոր պայմաններից օգտվելով, ամայությունից կենդանացնում ու նոր շունչ է հաղորդում հնամենի այս վանքին: Հիշյալ պատմաշրջանի վերաբերյալ իր օրագրության էջերում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ջաքարիա Ագուլեցին, որի եղբայր Շմավոն (Սիմոն, Սիամոն) Ագուլեցու միջոցներով 1660-ական թթ. վերջերին իրականացվում են վանքի շինարարական ու բարեկարգման աշխատանքները:

ԺԸ-ԺԹ. դդ. Խոր Վիրապը դարձյալ պարբերաբար հայտնվել է անմխիթար ու բարձիթողի վիճակում, ինչի վերաբերյալ տեղեկություններ ենք քաղում ճանապարհորդ-տեղագիրների և այցելու-ուխտավորների հուշագրություններից:

Ուսումնասիրության առաջին մասը եզրափակվում է Հայոց հայրապետների կողմից այս սրբավայրում հաջորդաբար իրականացված շինարարական ու նորոգչական աշխատանքների վկայակոչմամբ՝ հասնելով մինչև մեր օրերը: Այս քննության արդյունքում է, որ ի հայտ են գալիս վանքի՝ տարբեր

ժամանակների առաջնորդների ու վանահայրերի անունները, որոնց հիմամբ հնարավոր եղավ կազմել խոր Վիրապի վանահայրերի գավազանագիրքը:

Խոր Վիրապի ուսումնական և գրչության դպրոցի ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց ծավալել աղբյուրագիտական քննություն Վարդան Արևելցու՝ ԺԳ. դարի երկրորդ կեսին հիմնած դպրոցավարդապետարանի գործունեության և այստեղից մեզ հասած ձեռագրերի շուրջ: Փաստելի է, որ ի դեմս մեծանուն ուսուցչապետի՝ վանքն այս շրջանում աչքի է ընկել իբրև գիտակրթական խոշոր կենտրոն, ուր ուսանելու են եկել ամենատարբեր շրջաններից և անգամ Կիլիկյան Հայաստանից:

Խոր Վիրապում գուգահեռ զարգացում է ապրել նաև գրչարվեստը: Վարդան Արևելցու օրոք գրված մատյանները ստեղծվել են մի քանի գրչակենտրոններում. դրանցից մեզ հասած ՄՄ Հ՞ր 3082 ձեռագիրը գրվել է 1267 թ. Խոր Վիրապի, Սաղմոսավանքի և Թեղենյաց վանքի գրատներում, ինչը թույլ է տալիս արձանագրել, որ Խոր Վիրապի վանքը գոնե այս շրջանում սերտ կապեր է ունեցել ժամանակի հայտնի գրչակենտրոնների հետ:

Խոր Վիրապն իբրև գրչության կենտրոն նշանավորվել է նաև ԺԷ-ԺԸ. դդ.: Այստեղից մեզ հասած ձեռագրերի զգալի մասը թվագրվում է հիշյալ դարերով: Ընդհանուր հաշվով Խոր Վիրապից մեզ է հասել մոտ 10 ձեռագիր մատյան, որոնց մեծ մասը պահվում է Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (Հ՞ր 544, 811, 3082, 3825, 5413, 5756, 6752, 7044): Զեռագրերի գրչության ու հետագայի հիշատակարանները կարևոր աղբյուրագիտական նյութ են ոչ միայն տվյալ ձեռագրի ստեղծման ու հետագա «ճակատագրի», այլև վանքի պատմության լուսաբանման համար: Խոր Վիրապի ձեռագրական ժառանգության ուսումնասիրությունը պար-

զեց մի կարևոր հանգամանք ևս. բանն այն է, որ հիշատակարանների քննությունն ուղղակիորեն փաստում է, որ Խոր Վիրապի գրչության կենտրոնը եթե Վարդան Արևելցու օրոք առնչություններ է ունեցել Սաղմոսավանքի, Թեղենյաց և Աղջոց Ս. Ստեփանոս վանքերի գրչակենտրոնների հետ, ապա ուշ միջնադարում, մասնավորապես՝ ԺԷ. դարի երկրորդ կեսից այդ կապն ակնառու է Ակոռիի գրչության կենտրոնի հետ: Այս երևույթը պայմանավորված էր նաև երկու վանքերի՝ միևնույն թեմի ենթակայության տակ գտնվելու հանգամանքով: Քննությունը պարզեց, որ Ակոռիի գրչության կենտրոնից հայտնի 10 ձեռագրերը (ՄՄ ձեռ. Հ՞ր 329, 4022, 4457, 4458, 5756, 6698, 7621, 10573, Երսղմ. ձեռ. Հ՞ր 1797) ստեղծվել են ԺԷ. դարի 40-70-ական թթ.: Գրչության հիշատակարանները վկայում են, որ դրանց մեծ մասը գրվել է Մուրատ և Պետրոս հայր և որդի գրիչների ձեռքով, ովքեր գուգահեռ գործել են նաև Խոր Վիրապում: Այս կարևոր հանգամանքը նկատի առնելով՝ Խոր Վիրապի ձեռագրերի նկարագրությունը կից գեոտեղեցինք նաև Ակոռիի ձեռագրական հավաքածուի նկարագրությունը, իսկ վերջում նաև՝ այս երկու կենտրոններից քննվող 18 ձեռագրերի ժամանակագրական ընդհանուր աղյուսակը:

Ուսումնասիրվող նյութը թերի կմնար, եթե անտեսվեր հուշարձանախմբի վիմագրության գիտական հետազոտությունը, ինչի կարևորության գիտակցմամբ էլ աշխատության երրորդ գլուխը նվիրեցինք Խոր Վիրապի վիմագրական ժառանգությանը: Վերծանված 69 վիմագրից նախկինում հրատարակվել է 16-ը (դրանք հիմնականում տեղ են գտել Հովհ. Շահխաթունյանցի, Ղ. Ալիշանի, Կ. Կոստանյանցի, Մ. Փափագյանցի, Մ. Հասրաթյանի և այլոց աշխատություններում), այն էլ զուրկ գիտական վերծանությունների համար ներկայումս ըն-

դուռնելի բաղադրիչներին: Այս հանգամանքը նկատի առնելով՝ վկայակոչվող բոլոր արձանագրությունները ենթարկվել են վիճաբանագրական քննության, որի արդյունքում լուսաբանվեցին ժէ. դարի երկրորդ կեսին՝ Դավիթ Վիրապեցու նախաձեռնությամբ իրականացված շինարարական աշխատանքների հետ կապված բազմաթիվ հարցեր, արվեցին լրացումներ ու սրբազրույթներ: Դավիթ վանահոր անվանակիր շինարարական արձանագրության թվականն ի վերջո պետք է կարդալ ՌՃԺԸ. (1669), ինչի օգտի են նաև համաժամանակյա մի քանի քարեղեն ու մատենագրական հիշատակությունները: Վիճաբանների շնորհիվ հստակվեցին նաև վանքի մեկենասների (խոջաներ Շմավոն (Սիմոն, Սիամոն) Ագուլեցի, Ավթանդիլ Թիֆլիսեցի, Այվազ Մակուեցի, Հարություն և Պողոս Շախկերտցի, Բաստամ, պարոն Ստեփան), վերականգնողների (Ոհան բաբա, Ղազար վրդ. Վեթցի), այցելու-նվիրատուների (Վարդան Քեանդարեան Ալեքսանդրապոլցի, Կիրակոս, Տեր Խաչատուր, Մկրտում, Իսրայել, Մովսես, Ավետիք Բստացի, Խաթուն Ղարաբաղցի, Տեր Նիկողայոս Ակուեցի և Մովսես) անուններն ու նրանց հետ կապված իրադարձությունները:

Վանքից հյուսիս-արևմուտք գտնվող «Օթյաց Խաչ» սրբավայրի ուսումնասիրության արդյունքում փաստագրեցինք նաև տեղի վաղագույն՝ 1181 թ. արձանագրությունը, որը խաչքարային հիշատակագրություն է: Վանքի վիճաբանական ժառանգությունն ի վերջո ամփոփեցինք նաև ընդհանուր ժամանակագրական աղյուսակում:

Ուսումնասիրության լուսանկարների բաժնում զետեղված մանրանկարների շարքում հարկ համարեցինք ներառել նաև Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց և քրիստոնեության ընդունման հետ առնչվող թեմատիկ ու լուսանցային որոշ մանրանկարներ, որոնք հատուկ հետազոտության նյութ

կարող են դառնալ հատկապես արվեստաբանների համար:

Դարերի հոլովույթում Խոր Վիրապի վանքն իբրև սրբազան օջախ մշտապես ունեցել է առաջնային նշանակություն: Սրանով էլ պայմանավորված՝ հաճախադեպ են այս վանքի մասին հիշատակությունները հայ և օտարազգի ճանապարհորդ-տեղագիրների աշխատություններում: Եթե վաղ միջնադարում վանքի հիմնադրման ու գոյատևման վերաբերյալ տեղեկությունները հաղորդում են պատմագիրները, ապա Ժ. Գ. և հետագա դարերի համար արժանահավատ սկզբնաղբյուրներ են մեզ հասած ձեռագիր մատյանները՝ գրված ոչ միայն Խոր Վիրապում, այլև հարակից նշանավոր գրչության կենտրոններում: Աղբյուրագրական նյութը հարստացնող վիճաբաններն էլ գալիս են լրացնելու ու ամբողջացնելու այս սրբավայրի պատմական ուղին ժէ. դարից ի վեր:

Ամփոփելով մեր խոսքը և հետևելով Գրեգին Ա. մեծանուն հայրապետի պատգամին՝ մնում է վերստին ասել.

ԽՈՐ ՎԻՐԱՊ, ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ ...

АРСЕН АРУТЮНЯН

ХОР ВИРАП

ИСТОРИЯ, РУКОПИСНОЕ И ЭПИГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

РЕЗЮМЕ

Монастырский комплекс Хор Вирап, на страницах истории которого собраны замечательные “документы” нашего прошлого, национального самосознания, включает в себе квинтэссенцию христианизации Армении, жития и мартирологии Св. Григория Просветителя.

Основной целью настоящей работы, обобщающей топографические данные, историческое, летописное и эпиграфическое наследие, является создание возможно полного описания второго по значимости после Св. Эчмиадзина крупного армянского центра религиозного поклонения. С этой точки зрения поставленную перед нами задачу нельзя назвать легкой, поскольку предстояло иметь дело с историко-эпиграфическим исследованием историографии, а также рукописных и лапидарных свидетельств целого монастырского комплекса, где имелись многочисленные неосвоенные доселе вопросы, на которые нами была предпринята попытка найти исчерпывающие ответы. Выводы, полученные в результате проделанной работы, обобщены ниже.

Наиболее ранний период существования монастырского комплекса, занимающего особое место в исторической панораме достопримечательных столиц Армении – Арташата и Двина – связан с заключением Св. Григория Просветителя за принятие

и распространение им христианства в арташатском узилище (по арм. “вирап”, что дословно означает “яма”), где он провел 13–15 мучительных лет. На страницах “Истории” Агафангела указанные события подробно описываются, посему данные об этом периоде, сообщаемые летописцем, являются ценными и уникальными. Косвенным образом они затрагивают также историю основания монастыря на месте узилища, вследствие чего монастырский комплекс и получил свое имя Хор Вирап (что дословно означает “Глубокая Яма”).

Монастырь Хор Вирап и связанные с ним подробности не раз упоминаются в произведениях историков и летописцев последующих веков: Мовсеса Каганкатваци, Ована Мамиконяна, Ухтанеса, Ованнеса Драсханакертци, Степаноса Таронеци Асoghика, Мхитара Айриванеци, хронистов Анануна (Безымянного) Себасти, Давида Багишеци, Акопа Карнеци и других. Упоминания большей частью касаются описаний мученичества Св. Григория Просветителя, его заключения в темницу, принятия новой веры, а также основания монастыря и строительства церквей.

Факт основания здесь в VII веке церкви католикосом Нерсесом Строителем засвидетельствован Ованнесом Драсханакертци, а впоследствии и Степаносом Таронеци

Асогиком, Самуэлом Анеци, Киракосом Гандзакеци и другими. В те же века арабский историограф Ал-Мукаддаси описывает архитектурную композицию возведенного Нерсесом храма, что делает еще более достоверным существование постройки. Согласно упомянутому свидетельству, храм находился недалеко от Двина (на расстоянии примерно 3 парсагов, что составляет 17,256 км), имел вид округлой залы со сводчатым перекрытием, по форме напоминал шапку и представлял собой сооружение из чисто тесаного белого камня, увенчанное 8-колонной ротондой.

В период развитого средневековья монастырь Хор Вирап был объявлен резиденцией епископа и в этом контексте был связан с различными епархиальными подразделениями Армянской Церкви. Монастырь, представляя Вирапаванскую епархию, являлся центром Араратской патриаршей епархии и одним из важных звеньев Армянской церкви, о чем свидетельствуют рукописные и лапидарные надписи XI-го и последующих веков. Во времена Дзагаванского собора (1270 г.) с резиденцией в Бжни была объединена также Вирапаванская епархия, а возглавлял две объединенные епархии архиепископ Григор из Бжни.

Как повествуют лапидарные надписи, обнаруженные в ходе археологических раскопок Ашхарбека Калантара в 1912 году, проводимых в расположенном недалеко от Хор Вирапа Ванстанском монастыре, Хор Вирап и Ванстан находились в подчинении главы одной и той же епархии. В одной из недавно обнаруженных памятных надписей есть упоминания епархиального архиерея Араратской области и одноименной епархии, отца Давида, которым и был

основан в XIII веке Ванстанский монастырь. Епархиальным центром Араратской области в упомянутый период являлся именно монастырь Хор Вирап. В другой памятной надписи 1283 года есть упоминание вардапета (архимандрита) Хор Вирапа и Ванстана, Григора, что неоспоримо доказывает высказанную нами выше точку зрения.

Последующие упоминания епархиального центра Хор Вирап и приходских общин, относятся к XVII веку. На их основании становится ясно, что Вирапаванская епархия в этот период продолжала быть активно действующей, имея в своем подчинении монастыри Ванстан, Урцаванк и Мушахбюр. Нотариус католикоса Симеона Ереванци, Иеремия Ошаканци, в составленной им в 1765 году подробной памятной записи о епархиях и приходах, входящих в Эчмиадзинское подразделение Армянской церкви, упоминает все 11 приходские общины Вирапаванской епархии: Веди, Аркури, Арташар, Мушахбюр, Джгун, Ванстан, Манкус, Аваник, Ваник, Дехдзнаванк, Урцадзор. В качестве епархиального центра указывается именно монастырь Хор Вирап.

История монастыря связана также с перенесением резиденции католикоса в 1441 году из Сиса в Эчмиадзин. В то время в Вагаршапате (Эчмиадзине) среди приглашенных на церковный собор участников был также епископ Хор Вирапа Антон. Именно на этом соборе в качестве Католикоса Всех Армян был избран долгие годы ведущий в Хор Вирапе затворническую жизнь Киракос вардапет Вирапеци.

Перестройка церкви была предпринята в XVII веке известным своей плодотворной

деятельностью вардапетом Давидом Вирапеци (Враци, Тфхисеци, что означает “Грузинский, Тифлисский”). Воспользовавшись относительно благоприятной политической ситуацией, он возрождает из запустения и предает новый дух этому древнему монастырю. Об этом периоде примечательные данные сообщает Закария Агулеци, на средства брата которого, Шмавона (Симона, Сиамона) Агулеци, в конце 1660-ых годов проводятся работы по восстановлению и благоустройству монастыря.

В XVIII-XIX веках монастырь Хор Вирап вновь периодически оказывался в неутешительном и запущенном состоянии, информацию о чем можно получить из письменных свидетельств путешественников и паломников.

В конце первой главы книги помещены свидетельства строительных и восстановительных работ, последовательно предпринимаемых в этом центре религиозного поклонения отцами Армянской церкви вплоть до наших дней. Именно в результате анализа этих данных стали известны имена предводителей и отцов церкви в разные периоды, что сделало возможным составление хронологической таблицы отцов-настоятелей Хор Вирапа.

Изучение преподавательской работы и скрипториев монастыря позволило провести источниковедческое рассмотрение проводимой здесь Варданом Аревелци во второй половине XIII века просветительской деятельности, а также дошедших до нас рукописей. Можно констатировать, что, благодаря стараниям этого прославленного вардапета, монастырь в этот период стал крупным образовательным и научным

центром, куда съезжались для получения образования из самых разных областей Армении и даже из Киликийской Армении.

Параллельно в Хор Вирапе получило свое развитие также искусство книгописания. Созданные при Вардане Аревелци рукописи были написаны в нескольких скрипториях. Дошедшая до нас рукопись N 3082 из собрания Матенадарана, оконченная в 1267 году, создавалась в скрипториях Хор Вирапа, Сагмосаванка и монастыря Тегеньяц; это позволяет констатировать, что по крайней мере в этот период монастырь Хор Вирап имел тесные связи с другими известными в то время центрами книгописания.

Хор Вирап являлся важным центром книгописания также в XVII-XVIII века. Большая часть созданных здесь и сохранившихся рукописей датируются упомянутыми веками. В общей сложности до нас дошло около десяти созданных здесь рукописей, основная часть которых хранится в Ереване в собрании Матенадарана им. М. Маштоца (*N 544, 811, 3082, 3825, 5413, 5756, 6752, 7044*). Памятные записи о создании рукописей и их дальнейшей судьбе являются, помимо прочего, важным историковедческим материалом, освещающим историю монастыря. Исследование рукописного наследия скриптория Хор Вирапа позволило выяснить еще одно интересное обстоятельство. Дело в том, что рассмотрение рукописей ясно показывает, что, если при Вардане Аревелци центр книгописания имел связи со скрипториями Сагмосаванка, монастырей Тегеньяц и Святого Степаноса (Агджоц), то в позднем средневековье, в частности, со второй половины XVII века

такая связь очевидна также с центром книгописания в Акори. Это обусловлено тем обстоятельством, что оба монастыря находились в подчинении единой епархии. Изучение материала позволило прийти к выводу, что десять рукописей, известных из центра в Акори (*N* 329, 4022, 4457, 4458, 5756, 6698, 7621, 10573, хранящиеся в настоящее время в собрании Матенадарана в Ереване и *N* 1797 в Иерусалиме), были созданы в 40–70-ых годах XVII века. Как свидетельствуют памятные записи, большая их часть была написана рукой Мурата и его сына Петроса, которые параллельно трудились также в Хор Вирапе. Принимая во внимание это важное обстоятельство, нами к описаниям рукописей Хор Вирапа было приложено также описание собрания рукописей в Акори, а в конце дана сводная хронологическая таблица для восемнадцати рассматриваемых рукописей, созданных в этих двух центрах.

Настоящее исследование было бы неполным, если бы остались неохваченными эпиграфические данные. Осознавая важность этого, третью главу работы мы посвятили лапидарным надписям Хор Вирапа.

Из приведенных в работе 69 лапидарных надписей ранее было опубликовано лишь 16 (большая их часть публиковалась в трудах Ов. Шаххатунянца, Г. Алишана, К. Костанянца, М. Папазянца, М. Асратяна и других), при этом они были лишены составных частей, принятых в настоящее время для научной расшифровки. Учитывая это обстоятельство, все упомянутые эпиграфические надписи были подвергнуты научному анализу. В результате оказались освещены многочисленные вопросы, связанные со строительными работами,

проводимыми во второй половине XVII века по инициативе Давида Вирапеци, сделаны многочисленные дополнения и правки. Как выяснилось при анализе памятной надписи настоятеля монастыря Давида, касающейся строительных работ, дату правильно понимать как “1669”, в пользу чего свидетельствуют также несколько других эпиграфических и рукописных памятных записей, сделанных в то же время. Эпиграфические данные позволили уточнить имена ктиторов (ходжа Шмавон (Симон, Сиамон) Агулечи, Автандил Тифлисеци, Айваз Макуеци, Арутюн и Погос Шахкертци, Бастам, парон Степан), смотрителей (Оган Баба, Газар Вардапет Ветци), посетителей-дарителей (Вардан Кеандареан Александрополци, Киракос, Тер Хачатур, Мкртум, Исраэл, Мовсес, Аветик Бстацци, Хатун Карабахци, Тер Никогайос Акореци и Мовсес), а также некоторые события, связанные с их деятельностью.

В результате исследования святилища “Отьяц Хач”, находящегося к северо-западу от монастыря, нами была зафиксирована наиболее древняя из обнаруженных в этой местности надпись, сделанная на хачкаре (крест-камне) в 1181 году. Эпиграфическое наследие монастыря обобщено и приведено в конце в сводной хронологической таблице.

В иллюстрированном разделе работы, среди других миниатюр мы посчитали необходимым поместить также некоторые тематические и маргинальные иллюстрации рукописей, изображающие мучения Св. Григория Просветителя и события, сопутствующие принятию христианства, которые могут стать предметом отдельного, в частности, искусствоведческого анализа.

Из века в век Хор Вирап как место

религиозного поклонения неизменно сохранял первостепенное значение. Этим и предопределено довольно частое упоминание монастыря как местными авторами, так и иноземными путешественниками и географами. Если данные об основании и деятельности монастыря в раннем средневековье мы можем получить из работ историков-летописцев, то относительно XIII-ого и последующих веков достоверную информацию можно почерпнуть в рукописях, которые были созданы не только в Хор Вирапе, но и в других, смежных с ним, крупных центрах книгописания. Эпиграфические материалы начиная с XVII века вносят свою лепту и делают более полными источниковедческие данные об историческом пути этого центра религиозного поклонения.

Обобщая сказанное, остается только произнести вслед за прославленным патриархом, Гарегином I-м:

ХОР ВИРАП, ТАЙНА ГЛУБОКАЯ ...

** Русский перевод: Н. Степанян-Гандилян*

ARSEN HARUTYUNYAN

KHOR VIRAP HISTORY, MANUSCRIPT AND EPIGRAPHIC HERITAGE

SUMMARY

In the pages of the history of Khor Virap monastic complex the glorious “certificates” of our past and identity are “covered in ash” as the monastery is the straightforward condensation of the Great Conversion of the Armenians and the life and martyrology of St. Gregory the Illuminator. The main goal of this work which summarizes the topographic, historical, literary and epigraphic heritage was to compile the possibly brief description of the second major sanctuary after St. Etchmiadzin. From this perspective the issue set before us was not easy soluble or facile as we dealt with the historiographic and source examination of manuscripts and lapidary documents of a whole monastic complex, inherited by us from here, where there are numerous unelucidated questions to which we have tried to answer comprehensively. In a word, we summarize below the conclusions made in the result of the performed work.

In the panorama of once famous capitals of Artashat (Artaxata) and Dvin the earliest stage of the history of the monastery which has its unique place and position is related to St. Gregory the Illuminator’s imprisonment in the pit of the jail for accepting and spreading Christianity and spending 13-15 painful years there. The aforementioned events are narrated in detail in the pages of the

History of the Armenians by Agatangelos, therefore the information reported by this literary figure on this historical era is reliable and exceptional. It indirectly refers to the foundation of a monastery on the site of the pit from where the complex received its generic name of Khor Virap (literally meaning “Deep Pit”). In the works of the historiographers and chroniclers of later centuries (Movses Kaghankatvatsi, Hovhan Mamikonyan, Ukhtanes, Hovhannes Draskhanakertsi, Stepanos Taronetsi Asoghik, Mkhitar Ayrivanetsi, chroniclers Ananun (Anonymous) Sebastatsi, Davit Baghishetsi, Hakob Karnetsi and others) Khor Virap and details related to it are repeatedly attested. The records mainly refer to St. Gregory the Illuminator’s torture episodes, his being thrown into the pit, the adoption of the new religion, subsequently the foundation of the monastery and church construction.

Hovhannes Draskhanakertsi, later Stepanos Taronetsi Asoghik, Samuel Anetsi, Kirakos Gandzaketsi and others testify that Nerses the Builder founded a church here in the 7th century and the Arab literary figure of the same century, Al-Muqaddasi’s by mentioning about the architectural composition of the church built by Nerses makes the existence of the church more certain. According to the mentioned testi-

mony it was located not far from Dvin (only 3 leagues, that is 17,256 km) and presented a church with round hall built with white polished stone, was crowned with eight-pillared rotunda and resembling a dome-shaped cap.

In the developed phase of the medieval period Khor Virap was proclaimed as an episcopal center and in this context established contacts with the diocesan infrastructures of the Armenian Church. In the face of the diocese of Virapavan the monastery was the center of the Ararat patriarchal diocese and one of the important links of the Armenian Church: the literary and lapidary colophons of the 11th and later centuries testify about it. During the council of Dzagavan (1270) the diocese of Virapavan was unified with the Chair of Bjni and Archbishop Grigor of Bjni headed the two unified dioceses.

According to the lapidaries unearthed in the result of the archaeological excavations conducted by Ashkharbek Kalantar in 1912 in Vanstan Monastery located not far from Khor Virap, Vanstan and Khor Virap were under the subjection of the same diocesan Primate. Father Davit, the vicar of Ararat province or the homonymous diocese who founded Vanstan Monastery in the 13th century, is mentioned in one of the newly-found lapidaries. The diocesan center of Ararat province in the mentioned period was very Khor Virap Monastery. Archimandrite Grigor, the Primate of Khor Virap and Vanstan is mentioned in another lapidary dated by 1283 which is the stone evidence for our aforementioned viewpoint.

Later records on the diocesan center of Khor Virap and its bishoprics are dated by the 17th century based on which it becomes clear that Virapavan diocese also operated

actively having Vanstan, Urtsavank and Mushaghbyur Monastery under its subjection. In the brief registry of the ecclesiastical dioceses and their bishoprics of Etchmiadzin constituted in 1765 by Yeremia Oshakantsi, the notary of Catholicos Simeon Yerevantsi, all of the 11 bishoprics of Virapavan diocese are mentioned: Vedi, Arkuri, Artashar, Mushaghbyur, Jghun, Vanstan, Mankus, Avanik, Vanik, Deghdznavank, Urtsadzor and the diocesan center was Khor Virap Monastery.

The history of the monastery is also linked to the event of the Catholicosate's moving from Sis to Etchmiadzin in 1441 when Bishop Anton of Khor Virap was among the participants of the ecclesiastical council invited in Vagharshapat. It was here that in the result of the council Archimandrite Kirakos Virapetsi who had led a hermit's life at Khor Virap for long years was elected as Catholicos of All Armenians.

The initiation of the monastery's reconstruction, however, was assigned to Archimandrite Davit Virapetsi (Vratsi, Tpkhisetsi), a prolific priest of the 17th century, who, taking advantage of more or less political favourable conditions created in the country, revived from desolation and breathed new life into this ancient monastery. Zakaria Aguletsi reports noteworthy information in the pages of his diary by means of whose brother Shmavon (Simon, Siamon) Aguletsi construction and improvement works were realized in late 1660's.

In the 18-19th cc. Khor Virap again regularly fell into disrepair and was neglected on which we get information from the memoirs of traveller geographers and visitor-pilgrims.

The first chapter of the study concludes with the mentioning of the construction

and repair works successively conducted by the Armenian patriarchs in this sanctuary coming up to our days. In the result of this examination the names of the Primates and abbots of the monastery of different times are revealed upon which it became possible to constitute the Chronological table of the abbots of Khor Virap.

The study of the educational and literary school of Khor Virap enabled to launch source examination on the activities of the school-archimandrite office founded by Vardan Areveltsi in the second half of the 13th century and the manuscripts which passed to us from here. It should be stated that in the face of the illustrious chief teacher the monastery stands out as a scientific-educational major center in this period where they came to study from different regions and even from Cilicia.

Literary art also prospered in Khor Virap in parallel. The manuscripts written in the days of Vardan Areveltsi were created in several literary centers: N 3082 manuscript of Matenadaran, was written in 1267 in the writing centers of Khor Virap, Saghmosavank and monastery of Teghenyats which allows to colophon that Khor Virap Monastery at least in this period had close ties with the famous literary centers of the time.

As a literary center Khor Virap became remarkable also in the 17-18 cc. Considerable part of the manuscripts which passed to us is dated by the aforementioned centuries. Totally, around ten manuscripts preserved from Khor Virap, majority of which are kept at Yerevan Matenadaran after Mesrop Mashtots (N 544, 811, 3082, 3825, 5413, 5756, 6752, 7044). Manuscripts' birth and later colophons are important source material not only for the creation of the very manuscript and its later "destiny"

but also for the elucidation of the history of the monastery. The study of the literary heritage of Khor Virap also clarified an important circumstance. The thing is that the examination of the manuscripts directly states if the writing center in the days of Vardan Areveltsi had relations to the writing centers monasteries of Saghmosavank, Teghenyats and Aghjots St. Stepanos then in the late medieval period, particularly from the second half of the 17th century, the connection with the writing center of Akori is obvious. This phenomenon is also conditioned by the circumstance of the two monasteries being under the subjection of the same diocese. The examination revealed that the ten famous manuscripts from the writing center of Akori (N 329, 4022, 4457, 4458, 5756, 6698, 7621, 10573, Ms. of Jerusalem N 1797) were created in the 40-70's of the 17th century. The literary monuments testify that majority of them were written by father and son Murat and Petros scribes who in parallel operated also in Khor Virap. Considering this important circumstance we also put together the description of the manuscript collection of Akori with the description of the manuscripts of Khor Virap and finally the total chronological table of the eighteen manuscripts from these two centers.

The material under examination would stay incomplete if the scientific research of the lapidaries of the group of monuments be ignored, thus with the acknowledgement of its importance we devoted the third chapter of the work to the epigraphic heritage of Khor Virap. 16 of 69 lapidaries deciphered in the work were published in the past (they found their place mainly in the works of H. Shahkhatuntyants, Gh. Alishan, K. Kostanyants, M. Papazyan, M. Hasratyan and others) yet devoid of the currently acceptable

components for scientific decipherment. Taking into consideration this circumstance all of the mentioned inscriptions were undergone epigraphical examination in the result of which numerous issues related to the construction works initiated by Davit Virapetsi in the second half of the 17th century were elucidated, additions and proofreading were made. After all, the date of the construction inscription bearing the name of Abbot Davit should be read as 1669, in favour of which there are also several synchronous stone or literary records. Due to the lapidaries the names of the patrons of the monastery (khojas of Shmavon (Simon, Siamon) Aguletsi, Avtandil Tiflisetsi, Ayvaz Makuetsi, Harutyun and Poghos Shakhkertsi, Bastam, paron Stepan), overseers (Ohan baba, Ghazar Arch. Vetsi), visitor-donors (Vardan Keandarean Alexandrapoltsi, Kirakos, Ter Khachatur, Mkrtum, Israel, Movses, Avetik Bstatsi, Khatun Gharabaghtsi, Ter Nichoghayos Akoretsi and Movses) and events related to them were clarified.

In the result of the study of the “Otyats Khach” sanctuary located north-west from the monastery we also documented the earliest inscription of the site dated by 1181 which is a literary monument of a cross-stone (khachkar). After all, we summarized the epigraphic heritage of the monastery in the general chronological table.

Among the miniatures included in the photography section of the study we considered necessary to include also certain thematic and marginal miniatures related to the torture of St. Gregory the Illuminator and adoption of Christianity which may become special material particularly for arts critics.

As an important and sacred center,

throughout the centuries Khor Virap Monastery had always a primary importance. Conditioned just by this fact, the records about this monastery are frequent in the works of the Armenian and foreign traveller-surveyors. If in the early medieval period the historiographers report on foundation and life of the monastery then for the 17th and later centuries reliable sources are the manuscripts written not only in Khor Virap itself but also in the adjacent writing centers. The lapidaries which enrich source material come to replenish and complete the historical path starting from the 17th century.

Summarizing our word and following the covenant of the illustrious Catholicos Garegin I what remains to be said again is:

KHOR VIRAP, DEEP MYSTERY...

Translated by H. Khudanyan

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա. Ձեռագրեր և ձեռագրացոցակներ

1. ՄՄ ձեռ. Հ^մ 544, «Բառգիրք», Խոր Վիրապ, 1740 թ., գրիչ՝ Ըռաֆայել Զուղայեցի, 196 թերթ:
2. ՄՄ ձեռ. Հ^մ 811, «Ժողովածոյ», Խոր Վիրապ, 1775 թ., գրիչ՝ Գրիգոր վարդապետ Միսնեաց գաւառի, 200 թերթ:
3. ՄՄ ձեռ. Հ^մ 3082, «Ժողովածոյ», Խոր Վիրապ, Սաղմոսավանք, Թեղենյաց վանք, 1267 թ., գրիչ՝ Գէորգ Լամբրոնացի, Մանվել, սրացող՝ Գրիգոր Բջնեցի, 478 թերթ:
4. ՄՄ ձեռ. Հ^մ 3825, «Ագաթանգեղոս, Պապմոթիւն Հայոց», Խոր Վիրապ, 1671 թ., գրիչ, սրացող՝ Ոսկան արեղա, 263 թերթ:
5. ՄՄ ձեռ. Հ^մ 4022, «Աւետարան», Ակոռի, 1647 թ., գրիչ՝ Մարութ, 262 թերթ:
6. ՄՄ ձեռ. Հ^մ 4458, «Աւետարան», Ակոռի, 1646 թ., գրիչ՝ Մարութ քահանա, 251 թերթ:
7. ՄՄ ձեռ. Հ^մ 4834, «Ժողովածոյ», Ճմին գյուղաքաղաքի Ս. Թեոդորոսի վանք և Եզնկա, 1289-1296 թթ., գրիչ՝ Առաքել, սրացող՝ Ահարոն վարդապետ, 218 թերթ:
8. ՄՄ ձեռ. Հ^մ 5413, «Աւետարան», Խոր Վիրապ, Ակոռի, 1663 թ., գրիչ, ծաղկող՝ Մուրապ դպիր, 216 թերթ:
9. ՄՄ ձեռ. Հ^մ 5452, «Ժողովածոյ», Վանական վարդապետի վանք, ԺԳ. դար, գրիչ՝ Սարգիս, Յովանէս կրօնատուր, սրացող՝ Մխիթար վրդ., կազմող՝ Յոհան, 120 թերթ:
10. ՄՄ ձեռ. Հ^մ 5756, «Աւետարան», Խոր Վիրապ, Ակոռի, 1666 թ., գրիչ՝ Պետրոս դպիր, ծաղկող՝ Մուրապ դպիր, 238 թերթ:
11. ՄՄ ձեռ. Հ^մ 6698, «Աւետարան», Ակոռի, 1671 թ., գրիչ՝ Պետրոս երէց, 292 թերթ:
12. ՄՄ ձեռ. Հ^մ 6752, «Աւետարան», Խոր Վիրապ, 1662 թ., գրիչ, ծաղկող՝ Մուրապ դպիր, սրացող՝ Շայապ, 340 թերթ:
13. ՄՄ ձեռ. Հ^մ 7044, «Ժողովածոյ», Խոր Վիրապ, 1774 թ., գրիչ, սրացող՝ Գրիգոր Սյունեցի, 103 թերթ:
14. ՄՄ ձեռ. Հ^մ 7621, «Աւետարան», Ակոռի, 1667 թ., գրիչ՝ Մուրապ դպիր, սրացող՝ Սաթըլմիշ, 262 թերթ:
15. ՄՄ ձեռ. Հ^մ 7827, «Աւետարան», Ճարմառի գյուղ, 1680 թ., գրիչ՝ Յովհաննէս, սրացող՝ Ուլուպէկ, Գուլան, 243 թերթ:
16. ՄՄ ձեռ. Հ^մ 8126, «Մաշտոց», Ակոռի, ԺԷ. դար, գրիչ՝ Մարութ երէց, 143 թերթ:
17. Խրիմյան կաթողիկոսին ուղղված դիմումների և այլ վավերագրերի արխիվ, ՄՄ կաթողիկոսական դիվան, թղթ. 108, վավ. 1081, 1086:
18. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի, Խ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 1469 էջ:
19. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի, Խ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթարեան, Ա. Քեօշկերեան, Երևան, «Նաիրի» հրատ., 2004, 832 էջ:
20. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի, Խ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, Երևան, «Մագաղաթ» հրատ., 2007, 2004 էջ:
21. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի, Խ. Դ., կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երևան, «Նաիրի» հրատ., 2008, 1694 էջ:
22. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի, Խ. Ե., կազմեց՝ Օ. Եգանեան, Երևան, «Նայիրի», ԵՊՀ հրատ., 2009, 1474 էջ:
